


ՑԵՂԱՄՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

Տարի 7, No 2, 2019

ՑԵՂԱՄՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

Տարի 7, No 2, 2019



ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ARMENIAN GENOCIDE MUSEUM-INSTITUTE FOUNDATION

**«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
7 (2)**

Երևան 2019

Ցեղասպանագիտական հանդես

Գլխավոր խմբագիր

Հարություն Մարության, պ.գ.դ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Գլխավոր խմբագրի տեղակալ

Էդիտա Գզոյան, պ.գ.թ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Խմբագրական խորհուրդ

Աննա Ալեքսանյան, Քլարկի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մելինե Անույան, պ.գ.թ., Արևմտահայոց հարցերի ուսումնասիրությունների կենտրոն,
Հայաստան

Արսեն Ավագյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Ռայմոնդ Գևորգյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
արտասահմանյան անդամ, Ֆրանսիա

Անդրանիկ Դաթեյան, քաղաքագիտության դոկտոր, Հայկազյան համալսարան,
Լիբանան

Ռոբերտ Թաթոյան, պ.գ.թ., «Հուշամատյան» ծրագիր, Հայաստան

Վահե Թաշճյան, պատմագիտության դոկտոր, «Հուշամատյան» ծրագիր, Պիտեր
Պազմանի կաթոլիկ համալսարան, Գերմանիա

Վալերի Թունյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական
համալսարանի երևանյան մասնաճյուղ, Հայաստան

Անահիտ Խոսրոնա, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Հայաստան

Աշոտ Հայրունի, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Էլլեն Հարթման, պատմագիտության դոկտոր, Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլիանս
համալսարան, Գերմանիա

Սևանե Ղարիբյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ժնևի համալսարան,
Շվեյցարիա

Նարինե Մարգարյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Հայկ Մարտիրոսյան, պ.գ.թ., Լեվիսիուսհաուս, Պոտսդամ, Գերմանիա

Վահրամ Շենասյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի պետական
համալսարան, Նորթրիջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Պետրոս Տեր-Մաթոսյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Նեբրասկա-Լինքոլնի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ռուբինա Փիրումյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

***Ts'eghaspanagitakan handes* (“Journal of Genocide Studies”)**

Editor in Chief:

Dr. Harutyun Marutyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Associate Editor:

Dr. Edita Gzoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Editorial Board

Anna Aleksanyan, Clark University, USA

Dr. Meline Anumyan, Research Center on Western Armenian Studies, Armenia

Dr., Prof. Arsen Avagyan, Yerevan State University, Armenia

Dr. Antranik Dakessian, Haigazian University, Lebanon

Dr., Prof. Bedross Der Matossian, University of Nebraska-Lincoln, USA

Dr. Elke Hartmann, Ludwig-Maximilians-Universität München, Germany

Dr., Prof. Ashot Hayruni, Yerevan State University, Armenia

Dr., Prof. Sévane Garibian, University of Geneva, Switzerland

Dr., Prof. Raymond Kevorkian, foreign member of National Academy of Sciences of the Republic of Armenia, France

Dr. Anahit Khosroeva, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia

Dr. Narine Margaryan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Hayk Martirosyan, Lepsiushaus, Potsdam, Germany

Dr., Prof. Rubina Peroomian, University of California, Los Angeles (UCLA), USA

Dr., Prof. Vahram Shemmassian, California State University, Northridge, USA

Dr. Vahé Tachjian, Pázmány Péter Catholic University, Houshamadyan Project, Germany

Dr. Robert Tatoyan, Houshamadyan Project, Armenia

Dr. Valery Tunyan, Russian State University of Tourism and Services, Yerevan Branch, Armenia

Тсехаспанагитакан андес («Журнал исследований геноцида»)

Главный редактор

Арутюн Марутян, доктор ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Заместитель главного редактора

Эдита Гзоян, канд. ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Редакционная коллегия

Арсен Авагян, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Ашот Айруни, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Анна Алексанян, Кларкский университет, Соединённые Штаты Америки

Мелине Анумян, канд. ист. наук, Центр изучения западноармянских вопросов, Армения

Элке Артманн, доктор истории, Мюнхенский университет Людвиг-Максимилианс, Германия

Севанэ Гарибян, доктор права, профессор, Женевский университет, Швейцария

Раймонд Геворгян, доктор истории, профессор, иностранный член НАН РА, Франция

Андраник Дакесян, доктор политологии, Айказян университет, Ливан

Айк Мартиросян, канд. ист. наук, дом-музей Лепсиуса (Лепсиусхаус), Потсдам, Германия

Нарине Маргарян, канд. ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Рубина Пирумян, доктор филологии, профессор, Калифорнийский университет в Лос-Анджелесе, Соединённые Штаты Америки

Роберт Татоян, канд. ист. наук, проект «Ушамадян», Армения

Ваге Ташчян, доктор истории, Католический университет Петера Пазманя, проект «Ушамадян», Германия

Петрос Тер-Матосян, доктор истории, профессор, Университет Небраски-Линкольна, Соединённые Штаты Америки

Валерий Тунян, доктор ист. наук, профессор, ереванский филиал Российского государственного университета туризма и сервиса, Армения

Анаит Хосроева, канд. ист. наук, Институт истории НАН РА, Армения

Ваграм Шеммассян, доктор филологии, профессор, Калифорнийский государственный университет в Нортридже, Соединённые Штаты Америки

Յեղասպանագիտական հանդեսը (ISSN 1829-3980) գրախոսվող պարբերական է և լույս է տեսնում տարին երկու անգամ՝ մայիսին և դեկտեմբերին, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կողմից (Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8, հեռ.՝ (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am): Հանդեսը Հայաստանում ցեղասպանագիտության ոլորտի հիմնական պարբերականն է, որի նպատակն է ցեղասպանությունների ուսումնասիրությունը՝ պատմական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, կրոնական, մարդաբանական, իրավական, սեռային, մշակութաբանական և այլ գիտակարգերի տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության շեշտադրմամբ: *Յեղասպանագիտական հանդեսում* տպագրված հոդվածները, գրախոսությունները և այլ նյութերն արտահայտում են հեղինակների մոտեցումները, որոնք կարող են չհամընկնել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի մոտեցումներին: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը որևէ իրավական պատասխանատվություն չի կրում հեղինակների սխալների և բացթողումների համար: *Յեղասպանագիտական հանդեսն* ինդեքսավորվում է Գիտական հղման հայկական ցուցիչ (ԳՀՀՑ) մատենագիտական շտեմարանում: Հոդվածները և գրախոսությունները կարելի է ներկայացնել տպագիր կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ handes@genocide-museum.am:

Ts'eghaspanagitakan handes (“Journal of Genocide Studies”) (ISSN 1829-3980) is a peer-reviewed journal and published twice a year in May and December by the Armenian Genocide Museum-Institute Foundation (8/8 Tstitsernakaberd highway, 0028 Yerevan, Republic of Armenia (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). *Journal of Genocide Studies* is the main forum for scholarship in the field of genocide studies in Armenia and features articles, reviews and other relevant materials related to the study of genocides from historical, social-psychological, demographic, religious, anthropological, legal, gender, cultural and other scientific fields with a special emphasis on the Armenian Genocide. Articles, reviews and other materials published in the *Journal of Genocide Studies* reflect the opinion of the authors and may not necessarily coincide with the approaches of the Armenian Genocide Museum-Institute Foundation. The Armenian Genocide Museum-Institute Foundation cannot accept any legal responsibility for the errors and omissions made by the authors. *Journal of Genocide Studies* is indexed/abstracted in the Armenian Science Citation Index (ASCI). Articles, reviews, and other relevant materials can be presented in print or sent to the following address: handes@genocide-museum.am.

Тсехаспанагитакан андес («Журнал исследований геноцида») (ISSN 1829-3980) – рецензируемое издание, выходит в свет два раза в год, в мае и декабре. Журнал издается фондом «Музей-институт Геноцида армян» (Республика Армения, г. Ереван, 0028, Цицернакабердское шоссе 8/8 (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). Это единственное в Армении периодическое издание в области геноцидоведения, целью которого является научное изучение геноцидов с исторической, социально-психологической, социологической, этнографической, религиозной, антропологической, юридической, гендерной, культурной и других точек зрения с акцентированием на исследование Геноцида армян. Статьи, обзоры и другие материалы, опубликованные в «Журнале исследований геноцида», отражают мнение авторов и могут не совпадать с подходами фонда «Музей-институт Геноцида армян». Фонд «Музей-институт Геноцида армян» не несет юридической ответственности за ошибки, допущенные авторами. «Журнал исследований геноцида» индексируется в Армянском индексе научного цитирования (АИНЦ). Статьи, обзоры и другие материалы могут быть представлены в печатном виде или отправлены по следующему электронному адресу: handes@genocide-museum.am.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Ռեզինա Ա. Գալուստյան

«Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության
զարգացումը (1889-1908)..... 9

Էլինա Զ. Միրզոյան

Կոստանդնուպոլսի երիտրորքական առաջին ռուսալեզու պարբերականի
«Սրամբույան լուրերի» որոշ դիպարկումների շուրջ33

Ռոբերտ Ա. Թաթոյան

Մեկ քնակավայրի եղեռնը. Խլաթի գավառակի Փրիտու գյուղի քնաջնջումը
1915 թվականին 45

Թեհմինե Ռ. Մարտոյան

Օսմանյան պետության սահմաններից դուրս.
հայերի քնաջնջումը Իրանի Խոյ ու Սալմաստ քաղաքներում 1914-1915 թթ. 58

Ինեսա Գ. Ստեփանյան

«Թեջրիաթը-մահուսա», «ԷսԷս», «Պանչասիլայի երիտասարդությունը»
կազմակերպությունների գործելակերպի համեմատական վերլուծության փորձ 83

Արամ Ռ. Միրզոյան

Գրախոսություն. «Դորա Սարայան, Նրանց քշում են անապատները.
Կլարա և Տրից Զիգրիսպ-Հիլթիները Հայոց ցեղասպանության ականաբեկներ
(1915-1918)»..... 107

Վահագն Նորայրի Դադրյան (Տապրեան)

..... 118

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 122

CONTENT

ARTICLES

Regina A. Galustyan

The Evolution of the Ideology of the “Committee of Union and Progress” (1889-1908)... 9

Elina Z. Mirzoyan

*On Some Reflections of the First Russian-Language
Young Turkish Periodical – “Stambul’skie Novosti”*33

Robert A. Tatoyan

*Genocide on the Example of One Settlement:
The Destruction of the Village Prkhus in 1915* 45

Tehmine R. Martoyan

*Beyond the Borders of the Ottoman Empire:
Annihilation of the Armenian Population in the Iranian Cities
Khoy and Salmast (1914-1915)* 58

Inessa G. Stepanyan

*Comparative Analysis Attempt of Actions of Organizations
“Teşkilati Mahsusa,” “SS” and “Pancasila Youth”* 83

Aram R. Mirzoyan

*Book review. “Dora Sakayan, They Drive Them Into the Deserts:
Clara and Fritz Sigris-Hilty as Eyewitnesses of the Armenian Genocide 1915-1918)”*... 107

Vahagn Norair Dadrian 118

ABOUT THE AUTHORS 122

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Регина А. Галустян

Эволюция идеологии комитета «Единение и прогресс» (1889-1908) 9

Элина З. Мирзоян

*О некоторых наблюдениях «Стамбульских новостей» – первого
младотурецкого русскоязычного периодического издания Константинополя.....33*

Роберт А. Тагоян

*Геноцид на примере одного поселения:
уничтожение деревни Прхус в 1915 году 45*

Тегмине Р. Маргоян

*За пределами османского государства. Истребление армян в иранских
городах Хой и Салмаст в 1914-1915 гг. 58*

Инесса Г. Степанян

*Попытка сравнительного анализа деятельности организаций
«Тешкилат-и Махсуса», «СС» и «Молодежь Панчасила» 83*

Арам Р. Мирзоян

*Рецензия. «Дора Сакаян, Их гонят в пустыни. Клара и Фриц
Зигрист-Хилти – очевидцы Геноцида армян (1915-1918)» 107*

Ваагн Норайрович Дадрян 118

ОБ АВТОРАХ 122

**«ՄԻՌՌԹ-ՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹ-ՅՈՒՆ» ԿՈՄԻՏԵԻ
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ՝ (1889-1908)**

Բանասյի բառերը՝ «Միություն և առաջադիմություն» կոմիտե, հեղափոխություն, ազգայնականություն, իսլամ, ռասա, թուրքիզմ:

«Միություն և առաջադիմություն»² կոմիտեի գործունեությունը և հեղափոխական շարժումը ուսումնասիրության կյոթ են դարձել խորհրդային, թուրք, արևմտյան և հայ հետազոտողների կողմից. կազմակերպությանը տրված բնութագրումները մեկ ծայրահեղություննից անցնում են մյուսին: Խորհրդային և խորհրդահայ պատմագրության մեջ կոմիտեն ներկայացվում է որպես թուրքական ազգայնականության, ազգային որևէ ինքնություն չունեցող, միևնույն ժամանակ «շովինիստական» կազմակերպություն, հակաիմպերիալիստական, բուրժուազիայի և հողատերերի շահերը ներկայացնող մի ուժ, որին գործողության է մղել 1905 թ. ռուսական հեղափոխությունը: Արևմտյան գրականության մեջ կոմիտեն համարվում է լիբերալ, Օսմանյան կայսրության իրականության մեջ՝ եվրոպական ազատական գաղափարներից առաջինն ազդված (երբեմն՝ գերազդված) հեղափոխական կոմիտե:

Հոդվածի նպատակն է ներկայացնել կոմիտեի գաղափարախոսության ձևավորումը և զարգացումները 1889-1908 թթ.: Խնդիրը դյուրին դարձնելու նպատակով կոմիտեի գործունեությունը բաժանվում է 1902 թվականի Օսմանյան լիբերալների առաջին կոնգրեսով, որն ընդունվում է որպես բաժանարար գիծ կոմիտեի հին կառուցվածքի և նորի միջև: Քննության են առնված «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարական առանձին տարրեր՝ ազգայնականության հատուկ շեշտադրմամբ:

Գաղափարական հիմքը

Արդի ժամանակները նշանավորվեցին գաղափարական, քաղաքական և սոցիալ-տնտեսական առանձնահատկություններով, որոնք այս կամ այն կերպ բնորոշ էին տարբեր երկրների³: Համընկնելով 19-րդ դարի հետ՝ մոդեռնիզմը քաղաքական առումով առաջ բերեց կառավարման աշխարհիկ ձևը, որը զարգանալով ամբողջապես դրսևորվեց ազգ-պետություններում (nation-state): Առաջացավ քաղաքականության նոր տեսակ՝ ազգայնականություն: Դրա նպատակը ազգի լեգիտիմ իշխանությունը տեսականորեն հիմնավորելը և դրա համար պայքար մղելն էր որոշակի տարածքի սահմաններում⁴:

1 Հոդվածը ստացվել է 15.08.2019 և ընդունվել տպագրության՝ 27.11.2019.

2 Դիտարկվող ժամանակահատվածում 1889-1908 թթ., կոմիտեի անվանումը «Առաջադիմություն և միություն» էր, սակայն մենք օգտագործում ենք հանրահայտ տարբերակը՝ ավելորդ շփոթությունից խուսափելու համար:

3 Berman Marshall, *All that is Solid Melts into Air: The Experience of Modernity* (London and Brooklyn: Verso, 2010), 10-12.

4 Elie Kedourie, *Nationalism* (London: Hutchinson University Library, 1961), 9.

Ազգը սահմանելիս սկզբնական շրջանում ազգայնականները հենվում էին լեզվի՝ որպես խմբի ինքնության արտաքին արտահայտչամիջոցի վրա: Հայտարարվում էր, որ նույն լեզվով խոսող մարդկանց խումբն ազգ է (կամ պատկանում է նույն ռասային), հետևաբար նրանց բաժանող քաղաքական սահմանները անբնական են, անօրինական: Տեսության ենթատեքստն այն էր, որ պետության աշխարհագրական սահմանները պետք է համընկնեն լեզվական սահմանների հետ⁵: Գերմանացի տեսաբանները⁶, քաղաքական նպատակներ հետապնդելով, առաջ քաշեցին այն թեզը, որ ճշմարիտ և հարատև է մեկ ազգի վրա հենված պետությունը⁷: Ազգայնականությունն սկսեց ձգտել ոչ միայն ազգային պետության հաստատմանը, այլև միատարրության՝ դրա սահմանների ներքում⁸:

19-րդ դարում եվրոպական փիլիսոփայական և քաղաքական մտքի վրա ազդեցություն գործեց նաև գիտության զարգացումը: Մասնավորապես, նատուրալիստական աշխարհայացք ունեցող հետազոտողները, հիմք ընդունելով Չարլզ Դարվինի (1809-1882) էվոլյուցիոն տեսությունը, սկսեցին մարդուն դիտարկել որպես բնության մաս՝ պնդելով բնագիտության և հասարակական-հումանիտար գիտությունների ուսումնասիրության մեթոդների նույնությունը: Այդ մեթոդաբանությամբ կատարված հետազոտությունների համաձայն՝ մարդիկ, ըստ իրենց ֆիզիկական առանձնահատկությունների, տեսակավորվեցին և դասակարգվեցին⁹: Աշխարհագրական հայտնագործությունների արդյունքում՝ 15-16-րդ դարերից սկսած՝ եվրոպացի հետազոտողները և ճանապարհորդները հանդիպեցին արտաքնապես իրենցից տարբերվող մարդկանց: Արդյունքում ռասիզմը, որը որպես սոցիալ-հոգեբանական երևույթ գոյություն ուներ անհիշելի ժամանակներից, 19-րդ դարում սկսեց հավակնել գիտության առանձին ճյուղի կարգավիճակի:

Ռասայական տեսությունը զարգացրեց ֆրանսիացի փիլիսոփա, դիվանագետ Արթուր դե Գոբինոն (1816-1882), ով ռասան դիտարկեց սոցիալ-պատմական գործընթացի իրական սուբյեկտ: Գոբինոն պնդում էր, որ տարատեսակ հանգամանքների ազդեցության արդյունքում մարդկանց մոտ ձևավորվել են արտաքին ֆիզիկական (մաշկի գույն, դիմագծեր), մտավոր և հոգեկան հատկանիշներ, որոնք այլևս հաստատուն են¹⁰: Այդ հատկանիշները հաշվի առնելով Գոբինոն մարդկանց բաժանում է ռասաների և դասակարգում դրանք՝ սպիտակի, դեղինի և սևի: Սպիտակը դնելով

5 Նույն տեղում, 68, 71:

6 Յոհան Գոթֆրիդ Ֆիխտե (1762-1814), Յոհան Գոթֆրիդ Հերդեր (1744-1803), Ֆրիդրիխ Շլայերմախեր (1768-1834):

7 Kedourie, *Nationalism*, 58.

8 Eric D. Weitz, *A Century of Genocide: Utopias of Race and Nation* (Princeton and Oxford: Princeton University Press, 2003), 24.

9 Alexander L. Hinton, "The Dark Side of Modernity: Toward an Anthropology of Genocide," in *Annihilating Difference: the Anthropology of Genocide*, ed. Alexander L. Hinton (Berkeley, Los Angeles, London: University of California Press, 2002), 13.

10 Жозеф Артюр де Гобино, *Опыт о неравенстве человеческих рас* (Москва: Одиссей; ОЛМА-ПРЕСС, 2001), 133.

վերին աստիճանում՝ դրան էր վերագրում ամենաբարձր հատկանիշները. ընդ որում, սպիտակը նույնպես ուներ ներքին աստիճանակարգ¹¹: 19-րդ դարում Գոբինոյի արտահայտած ռասայական պատկերացումները գրեթե նույնությամբ դարավերջին կրկնեց ֆրանսիացի հրապարակախոս, բժիշկ Գյուստավ լե Բոնը (1841-1931): Աշխարհագրագետների գրառումների վրա հենվելով՝ լե Բոնը հայտարարում է, որ յուրաքանչյուր ժողովուրդ մարդաբանական կերպից բացի ունի հաստատուն հոգեկերտվածք, որով պայմանավորվում են նրա գաղափարները, ինստիտուտները, մշակույթը և կրոնը¹²: Լե Բոնը հավատում էր ռասաների մտավոր և ֆիզիկական անհավասարությանը: Որպես օրինակ բերելով ճապոնացիներին՝ նա պնդում էր, որ կրթությամբ հնարավոր է գիտելիք փոխանցել ստորին ռասայի ներկայացուցչին, բայց ոչ երբեք օժտել նրան քննադատական մտածողությամբ¹³:

Ազգայնականության շահարկումները ունեցան նաև բացասական հետևանքներ Եվրոպայում՝ արդարացնելով նվաճողական պատերազմները և բացառելով հաշտությունները¹⁴: Որոշ պանսլավիստներ առաջ քաշեցին Ռուսաստանի հովանու ներքո սլավոնական միության ստեղծման անհրաժեշտությունը, իսկ գերմանացի ազգայնականները, հովանդերներ գերմաներենի բարբառ հռչակելով, փորձում էին հիմնավորել Հոլանդիայի հանդեպ նվաճողական ձգտումները¹⁵: Այնուամենայնիվ, միայն ազգի կոնցեպտը չէր կարող այնպիսի աղետալի հետևանքներ ունենալ, ինչպես որ եղավ, երբ 20-րդ դարի սկզբին այն միավորվեց ռասայի կոնցեպտի հետ: Այս միավորման հիմքը դրել են հենց ռասայի տեսաբանները: Այդքան էլ պարզ չէ, օրինակ, թե Գոբինոն իր գրքում խոսում է եվրոպացիների, «սպիտակ» ռասայի, թե՞ ուղղակի ֆրանսիացիների մասին: Պատճառն այն է, որ 19-րդ դարում ազգայնականները «լոռում» էին ազգի երկու սահմանումների միջև. քաղաքացիության վրա հենված հանրույթ և լեզվի ու ծագման ընդհանրությամբ միավորված էթնիկ հանրույթ: Հակվելով վերջին սահմանմանը՝ նրանք «ռասայականացրին» ազգը՝ որդեգրելով ռասայական գաղափարախոսությանը հատուկ «մաքրության», ժառանգականության, հիերարխիայի դրույթները¹⁶:

Ազգայնականությունը, ռասայականությունը և 19-րդ դարի եվրոպական փիլիսոփայական ու քաղաքական մտքի առանձին գաղափարներ Օսմանյան կայսրության մտավորական շրջանակներ սկսեցին ներթափանցել 1830-ականներից, իսկ հիմնավոր կերպով՝ 1856 թ. Դրիմի պատերազմից հետո՝ եվրոպական քաղաքական (պատերազմներ, պայմանագրեր, բարենորոգումների ծրագրեր, ռազմական առաքելություններ), տնտեսական (կոնցեսիաներ, ֆինանսաբանակային համակարգ) և միսիոներական գոր-

11 Նույն տեղում, 138:

12 Гюстав Лебон, *Психология народов и масс* (Москва: АСТ, 2018), 9.

13 Նույն տեղում, 42:

14 Eric Markusen, David Kopf, *The Holocaust and Strategic Bombing: Genocide and Total War in the Twentieth Century* (Boulder, San Francisco, Oxford: Westview Press, 1995), 73.

15 Kedourie, *Nationalism*, 123.

16 Weitz, *A Century of Genocide*, 21.

ծունեության հետևանքով: Ներթափանցելով հանդերձ՝ դրանք սինթեզվում էին տեղական իսլամական և օսմանյան գաղափարների հետ՝ տալով նոր որակ: Առաջին խմբավորումը, որը կրում էր Արևմուտքի գաղափարական ազդեցությունը, 1860-ականներին գործող ընդդիմադիր «նոր օսմաններն» էին: Սակայն առաջին քաղաքական ուժը, որն արևմտյան գաղափարները դրեց իր քաղաքականության հիմքում՝ «Միություն և առաջադիմություն» կոմիտեն էր: Իշխանության գալով՝ այն հսկայական դերակատարում ունեցավ թուրքական քաղաքական մտքի ձևավորման վրա, որը մինչ օրս արդիական է հանրապետական Թուրքիայում:

Կոմիտեի սկզբնավորումը՝ 1889-1902 թթ.

1876 թ. սահմանադրության ընդունումից մեկ տարի անց սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը նախ պաշտոնանկ արեց «սահմանադրության հայր» Միդհատ փաշային¹⁷, ապա, օգտվելով ռուս-թուրքական պատերազմի արդյունքում ստեղծված իրավիճակից, կասեցրեց սահմանադրությունը և ցրեց խորհրդարանը: Համիդյան բռնատիրությունը հաստատվեց՝ սակայն ոչ միանգամից: Սուլթանի կառավարման առաջին տարիներին թանզիմայան¹⁸ կրթական բարենորոգումները շարունակվեցին, կրթական հաստատությունների թվաքանակն ավելացավ ևս ութսունով, որոնք սակայն կարճ կյանք ունեցան¹⁹: Բանակի մոդեռնիզացման և երկրի անվտանգության տեսանկյունից սուլթանի հատուկ ուշադրությունն էին վայելում ռազմական, ռազմաբժշկական կրթական հաստատությունները, որոնք էլ հետագայում դարձան հակասուլթանական տրամադրությունների կենտրոններ²⁰:

1889 թ. հեղափոխական կենտրոն դարձավ Կ.Պոլսի Արքայական զինվորական բժշկական դպրոցը (Mektebi Tibbiyeyi Askeriye): Հաստատության չորս ուսանող՝ ալբանացի Իբրահիմ Թեմնո, չերքեզ Մեհմեդ Ռեշիդը, քրդեր Իսհակ Սյուկուրին և Աբդուլլահ Ջևդեթը, հաշվի առնելով ֆրանսիական հեղափոխության փորձը, հեղափոխության հարյուրամյա տարելիցին իտալական կարբոնարիներ²¹ մոդելով հիմնեցին

17 Ահմեդ Միդհատ փաշան (1822-1883) թուրք պետական գործիչ էր: Գաղափարապես հարել է ընդդիմադիր նոր օսմաններին: 1876-1878 թթ. զբաղեցրել է կայսրության մեծ վեզիրի պաշտոնը, գլխավորել է սահմանադրական շարժումը, համահեղինակել է 1876 թ. օսմանյան առաջին սահմանադրությունը: Սուլթան Աբդուլ Համիդի պատվերով խեղդամահ է արվել:

18 Խոսքը գնում է 1839 թ. (հաթթ-ը շերիֆ), 1856 թ. (հաթթ-ը հյումայուն) սուլթանական հրովարտականների մասին, որոնցով կայսրության բոլոր բնակիչներին, անկախ կրոնական պատկանելությունից, տրվում էր կյանքի և ունեցվածքի ապահովություն: «Հավասար վերաբերմունքի» սկզբունքը արտացոլվել է նաև 1840-ականների որոշ օրենսդրական ակտերի մեջ, որոնք ամբողջությամբ հայտնի են «թանզիմայան բարենորոգումներ» անվամբ: Տե՛ս Ռուբեն Սաֆրաստյան, *Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.)*, (Երևան, «Լուսակն», 2009), 48, 50, 61:

19 Bernard Lewis, *The Emergence of Modern Turkey*, third ed. (New York, Oxford: Oxford University Press, 2002), 181.

20 Ahmed Emin, *The Development of Modern Turkey as Measured by its Press* (New York: Longmans, Green & Co., Agents, 1914), 72.

21 Իտալիայում 1800-1831 թթ. ակտիվ գաղտնի հեղափոխական կազմակերպությունների ցանց, որի նպատակը Իտալիայի միավորումն էր: Կազմակերպության առանձնահատկությունը օթյակների

«Օսմանյան միության ընկերությունը» (İttihad-i Osmanî Cemiyeti), որի միակ նպատակը սուլթանի բռնատիրությունը տապալելն էր²²:

1895 թ. սեպտեմբերին, օգտվելով մայրաքաղաքի խառն իրադրությունից, երբ հայերը համադյան կոտորածների դեմ բողոքի ցույց էին կազմակերպել, երիտթուրքերը²³ հանրայնացրին իրենց կուսակցության ուղերձը: Գրքուկում Իբրահիմ Թեմնոն և Իսհակ Սյուկուրին նախ հայտնեցին իրենց դժգոհությունը Բարձր Դռանը դեմ գնալու «հայրենակից հայերի հանդգնության» վերաբերյալ, այնուհետև հայտնեցին, որ թուրքերը դժգոհ են վարչակարգից, ինչպես մյուս օսմանցիները: Սրան հաջորդում է բռնատիրության դեմ միասին պայքարելու կոչը: Մանիֆեստն ստորագրված էր արդեն օսմանյան «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անունից²⁴: Սա տեղիք տվեց ձերբակալությունների, որը ստիպեց երիտթուրքերից շատերին ապաստան փնտրել արտերկրում: Նրանց մի մասը գալով Փարիզ՝ պարզեց, որ այստեղ արդեն գործում է երիտթուրքական մի բաժանմունք՝ Բուրսայի նահանգի հանրային կրթության նախկին տնօրեն Ահմեդ Ռիզայի ղեկավարությամբ: Բաժանմունքի հրատարակած երկլեզու պարբերական «Մեշվերեթը»՝ ֆրանսերենով և օսմաներենով, դարձավ կոմիտեի պաշտոնաթերթը:

Դեկտեմբերին թերթը հրապարակեց կոմիտեի ծրագիրը: Հակասություն կար ոչ միայն ֆրանսերեն և օսմաներեն տարբերակների, այլև օսմաներենի՝ հեղափոխություն քարոզող առաջին և խաղաղ առաջընթաց, կարգ ու կանոն, համընդհանուր կրթություն քարոզող վերջին պարբերությունների միջև: Կարգ ու կանոնով առաջընթաց գրանցելու գաղափարը արձագանքն էր Ռիզայի պոզիտիվիստական աշխարհայացքի²⁵: Ընդ-

բաժանվելն էր: Երիտթուրքերը մանրամասն ուսումնասիրել և ընդօրինակել են կարբոնարիների և մասոնական օթյակների կառուցվածքային առանձնահատկություններ: Տե՛ս Арсен Авакян, *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений* (Ереван: ММГА, 2013), 12-13.

22 Անդամներից էին նաև Շերեֆեդդին Մազմունին, Գիրիթի Շեֆիկը, Ջևդեթ Օսմանը, Քերիմ Սերաֆին, Մեթեի Սարրին և Սալոնիկցի Նազըմը, Ասաֆ Դերվիշը, Հեքցեզովինցի Ալի Ռուշդի, Մուհամեմ Գիրիդը, Կոսովացի Իբրահիմը, Նեջիբ Դրազան, փոստի աշխատակից Թալաաթ բեյը: Տե՛ս Ernest Edmondson Ramsaur, *The Young Turks: Prelude to Revolution* (New York: Russell&Russell, 1970), 15:

23 Նոր եվրոպական՝ ազատական, սահմանադրական գաղափարներ կրող թուրքերին եվրոպական մտավոր շրջանակները և մամուլը անվանում էին «երիտասարդ թուրքեր», որպես օրինակ ունենալով ավելի վաղ սկսված իտալական «երիտասարդ Իտալիա» ազգայնական շարժումը: Հետագայում երիտթուրքերը մի քանի կազմակերպություններ հիմնեցին, որոշներն առհասարակ անկախ էին գործում, սակայն պատմագրության մեջ «երիտթուրք» անվանումը վերագրվում է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամներին: Հոդվածը պահպանում է այդ ընդունված սկզբունքը:

24 Юрий А. Петросян, *Младотурецкое движение (вторая половина XIX - начало XX в.)* (Москва: Наука, 1971), 170-171.

25 Анатолий Д. Желтяков, *Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729-1908 гг.)*, (Москва: Наука, 1972), 252. Պոզիտիվիզմը փիլիսոփայական ուղղություն է, համաձայն որի միայն փորձով ապացուցված գիտելիքն է ճշմարիտ՝ պոզիտիվ: Ըստ պոզիտիվիզմի հիմնադիր Օգյուստ Կոնտի՝ հասարակությունը ենթարկվում է բնագիտության օրենքներին, իսկ հասարակական բոլոր խնդիրների լուծումը գիտության գարգացումն է: Հասարակությունը Կոնտի համար բարձրագույն էակ է, որին անհատը պետք է ենթարկվի: Պոզիտիվիզմը մերժում էր բոլոր կրոնները և պնդում, որ հավակնում է նոր՝ «գիտության կրոնի» հիմնմանը: Կոնտը հասարակական կարգը բռնի փոփոխելուն ուղղված հեղափոխությունները, ապստամբությունները դիտարկում էր որպես պաթոլոգիա: Որպես

հանուր առմամբ ծրագրի հիմնական կետերն էին. կոմիտեն չէր պայքարում իշխող դինաստիայի դեմ, 1876 թ. սահմանադրությունը պետք է վերահաստատել, բարենորոգումներ իրականացնել ոչ թե որևէ նահանգի կամ ազգի, այլ կայսրության ողջ տարածքի և սուլթանի բոլոր հպատակների համար: Այն նաև նպատակ ուներ կայսրության զարգացման համար փոխառելու Արևմուտքի գիտական ձեռքբերումները՝ պահպանելով արևելյան քաղաքակրթության առանձնահատկությունները²⁶: Գրեթե միաժամանակ Կ.Պոլսի բաժանմունքը կազմում է նաև կոմիտեի կանոնադրությունը: Ինչպես և «Մեշվերեթի» ծրագրում, այստեղ ևս շեշտվում էին սուլթանական դինաստիայի իշխանության պահպանման, կայսրության տարածքային ամբողջականության և երկրի ինքնիշխանության վերաբերյալ դրույթները²⁷:

Երիտթուրքերի միջև հակասությունները բազմաթիվ էին, որոնց մեծ մասը ուղղակիորեն կապված էր Ռ-իզայի անձի և նրա փիլիսոփայական համոզմունքների հետ²⁸: Այդ խնդիրներն ի հայտ եկան 1895 թ., երբ Փարիզ ժամանեց Մուրադ բեյը²⁹: Նա գլխավորեց Ժնևի երիտթուրքական խմբակը՝ «Միզանը» դարձնելով դրա օրգանը, որը շրջանառությամբ շուտով գերազանցեց «Մեշվերեթին»: Ռ-իզայի և Մուրադի գաղափարական բախումները խորացնում էին լարվածությունը Եվրոպայում գործող երիտթուրքական բաժանմունքների միջև³⁰: Մուրադը կողմ էր օտարերկրյա միջամտությանը և բռնի հեղափոխությանը, իսկ Ռ-իզան՝ միանշանակ երկուսին էլ դեմ էր³¹: Նրանց պայքարն

այլընտրանք հեղափոխությանը՝ առաջ էր քաշում համընդհանուր կրթությունը, որն առաջընթաց գրանցելու միակ միջոց էր: Կարգախոսն էր «կարգ և առաջադիմություն»: Մանրամասն տե՛ս Джон-Стьюартъ Милль, Курсъ позитивной философии Огюста Конта, *Огюсть Контъ и позитивизмъ*, статьи Д. С. Милля, Г. Спенсера, Л. Уорда (Москва: И. Н. Кушнеревъ и К^о, 1897), 26, 42.

26 Петросян, *Младотурецкое движение*, 174; նաև՝ Ստեփանոս Սապահ-Գիլեան, *Պաշալիսանապրունները* (Փրահա, «Երիտասարդ Հայաստան», 1916), 129:

27 Петросян, *Младотурецкое движение*, 176-177.

28 Ռ-իզան պոզիտիվիզմից ազդվել էր ոչ թե անմիջականորեն Կոնստից, այլ իր ուսուցիչ Պիեռ Լաֆիտից: Ըստ հնչակյան գործիչ և ժամանակակից Սապահ-Գուլյանի՝ Ռ-իզան սոցիալիստական հոսանքներով և փիլիսոփայական այլ ուղղություններով չհետաքրքրվող սահմանափակ անձնավորություն էր, որ Լաֆիտի միջոցով միայն կարողացավ կապեր հաստատել Փարիզի վերնախավի հետ: Դասախոսություններից մեկը սիրելի աշակերտի խնդրանքով Լաֆիտը նվիրել է Օսմանյան կայսրությանը, որի ընթացքում այն հռչակել է խաղաղ առաջընթացի, իր ներքին խնդիրները լուծելու ունակ երկիր, իսկ Կ.Պոլսի հույների խռովությունները հռչակել անօրինական: Երբ ուսանողներից մեկը տեղեկացրել է, որ Կ.Պոլսի Գում Գափուի ցույցը կազմակերպել են ոչ թե հույները, այլ հայերը, փիլիսոփան զարմացել է, որ կայսրությունում դեռևս ապրող հայեր կան: Տե՛ս Սապահ-Գիլեան, *Պաշալիսանապրունները*, 131:

29 Պատմաբան և լրագրող Մուրադ բեյը Դադատանի Ուրախի գյուղից էր՝ Ամիրով Հաջի Մուրադ: Ավարտել է Ստավրոպոլի գիմնազիան: Ունենալով գրական հակում՝ հեղինակել է «Հյուսիսային Կովկասի լեռնականների մեջ» աշխատությունը: 1872 թ. մեկնել է Ցյուրիխ՝ ուսումը շարունակելու, որտեղից այլևս ցարական Ռուսաստան չի վերադարձել, այլ՝ մեկնել է Կ.Պոլիս: Օսմանյան կայսրությունում նա դասավանդել է պատմություն, հեղինակել է «Համաշխարհային պատմություն» վեց հատորյակը և «Օսմանյան պատմություն» հատորյակը: Կ.Պոլսում թուրքերեն է թարգմանել մի շարք վեպեր և շարունակել գրական գործունեությունը:

30 Lewis, *The Emergence of Modern Turkey*, 200.

31 Şükrü M. Hanioglu, *The Young Turks in Opposition* (New York, Oxford: Oxford University Press, 1995), 83.

անսպասելի ելք ունեցավ: Տեղի տալով սուլթանի պաշտոնի առաջարկին և բարենորոգումների սուտ խոստումին՝ Մուրադը, լքելով հակասուլթանական ճամբարը, վերադարձավ կայսրություն³²:

Երիտթուրքերի շարքերը համարվեցին 1899 թ., երբ սուլթանի փեսա Դամադ Մահմուդ փաշան փախավ կայսրությունից: «Մեշվերեթը» ողջունեց Մահմուդի և նրա որդիների՝ արքայազն Մեհմեդ Սաբահեդդինի և Ահմեդ Լյութֆուլլահի՝ հակասուլթանական շարժմանը միանալու պատրաստակամությունը: Շուտով նրանց միացավ նաև այրանացի բարձրաստիճան պաշտոնյա Իսմայիլ Քեմալ բեյը³³: Սաբահեդդինը դարձավ երիտթուրքական շարժման ակտիվ մասնակիցներից և առաջին հերթին հանդես եկավ համասոմանական կոնգրես գումարելու առաջարկով:

Օսմանյան լիբերալների առաջին կոնգրեսը գումարվեց Փարիզում 1902 թ. փետրվարի 4-9-ը: Թեև բոլոր պատվիրակությունները նախնական համաձայնության էին եկել կազմակերպիչների հետ, կոնգրեսի ընթացքում երկու նոր առաջարկ արվեց, որոնք պառակտեցին երիտթուրքական կոմիտեն:

Առաջին առաջարկը Իսմայիլ Քեմալին էր: Նա հայտարարեց, որ բացառապես մամուլի քարոզով երիտթուրքերի մոտ «խաղաղ» հեղափոխություն կարժես թե չի ստացվում, հետևաբար բռնի ուժ գործադրելու ժամանակն է: Երկրորդը՝ նախնական համաձայնագրում խոստացված բարենորոգումների վրա օտարերկրյա վերահսկողություն սահմանելու կետի ավելացումն էր, որը պատկանում էր հայկական պատվիրակությանը³⁴: Սաբահեդդինը, չցանկանալով խաթարել հակասուլթանական ճակատի միասնությունը, որին մեծ դժվարությամբ էր հասել, աստիճանաբար հակվեց երկու կետին էլ: Ահմեդ Ռիզան և Հալիլ Գանեսը, որոնք ներկայացնում էին «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, մերժեցին երկուսն էլ, ընդ որում՝ վերջին առաջարկությունը Ռիզան դիտարկեց որպես ինտերվենցիայի բացահայտ հրավեր: Նա նաև հայտարարեց, որ նման կարգի համաձայնություն կարող է կնքվել երկու ինքնիշխան պետությունների միջև, ծայրահեղ դեպքում՝ օսմանցիների և բուլղարացիների, բայց ոչ

32 Raymond Kévorkian, *The Armenian Genocide: a Complete History* (London, New York: I.B. Tauris, 2011), 15:

33 Ahmet Bedevi Kuran, *Inkilap Tarihimiz ve Jön Türkler*, 2 baski (Istanbul: Kaynak Yayinlari, 2000), 85, 88.

34 Նույն տեղում, 190, 191. Կոնգրեսին մասնակցելու հրավեր ստացել էին Հայ Հեղափոխական Դաշնակցությունը, Վերակազմյալ հնչակյան և Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան կուսակցությունները: Վերջինս չէր պատասխանել, իսկ նախորդ երկուսը առաջադրել էին երեք ներկայացուցիչ: Երկու կուսակցությունը, գործելով փոխհամաձայնեցված, Իսմայիլ Քեմալի հետ նախնական հանդիպման ժամանակ ստանալով Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի և 1895 թ. մայիսի 11-ի բարենորոգումների ծրագրի ու հավելվածի ընդունման հավաստիացումներ, հաստատել են իրենց մասնակցությունը: Մասնակցության հրավեր ստացել էին նաև անկուսակցական Միսաս Չերազը և Կ. Բասմաջյանը, որոնք համաժողովում հայտնել են իրենց համաձայնությունը հայ կուսակցականների ներկայացրած պահանջներին: Արդեն կոնգրեսում Սաբահեդդինի առաջարկած նախագծի ընդունման քվեարկությանը հայկական պատվիրակությունը հրաժարվել է մասնակցել՝ դեմ կանգնելով 61-րդ հոդվածը կայսրության բոլոր շրջանների վրա տարածելու կետին, ինչպես նաև այն կետին, համաձայն որի բարենորոգումների երաշխիքը լինելու էր 1876 թ. սահմանադրությունը: «Օսմանցի ազատականների համաժողովը», *Դրօշակ* (Ժնև), փետրվար 1902, 23-24:

երբեք նույն պետության տարբեր շրջաններում բնակվող քաղաքացիների: Իսմայիլ-Քեմալը նույնպես հաստատեց, որ որպես օսմանցի՝ հայերն ունեն իրավունքներ, բայց ոչ երբեք իրավունք սակարկելու թուրքերի հետ, ինչպես դա կաներ մեկ այլ պետություն³⁵:

Կոնգրեսի արդյունքում երիտթուրքերը պառակտվեցին երկու ճամբարի: Սա նաև ներքին վերակազմավորում էր, քանի որ երիտթուրքերի անվան տակ գործող բազմաթիվ խմբեր ձուլվեցին այս ճամբարների մեջ: Ահմեդ Ռիզայի խումբն իրականում ձևավորումից ի վեր գործող «Միություն և առաջադիմություն» էր, որի օրգանն արդեն տպագրվող «Մեշվերեթն» էր և նոր թերթ «Շուրայը Ումմեթը»՝ Սամիփաշագադե Սեզայի բեյի խմբագրությամբ: Կոմիտեի ծրագիրը տառացիորեն կրկնում էր 1895 և 1897 թթ. ծրագրերը՝ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության և ինքնիշխանության պահպանում, 1876 թ. սահմանադրության վերահաստատում, բոլոր հպատակների միասնության և հայրենասիրության գաղափարների տարածում կայսրությունում, սուլթանի տապալում, սակայն դինաստիայի պահպանում: Սաբահեդդինը, Իսմայիլ Բենալի աջակցությամբ 1902 թ. փետրվարին հիմնեց «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման» կազմակերպությունը, որի ծրագիրն ուղղակիորեն արտացոլված է անվան մեջ³⁶: Երկու կազմակերպությունների պառակտումը կանխորոշեց գաղափարական այն երկու հոսանքը, որը հետագայում գերիշխեց Օսմանյան կայսրության քաղաքական դաշտում գրեթե մինչև 1923 թ.:

Գաղափարական հիմնական գծերը 1889-1902 թթ.

Նշված ժամանակահատվածում «Միություն և առաջադիմություն» կոմիտեն և դրա անվան տակ գործող տարբեր խմբակները, որոնցից որոշներն ընդամենը երեք անդամ ունեին, ներկայացնում էին խայտաբղետ «զանգված», առանձնանում թույլ կազմակերպվածությամբ, ծրագրային ու գաղափարական հակասություններով: Այլ բան, քան սուլթանի գահընկեցությունն էր, նրանց չէր կապում: Կ.Պոլսի և Կահիրեի խմբակները, օրինակ, ունեին խիստ կրոնական ուղղվածություն, Բալկաններում ուժեղ էր դյունմեների³⁷ դերակատարությունը, Մերսինի բաժանմունքի գործադիր կոմիտեն հայ-մուսուլմանական էր³⁸:

Թեև կոմիտեի ձևավորման շրջանում որպես նպատակ շեշտադրվում էր սահմանադրական կարգեր հաստատելը, այնուամենայնիվ երիտթուրքական շարժումը սահմանադրական, լիբերալ, հեղափոխական կարելի է համարել միայն վերապահումներով: Համընդհանուր հեղափոխության գաղափար նրանք չեն կրել: Կոմիտեի ծրագիրը նախատեսում էր 1876 թ. Միդհատյան սահմանադրության վերահաստատում, որն,

35 Hanioglu, *The Young Turks in Opposition*, 195- 196.

36 Петросян, *Младотурецкое движение*, 210-211.

37 Օսմանյան կայսրությունում ծայտյալ հրեաների խումբ, որոնք ռաբբի Շաբաթայի Ցվիին հետևելով առերևույթ իսլամ էին ընդունել 17-րդ դարում: Երանց մշակութային և ֆինանսական կենտրոնը Սալոնիկն էր: 20-րդ դարի սկզբին նրանցից շատերը ձուլվել էին թուրքական հասարակությունում:

38 Hanioglu, *The Young Turks in Opposition*, 168.

որոշակի հավասարություն հաստատելով մուսուլմանի և քրիստոնյայի միջև, միանշանակ պահպանում էր թուրքերի գերիշխող դիրքը կայսրությունում³⁹: Մուրադ բեյը նույնիսկ դեմ էր համընդհանուր ընտրություններով խորհրդարան հրավիրելուն՝ պնդելով, որ սուլթանի համար խորհրդատվական մարմնի հիմնումը՝ ոչ մուսուլմանների ներգրավմամբ, միանգամայն բավարար է կայսրության խնդիրները լուծելու⁴⁰:

Երիտթուրքական շարժումը նաև էլիտիստական էր⁴¹. նրանց պատկերացմամբ պետությունը պետք է կառավարեր մտավորական վերնախավը, քանի որ մարդիկ հավասար չեն: Փարիզի բաժանմունքը հպարտորեն նշում էր, որ իր հենարանը աղաները, բեյերը, սուլթանի մերձավորները և պետական պաշտոնյաներն էին: Հետևելով արևմտյան մատերիալիստական և պոզիտիվիստական գաղափարներին, որոնք հասարակությունը դիտարկում էին որպես օրգանիզմ՝ նրանք գտնում էին, որ յուրաքանչյուր մարդ որոշակի պարտականություններ ունեցող մի բջիջ է: Ընդ որում Մուրադ բեյը պնդում էր, որ ծանր պարտականությունները բաժին են ընկնում «կարևոր» մարդկանց, իսկ թեթևները՝ «նվազ կարևորներին»⁴²:

Հետաքրքրություն է ներկայացնում կրոնին տրվող դերը երիտթուրքերի աշխարհայացքում: Չլինելով մոլեռանդ մուսուլմաններ՝ իսլամը նրանց հետտորաբանությունից երբեք դուրս չի եկել մի շարք պատճառներով: Նախ՝ Օսմանյան կայսրությունը մուսուլմանական էր, որը կառավարում էր սուլթան-խալիֆը: Հակակրոնական որևէ քարոզ կարող էր հզոր գեներ դառնալ սուլթանի ձեռքում ընդդեմ կոմիտեի:

Իսլամը նաև քարոզչական գործիք էր: Լե Բոնի հետ համակարծիք լինելով, որ բոլոր քաղաքական և սոցիալական համոզմունքներն ամբոխի կողմից ընկալելի են դառնում միայն կրոնական երանգ ունենալու դեպքում⁴³՝ երիտթուրքերն իրենց գործողությունները հաճախ քողարկում էին Ղուրանից մեջբերումներով: Նրանց շրջանում տարածված ասացվածք էր. «Գիտությունը վերնախավի կրոնն է, այն դեպքում, երբ կրոնն ամբոխի գիտությունն է»⁴⁴:

Իսլամի առկայությունը 1889-1902 թթ. երիտթուրքերի քարոզչության մեջ ուղղակիորեն կապված էր նաև ուլեմաների⁴⁵ անդամակցությամբ և մի շարք սուֆիական օրդենների⁴⁶ հետ համագործակցությամբ:

39 Եղիշե Թ-ոփչեան, *Երիտթուրքերի Թիւրքիան և հայերը*, մասն առաջին (Թիֆլիս, Շրոմա, 1909), 139-140:

40 Hanioğlu, *The Young Turks in Opposition*, 93.

41 Էլիտիզմը 20-րդ դարասկզբին Եվրոպայում ծագած գաղափարախոսություն է, համաձայն որի հասարակության մեջ գոյություն ունի վերնախավ, որը կառավարում է այն: Հասարակությանը, որի առաջընթացը պայմանավորված է միայն վերնախավի ունակություններով, վերապահվում է միայն պասիվ ենթարկվողի դեր:

42 Hanioğlu, *The Young Turks in Opposition*, 204.

43 Лебон, *Психология народов*, 242.

44 Hanioğlu, *The Young Turks in Opposition*, 202.

45 Իսլամի տեաական և գործնական կողմերին գիտակ, մուսուլմանական կրթություն ստացած մարդկանց հավաքական անվանում:

46 Սուֆիզմ կամ թասավուֆ՝ իսլամում միստիկական ուղղություն, դասական մուսուլմանական

Այս և գործունեության հետագա փուլերում երիտթուրքերն ամեն կերպ արդարացրել են իսլամը, այն ներակայացրել որպես արդիականացման կրոն: Տեղին է նշել 1896 թ. մայիսին լույս տեսած Ռիզայի՝ հայկական ջարդերը «ողբալի իրադարձություններ» որակող հոդվածը, որը ոչ այնքան հայերի կոտորածները դատապարտելու, որքան սուլթանին իսլամի դրոյթներին դեմ գործող միապետ հռչակելու «Մեշվերեթի» նոր ռազմավարության դրսևորումն էր⁴⁷: Մինևույն ժամանակ Փարիզում տարբեր անձանց հետ խոսակցության ընթացքում նա սովորություն է ունեցել շեշտելու իր մոր քրիստոնյա լինելը⁴⁸:

1889-1902 թթ. երիտթուրքերի ազգայնականությունը, որն ուսումնասիրման առանձնակի հետաքրքրություն ներկայացնող խնդիր է, դեռևս թուրքական չէ: Կոմիտեի հիմնադիրների և առաջնորդների ընդհանրությունը ազգային պատկանելությունը չէր, ինչպես նշել էինք, այլ կրոնականը⁴⁹: Նրանց հռետորաբանությունը շարունակում էր մնալ հայրենասիրական՝ աշխարհագրական տարածքով պայմանավորված և ուղղված բոլոր օսմանցիներին: «Շուրայը Ումմեթի» խմբագիր Սեզաի բեյը 1902 թ. գրում էր, որ կայսրության բոլոր ժողովուրդների հայրենիքն Օսմանյան կայսրությունն է, քանի որ նրանք ծնվել են նույն երկնքի տակ, մեծացել են մինևույն կլիմայական պայմաններում, շնչել նույն օդը: Ձևակերպումը շատ նման է նոր օսմաններից Նամըկ Քեմալի հայրենիքի սահմանմանը⁵⁰, ինչը պայմանավորված էր նրանով, որ Սեզայի բեյը բազմիցս հանդիպել էր նրան կենդանության օրոք⁵¹:

Կոմիտեի մեջ թուրքերի և օսմանամետ արաբների թվային գերակշռությունն այն դարձնում էր կայսրության մուսուլմանների շահերի պաշտպան: Իսիակ Սյուկուրթին, օրինակ, կոչ էր անում ալբանացիներին և քրդերին միավորվել թուրքերի հետ՝ ընդդեմ հայերի և բալկանյան քրիստոնյաների: Թեմոն անձամբ ֆինանսավորում էր ալբանական ազգային-ազատագրական կոմիտեները⁵²: Սակայն կայսրության ամբողջականությունը պահպանելու նպատակով երիտթուրքերը սկսեցին համագործակցել նաև կայս-

փիլիսոփայության ուղղություններից, որի մեջ հիմնականը աստծու միատիկական ճանաչողության գաղափարն է: Սուֆիզմի հետևորդները բաժանվում են եղբայրությունների՝ օրդենների: Օսմանյան կայսրությունում գործող օրդենները՝ նակշբենդի, բեկթաշի, մեվլևի և այլք համագործակցում էին կոմիտեի հետ, քանի որ դեմ էին տիրող քաղաքական ռեժիմին:

47 Ahmet Rıza, “Chrétien, Musulman et Humanité,” *Mechveret Supplément Français*, May 15, 1896, 3.

48 Սապահ-Գիլեան, *Պաշտախանայունները*, 132:

49 Erik J. Zürcher, *The Young Turk Legacy and Nation Building: from the Ottoman Empire to Atatürk’s Turkey* (London, New York: I.B.Tauris, 2010), 98-99.

50 «Նոր օսմաններից» Նամըք Քեմալը, ով հետագայում հռչակվեց «հայրենիքի և ազատության երգիչ», իր ստեղծագործություններում տվել է հայրենիքի սահմանումը: Ինչպես արևմտաեվրոպական ազգայնական շարժումներում, նրա մոտ ևս կարևոր տարրերակիչ են տարածքը, ինքնիշխանությունը, որը միավորում է նույն լեզվով խոսող մարդկանց: Հայրենիքը Քեմալի համար «գրողի փետուրով տարված ենթադրյալ գծերը չեն», այլ սուրբ գաղափար, հարազատ վայր, հատուն որի կարելի է գնալ ցանկացած զոհողության: Մեջբերումը «Իբրեթի»՝ 1873 թ. մարտի 22-ի համարից է, տե՛ս Lewis, *The Emergence of Modern Turkey*, 337:

51 Желтяков, *Печать в общественно-политической*, 276, 277.

52 Hanioglu, *The Young Turks in Opposition*, 169.

րության ոչ մուսուլմանների հետ օսմանիզմի գաղափարախոսության ներքո: Ինչպես գրում էր Մուրադ բեյը «Միզանում», եթե ինչ որ հայ հայտարարի, որ ինքն օսմանցի է, հավատարիմ է օսմանիզմին և պատրաստ է ծառայել դրան կոմիտեի ծրագրի շրջանակներում, ապա թուրքին հատուկ հյուրասիրությունն ու մեծահոգությունը պարտադրում են նրան հայրենակից անվանել և ընդունել կոմիտեի շարքերը⁵³: Այս մոտեցումով են բացատրվում Ահմեդ Ռիզայի և դոկտոր Նազըմի փոխհամագործակցության առաջարկները Սոցիալ Դեմոկրատական Հնչակյան կուսակցության առաջնորդ Սապահ-Գուլյանին, ընդդիմադիր հայ-թուրքական պատվիրակության մասնակցությունը 1899 թ. Հաագայի խաղաղության կոնֆերանսին⁵⁴ և, իհարկե, 1902 թ. Օսմանյան լիբերալների առաջին կոնգրեսին⁵⁵: Հայկական կազմակերպությունների հետ համագործակցությունը նաև նպատակ ուներ չեզոքացնելու Հայկական հարցի նկատմամբ անցանկալի միջազգային ուշադրությունը: Ռիզայի ընդդիմանալը հեղափոխությանը և բարենորոգումների նկատմամբ օտարերկրյա վերահսկողությանը հայկական շրջանակներում մտավախություն էր առաջացնում, որ երիտթուրքերը պարզապես սպասում են Համիդի մահվանը՝ երկրի քրիստոնյա բնակչությանը ձուլելու կամ ոչնչացնելու համար⁵⁶:

Միաժամանակ երիտթուրքական ազգայնականության մեջ արդեն դիտարկվող թուրքական ինքնության տարրերը կարելի է որակել որպես ռեակցիա ազգային փոքրամասնությունների ազատագրական պայքարին և վախին, որ այդ պայքարով պայմանավորված օտարերկրյա միջամտությունը կայսրությունը կկանգնեցնի տարածքային նոր կորուստների առաջ⁵⁷: Երիտթուրք բոլոր առաջնորդները խոսում էին կայսրության թուրք տարրի անունից և արտահայտում նրանց շահերը: Նրանց աշխարհայացքում աստիճանաբար կարծրանում էր այն մտայնությունը, որ Օսմանյան կայսրությունը թուրքերի ստեղծած երկիրն է, հետևաբար, պետք է ղեկավարվի նրանց կողմից⁵⁸: Ռիզան հայտարարում էր, որ կապիտուլյացիաներով պաշտպանված՝ միսիոներական տները, օտար դպրոցները, հյուպատոսարանները ապաստան և զենք առաջարկում են միայն կայսրության հայ և բուլղար ժողովուրդներին, ցարը նույնիսկ միջամտում է քրիստոնյաների պաշտպանության համար, երբ նրանք համարձակվում են գրավել Բանկ Օտտոմանը⁵⁹: Այս կետում նրա գաղափարական հակառակորդ

53 Петросян, *Младотурецкое движение*, 269.

54 Հաագայի կոնֆերանսը գումարվել է 1899 թ. մայիսի 18-ին ռուսական ցար Նիկոլայ 2-րդի ծննդյան օրը, քանի որ կոնգրեսի առաջարկը նրան էր պատկանում: Կոնֆերանսի արդյունքում կնքվել են բազմակողմ պայմանագրեր միջազգային իրավունքի շրջանակներում, որոնց թեման պատերազմի օրենքները և պատերազմական հանցագործություններն էին: Ընդհանուր լուսմների ժամանակ Ահմեդ Ռիզայի պատվիրակությունը, թեև հրավեր չուներ, սակայն ներկայացրել է հուշագիր սուլթանի դեմ և ներկայացրել կայսրության ժողովրդի աղետալի վիճակը:

55 Kévorkian, *The Armenian Genocide*, 15.

56 «Քաղաքական անցումարձք», *Իրաունը* (Վառնա), 8 մայիսի 1902, 1:

57 «Միություն Թիւրքերի հետ», *Դրօշակ* (Ժնև), հոկտեմբեր 1900, 114:

58 Желтяков, *Печать в общественно-политической*, 262.

59 Ramsaur, *The Young Turks*, 64.

Սաբահեդդինը համակարծիք էր: 1902 թ. Փարիզի կոնգրեսի ժամանակ խոսվեց այն մասին, որ կայսրության միակ քաղցած և տառապող տարրը թուրքերն են, իսկ Սաբահեդդինը հավելեց, որ այդ ամենով հանդերձ միայն նրանք են, որ իրենց համար ոչինչ չեն պահանջում⁶⁰: 1902 թ. հետո և՛ Սաբահեդդինը, և՛ Ռիզան շարունակեցին գործածել «օսմանցի» տերմինը, ընդ որում առաջինը սուլթանի հպատակ բազմաթիվ հանրային ինչ-որ կերպ կոչելու, իսկ երկրորդը՝ նշելու համար այն մարդուն, որը դեռևս թուրք չէ, բայց դառնալու ճանապարհին է⁶¹: Ընդ որում թեև կոնգրեսում Ռիզայի գլխավորած պատվիրակությունը թվական փոքրամասնություն էր, այն արտահայտում էր կոմիտեի մեծամասնության դիրքորոշումը: Նրանց ուղեգրի՞ 1902 թ. ներկուսակցական վերակազմավորումներից հետո դարձավ կոմիտեի ծրագիր:

Կոմիտեի գործունեությունը 1902-1908 թթ.

1902-1906 թթ. երիտթուրքական շարժումը շարունակեց ընդլայնվել, նոր խմբակներ ստեղծվեցին Ժնևում, Կահիրեում, նույնիսկ Պոլսում, որը 1897 թ. հեղաշրջման փորձի բացահայտումից և ձերբակալություններից հետո պասիվ վիճակում էր հայտնվել: «Միություն և առաջադիմության» Փարիզի բաժանմունքը կապ էր պահպանում կայսրության հետ, նոր բաժանմունքներ ստեղծելու կոչեր անում: Այս նամակագրական կապի պատասխանատուներ էին նշանակվել դոկտոր Նազըմը և Բեհաեդդին Շաքիրը: Վերջինս նույնիսկ 1906 թ. նոյեմբերին խմբակներ ստեղծելու կոչով դիմել էր «Կովկասի մուսուլման եղբայրներին»⁶²:

Երիտթուրքական նորաստեղծ խմբակների մեջ ամենակարևորը Սալոնիկում հիմնվածն էր, որի անդամները երրորդ բանակային կորպուսի սպաներն էին⁶³: Կազմակերպության անվանումը «Ազատության օսմանյան ընկերություն» էր, որն իր առաջին ժողովը գումարեց 1906 թ. հուլիսին: Ընկերության առաջին անդամներն էին Ռահմի բեյը, Մեհմեդ Թալաաթը, Իսմայիլ Ջանփոլադը, Միդհատ Շյուքրուն, գլխավոր շտաբի գնդապետ Ջեմալը և Ֆեթիհ բեյը⁶⁴: Շուտով խմբակներ ստեղծվեցին ողջ Բալկաններում՝ որպես անդամներ ունենալով նաև «Միություն և առաջադիմություն» կոմիտեականների: «Երիտթուրքական Գարիբալդի» Էնվեր բեյը խոստովանել է անգլիացի

60 Hanioglu, *The Young Turks in Opposition*, 188.

61 Ramsaur, *The Young Turks*, 93.

62 Желтяков, *Печать в общественно-политической*, 233.

63 Lewis, *The Emergence of Modern Turkey*, 205. 19-րդ դարում Օսմանյան կայսրությունում իրականացված բանակի և ռազմական գործի բարեփոխումների արդյունքում ողջ կայսրության տարածքը բաժանվել էր հինգ բանակային կորպուսների, որոնց թիվը՝ վերակազմավորման շտաբի պետ Վեհիբը, լեյտենանտ Աթիֆը, ադյուտանտ մայոր Նիլազի բեյը, Իսմեթ Իսնյուն, Բյազիմ Կարաբեքիրը, Սեյֆը փաշան և Հուսեյն Քադրին: Петросян, *Младотурецкое движение*, 236-237; Ramsaur, *The Young Turks*, 114:

քաղաքագետ Չարլզ Բաքստոնին, որ ընկերությունը նմանակել է Մակեդոնական հեղափոխական կազմակերպությանը (IMRO)⁶⁵ որպես առավել ակտիվ գործող ընդհատակյա կազմակերպություն: Ընդ որում՝ տեսնելով, թե երիտթուրքական բաժանմունքները Եվրոպայում շատ հաճախ միայն դեկավարի հայացքների պատճառով ինչպիսի գաղափարական հակասություններ էին ունենում, ընկերությունը որոշել էր չունենալ առաջնորդ, այլ որևէ խնդրի լուծման նպատակով հրավիրված ժողովի համար ընտրել նիստավար⁶⁶: Անդամները կրկին սպաներ և զիվորականներ էին, ինչը նախ պայմանավորված էր նրանց սոցիալական վատ վիճակով: Դրանից բացի՝ 1903 թ. Մյուրսթեզի ռուս-ավստրո-հունգարական համաձայնագրով Մակեդոնիայում տեղակայվել էր եվրոպական ոստիկանություն՝ օսմանյան երրորդ բանակային կորպուսի սպաներին պարտադրելով մշտական շփման ֆրանսիական, անգլիական, ավստրիական և ռուսական զինվորների հետ: Էսվեր բեյը, օրինակ, կցված լինելով ավստրո-հունգարական սպաներին Սկոպիեյում, այս հնարավորությունն օգտագործել է ռազմավարություն և գերմաներեն սովորելու համար: Սպաները շատ հաճախ համեմատում էին իրենց կիսաքաղց վիճակը և զինվորական հագուկապը եվրոպացի զինվորների հետ, ինչը հարուցում էր և՛ նախանձ, և՛ նրանց հետ մրցելու ցանկություն⁶⁷: Պատշաճ կրթություն ունենալով՝ այս սպաները հեշտությամբ էին վարակվում երիտթուրքական քարոզչությամբ: Իրենց հերթին նրանք հավաքագրում էին սովորական զինվորների, որոնց սոցիալական վիճակն ավելի ծանր էր: Այն դեպքում, երբ Մակեդոնիայի թուրք սպաներն ընթերցում էին Հերբերտ Սպենսերի և Դարվինի աշխատությունները և սողորված էին ազգայնական գաղափարներով, հասարակ զինվորները հետաքրքրված չէին որևէ փիլիսոփայական ուղղությամբ, սոցիալիզմով. նույնիսկ դրանք լսելը համարում էին զինվորի համար ավելորդություն: Սակայն նրանք նույնպես անդամագրվում էին ընկերությանը՝ հետաքրքրվելով երիտթուրքական ծրագրի միայն մեկ կետով՝ բռնատիրության տապալմամբ, որը նրանց թույլ կտար վերջապես գորացրվել սահմանված ժամկետից տարիներ ավել ձգված ծառայությունից⁶⁸:

Այսպիսով՝ 1907 թ. դրությամբ Մակեդոնիայում գործում էր երիտթուրքերի գաղափարները կրող, սակայն «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հետ անմիջական կապ չունեցող «Ազատության օսմանյան ընկերություն» հեղափոխական կազմակերպությունը: Նույն թվականին այդ կազմակերպության անդամներ Օմեր Նաջին և Հյուսրև Մամի Քըզըլդողան փախչելով սուլթանի լրտեսներից մեկնում են Փարիզ: Նրանց առաքելությունն էր նաև տեղում Ռիզայի և Սաբահեդդինի ծրագրերին ծանոթանալն ու նրանցից մեկի հետ միավորվելը: Փարիզում, իհարկե, ընտրությունը կանգ առավ «Միություն և առաջադիմության» վրա, քանի որ Շաքիրը և Նազըմը Սաբահեդ-

65 Վերջինս հիմնվել էր 1893 թ. նպատակ ունենալով պարտիզանական մարտավարությամբ հասնել Օսմանյան կայսրության Ադրիանապոլսի շրջանի և Մակեդոնիայի ինքնավարությանը, ունենալով ավելի քան 15.000 անկանոն զորք, նույնիսկ սեփական հարկահավաքներ:

66 Charles Roden Buxton, *Turkey in Revolution* (New York: Charles Scribner's Sons, 1909), 135.

67 Петросян, *Младотурецкое движение*, 125; Ramsaur, *The Young Turks*, 118:

68 Buxton, *Turkey in Revolution*, 36, 114.

դինին բրիտանական լրտես հռչակեցին, իսկ վերջինիս 1905 թ. հիմնված «Անձնական նախաձեռնություն և ապակենտրոնացման լիգայի» «ոչ թե վիլայեթները կենտրոնի, այլ կենտրոնը՝ վիլայեթների համար» սկզբունքը ծաղրի ենթարկեցին, քանի որ այն թեև չէր ենթադրում վիլայեթների ինքնավարություն, կայսրությունում բնակչության էթնիկ տեղաբաշխվածության պատճառով ի վերջո հանգեցնելու էր դրան: Միակ խոչընդոտը միավորման ճանապարհին Ռիզայի համար «Ազատության օսմանյան ընկերության» բռնի հեղափոխության մտադրություններն էին, ծրագրային այն երկու կետերից մեկը, որին նա միշտ ընդդիմացել էր: Պետք է նշել, սակայն, որ 1905 թ. հետո Շաքիրի և Նազըմի գործունեության շնորհիվ Ռիզայի դերակատարությունը դարձել էր սիմվոլիկ⁶⁹: Վերջինս ստիպված էր համընդհանուր ճնշմանը տեղի տալ, և 1907 թ. սեպտեմբերին երկու կազմակերպությունները՝ «Միություն և առաջադիմությունը» և «Ազատության օսմանյան ընկերությունը» միավորվեցին «Միություն և առաջադիմություն» անվան ներքո՝ նպատակ ունենալով ռեժիմի տապալումը (կրկին ոչ դինաստիայի) և Միդհատյան սահմանադրության վերահաստատումը⁷⁰:

1907 թ. դեկտեմբերին կոմիտեն հակահամիդյան ուժերը համախմբելու երկրորդ նախաձեռնությամբ հանդես եկավ: Օսմանյան լիբերալների երկրորդ կոնգրեսը գումարվեց Փարիզում՝ Ռիզայի, Սաբահեդդինի և Խաչատուր Մալումյանի (1863-1915, Ակնունի)⁷¹ նախագահությամբ⁷²: Մինչ կոնգրեսը մասնակցության առաջարկ էր արվել նաև հնչակյան երկու կուսակցությանը: Շաքիրը նաև Մապահ-Գուլյանին տեղեկացրել էր, որ ՀՅԴ հետ համաձայնություն է գրանցվել կենտրոնացված կառավարության հաստատման և Հայկական հարցը լքելու ուղղությամբ: Հնչակյան գործիչն անձամբ ճշտում է տեղեկությունը Մալումյանից և ստանում դրական պատասխան⁷³: Կոնգրեսի՝ տասներկու կետից բաղկացած նախագիծը սկսում էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը, գահի ժառանգականությունը պահպանելու շեշտադրումով և քննարկում բռնապետության տապալմանն ուղղված որոշ քայլեր: Սոցիալ Դեմոկրատական Հնչակյան և Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունները, ինչպես նաև Մակեդոնական հեղափոխական կազմակերպությունը հրաժարվում են մասնակցել կոնգրեսին⁷⁴: Արդեն կոնգրեսի ժամանակ Ռիզան նաև պահանջում է պահպանել խալիֆայությունը, և հայկական պատվիրակությունը տեղի է տալիս նաև այս կետին՝ ոչ առանց դժգոհության: Կողմերը համաձայնության են գալիս բռնի մեթոդներով տապալել բռնատիրությունը, հիմնել ներկայացուցչական կառավարություն, որն, առաջնորդվելով սահմանադրությամբ, կայսրության բոլոր ժողովուրդներին կշնորհեր համահավասար իրավունքներ և պարտականություններ: Չնայած հայկա-

69 Hanioglu, *The Young Turks in Opposition*, 208.

70 Петросян, *Младотурецкое движение*, 240; Ramsaur, *The Young Turks*, 123:

71 Հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ: 1899 թ. Ժնևում աշխատել է «Դրօշակի» խմբագրությունում: Զբաղվել է Հայ դատի պաշտպանությամբ: Սպանվել է 1915-ին:

72 Hanioglu, *Preparation for a Revolution*, 191-192; Ramsaur, *The Young Turks*, 124.

73 Մապահ-Գիլեան, *Պալատականությունները*, 208, 211:

74 Kévorkian, *The Armenian Genocide*, 43-45.

կան կողմի կատարած զիջումներին, կոնգրեսից հետո Ռիզան շարունակեց հարձակումներ գործել նրանց դեմ՝ մամուլում հայտարարելով, որ հայկական կոմիտեները հասան իրենց նպատակին՝ «Միություն և առաջադիմությունը» վերածելով ահաբեկչական խմբավորման⁷⁵: Պետք է հիշել նաև, որ թեև կոնգրեսի նախաձեռնությունը պատկանում էր երիտթուրքերի Փարիզի բաժանմունքին, Սալոնիկի բաժանմունքը, որը դարձել էր կոմիտեի նոր ուժային կենտրոնը, բացարձակապես հակված չէր ո՛չ զիջումների, ո՛չ համագործակցության, այդ իսկ պատճառով ՀՅԴ-ի հետ ձեռք բերված համաձայնությունն այդպես էլ մնաց տեսական մակարդակում⁷⁶: Հեղափոխության նախօրեին Սալոնիկի բաժանմունքը (նախկին «Ազատության օսմանյան ընկերությունը»), որին այժմ պատկանում էր որոշումներ կայացնելու իրավունքը, ուներ մոտ վեց հազար անդամ՝ հիմնականում սպաներ⁷⁷: Սկոպիեի ռուսական հյուպատոսը 1908 թ. հունիսի 27-ի գեկուցագրում նշում է, որ թուրքական բանակի սպայական կազմի 75 տոկոսն ընդունում է, որ երիտթուրք է⁷⁸: Սա բավական էր «քաղաքական» կոմիտեն ռազմականացնելու համար:

1908 թ. հուլիսին Մակեդոնիայում բռնկվեց երիտթուրքական հեղաշրջումը՝ ծրագրվածից երկու ամիս շուտ: Պահը, ամեն դեպքում հարմար էր ընտրված. հակակառավարական ընդվզումներ էին սկսվել ողջ կայսրությունում, որոնք սահմանափակվում էին պաշտոնյաներին կամ վալիին փոխելու կամ որևէ հարկատեսակ վերացնելու պահանջներով⁷⁹: Այս ընդվզումների կապը երիտթուրքերի հետ չենք կարող պնդել, սակայն սուլթանի ուշադրությունն արդեն շեղված էր: Բալկաններում տեղակայված թուրքական զորքը՝ Նիյազի բեյի գլխավորությամբ, ապստամբ ավրանացիների հետ միավորված, որոնք ի դեպ հավատարմությամբ սուլթանի ցուցակում երկրորդն էին քրդերից հետո, շարժվեց դեպի մայրաքաղաք: Սուլթանի հրամանն ուղղված Զմյուռնիայում տեղակայված զորքին առաջ շարժվելու և ճնշելու ապստամբությունը մնաց անպատասխան՝ դոկտոր Նազրմի տեղում ամիսներ շարունակ տարած աշխատանքի շտրիիվ⁸⁰: Հասկանալով, որ ձգձգումը կհանգեցնի կա՛մ իր գահընկեցությանը կա՛մ մահվանը, սուլթանը հանդես է գալիս սահմանադրությունը վերահաստատելու «անձնական նախաձեռնությամբ»: Հուլիսի 24-ին Կ.Պոլսի թերթերը հայտարարեցին 1876 թ. սահմանադրությունը վերահաստատելու և խորհրդարան հրավիրելու մասին⁸¹: Օսմանյան կայսրությունը վերափոխվեց սահմանադրական միապետության:

75 Ramsaur, *The Young Turks*, 127.

76 Ramsaur, *The Young Turks*, 129.

77 Kévorkian, *The Armenian Genocide*, 46.

78 Петросян, *Младотурецкое движение*, 286.

79 Վարանդեան, Հ.Յ. *Դաշնակցության պայքարներ*, 424:

80 Buxton, *Turkey in Revolution*, 52.

81 «Կեցցե՛ վեհափառ կայսրը», *Բիզանդիոն* (Կ. Պոլիս), 12-25 յուլիսի 1908, 2-3, «Նոր Մեծ Եպարքոս», *Արշալոյս* (Իզմիր), 12-25 մայիսի 1908, 1:

1902-1908 թթ. կոմիտեի գաղափարական հիմնական գծերը

Ինչպես և նախորդ փուլում, գործունեության այս շրջանում ևս երիտթուրքերը շարունակում էին հենվել լե Բոնի և Չարլզ Դարվինի տեսությունների վրա: Արդուլլահ Ջևդեթը պնդում էր, որ եթե երիտթուրքերը հավակնում են գործել որպես «հասարակական բժիշկներ», պետք է ծանոթ լինեն լե Բոնի գործերին⁸²: Նորությունն այս փուլում այն էր, որ նրանք քայլ կատարեցին դարվինիզմից դեպի սոցիալ-դարվինիզմ⁸³: Վեջինիս հիմնադրի՝ Հերբերտ Սպենսերի աշխատանքները տարածում էին գտել նույնիսկ շարքային կոմիտեականների մոտ: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ թեև Ռիզան, Սարահեդդինը և նախկին առաջնորդները շարունակում էին խորացնել իրենց փիլիսոփայական գիտելիքները, 1908 թ. հեղաշրջումը իրականացրին կայսրության մեջ գործող երիտթուրքերը՝ Բեհաեդդինը, Նազըմը, Թալաթը, Օմեր Նաջին, Էնվերը: Եվրոպական փիլիսոփայական մտքի ազդեցությունը կրելով՝ նրանք շարժվեցին պահի հրամայականով, շեշտը դնելով իրական քաղաքականության և ոչ թե տեսական փիլիսոփայության վրա: Սա էր այն սինթեզը, որը կոմիտեն վերափոխեց հեղափոխական, քաղաքական և ազգայնական կազմակերպության:

Ինչպես վերը նշվեց իսլամը՝ որպես քարոզչական գործիք, երբեք չլքեց երիտթուրքերի գաղափարական զինանոցը: Հեղափոխությունն արդարացնելու և նոր անդամներ ներգրավելու համար նրանք հայտարարում էին, որ սուլթանը գործում է իսլամի դրոյթներին հակառակ, վաճառում է երկիրը Արևմուտքի անհավատներին, հետևաբար՝ նրա իշխանությունն անօրինական է: Հավանաբար այս քարոզչությանը տեղիք տալով՝ Էրզրումի բնակիչները հրաժարվեցին ֆինանսապես աջակցել Դամասկոսից մինչև իսլամի սուրբ վայրեր երկաթուղի կառուցելու սուլթանի նախաձեռնությանը՝ այն հիմնավորմամբ, որ, միննույն է, չեն օգտվելու այդ երկաթուղուց⁸⁴: Չվստահելով ուլեմաների դասին՝ երիտթուրքերը վարում էին իրենց կրոնական քարոզչությունը: Մասնավորապես, Կ.Պոլսի երեք բաժանմունքի հրամայվել էր իսլամի «ճիշտ քարոզչություն տանել», այն է՝ զբաղվել գրահրատարակչությամբ և հնարավորինս պարզ լեզվով բացատրել բնակչությանը «բռնատիրություն, ազատություն, ինքնիշխանություն, հավասարություն, արդարություն, միություն և խորհրդակցություն» բառերի իրական նշանա-

82 Sükri M. Hanioglu, *Preparation for a Revolution: the Young Turks, 1902-1908* (Oxford: Oxford University Press, 2001), 308.

83 Չարլզ Դարվինի (1809-1882) էվոլյուցիոն տեսությունը և պոզիտիվիզմը տեղ են գտել երիտթուրքերի գաղափարախոսությունում մինչև 1902 թ.: Նույնիսկ նոր մասնաճյուղերի հիմնումը հիմնավորում էին էվոլյուցիայի օրենքով: Երկու տեսությունների սինթեզը խաղաղ, բնականոն, անխուսափելի առաջընթացն էր: 1907-1908 թթ. երիտթուրքերի քաղաքականության փոփոխությունը, մասնավորապես՝ հայրենքի փրկության և հեղափոխության կոչերին ավելի համապատասխան դարձավ Հերբերտ Սպենսերը (1820-1903) և նրա սոցիալ-դարվինիզմը: Փիլիսոփայական այս տեսության հիմքում ընկած էին «բնական ընտրության», «գոյության կռիվի» «ամենահարմարվածների/ ուժեղների գոյատևման» (survival of the fittest) գաղափարները: Sin Hanioglu, *The Young Turks in Opposition*, 22; Walter M. Simon, Herbert Spencer and the “Social Organism,” *Journal of the History of Ideas* 21, no. 2 (1960): 297.

84 Emin, *The Development of Modern Turkey*, 84.

կությունը՝ իսլամական հռետորաբանությամբ⁸⁵: Եվ, իհարկե, իսլամը շարունակում էր մնալ արդիականության, առաջընթացի կրոն: Հեղաշրջումից անմիջապես հետո շեյխուլ իսլամ Մեհմեդ Ջեմալեդդինը, այն հարցին, թե արդյոք սահմանադրությունը չի հակասում իսլամին, ժխտական պատասխան է տվել այն հիմնավորմամբ, որ «իսլամի օրենքն ավելի լիբերալ է, քան ինքը՝ սահմանադրությունը»⁸⁶:

Երիտթուրքերի աշխարհայացքի ձևավորման վրա մեծ հետք են թողել միջազգային քաղաքական զարգացումները, որոնցից մեկը բոլորովին անսպասելի տեղից էր: 1904 թ. Կորեայի և Մանջուրիայի նկատմամբ վերահսկողություն սահմանելու համար պատերազմ բռնկվեց Ռուսաստանի և Ճապոնիայի միջև: Արդիականացված, սակայն միջազգային ասպարեզում դեռևս դերակատարություն չունեցող Ճապոնիան պարտության մատնեց հակառակորդին և՛ ծովում, և՛ ցամաքում⁸⁷: Ռուս-ճապոնական պատերազմը լայն արձագանք գտավ Օսմանյան կայսրությունում, ընդ որում՝ այն լուսաբանվում էր ոչ միայն երիտթուրքական մամուլում: Համիդյան բռնատիրության տարիներին հանրամատչելի գրականության հերոսներ Շերիոկ Հոլմսը և Պինկերտոնը փոխարինվեցին ճապոնացի լրտեսներով, որոնք սողոսկում էին ռուս գեներալների սենյակ և նրանցից ստանում անհրաժեշտ տեղեկատվությունը⁸⁸: 1904-1905 թթ. «Իկդամը», լուսաբանելով ռուս-ճապոնական պատերազմը, հատուկ ուշադրություն էր դարձնում պատերազմող կողմերի տնտեսական և ֆինանսական վիճակին, իսկ «Շուրայը Ումմեթը» Ճապոնիայի հաղթանակը ներկայացնում էր որպես Եվրոպայի նվաճողական քաղաքականությունը կանգնեցնելու ասիական ժողովուրդների բացառիկ կարողություն⁸⁹:

Երիտթուրքերը Ճապոնիայի հաղթանակից երկու դաս քաղեցին. նախ՝ Ճապոնիայի փորձը ցույց տվեց, որ սեփական քաղաքակրթական առանձնահատկությունները պահպանելով հանդերձ՝ պետք է անհապաղ փոխառել Արևմուտքի գիտական և ռազմական ձեռքբերումները, արդիականանալ՝ հենց Արևմուտքին դիմակայելու նպատակով: Երկրորդը՝ երիտթուրքերի գաղափարախոսության մեջ առկա ռասայական տարրերի վերհանումն էր: 19-րդ դարի կենսաբանական մատերիալիստական աշխարհայացքից ազդվելով՝ երիտթուրքերը փոխառել էին նաև ռասայի վերաբերյալ պատկերացումներ: Իրենց գաղտնի նամակագրություններում և գիտական աշխատություններում նրանք բազմիցս քննարկում էին ռասան, բայց խուսափում էին «թուրքական ռասա» եզրի գործածությունից: Խնդիրն այն է, որ ռասայական տարբերակում առանց դասակարգման գոյություն չունի, իսկ ժամանակին շրջանավոր բոլոր տեսություններում թուրքերը ռասայական աստիճանակարգի ստորին սանդղակում էին, ինչպես, օրինակ՝

85 Hanioğlu, *Preparation for a Revolution*, 307.

86 Buxton, *Turkey in Revolution*, 170.

87 Akşin Sina, *Turkey from Empire to Revolutionary Republic: the Emergence of the Turkish Nation from 1789 to the Present* (New York: New York University Press, 2007), 49.

88 Иван Голобородько (И. Южанинъ), *Старая и Новая Турция* (Москва: «Польза» В. Антик и К°, 1908), 103. Halide Edib, *Memoirs of Halide Edib* (New York, London: The Century Co., 1926), 207.

89 Желтяков, *Печать в общественно-политической*, 227; Петросян, *Младотурецкое движение*, 273.

Դարվիհի մոտ⁹⁰: Ճապոնիայի հաղթանակը, որպես «դեղին» ռասայի հաղթանակ վերին սանդղակում գտնվող «սպիտակի» նկատմամբ, վերացրեց այդ խոչընդոտը⁹¹: 1905 թ. լե Բոնի հետ հանդիպման ժամանակ Աբդուլլահ Ջևդեթը հարցնում է նրան, թե ինչով է առաջնորդվել ճապոնացիներին ռասայական աստիճանակարգի ստորին սանդղակում տեղադրելիս: Ճապոնիայի հաղթանակը սասանեց գոյություն ունեցած ռասայական հիերարխիան և թույլ տվեց, օրինակ, երիտթուրք տեսաբան ծագումով թաթար Յուսուֆ Աբչուրային ուսումնասիրելու ռասայի վրա հենված թուրքական ազգային ինքնությունը⁹²:

Ռուսաստանի պարտությունը հանգեցրեց նաև ներպետական փոփոխությունների: 1905 թ. առաջին ռուսական հեղափոխության արդյունքում հռչակվեց սահմանադրական միապետություն և 1906 թ. ռուսական Դուման գումարեց իր առաջին նստաշրջանը⁹³: Դրա հանդեպ արձագանքներն Օսմանյան կայսրությունում տարբեր էին: Կահիրեի երիտթուրքական պաշտոնաթերթեր «Թյուրքը» և «Շուրայը Ումմեթը» կոչ էին անում օրինակ վերցնել դրանից, այն դեպքում, երբ «Մեշվերեթը» հեղափոխության արդյունքում Ռուսաստանում ծայր առած քաղաքացիական պատերազմը աղետ էր հռչակում⁹⁴:

Ռուսաստանի հետ կապված տեղի ունեցան նաև այլ զարգացումներ: Ձախողվելով Հեռավոր Արևելքում՝ ցարական Ռուսաստանը նորից վերադարձավ մերձավորարևելյան քաղաքական դաշտ: 1907 թ. Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը կնքեցին պայմանագիր Պարսկաստանը ազդեցության գոտիների բաժանելու մասին, ինչը Ռուսաստանը մոտեցրեց Օսմանյան կայսրության սահմաններին մեկ այլ ուղղությունից ևս⁹⁵: 1908 թ. հունիսին Նիկոլայ 2-րդի և Էդուարդ 7-րդի հանդիպման արդյունքում ռուս-անգլիական նոր համաձայնագիր կնքվեց՝ այս անգամ արդեն Մակեդոնիայում օտարերկրյա վերահսկողությունը խստացնելու և հատուկ գեներալ-նահանգապետ նշանակելու վերաբերյալ⁹⁶:

Երիտթուրքերի հեղաշրջումը բռնկվեց 1908 թ. հուլիսին, երբ Սալոնիկի բաժանմունքը տեղեկացավ մակեդոնական հարցի շուրջ անգլո-ռուսական բանակցությունների մասին: Տեղեկանալով դրանց մասին՝ Նիյազի բեյը, իր իսկ խոսքերով «գրկվեց քնից»⁹⁷: Երիտթուրքերը կանգնեցին օտարերկրյա վերահսկողությամբ Մակեդոնիայի և անկախ Մակեդոնիայի ընտրության առջև: Նրանց մեծ մասը վախենում էր, որ

90 Francis Darwin, *The Life and Letters of Charles Darwin*, vol. I (New York: D. Appleton and Company), 285.

91 Hanioglu, *The Young Turks in Opposition*, 209.

92 Նույն տեղում, 210:

93 Sina, *Turkey from Empire to Revolutionary Republic*, 49.

94 Желтяков, *Печать в общественно-политической*, 282.

95 Владимир М. Хвостов, *История дипломатии. Т. II. Дипломатия в новое время 1871-1914* (Москва: Госполитиздат, 1963), 610-612.

96 Donald Bloxham, *The Great Game of Genocide: Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians* (New York: Oxford University Press, 2005), 57.

97 Петросян, *Младотурецкое движение*, 281.

Մակեդոնիային հաջորդելու է Ալբանիան, այնուհետև՝ ողջ Բալկանները, հետևաբար, հեղաշրջումը կանխարգելիչ մեթոդ դարձավ՝ մի քանի տարով հետաձգելով տարածաշրջանի անջատումն Օսմանյան կայսրությունից: Երիտթուրք մի շարք առաջնորդներ խոստովանել են նաև գերմանական ռազմական միսիայի ղեկավար Կոլմար Ֆոն դեր Գոլցին, որ եթե չարագացնեին հեղաշրջումը վերևից, ապա ներքևից՝ ժողովրդի խորքից, հեղափոխություն կսկսվեր, որն էլ կհանգեցներ անարխիայի: Նրանց արարքը նման աղետալի ելքը կանխարգելելու միտում ուներ⁹⁸:

1905 թ. հուլիսի 21-ին ՀՅԴ-ն մահափորձ կատարեց սուլթանի դեմ Համիդիե մզկիթի հրապարակում՝ արդյունքում թողնելով 78 զոհ: Սա հակահամիդյան շարժման գագաթնակետն էր, քանի որ սուլթանին սպանելու փորձը եկավ թեև ընդդիմադիր, սակայն ոչ թուրքական շրջանակներից: Քյազիմ Կարաբեքիրը խոստովանել է, որ չնայած գործի արդարությանը, եթե փաղիշահը սպանվեր ոչ թուրքերի կողմից, ապա դա կդիտվեր որպես հանցավոր արարք⁹⁹: Սա ավելի շատ դիտվում էր որպես թուրքական խնդիր և քրիստոնյաների նման կարգի նախաձեռնություններն անհանդուրժելի էին երիտթուրքերի կողմից: Հեղափոխությունը կանխարգելեց նաև նման սցենարով զարգացումը: Այսպիսով՝ երիտթուրքական հեղափոխությունը պատասխան էր ներքին և արտաքին զարգացումների. ռուսական հեղափոխությունը, եթե նույնիսկ որոշակի ազդեցություն ունեցել էր դրա վրա, ապա ոչ անմիջական:

Փարիզում 1908 թ. հուլիսին Ահմեդ Ռիզան այցելեց ՄԴ հնչակյան կուսակցության բաժանմունք՝ առաջարկելով նրանց վերադառնալ կայսրություն, որտեղ նրանք ցանկության դեպքում կկարողանային գործել որպես ընդդիմադիր կուսակցություն: Ռիզան նաև հայտնեց, որ պայքարել Համիդի դեմ այլևս պետք չէ, քանի որ այսուհետ նա նրանց միապետն է և խալիֆը: 1908 թ. օգոստոսին Սապահ-Գուլյանը և Մուրադը (Համբարձում Բոյաջյան), նրանց հետևից նաև դաշնակցականները Ժնևից, վերադարձան կայսրություն¹⁰⁰: Այն ժամանակ, երբ Մալոնիկում ցուցադրվում էր Նամըկ Քեմալի «Հայրենիք կամ Սիլիստրան» (*Vatan yahut Silistre*)¹⁰¹, Մոնաստերում (Բիտոլա) հարսանիքների ժամանակ պարում էին Մարսելիեզի ներքո, իսկ սահմանադրությունը ավետող հուլիսի 25-ի «Իկդամը», որի արժեքը սովորաբար մեկ ցենտ էր, հնարավոր չէր Գոլյում ձեռք բերել քառասունով,¹⁰² երիտթուրքերը շարժմանը միացած կամավորներ-

98 Hanioğlu, *Preparation for a Revolution*, 310.

99 Kâzım Karabekir, *İttihat ve Terakki Cemiyeti* (Istanbul: Yapi Kredi Yayınları, 2009), 48.

100 Kévorkian, *The Armenian Genocide*, 47-48.

101 Սիլիստրան թուրքական ամրոց է Դանուբի վրա, ներկայիս Բուլղարիայի տարածքում, որը մի քանի անգամ պաշարվել է ռուսների կողմից բալկանյան արշավանքների ժամանակ: Գրավվել է 1808 թ., սակայն վերադարձվել հաշտության պայմանագրով, անհաջող պաշարվել է 1828 և 1856 թթ.: Այս պաշարումներից որն է ողբերգության պատճառ դարձել, հայտնի չէ: Սակայն հերոսի՝ Իսլամ բեյի միջոցով, հեղինակն ընդգծել է հայրենիքի կարևորությունը և այն, որ հայրենիքը սիրելը, դրա համար զոհվելը պատվեր է աստծու կողմից: 1873 թ. ապրիլին Գետիկ փաշայի թատրոնում ներկայացման ցուցադրությունը առիթ է դարձել Նամըկ Քեմալին ձերբակալելու և Կիպրոս արտաքսելու համար, որտեղից նա վերադարձել է 1876 թ.: Владимир А. Гордлевский, *Очерки по новой османской литературе* (Москва: «Крестный Календарь», 1912), 20-22.

102 Buxton, *Turkey in Revolution*, 40, 71; Emin, *The Development of Modern Turkey*, 87.

րին արձակեցին վիլայեթներ, իսկ իրենց բաժանմունքներին պատվիրեցին վերահսկողություն սահմանել նրանց նկատմամբ¹⁰³: «Հեղափոխությունից» հետո կոմիտեն ձեռնամուխ եղավ դրա ընթացքը կանգնեցնելուն: Սալոնիկի երիտթուրքական բաժանմունքը, ինչպես և Ահմեդ Ռիզան, հայտարարեց, որ սուլթանի անձն անձեռնմխելի է: Երբ օգոստոսին Ադրիանապոլիսի բաժանմունքից մի երիտթուրք տեղեկացավ սուլթանի հետ կայանալիք համաձայնության մասին և դժգոհություն հայտնեց առ այն, որ չի կարելի բանակցել նրա հետ, ում ձեռքից սահամանադրությունն ուղղակի խլվել է, կոմիտեն հատուկ նախագգուշացում ուղարկեց իր բոլոր անդամներին¹⁰⁴:

1902-1908 թթ. երիտթուրքական ազգայնականությունը դարձավ թուրքական: Երիտթուրքական մամուլում «օսմանցի» եզրը փոխարինվեց «թուրքով»¹⁰⁵: Նշված ժամանակաշրջանում անցումը թուրքական ազգայնականությանը երևում է հետևյալ կետերում.

1. 1902 թ. երիտթուրքերն առանձնահատուկ ուշադրություն սկսեցին դարձնել թուրքական մշակույթի զարգացմանը, լեզվի «թրքացմանը»: Սեզաի բեյը «Շուրայը Ումմեթի» էջերից կոչ էր անում հրաժարվել միջնադարյան գրական լեզվից և մշակույթի ստանդարտացմանն ու թուրքերի լուսավորությանը նպաստելու համար օգտագործել պարզեցված թուրքերենը: Երիտթուրքերը բոլոր սուֆիական օրդեններից այս շրջանում համագործակցում էին միայն բեկթաշիների հետ, որոնք ունեին թուրքական գաղափարական ուղղվածություն, զարգացնում էին գրականություն թուրքերենով¹⁰⁶:
2. Ազգային ինքնագիտակցության մյուս կարևոր կետը հատուկ հետաքրքրություն էր Փոքր Ասիայի հանդեպ: 1902 թ. Կահիրեի երիտթուրքական բաժանմունքը սկսեց հրատարակել «Անադոլու» թերթը, որտեղ «Անատոլիան» ներկայացվում էր թուրքերի հնագույն հող, «սուրբ հայրենիք», որը կքած է բռնատիրության տակ: Երիտթուրքական անանուն մի գրքով կոմ «Անատոլիան» հռչակվում է «պետության և ազգի հույս»: «Իկդամը» հատուկ ուշադրություն էր դարձնում նաև արևելյան վիլայեթների թերզարգացած գյուղատնտեսությանը և պնդում որ նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառմամբ այն կարելի է վերածել կայսրության հացի պահեստի¹⁰⁷:
3. Քարոզչության մեջ հատուկ ուշադրության արժանացավ թուրքական ազգային բուրժուազիան, ավելի ստույգ՝ դրա բացակայությունը: «Թյուրքը», «Շուրայը Ումմեթը», երիտթուրքական այլ թերթեր դատապարտում էին Արևմուտքի տնտեսական ներխուժումը, կայսրության քրիստոնյաների կողմից հարստության կուտակումը, որն, ըստ թերթերի, կատարվում էր թուրքերի հաշվին: Զուգահեռաբար ազդվելով գերմանացի տեսաբան Ֆրիդրիխ Լիստի ազգային տնտե-

103 Hanioğlu, *Preparation for a Revolution*, 310.

104 Петросян, *Младотурецкое движение*, 304, 305.

105 Hanioğlu, *Preparation for a Revolution*, 296.

106 Петросян, *Младотурецкое движение*, 275; Ramsaur, *The Young Turks*, 109.

107 Петросян, *Младотурецкое движение*, 276; Желтяков, *Печать в общественно-политической*, 227.

սության մոդելից՝ որոշ երիտթուրքեր հայտարարում էին, որ այն պետք է հենված լինի «վստահելի» քաղաքացու վրա, թուրք երիտասարդներին առաջադեմ կրթություն ստանալու կոչ էին անում՝ հատկապես առևտրի, արտադրության ոլորտներում ազգային տնտեսությանը զարկ տալու նպատակով¹⁰⁸:

«Շուրայը Ումմեթի» 1903 թ. օգոստոսի 9-ին «Օսմանյան Եվրոպա» վերնագրի ներքո Սեզայի բելը քննում է Հունաստանը, Ռումինիան, Սերբիան, Չեռնոգորիան, Բոսնիան, Բուլղարիան, Կրետեն կորցնելու պատճառները և եզրակացնում, որ այդ ամենը թուրքերի լիբերալության արդյունք էր: Այսինքն՝ թուրքերը ոտնձգություն չեն կատարել վերոնշյալ ազգերի կրոնի, լեզվի հանդեպ, տվել են նրանց խղճի ազատություն, նույնիսկ ինքնավարություն: Ռումելիան պահելու համար հեղինակը խորհուրդ է տալիս վերականգնել արդարացի կառավարումն այնտեղ և պարտադիր դարձնել կրթությունը թուրքերենով: Սա արդեն բռնի ձուլման քարոզ էր¹⁰⁹: 1904 թ. «Թյուրքում» Յուսուֆ Աքչուրան, որն արդեն երիտթուրքական գաղափարախոսներից էր, տպագրեց իր «Քաղաքական երեք համակարգը» (Üç Tarz-i Siyaset), որում քննության էր ենթարկում կայսրության երեք հավանական քաղաքականությունները՝ պանօսմանիզմ, պանիսլամիզմ, պանթուրքիզմ/թուրքիզմ՝ հիմնավորելով և ընտրելով վերջինը¹¹⁰: Երիտթուրքերը հեղափոխությունը դիտարկում էին որպես մաքուր երիտթուրքական նախաձեռնություն և շատ քիչ տեղ էին հատկացնում կայսրության ոչ թուրք ժողովուրդներին: Հեղափոխության նախօրեին նրանք մեղմացրին իրենց քարոզչությունը՝ մակեդոնացիներին, ալբանացիներին և հայերին համագործակցության դրդելու նպատակով, որից հետո նրանց տրվեց՝ «օսմանցի» դառնալու ճանապարհով՝ սահմանադրությունից օգտվելու տարտամ հնարավորություն¹¹¹:

Պատմաբան Շյուքրու Հանիօղլուն նշում է, որ երիտթուրքական մամուլը և անձնական նամակագրությունը շեշտում են թուրքական գաղափարախոսության առկայությունը կոմիտեի շրջանակներում, սակայն միայն մշակութային մակարդակում, որը, 1907 թ. առժամանակ ճնշվելով, 1917-ին դարձավ պետական քաղաքականություն¹¹²: Մենք, սակայն, կարծում ենք (հենվելով նաև նշված հեղինակի հարուստ հետազոտական նյութի վրա), որ 1908 թ. թուրքական ազգայնականությունն արդեն ձևավորված գաղափարախոսություն էր՝ ռասայական տարրերով, ինչը երևաց հեղաշրջումից մի քանի ամիս անց: 1908 թ. գալով իշխանության, երիտթուրքերը կանգնած էին ոչ թե թուրքիզմի և օսմանիզմի միջև ընտրության, այլ թուրքական ազգայնականության գաղափարախոսությունը պետական քաղաքականություն դարձնելու և դեռևս բազմէթնիկ կայսրությունում այն գործադրելու մեթոդների ընտրության առջև:

108 Ugur Ümit Üngör, Mehmet Polatel, *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property* (London, New York: Continuum, 2011), 34.

109 Желтяков, *Печать в общественно-политической*, 278.

110 Akçura oğlu Yusuf, “Üç Tarz-i Siyâset”, *Türk* (Kahire), 14 Nisan, 1904, 1; 28 Nisan, 1904, 1; 5 Mayıs, 1904, 1.

111 Ramsaur, *The Young Turks*, 147.

112 Hanioğlu, *Preparation for a Revolution*, 299.

THE EVOLUTION OF THE IDEOLOGY OF THE
“COMMITTEE OF UNION AND PROGRESS” (1889-1908)

SUMMARY

Key-words: “Committee of Union and Progress,” revolution, nationalism, Islam, race, Turkism.

Founded in 1889 the “Committee of Union and Progress,” after several internal reconstructions, became the main policymaker of the Ottoman Empire for a decade, laying the foundation of the Republic of Turkey as well.

The activity of the “Committee of Union and Progress” and the Young Turk movement has been a research theme for Soviet, Turkish, Western and Armenian researchers. In those publications, the characteristics that are given to the organization usually go from one extreme to another. The aim of the article is to present the formation of the ideology of the Committee from 1889-1908 by presenting its structural peculiarities. For the solution of this goal, the activity of the Committee in the article is divided by the First Congress of the Ottoman Liberals in 1902, which was a watershed between the old structure of the Committee and its early ideology and a new one.

The article emphasizes the development of the Young Turk nationalism. In particular, it shows that Turkish nationalism, which was a debate topic for historiography, was already a formed ideology in 1908 which was put into motion months after the *coup d'état by the Committee*. Moreover, the party ideology also encompassed some racial elements. Coming to power in 1908, the Young Turks had to choose not between Turkism and Ottomanism but to single out the methods to implement Turkish nationalism in the still multiethnic empire. Separate ideological aspects of the “Committee of Union and Progress” (racism, elitism, positivism, Islamism) are also discussed.

Регина А. Галустян

ЭВОЛЮЦИЯ ИДЕОЛОГИИ КОМИТЕТА
«ЕДИНЕНИЕ И ПРОГРЕСС» (1889-1908)

РЕЗЮМЕ

Ключевые слова: комитет «Единение и прогресс», революция, национализм, ислам, раса, туркизм.

Созданный в 1889 г. комитет «Единение и прогресс» после внутренних реорганизаций стал основной организацией, *определяющей политику* Османской империи на десятилетия, заложив также основы Турецкой Республики.

Деятельность комитета «Единение и прогресс» и движения младотурок стали темой многих исследований советских, турецких, западных и армянских ученых. В этих публикациях, характеристики, которые даются организации, обычно переходят от одной крайности к другой.

Целью статьи является исследование формирования идеологии комитета в 1889-1908 гг. посредством рассмотрения его структурных особенностей. Точкой водораздела в данном вопросе для нас является Первый конгресс османских либералов 1902 года, который рассматривается в качестве рубежа между старой и новой структурой организации.

Особое внимание в статье уделено развитию младотурецкого национализма. В частности, показывается, что турецкий национализм был уже сформировавшейся идеологией в 1908 году и был принят на вооружение комитетом уже через несколько месяцев после государственного переворота. Более того, партийная идеология также включала в себя некоторые расовые элементы. Придя к власти в 1908 году, младотурки не встали перед выбором между тюркизмом и османизмом, а начали разрабатывать методы тюркификации все еще многонациональной империи.

В статье обсуждаются также отдельные аспекты идеологии комитета «Единение и прогресс» (расизм, элитизм, позитивизм, исламизм).

REFERENCES

«Կեցցե՛ր Վեհափառ կայսրը» [Long live the Emperor!]. *Puzantion* (Constantinople), 12-25 July, 1908, no. 3587.

«Միութիւն Թիւրքերի հետ» [Union with the Turks]. *Droschak* (Genève), October, 1900, no. 109.

«Նոր Մեծ Եպարքոս» [The New Great Eparchy]. *Archalouyss* (Izmir), 12-25 May, 1908, no. 134.

«Քաղաքական սնցուղարձք» [Political Events]. *Iravouunk* (Varna), 8 May, 1902, no. 35.

«Օսմանցի ազատականների համաժողովը» [The Congress of the Ottoman Liberals]. *Droschak* (Genève), February, 1902.

Avagyan, Arsen. *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений* [The Armenian Genocide. The Mechanisms of Deceison-Making and Implementation]. Yerevan: AGMI, 2013.

Gobino, Zhofez Art'ur de. *Опыт о неравенстве человеческих рас* [The *Inequality of Human Races*]. Moscow: "Odisseï," "OLMA-PRESS," 2001.

Goloborod'ko, I. Ivan (Iuzhanin). *Старая и Новая Турция* [Old and New Turkey]. Moscow: "Pol'za" V. Antik i K°, 1908.

Gordlevskii, Vladimir A. *Очерки по новой османской литературе* [Essays on the New Ottoman Literature]. Moscow: "Krestnyi Kalendar," 1912.

Khvostov, M. Vladimir. *История Дипломатии. Т. II. Дипломатия в новое время 1871-1914* [The History of Diplomacy, vol. II, Diplomacy in the New Era 1871-1914], Moscow: Gospolitizdat, 1963.

Lebon, Giustav. *Психология народов и масс* [The Psychology of People and Masses]. Moscow: AST, 2018.

Petrosyan, A. Yuri. *Младотурецкое движение (вторая половина XIX - начало XX в.)* [Young Turk Movement (second half of XIX – the beginning of XX)]. Moscow: Nauka, 1971.

Sapah-Gulean, Stepanos. *Պատասխանատուները* [The Responsibles]. Pravite'ns: "Yeritasard Hayastan," 1916.

Topch'ean, Eghishe. *Երիտիւնի թիւրքիւն եւ հայերը, մասն առաջին* [Young Turkey and the Armenians, Part One]. Tiflis: Shroma, 1909.

Varandean, Mikayel. Հ.Յ. *Դաշնակցութեան պատմութիւն* [The History of the the *Armenian Revolutionary Federation*]. Yerevan: Yerevan University Publication, 1992.

Zheltyakov, D. Anatoliï. *Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729-1908 гг.)* [The Press in Turkish Social, Political and Cultural Life (1729-1908)]. Moscow: Nauka, 1972.

Огюсть Контъ и позитивизмъ [Auguste Comte and Positivism], articles by S. Mill, H. Spencer, L. Ward. Moscow: I. N. Kushnerev i K°, 1897.

**ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԵՐԻՏԹՈՒՐ-ՔԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՌՈՒՍԱԼԵՉՈՒ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ՝ «ՄՏԱՄԲՈՒԼՅԱՆ ԼՈՒՐԵՐԻ»
ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ՝**

Բանալի բառեր՝ «Ստամբուլյան լուրեր», երիտթուրքական մամուլ, Ահմեդ Ջելալ, Ջելալ էդ դին Քորքմազով, ռուս-թուրքական հարաբերություններ:

Հոդվածում ներկայացված է Կ.Պոլսի երիտթուրքական առաջին ռուսալեզու պարբերականի՝ «Ստամբուլյան լուրեր»-ի համառոտ պատմությունը (1909-1910 թթ.) և դրանում երիտթուրքական ազգայնական հայացքների անդրադարձը²: Թերթը տարածվում էր Օսմանյան կայսրությունում, Ռուսաստանում, Բուլղարիայում, Արևմտյան Եվրոպայի երկրներում: Խմբագրակազմի անդամ էին անվանի թուրք քաղաքագետներ և հասարակական գործիչներ, ռուս և կովկասյան մտավորականության անվանի ներկայացուցիչներ՝ Ջելալ էդ դին Քորքմազովի խմբագրապետությամբ: Թերթը նաև ռուս-թուրքական հարաբերությունների մերձեցման, հեղափոխական փորձի փոխանակման և ազգայնական հայացքների տարածման փորձ էր: Թեև այն նախատեսված էր ծառայելու ռուսական իշխանությանը, սակայն շուտով վերածվում է երիտթուրքական գաղափարների տարածման և քարոզչության գործիքի:

Պարբերականի պատմության համառոտ ակնարկ

Գիտական քննության առնված պարբերականը, որը հիմնադրվել է Թուրքիայի պատմության շրջադարձային փուլերից մեկի ընթացքում, նպատակային ուղեգծով «ծառայում» էր երիտթուրքերի գաղափարների լայնամասշտաբ տարածմանը և քաղաքական հայացքների ուղղորդմանը: Պարբերականը սակավ ուսումնասիրված է. հայալեզու գիտական և ոչ գիտական աղբյուրներում գրեթե տեղեկություններ չկան թերթի մասին: Այն, սակայն, գիտական հոդվածների շրջանակում մասնակիորեն ուսումնասիրվել է Անատոլի Ժելայակովի³, Աբիդ Ալիմովի⁴, Ջանա Քորքմազովի⁵,

1 Հոդվածը ստացվել է 15.09.2019 և ընդունվել տպագրության՝ 12.12.2019:

2 Հոդվածում թեման քննության է առնված պարբերականի մի քանի հոդվածի (որոնք մեզ հաջողվել է ձեռք բերել) հիմքով:

3 Анатолий Д. Желтяков, *Внутреннее положение Турции в 1909–1910 гг. при младотурках в освещении газеты «Стамбульские новости»*, Тюркологический сборник (Москва: Наука, ГРВЛ, 1984), 69–87.

4 Абид Алимов, «Революция 1908 г. в Турции», *Пробуждение Азии. 1905 г. и революция на Востоке. Сборник статей* (Москва: Л. Гос. соц. экон. изд., 1935), 44.

5 Джана А. Коркмасова, «Судьба первой турецкой газеты на русском языке ‘Стамбульские новости’», <https://cyberleninka.ru/article/n/sudba-pervoy-turetskoy-gazety-na-russkom-yazyke-stambulskie-novosti/viewer>. Տե՛ս նաև <https://dergipark.org.tr/en/download/article-file/155275>.

Անատոլի Քորքմազովի⁶ և այլ հեղինակների կողմից, իսկ թուրք հեղինակներ Մեհմեդ Փերինչեքի և Արդա Օդաբաշըի համահեղինակությամբ տպագրվել է «Երիտթուրքական ժամանակաշրջանը «Ստամբուլյան լուրեր»-ում» աշխատությունը⁷:

Արդուլիհամիդյան վարչակարգի դասակարգային հիմնաքարն օսմանյան հասարակության համեմատաբար հակազդող շերտերն էին՝ խոշոր ավատատերերը, ցեղախմբերի առաջնորդները, մուսուլման բարձրաստիճան հոգևորականությունը, պահպանողական բյուրոկրատիան: Պատմագիտության մեջ այս շրջանը բնորոշվում է ազատամտության և ազատականության խնդրով, որի համար էլ պայքարի դրսևորումներն ու ձգտումներն անփոփոխ էին: Կրթական և ռազմական բոլոր հաստատությունները, գլխավորապես՝ մամուլը, խիստ վերահսկողության ներքո էին գտնվում: Աշխարհիկ դպրոցների կրթական բոլոր ծրագրերից դուրս էին մնում «միտք արթնացնող» առարկաները՝ գլխավորապես աշխարհագրությունը և պատմությունը, փոխարենը՝ ներառվում էին աստվածաբանական առարկաներ⁸: Պետական աշխատակցի կրթվածությունը նպաստավոր չէր համարվում քաղաքական ոլորտ մտնելու համար: 1898 թ. վիճակագրությամբ ոչ մի նախարար չունեի համալսարանական կրթություն⁹: Միայն 19-րդ դարի վերջին – 20-րդ դարի սկզբին է, որ ընդլայնվում է մտավորականության շրջանակը. ավելանում է բժիշկների, իրավաբանների, գրողների, լրագրողների, սպաների քանակը:

Ընդհանրապես գրքերի, պարբերականների նկատմամբ Օսմանյան պետության մեջ ծայրահեղ դրսևորումներ էին նկատվում. նույնիսկ կայսրության որոշ գյուղերում գիրք կարդալը մեղք էր համարվում: Թերթերի խմբագրատները փակվում էին զգալի հաճախականությամբ: Այսպես՝ Կ.Պոլսում 70-ականներին մնացել էին թուրքալեզու հաշված թերթեր, որոնք լույս էին տեսնում սահմանափակ տպաքանակով: Գրաքննությունը շատ խիստ էր կիրառվում. թերթերում արգելվում էին *ազալություն, համալսարանություն, հանրապետություն, սահմանադրություն, բռնապետություն* (ընդգծումը մերն է՝ Է.Մ.) եզրույթների կիրառումը: Այս ընթացքում Եվրոպայում ձևավորվում էին արդուլիհամիդյան վարչակարգի դեմ պայքարող երիտթուրքական մեծ թվով խմբավորումներ¹⁰:

6 Թերթի գլխավոր խմբագիր Ջելալ էդ դին Քորքմազովի թոնն է: Анатолий Джелал-Эрастович Коркмасов, «Стамбульские Новости – образ истины и свободы», *Ёлдаш/Времена* (Дагестан), 01.01.2007, N 83; 12.01.2007, N 84 и 09.02.2007, N 88; «Джелал-Эд-Дин Коркмасов и его ‘высокодостоинный орган отечественной печати’ газета ‘Стамбульские новости’» (к 110-летию первой в истории международной прессы русско-язычной газеты в Турции), *Дагестанская жизнь* (Дагестан), 14.11.2019, N 29(612); «Газета ‘Стамбульские новости’ и её место во всеобщей истории прессы», *Дагестан* (Дагестан), 2010.

7 Mehmet Perinçek, Arda Odabaşı, *Stambulske Novosti'de Jön Türk Devrimi (Türkiye'de Çıkan İlk Rusça Gazete)*, (İstanbul: Kaynak Yayınları, 2013).

8 Эльмира Зульпукарова, «Газета ‘Стамбульские новости’: история, политика, реформы», *Известия Самарского научного центра Российской академии наук*, т. 13, no. (2) (2011): 480.

9 Նույն տեղում:

10 Şükrü M. Hanioglu, *The Young Turks in Opposition* (New York, Oxford: Oxford University Press, 1995).

Անկայուն այս շրջանում ակտիվանում է քաղաքական կյանքը, որի դրսևորումներից մեկն էլ ռուսալեզու «Стамбульские новости» («Ստամբուլյան լուրեր») պարբերականի հրատարակությունն է՝ ծագումով դադստանցի, հայտնի հասարակական, պետական գործիչ, հեղափոխական, Դադստանում հեղաշրջման կազմակերպիչ Ջելալ էդ դին Քորքմազովի նախաձեռնությամբ և անձնական ֆինանսական միջոցներով, ով նաև թերթի գլխավոր խմբագիրն էր:

Թուրքիայի ողջ պատմության ընթացքում իր տարածքում տպագրված առաջին ռուսալեզու շաբաթաթերթ «Ստամբուլյան լուրեր»-ը տպագրվում էր Կ.Պոլսում 1909 թ. հոկտեմբերի 23-ից մինչև 1910 թ. հունիս 4-ը: Այն տպագրվել է միայն ուրբաթ օրերին և իր 7 ամսվա գործունեության ընթացքում ունեցել է 33 համար: Քննի որ, ըստ 1909 թ. հուլիսի Օսմանյան կայսրության տպագրության մասին օրենքի¹¹, պատասխանատու տնօրեն կարող էր լինել միայն օսմանյան ծագումով անձը, իսկ Քորքմազովը ծագումով դադստանցի էր, ուստի թերթի պատասխանատու տնօրեն է դառնում Ահմեդ Ջելվադը¹², որը տպագրական գործի մեծ փորձ ուներ, եղել էր «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գլխավոր պարբերաթերթերից «Թանին»-ի, ինչպես նաև՝ «Շուրալը Ումմեթ»-ի և «Սաբահ»-ի խմբագիր և թղթակից¹³: Նա «Ստամբուլյան լուրեր» պարբերականի էջերում հաճախ էր հանդես գալիս որպես «Միություն և առաջադիմություն» կոմիտեի արմատական թևի ներկայացուցիչ. նա կարծում էր, որ բացարձակապետության տապալումը ինքնանպատակ չէ, այլ Թուրքիայի սոցիալական և տնտեսական զարգացմանն ուղղված աստիճան¹⁴:

Հարկ է ընդգծել, որ թերթը ոչ միայն Օսմանյան կայսրությունում, այլև Ռուսաստանից դուրս՝ Արևելքում, տպագրվող առաջին ռուսալեզու պարբերականն էր¹⁵: Այն միայն ռուսալեզու էր և տարածվում էր Թուրքիայում, Ռուսաստանում, Բուլղարիայում, Արևմտյան Եվրոպայի երկրներում: Թերթը տպագրվում էր Կ.Պոլսի առաջին և միակ ռուսական տպարանում¹⁶: Տպագրման կարճ ժամանակահատվածում այն հասցնում է ձևավորել ընթերցողների լայն շրջանակ: 16 էջանոց պատկերազարդ թերթի տպարանակն այս կարճ ընթացքում կազմում էր 1.000 օրինակ¹⁷:

Պարբերաթերթի թեմատիկ ուղղությունները հիմնականում տնտեսական, քաղաքական և հասարակական էին, մեծ տեղ էր հատկացվում նաև մշակույթին, ազգային և մարդաբանական, ինչպես նաև կրթական խնդիրներին¹⁸:

11 Вера Шпилькова, «Выборы в турецкий парламент и его деятельность в 1908-1909 гг.», *Ученые записки МГПИ Т. 440* (Москва: Наука, 1971), 177-178; Анатолий Желтяков, «Режим печати при младотурках», *Проблемы истории Турции* (Москва: Наука, 1978), 82-92.

12 Желтяков, *Внутреннее положение Турции в 1909-1910 гг.*, 71.

13 Зульнукарова, «Газета ‘Стамбульские новости’», 481; Желтяков, *Внутреннее положение Турции в 1909-1910 гг.*, 71.

14 Желтяков, *Внутреннее положение Турции в 1909-1910 гг.*, 71.

15 Perinçek, Odabaşı, *Stambulskie Novosti* , 16.

16 Նույն տեղում:

17 Желтяков, *Внутреннее положение Турции в 1909-1910 гг.*, 71.

18 *Стамбульскія Новости* (Constantinople), 23 октября 1909.

Թերթի տպագրումն ու տարածումը զգալի ծախսեր էին պահանջում, իսկ Քորքմազովի միջոցները բավարար չէին, ուստի այս հարցում աջակցություն էին ցուցաբերում Թուրքիայում ապրող ռուս վտարանդիները¹⁹: Այդուհանդերձ, թերթը կարողանում է տպագրվել շուրջ 7 ամիս, որից հետո, նաև ֆինանսական խնդիրների պատճառով, փակվում է:

Քորքմազովի հեղափոխական ուղին մեծ հետաքրքրություն էր առաջացրել երիտթուրքերի մոտ, որոնք նաև ցանկություն ունեին ձեռք բերելու նրա փորձը: Թուրք հեղափոխականների հետ նրա սերտ ընկերությունը պատճառ էր, որ Քորքմազովը 1908 թ. տեղափոխվի Կ.Պոլիս: Հատկանշական է, որ այդ ընկերությունը ձևավորվել էր դեռևս 1907 թ. Փարիզում թուրք վտարանդիների հետ քաղաքական փոխհարաբերությունների փուլում²⁰:

1909 թ. հոկտեմբերի 31-ին Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Նիկոլայ Չարիկովը Ռուսական կայսրության արտգործնախարարին հեռագիր է հղում, որում ասվում է, որ «այդ օրերին Կոստանդնուպոլսում տպագրվել է առաջին ռուսալեզու պատկերազարդ թերթը, որը Թուրքիայի գոյության ողջ ընթացքում առաջինն է: Տպագրելու փաստը մեզ համար անկասկած մշակութային հաջողություն է»²¹: Հարկ է նշել, որ դեսպանը պարբերականի հրատարակչի մասին հիշատակել է որպես ռուսահպատակի: Նշենք, որ Չարիկովի վերոնշյալ հայտարարությունն ու կարծիքը զգալի բողոք են առաջացնում ռուսական իշխանության շրջանակներում. վերջիններս համամիտ չէին, որ պարբերականը միայն մշակութային հաջողություն էր: Այսինքն՝ թերթը նպատակ ուներ Օսմանյան կայսրությունում տարածել սոցիալիստական գաղափարները, քանի որ պարբերականի խմբագիրը ռուսական հեղափոխական էմիգրացիայի ներկայացուցիչ էր:

Այս հանգամանքը փաստում է նաև Ժելոյակովը, ում դիտարկմամբ՝ թեև ընդունված էր պարբերականը համարել Ռուսաստանի հետ մշակութային և տնտեսական ուղիների մերձեցման օղակ (ինչը նշել էր նաև Քորքմազովը. թերթը լիբերալ է, և այն բացարձակ առնչություն չունի Ռուսաստանի արտաքին քաղաքականության հետ), ռուսական արտաքին քաղաքականության արխիվներում հայտնաբերված հանդեսի համարներից մեկի համաձայն՝ թերթի նպատակները չեն սահմանափակվել մշակութային և տնտեսական գործառույթներով²²:

Փաստորեն, խմբագրակազմը սերտ կապի մեջ է եղել Ռուսաստանի հետ՝ թերթը դարձնելով տեղեկատվության խողովակ Ռուսաստանի և Թուրքիայի ոչ մեծաքանակ ռուսական գաղութի միջև: Սակայն, թերթը շուտով դառնում է երիտթուրքական հայացների տարածման հարթակ, ինչի համար էլ հետագայում Քորքմազովը մեղադրվում է ռուսական իշխանության կողմից:

19 Желтяков, *Внутреннее положение Турции в 1909–1910 гг.*, 70.

20 Նույն տեղում, 70-71:

21 АВІР, ф. Турецкий стол (новый), 1909 г., д. 6891, л. 2, հղվել է ըստ Желтяков, *Внутреннее положение Турции в 1909–1910 гг.*

22 Նույն տեղում:

Ազգային խնդիրների արծարծումը պարբերականի էջերում

Պարբերաթերթի հոդվածներին ծանոթանալիս հստակ նշմարվում է, որ այն ազգային նոր մտածողության ձևավորման, քաղաքական հայացքների տարածման, գաղափարական ուղղությունների քարոզման և ներքին խնդիրների տեղեկատվության փոխանցման գործուն աղբյուր և հարթակ է եղել: Թերթի երկրորդ համարում՝ «*Ընթերցողներին*» խորագրով խմբագրականի ներքո ասվում է, որ խմբագրակազմը նպատակ է դնում հավաստի, լիարժեք և բազմակողմ լուսաբանելու Թուրքիայի տվյալ ժամանակահատվածի «ինքնատիպ էվոլյուցիան»: Ապա շարունակվում է, որ Արևելքի վերածննդի գործընթացը հետաքրքիր է ամեն դիտակետից: Մինչև այդ ժամանակահատվածն արևելյան կյանքի մեկուսացումը թաքցնում էր իր դանդաղ և բնականոն շարժը: Ի հակադրություն Թուրքիայի հանդեպ այդ շրջանում ձևավորված հանրային քննարկումների՝ դրանք ծավալվում էին ինչպես Ռուսաստանում, այնպես էլ ամենուր: Կ.Պոլսում ոչ մի ռուսերեն պաշտոնաթերթ չի տպագրվել, որը կբավարարեր տեղեկատվության հոսքի այդ պահանջը²³:

Ապա խմբագրականը շարունակում էր, որ թերթը ներկայացնելու և լուսաբանելու է թուրքական «մտքի» և կյանքի առավել հայտնի երևույթները և իրադարձությունները: Այն ընթերցողին ծանոթացնելու էր Թուրքիայում քաղաքական, տնտեսական, հասարակական և «մտավոր էվոլյուցիոն» ընթացքը²⁴:

Երիտասարդ Թուրքիան²⁵ իր քաղաքական էվոլյուցիայի ճանապարհին նոր քայլ է կատարել, իսկ «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, որի ողջ գործունեությունն ուղղված էր պետական կարգ ու կանոնի հաստատմանը, այսուհետ իրեն գրեթե ամբողջությամբ կսվիրի ժողովրդին, մշակույթին և ազգային գործերին: Ապա շարունակվում է, որ «Աբդուլ Համիդի փտած քառսային-ինքնիշխան համակարգը ժառանգություն ստանալով՝ երիտթուրքերը գրեթե ամեն ոլորտում ժառանգեցին «անարխիկ անկարգություն»». «Պետություն պետության մեջ»՝ այսպես կարելի է բնութագրել այդ ներքին և արտաքին քաղաքական համակարգը²⁶: Երիտթուրքական շարժումն ընդդեմ այդ միջնադարյան կացութաձևի պետք է ստանար ոչ այլ ինչ, քան ազգային և լիբերալ շարժման բնույթ:

Օրակարգային հարցադրումները պարբերաթերթում շատ արագ են զարգացում ապրում: Զգալի քանակությամբ նյութեր են տպագրվում Թուրքիայի արտաքին իրավիճակի մասին: 1909 թ. համարներից մեկում կարդում ենք Քորքմազովի հոդվածը²⁷, որ Թուրքիայի միջազգային դրությունն արդեն այնպիսին չէ, ինչպիսին մեկ տարի

23 *Стамбульскія Новости*, 30 октября 1909.

24 Նույն տեղում: Տե՛ս նաև *Стамбульскія Новости*, 23 октября 1909.

25 Հատկանշական է, որ թերթում այդ ժամանակաշրջանի համար օգտագործվում է Թուրքիա եզրույթը, ինչը կարելի է գնահատել որպես այդ եզրույթը մամուլի միջոցով հասարակական շրջանառության մեջ դնելու փորձերից:

26 Նույն տեղում:

27 Հոդվածում Քորքմազովը հանդես է գալիս Ջելալ Էդ Դին մականվամբ:

առաջ²⁸: Եվրոպան բավականին նպատակային էր համարում երիտթուրքերի ծրագիրը և ի դեմս նրանց՝ այդ ծրագիրն իրականանալի է տեսնում: Բոլոր այն պետությունները, որոնք դեռևս մեկ տարի առաջ Թուրքիան դիտարկում էին որպես «հավատարիմ ձեռքբերում», ապա հիմա ձգտում են համահավասար «մտերմության»: Թուրքիայի արտաքին հարաբերության փոփոխությունները հեղինակը պայմանավորում էր ներքին քաղաքականության ձևափոխմամբ: Հին Թուրքիան, ինչպես նշվում է պարբերականում, աստվածապետական էր՝ ռասաների և կրոնների տարբերակմամբ, և միայն գերիշնողի ուժն էր, որ պահում էր դրանց միասնությունը: Պատմական զարգացումը երիտթուրքերի առջև դյուրին խնդիր չդրեց՝ ձևափոխել այդ «ազլ-մերատը» ժամանակակից իրավական ազգային պետության: Փաստորեն, «Ստամբուլյան լուրեր» շաբաթաթերթը ակնհայտորեն քարոզում էր նոր ազգային պետության ձևավորման գաղափարը:

Թերթում խոսվում էր նաև կայսրությունում բնակվող այլազգիների և նրանց նկատմամբ տարվող քաղաքականության մասին: Մասնավորապես կարդում ենք. «... բավական է հպանցիկ հայացք նետել Թուրքիայի քաղաքական կյանքին՝ հասկանալու, որ կայսրությունը կառավարվում է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կողմից: Կոմիտեի ծրագիրն ամբողջովին ընդունված է կառավարության կողմից: Հստակ է նաև այն փաստը, որ առանձին ռասաները, որոնք մտնում են Օսմանյան կայսրության կազմի մեջ, բավականաչափ հեռու են երիտթուրքերի քաղաքականության առջև ցանկալի միությունից և հաշտ խանդավառությունից: Սակայն մեր հայրենիքի համար ներքին տարանջատումը ծայրահեղ կործանարար է»²⁹:

Թեև նշվում էր, որ Կոմիտեն մեղադրվում է ազգայնամոլության մեջ, քանի որ ցանկանում է ձուլել կայսրության տարրերին, սակայն, մյուս կողմից, կայսրության որոշ ազգություններ մեղադրվում են անջատողականության ձգտումներում: Սակայն իրականում, ինչպես հոդվածում է շեշտադրվում, Կոմիտեն ցանկանում է միայն այն, որ կայսրության բոլոր քաղաքացիները խոսեն մեկ ընդհանուր լեզվով, միավորվեն հայրենիքի հանդեպ մեկ միասնական սիրով և հավատարմությամբ՝ վերջնականապես հետ կանգնելով անցյալից: Սակայն, հոդվածագիրը միևնույն ժամանակ նշում է, որ տարբեր ռասաներն ունեն իրենց անցյալը, պատմությունը, ավանդույթները, իրենց պատմական խնդիրները և իդեալները, որոնք «խանդով փայփայում են ողջ հարյուր տարիների ընթացքում», և ինչը նոր ծավալ է ստացել վերջին շրջանում՝ շնորհիվ բռնատիրական կարգերի թուլացման: Քորքմազովը վստահ էր, որ այդ ռասաները երբեք ինքնակամ չեն համաձայնվի հրաժարվել իրենց հոգում սրբորեն պահված երազանքներից, ա՛յն հույսից, որը ձևավորվել և զարգացել է տառապանքների հիմքով, որոնք ներկայացնում են իրենց ազգային ողջ կյանքը: «Եթե մի պահ մենք հիմնարար ընդունենք այս ողջ դրությունը, դիտողությունները, կշտամբանքները, ազգայնամոլության ու անջատողականության մեջ փոխադարձ մեղադրանքները, ինչպես նաև թշնամական հարաբերություններ պահպանելու մտադրության

28 *Стамбульскія Новости*, 30 октября 1909.

29 Նույն տեղում:

ցանկությունը, ապա մեր աչքերի առաջ ուրվագծվում է սարսափելի, դաժան պայքարի պատկեր: Երկրի ողջ կյանքը վերածվում է ծեծկոտուքների անդադար շարքի, եղբայրական սպանդի և արյունահեղ դրվագների», - նշվում է հոդվածում³⁰:

Ըստ Քորքմազովի՝ իրականության մեջ հնարավորինս մնալու համար Կոմիտեն կփորձի այս բոլոր մեղադրանքներից և հայտարարություններից առանձնացել այն ամենը, ինչը որպես փաստ երկկողմ ներկայացված է՝ հենվելով բացառապես իրական և որոշակի փաստերի ու փաստարկների վրա, որի շնորհիվ էլ նրա անդամները կկարողանան ի հայտ բերել այս կամ այն պարզ և *մոտիվացնող* դատողությունը:

«Միություն և առաջադիմություն՝ ահա այս է կոմիտեի նշանաբանը. անկասկած կայսրության բոլոր ռասաների, տարրերի սերտ միությունը երիտթուրքերի գաղափարահիմքն է. այդ միության մեջ նրանք տեսնում են հայրենիքի փրկությունը», - մատնանշվում է հոդվածում, ապա շարունակվում, որ երիտթուրքերը, որոնք բոլոր կողմերից հոշակվեցին որպես հայրենիքի ազատագրողներ, իրենց խորապես երջանիկ և նույնիսկ հպարտ են գգում, որ կարողացել են հաղթահարել այդ բարդ խնդիրը՝ վերածննդի ժամանակաշրջան բացելով երկրի համար: Որ *խեղճ* Թուրքիան ազատություն շնչելու հնարավորություն ունի այլևս»³¹:

Հոդվածում անդրադարձ է արվում նաև ոչ մուսուլմանների իրավունքներին: Թերթում նշվում է, որ թեև հին համակարգի հրամանագրերում պատրիարքարանների արտոնությունների մասին շատ է խոսվել, սակայն նման արտոնություն-թույլտվությունները թղթի վրա էին, և միայն վերջերս են կյանքի կոչվելու իրավունք ստացել: Պարբերականը նշում է, որ «բոլոր կողմերից անհասկանալի և անտրամաբանական է ենթադրել, որ ազգ-տիրակալը կտար հպատակ ազգություններին արտոնություններ, այսինքն՝ իրավունքներ, որոնք կգերազանցեին իր սեփական իրավունքները»: Ըստ Քորքմազովի՝ փոքրամասնություններին տրվող «արտոնություններն» ունեին նսեմացնող բնույթ: Ապա շարունակում է, որ հարցի խորը ուսումնասիրության դեպքում, երբ հայացք են նետում հարցի պատմական զարգացման վրա, անհերքելի է, որ Աբդուլ Մեջիդի թանգիմաթյան շրջանում և պատմության նորագույն շրջանում խոսվում է միայն մարդու տարրական իրավունքներից օգտվելու «ողորմելի» թույլտվության մասին: Այդպիսիք էին եկեղեցի և դպրոց կառուցելու, սեփական գերեզմանոց ունենալու, բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու և ամենատորացուցիչ արտահայտություններով վիրավորված չլինելու իրավունքները: Հատկանշական է, որ ազգային փոքրամասնություններին վիրավորելու երևույթը կիրառվում էր ոչ միայն ազգային լեզվի մակարդակում, այլև պետական ծառայողների շուրթերով, կառավարության և պաշտոնական փաստաթղթերում: Հոդվածագիրը մատնանշում է նաև թույլտվություն-արտոնությունների ձևական լինելը և այն, որ բարձրագույն Ռազմական դպրոցի դռները մշտապես փակ են եղել ոչ մուսուլմանների համար³²:

30 Նույն տեղում:

31 Նույն տեղում:

32 Նույն տեղում:

«Վերջապես այդ ազատությունների շարքում, որոնք շտրիվել էին ոչ մուսուլմաններին, – նշում է հեղինակը, – մենք առանձնացնում ենք բացառապես հատուկ բնույթի իրավունքը, այն է՝ յուրաքանչյուր առանձին տարրի ազգային ինքնագիտակցության պահպանման իրավունքը, որը կարող էր լինել համայնքների ինքնուրույն վարչական կազմակերպումը»³³:

Հակադրվելով այն մտտեցմանը, համաձայն որի՝ Թուրքիան «մեղադրվում է» ազգային փոքրամասնությունների ուժացման/ասիմիլյացիայի մեջ, հողվածագիրը շեշտադրում է, որ թուրքերը երբեք չէին կարող մտածել հպատակ ժողովուրդների ուժացման ուղղությամբ, քանի որ այն չէր համապատասխանում իրենց տեսական մտածողությանը. իրենք հպատակներին նայում էին որպես հարկատուների, իսկ ասիմիլյացիան հնարավոր էր միայն հավասար իրավունքի պարագայում: Ինչպես նաև, եթե ուայաները դադարեին լինել ուայա³⁴, այսինքն՝ հպատակներ/հարկատուներ, ապա ինչպե՞ս էր պետությունը հոգավու բանակի և վարչական հսկայական ծախսերը: Իհարկե, մուսուլմանները նույնպես վճարում էին եկամտի տասներորդ չափը, բայց դա ոչինչ էր հսկայական հարաջեմի/խարաջ/ հարկի դիմաց³⁵:

Որպեսզի ընթերցողի համար ավելի հստակ լինի նախկին իրավիճակը, հողվածը թուրքերին ներկայացնում է որպես Կենտրոնական Ասիայի ազատ, հզոր և մշտապես պատերազմող ցեղատեսակ, որը միշտ նախընտրել է թափառական զինվորի կյանքը: Եվ միայն վերջին շրջանում է, որ զինվորը համաձայնել է հող մշակել: Այսպիսով, թեև թուրքերն ունեին հսկայական հողատարածքներ, սակայն դրանք մշակում էին ուայաները, ինչից բացարձակ հստակ է դառնում, որ սոցիալական նման կառուցվածքի պայմաններում թուրքերը չէին կարող ոչ մուսուլմանների ասիմիլյացիան ցանկանալ: Հողվածն ավարտվում է հետևյալ դիրքորոշմամբ.

«Մենք³⁶ ևս մեկ անգամ հաստատում ենք այդ կետը.

1. Ռայա – արաբերեն նշանակում է քրիստոնյաների հոտ, ովքեր գտնվում են ստրուկների, հնազանդների/հպատակների կարգավիճակում և վճարում են հարկ, և ովքեր մշտապես հեռու են պահվել իշխող ժողովրդից: Մինևույն ժամանակ իսլամը, որը մեկ ընդհանրական իրավունք էր երաշխավորում անխտիր բոլոր մուսուլմանների համար, ասիմիլյացիայի հիանալի հիմք էր: Համարձակորեն կարող ենք հաստատել, որ եթե սոցիալական և անհատական ազատությունը չտրվեր քրիստոնյա տարրերին՝ որոշակի հարկի դիմաց, ապա վերջիվերջո նրանք ևս իսլամ կընդունեին: Պատմությունը հաստատում է մեր դիրքորոշումը:

33 Նույն տեղում:

34 Պետք է նշենք, որ հողվածագիրը ուայա բառի թարգմանությունը կիրառում և շեշտադրում է արաբերենից թարգմանաբար հոտ իմաստով՝ տալով նաև բառի կիրառության այլ տարբերակները:

35 Հարկատեսակ՝ գլխահարկ: Д. А. Магазинск, *Турецко-русский словарь*, под ред. В. А. Гордлевского (Москва: Государственное издательство иностранных и национальных словарей, 1931), 384.

36 Հողվածագիրը նկատի ունի երիտթուրքերին:

2. Մենք կարծում ենք, որ այդ «արտոնությունների» նշանակությունը չափազանցված է՝ բացի այն, որ թույլ էին տալիս սեփական կյանքը ինքնուրույն և ազատ կազմակերպել, ինչն իսկական բարեգթություն էր ոչ մուսուլման տարրերի համար, որոնց շտրիիվ վերջիններս կարողացան պահպանել իրենց ազգային ինքնագիտակցությունը, առաջընթաց ապրել և նույնիսկ վերածնվել»³⁷:

Քորքմագովը նաև հակադրում է մուսուլմանների և ոչ մուսուլմանների սոցիալական վիճակները՝ կայսրության անկման երկարատև շրջափուլը համարելով թուրքերի համար ծանր փորձությունների շրջան: Միննույն ժամանակ մատնանշվում էր, որ ոչ մուսուլմանների սոցիալական և կյանքի պայմանները ոչ թե վատթարացել, այլ բարելավվել են: Հոդվածագիրը նաև ընդգծում էր, որ ռայան շարունակում է ազատված մնալ զինվորական ծառայությունից, և փոխարենն ընդլայնում է իր ունեցվածքը և զարգացնում սեփական մշակույթը³⁸:

Անդրադառնալով ազգային բնութագրիչներին՝ պարբերականը խոսում է ազգության համար սեփական լեզվի և մշակույթի սրբություն լինելու մասին, և շեշտադրում, որ յուրաքանչյուր իրավական պետություն, այդ թվում՝ Թուրքիան, այդ սրբություններին պետք է վերաբերի հարգանքով և զգուշությամբ: Սակայն, հետաքրքրական է, որ սա դիտարկվում էր ոչ թե որպես պարտք, այլ կենսական պահանջ: Ապա շարունակվում է այն միտքը, որ Թուրքիան տվյալ ժամանակահատվածում մեծամասնություն կազմող ազգություն չկար: Ման իրավիճակ էր նաև մշակութային հարաբերությունների իմաստով. հույները, բուլղարները, հայերն ունեին իրենց վարժարանները, իրենց մտավորականությունը և տնտեսական ազդեցությունը: Հետաքրքրական է, որ հոդվածագիրը խոսում է նաև այն մասին, որ արաբների համար Եգիպտոսը, հույների և բուլղարների համար՝ Հունաստանը և Բուլղարիան թիկունք կկանգնեն:

Այստեղ պետք է նկատել, որ հայերի մասին այս առումով գրեթե ոչ մի խոսք չկա:

Ինչպես նշվում է հոդվածաշարում, որ թեև դա չի խանգարի, որ նրանք լինեն օսմանյան հավատարիմ քաղաքացիներ, սակայն, հստակ է, որ կցանկանան տեր կանգնել իրենց սեփական լեզվին, մշակութային անկախությանը: Այդ դեպքում, նրանց ուծացնելու աննշան փորձն անհաջողությամբ կավարտվի: Քորքմագովը վստահ էր, որ օտար երկրներն ակնկալում են, որ երիտթուրքերը կփորձեն բուլղարին ասիմիլացնել, և Եվրոպան «ստիպված» միջամտություն կանի, այս անգամ՝ վերջնականապես: Այսինքն՝ Եվրոպան հնարավորություն կունենա օգտվել այդ պայքարից սեփական շահի համար: Իսկ դա թույլ չտալու համար երիտթուրքերը պետք է իրավահավասարություն սահմանեն փոքրամասնությունների լեզվի և մշակութային անկախության համար³⁹:

Այս տեսությամբ է պարբերականը պայմանավորում այն, որ յուրաքանչյուր քաղաքացի արդեն ավելի ուժգին կփայփայի սեփական հայրենիքը, քանի որ դրանում կտեսնի երաշխիք ոչ միայն սեփական անձի, այլև ողջ ազգային զարթոնքի համար:

37 *Стамбульскія Новости*, 30 октября 1909.

38 Նույն տեղում:

39 Նույն տեղում:

Հանդեսի յուրաքանչյուր համարում պարտադիր լույս էր տեսնում Թուրքիայի Ազգային ժողովի գործունեության մասին տեղեկատվություն՝ ուղղված սահմանադրական համակարգի, բարեփոխումների մասին նյութերի հրապարակմանը՝ բայց արդեն ընդդիմադիր բնույթի:

1910 թ. գարնանը երիտթուրքերն սկսում են ընդդիմադիր մամուլի պատժողական գործողությունների շարք. նույն թվականի հունիսի 13-ին սոցիալիզմ քարոզելու մեղադրանքով փակվում է «Իշթիրակ»-ը⁴⁰, ապա՝ «Ստամբուլյան լուրեր»-ը: Ինչպես արդեն նշել էինք, ռուսական կառավարությունն էլ էր դժգոհ պարբերաթերթից. 1910 թ. հունիսի սկզբին արտաքին գործերի նախարարությունն արգելում է թերթի մուտքը Ռուսաստան՝ պատճառաբանելով, որ այն չափազանցնում է Օսմանյան կայսրության և նրա մշակութային զարգացվածության մասին տեղեկությունները⁴¹: Սակայն կար նաև այլ պատճառ. Ռուսաստանը, նոր դուրս գալով հեղափոխական կարգավիճակից, խուսափում էր հեղափոխական կոչերի և գաղափարների ներմուծումից: Իսկ Ռուսաստանում թերթի չտարածելն արդեն ընթերցող լսարանն էր փոքրացնում, ինչպես նաև ֆինանսական մուտքի արգելքը տպագրման և տարածման ուղղությամբ Կ.Պոլսում նպաստում է պարբերաթերթի փակմանը: Այն փակելու վերաբերյալ կա նաև այլ տեսակետ, որ Քորքմազովը խնդիր է ունեցել «չերքեզ խմբագիրների» հետ «քաղաքական ծախվածության պատճառով»՝ իր լրտեսական աշխատանքով ի նպաստ Թուրքիայի: Եվ հենց այս շրջանակների կողմից բողոքագիր է գրվել, համաձայն որի՝ «Ստամբուլյան լուրեր» պարբերականը ներկայացվում է որպես թուրքամետ և պանօսմանյան քարոզչությանն ուղղված թերթ՝ երիտթուրքական ֆինանսական միջոցներով տպագրվող⁴²:

Արդեն վերջին շրջանում թերթի ընդհանուր ժողովրդավարական ուղղությունը չէր համապատասխանում երիտթուրքերի հակազդող քաղաքական և գաղափարական ուղղությանը: Ընդհանուր առմամբ այն առավել ազգային էր՝ մոտ հեղափոխական ժողովրդավարությանը՝ սահմանադրական համակարգի ամրապնդման համար պայքարի ուղեգիծ, մինչև անգամ երիտթուրքական ազգայնամուլական ազգային քաղաքականության, կանանց իրավունքների, մշակույթով աշխարհիկ շարժերի, սոցիալական հավասարության համար: Պարբերականը նաև Ռուսաստանի և Եվրոպայի երիտթուրք սոցիալիստների և սոցիալ-դեմոկրատ հեղափոխականների միջև սերտ միավոր էր. այն առավել ներկայացնում էր իրթիհաթական *ձախ*-երի ուղղությունը:

40 Այս պարբերականը բնորոշվում է՝ որպես Թուրքիայի պատմության մեջ առաջինը, որ հիմք դրեց սոցիալիզմի տեսական քարոզին, որ այն «Օսմանյան սոցիալիստական կուսակցության» պաշտոնաթերթն էր:

41 АВПР, ф. Турецкий стол (новый), 1909 г., д. 6891, л. 6.

42 ИРЛИ. ф. 655. д. 15. л. 16-17, РГИА. ф. 821. о. 8. д. 834. л. 299, Зульпукарова Э., Из истории первой русской газеты «Стамбульские новости». РИА Дагестан. 9 августа 2009, URL: <http://archive.is/nALo>. Коркмасов А. Д.-Э., Газета «Стамбульские Новости» и ее место во всеобщей истории прессы. Газават. ру. URL: <http://www.gazavat.ru/history3.php?rub=31&art=278> (ղիտվել է՝ 06.12.2019), տե՛ս նաև Ya evam veda, Orientalia et Classica: Труды Института восточных культур и античности Выпуск LXI, Под редакцией И.С. Смирнова, Москва, 2016/ http://east-west.rsuh.ru/binary/66550_28.1458981280.10645.pdf.

Elina Z. Mirzoyan

PhD in philology

ON SOME REFLECTIONS OF THE FIRST RUSSIAN-LANGUAGE YOUNG TURKISH PERIODICAL – “STAMBUL’SKIE NOVOSTI”

SUMMARY

Key words: “Stambul’skie Novosti,” Young Turk press, Ahmed Jevad, Djelal ed-Din Korkmasov, Russian-Turkish relationships.

The article presents a brief history of Constantinople’s first Russian-language Young Turk periodical “Stambul’skie Novosti” (Istanbul News, 1909-1910) and its reflection of Young Turk nationalism. The newspaper was distributed in the Ottoman Empire, Russia, Bulgaria, Western European countries. The editorial staff included prominent Turkish political and public figures, under the editorship of Djelal ed-Din Korkmasov, a prominent representative of the Russian and Caucasian intelligentsia. The periodical was also an attempt at rapprochement of Russian-Turkish relations, the exchange of revolutionary experience, and the dissemination of nationalist views. Although the newspaper was intended to serve the aims of the Russian authorities, it soon became a tool for propagation and dissemination of the Young Turk ideas.

Элина З. Мирзоян

кандидат филологических наук

О НЕКОТОРЫХ НАБЛЮДЕНИЯХ «СТАМБУЛЬСКИХ НОВОСТЕЙ» – ПЕРВОГО МЛАДОТУРЕЦКОГО РУССКОЯЗЫЧНОГО ПЕРИОДИЧЕСКОГО ИЗДАНИЯ КОНСТАНТИНОПОЛЯ

РЕЗЮМЕ

Ключевые слова: «Стамбульские новости», младотурецкая пресса, Ахмед Джевад, Джелал эд-Дин Коркмасов, российско-турецкие отношения.

В статье представлена краткая история первого русскоязычного периодического издания Константинополя «Стамбульские новости» (1909-1910) и отражения на его страницах националистической идеологии и политики младотурок. Газета распространялась в Османской империи, России, Болгарии, странах Западной Европы. В редакцию издания входили видные турецкие политические и общественные деятели, а главным редактором являлся Джелал эд-Дина Коркмасов – видный представитель русской и кавказской интеллигенции.

Данное издание также преследовало цель сближения российско-турецких позиций, обмена революционным опытом и распространения националистической идеологии, что, фактически, сделало ее инструментом для распространения и пропаганды идей младотурок.

REFERENCES

Alimov, Abid. *Революция 1908 г. в Турции, Пробуждение Азии. 1905 г. и революция на Востоке* [Revolution of 1908 in Turkey, The Awakening of Asia. 1905 and Revolution in the Orient]. Moscow: L.Gos.Soc. Econ, 1935;

Korkmasov, Anatoliï. «Стамбульские Новости» – образ истины и свободы» [“Stambul’skie Novosti” – Model of Truth and Freedom]. *Ioldash/Vremena* (Дагестан), 01 January, 2007, no. 83; 12 January, 2007, no. 84, 09 February, no. 88; 2007;

Korkmasov, Anatoliï. *Газета «Стамбульские новости» и её место во всеобщей истории прессы* [The Newspaper “Stambul’skie Novosti” and its Role in General History of Press]. Dagestan: 2010;

Korkmasov, Anatoliï. «Джелал-Эд-Дин Коркмасов и его высокодостоинный орган отечественной печати газета ‘Стамбульские новости’» [Dzhelal-Ed-Din Korkmasov and his Reputable Periodical of National Press “Stambul’skie Novosti”]. *Dagestanskaia Zhizn’* (Dagestan), 14 November, 2019, no. 29 (612);

Shpilkova, Vera. *Выборы в турецкий парламент и его деятельность в 1908-1909 гг.* [The Elections in the Turkish Parliament and its Activity in 1908-1909]. Moscow: Nauka, 1971;

Zheltyakov, Anatoliï. «Внутреннее положение Турции в 1909–1910 гг. при младотурках в освещении газеты ‘Стамбульские новости’», *Тюркологический сборник* [“The Internal Situation in Turkey in 1909-1910 during the Young Turks Regime and Interpretation of Newspaper ‘Stambul’skie Novosti’” in Turcological Collection]. Moscow: Nauka, 1984;

Zheltyakov, Anatoliï. *Режим печати при младотурках* [The System of a Press during the Young Turks Regime]. Moscow: Nauka, 1978;

Zulkuparova, E’lmira. *Газета «Стамбульские новости»: история, политика, реформы* [The Newspaper “Stambul’skie Novosti”: History, Policy, Reforms]. Samara: 2011;

Стамбульская Новости [“Stambul’skie Novosti”]. Constantinople, 1909.

ՄԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՂԵՌՆԸ. ԽԼԱԹԻ ԳԱՎԱՌԱԿԻ ՓՐԽՈՒՄ ԳՅՈՒՂԻ ԲՆԱՋՆՁՈՒՄԸ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ՝

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Փրխուս, Խլաթ, Բիթլիս, փախստականներ, որբեր:

Վերջին տարիներին հետզհետե ավելի է աճում Հայոց ցեղասպանության ժամանակ առանձին շրջանների, անգամ բնակավայրերի հայ բնակչության բնաջնջման պատմության նկատմամբ հետաքրքրությունը²: Նշված ուղղությամբ ուսումնասիրությունները թույլ են տալիս առավել լիարժեք բացահայտել Հայոց ցեղասպանության իրականացման մեխանիզմները, դրան մասնակցած տարբեր կառույցների և խմբերի՝ բանակ, տեղական իշխանություններ, մուսուլման բնակչության տարբեր խմբեր (թուրքեր, քրդեր, չերքեզներ) դերակատարությունը, այդ խմբերի միջև գործառույթների բաշխումը, հայերի՝ մահվանից խուսափելու նպատակով գործադրված ջանքերը և այլն:

Փրխուսի բնաջնջման պատմության ուսումնասիրությունը կարող է հետաքրքրություն ներկայացնել նաև հատկապես հետևյալ երկու պատճառներով. այն Խլաթի գավառակի ամենախոշոր հայաբնակ բնակավայրն էր, և այդ բնակավայրի ոչնչացումն իրականացվել է նույն կաղապարով, ինչ Խլաթի գավառակի այլ հայկական գյուղերի դեմ գործողությունները, այսինքն, Փրխուսի օրինակով մենք կարող ենք պատկերացում կազմել գավառակի բոլոր հայկական գյուղերի եղեռնի մասին:

Փրխուսի բնաջնջման պատմության ուսումնասիրության համար որպես առաջնային սկզբնաղբյուր ծառայել են փրխուսցի վերապրածների վկայությունները և դրանցից հատկապես՝ Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունը (պահվում է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդերում):

Փրխուս գյուղը Հայոց ցեղասպանության նախօրյակին

Փրխուսը Բիթլիսի (Բաղեշ) նահանգի Բիթլիսի գավառի Խլաթի գավառակի 24 հայաբնակ բնակավայրերից մեկն էր, դրանցից առավել խոշորը: Գյուղը զուտ հայաբնակ էր, տեղակայված էր կենտրոնական Խլաթ գյուղաքաղաքից մոտ 12 կիլոմետր հյուսիսարևմուտք՝ Նազիկ լճակի հարավկողմի ոչ բարձրադիր լեռների ստորոտներում³:

1 Հոդվածը ստացվել է 10.09.2019 և ընդունվել տպագրության՝ 23.11.2019:

2 Yves Ternon, *Mardin 1915: Anatomie pathologique d'une destruction* (Paris: Geuthner, 2007), տե՛ս նաև Hilmar Kaiser, *The Extermination of Armenians in the Diarbekir Region* (İstanbul: İstanbul Bilgi University Press, 2014): Ըստ Օսմանյան կայսրության վարչատարածքային մանր միավորների (սանջակ (գավառ) և կազա (գավառակ)) և բնակավայրերի Հայոց ցեղասպանության ընթացքն է ներկայացնում նաև ֆրանսահայ ուսումնասիրող Ռ-այմոն Հարություն Գևորգյանն իր «Հայոց ցեղասպանություն. լիակատար պատմություն» աշխատությունում, Raymond H. Kevorkian, *The Armenian Genocide: A Complete History* (London-New York: I. B. Tauris, 2011):

3 Թ. Խ. Հակոբյան, Սո. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հայտը 5, Տ-Ֆ* (Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2001), 281:

1880-1881 թթ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի հրահանգով Բաղեշի առաջնորդարանի կողմից կազմված վիճակագրությամբ՝ Փրիսուսն ուներ 107 տուն, 1.311 շունչ հայ բնակչություն⁴, նույն ժամանակաշրջանին վերաբերող մեկ այլ հաշվարկով՝ 115 տուն, 1.000 շունչ հայ⁵:

Վանում ռուսական փոխյուպատոս Վլադիմիր Մանսկո՝ 1899 թ. վերաբերող տվյալներով՝ բնակավայրն ուներ 140 տուն, 1.120 շունչ հայ բնակչություն (հեղինակը որպես մեկ տան համար շնչերի միջին թիվ ընդունում է 8)⁶:

Ըստ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի հրահանգով 1913 թ. Բաղեշի առաջնորդարանի կազմած վիճակագրության (մասնագիտական գրականության մեջ հայտնի է նաև 1913-14 թթ. Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի մարդահամար)՝ Փրիսուսում կար 207 տուն, 2.016 շունչ հայ բնակչություն (այդ թվում՝ 77 պանդուխտ)⁷: Այլ վկայություններով՝ Մեծ եղեռնի նախօրյակի դրությամբ գյուղի հայ բնակչության թիվն ավելի բարձր էր. այսպես, ըստ Մշո առաջնորդարանի քարտուղար Նազարեթ Մարտիրոսյանի տվյալների՝ Փրիսուսն ուներ 284 տուն, 2.154 շունչ հայ⁸, իսկ Փրիսուս գյուղից վերապրած հայ փախստականները հաղորդում են գյուղում 300⁹, 350¹⁰ և անգամ 400¹¹ տուն և 2.700¹²-3.000¹³ շունչ հայ բնակչության առկայության մասին:

Ընդամենը Խլաթի գավառակում, ըստ Հայոց պատրիարքարանի 1913 թ. վիճակացույցի տվյալների, կար 1.679 տուն, 13.432 շունչ հայ բնակչություն¹⁴: Գավառակի մուսուլման բնակչության թիվը (ճնշող մեծամասնությունը՝ քրդեր, առանձին գյուղե-

4 *Արձագանք* (Թիֆլիս), 1882, թիվ 18, 279, տե՛ս նաև Սուքիաս Էփրիկեան, *Պարկերազարդ բնաշխարհիկ բառարան, Հայոց տառաչին, Ա-Ը* (Վենետիկ, Ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1902), 365:

5 Էփրիկեան, *Պարկերազարդ բնաշխարհիկ բառարան, Հայոց երկրորդ, Թ-Կ* (Վենետիկ, Ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1907), 175:

6 Վլադիմիր Մանսկին հաղորդում է, որ անձամբ մի քանի անգամ այցելել և ուսումնասիրել է Խլաթի գավառակը, Владимир Маевский, *Военно-Статистическое описание Ванскаго и Битлискаго вилаетовъ* (Тифлисъ: Типография Штаба Кавк. воен. окр., 1904), 220: Գավառակի գյուղացուցակը տե՛ս նույն տեղում (отдел приложений), 93):

7 ՀԲԸՄ Նորբայան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, f. 50:

8 *Վան-Տուս* (Թիֆլիս), 1916, թիվ 15, 8:

9 Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունը (Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդեր, բաժին 8, ֆ. 24, թղթապանակ 29-30), թերթ 61:

10 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու*, Հատոր II, *Բիթլիսի նահանգ*, հեղինակ և կազմողներ՝ Ամատունի Վիրաբյան, Գոհար Ավագյան, գլխավոր խմբ. Ամատունի Վիրաբյան (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012), 57:

11 Գեղամ Բադալյան, «Վարազդատ Տերոյանի վիճակագրական նյութերն Արևմտյան Հայաստանի բնակավայրերի վերաբերյալ», *Բանբեր Հայաստանի արխիվների* 1 (2005): 220:

12 Եղիազար Ղարիբյանի և Ղուտրադ Ավետիսյանի վկայությունները, Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում, 55:

13 Բաղդասար Մեքոնյանի վկայությունը, *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 54:

14 Հաշվարկը ֆրանսահայ ուսումնասիրող Ռայմոն-Հարություն Գևորգյանի, Raymond Kévorkian, Paul Paboudjian, *Les arméniens dans l'Empire ottoman à la veille du génocide* (Editions d'Art et d'Histoire ARHIS, Paris, 1992), 59, 474:

րում՝ չերքեզներ, Իսլաթ քաղաքում՝ թուրքեր) ըստ 1914 թ. օսմանյան վիճակագրության՝ 10.190 էր¹⁵:

Ըստ Վանում ռուսական փոխյուպատոս Վ. Մանսկոյի դիտարկման՝ Փրիսուսը Իսլաթի գավառակի հայաբնակ առավել հարուստ և բարեկեցիկ գյուղն էր¹⁶: Ինչպես և Արևմտյան Հայաստանի այլ գյուղական բնակավայրերում՝ բնակչության հիմնական զբաղմունքը երկրագործությունն ու անասնապահությունն էր: Գյուղում ցանում էին ցորեն, գարի, կտավատ, կանեփ: Հացահատիկի տարեկան բերքը մոտ 45.000 կոտ ցորեն էր (մեկ կոտը 2 լիտր է) և 20.000 կոտ գարի և տարեկան¹⁷:

1915 թ. դրությամբ գյուղում պահվում էր մոտ 20.000 գլուխ ոչխար, 2.500 ամեն տեսակի այլ անասուն-սևատավար (եզներ, գոմեշներ, կովեր, մատակներ), 30 ձի, 300 ավանակ¹⁸: Շրջանում հայտնի էր Փրիսուսի «բալբաս» ցեղի սպիտակ դմակավոր ոչխարը, ինչպես և «դոտիկ» կոչված այծը, որից ստանում էին թանկարժեք զգած նուրբ բուրդ («դֆտիկ»)¹⁹:

Փրիսուսն ուներ մոտ 700 տարվա հնության Ս. Ստեփանոս անունով քարաշեն եկեղեցի: Կային ձեռագիր ավետարաններ և «Կարմիր-կող» կոչված Ավետարանը, որին ուխտի էին գալիս հիվանդություններ ունեցողները²⁰: Մեծ եղեռնի նախօրյակին գյուղի եկեղեցում սպասավորում էր տեր Հարություն (աշխարհական անվամբ՝ Հովհաննես) քահանա Ղուկասյանը²¹:

Գյուղում գործում էին երկու քարաշեն դպրոցներ, որոնցից մեկը՝ բողոքականների կողմից բացված: Համաձայն 1913 թ. վիճակագրության՝ համայնքային-«ազգային» դպրոց էր հաճախում մոտ 100 երեխա²², մեկ այլ տվյալով՝ դպրոցներ հաճախող աշակերտների թիվը 520 էր²³:

Փրիսուսի բնաջնջման ընթացքը

Դեռևս նախքան պատերազմի մեջ մտնելը՝ օսմանյան իշխանությունները 1914 թ. օգոստոսին հայտարարում են զորահավաք, որին Փրիսուսից սկզբում հավաքագրվում են մոտ 150 տղամարդ²⁴: Շատերը գերադասում են գումար վճարել և ազատվել զինվո-

15 Kemal Karpat, *Ottoman Population 1830-1914: Demographic and Social Characteristics* (Wisconsin: The University of Wisconsin Press, 1985), 174.

16 Маевский, *Военно-Статистическое описание, отдел приложений*, 93:

17 Եղիազար Ղարիբջանի և Ղուտրաղ Ավետիսյանի վկայությունները, *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 55:

18 Նույն տեղում, 57:

19 Սուկրատ Մկրտչյանի հուշագրություն, 61:

20 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 57:

21 Թեղդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության և իր հօրին աղէտալի 1915 տարին* (Նիւ Եորք, 1985), 63:

22 ՀԲԸՄ Նուբարյան զբաղարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, f. 50:

23 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 57:

24 Եղիազար Ղարիբջանի և Ղուտրաղ Ավետիսյանի վկայությունը, *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 55:

րագրությունից, սակայն Օսմանյան կայսրության՝ պատերազմական գործողությունների մեջ ներգրավվելուց հետո, փրկագնով ազատվածները նույնպես զորակոչվում են: Փրխուսի տղամարդկանց հաջորդ խոշոր զորահավաքը տեղի է ունենում արդեն Սարիղամիշում օսմանյան բանակի կրած պարտությունից հետո՝ 1915 թ. փետրվարին. այդ ժամանակ բանակ է զորակոչվում մոտ 300 տղամարդ²⁵: Ընդհանուր առմամբ, գյուղից զորակոչված տղամարդկանց թիվը մոտ 500, առավելագույնը՝ 600 հոգու սահմանում էր²⁶:

Պատերազմ հայտարարելուց քիչ անց զինվորագրված տղամարդկանց զինաթափում են և, ընդգրկելով աշխատանքային գումարտակներում («ամելի թաբուրի»), ուղարկում ճանապարհներ հաստատելու և խրամատներ կառուցելու աշխատանքների՝ կանոնավոր զորքի հսկողության ներքո: Հինվորագրված փրխուսցի տղամարդկանց դրությունը գնալով անտանելի էր դառնում. նրանք աշխատում էին առանց հանգստանալու, տաժանակիր պայմաններում՝ անօթի, ծարավ, մերկ և ոտաբորբիկ, գիշերները քնում առանց անկողնի՝ խոնավ ու սառը հողի վրա: Նման պայմաններում գնալով ավելանում են մահվան դեպքերը, շատերը դիմում են դասալքության՝ վերադառնալով գյուղ կամ անցնելով ռազմաճակատը և հանձնվելով ռուս զինվորներին²⁷:

1914 թ. վերջերին – 1915 թ. սկզբներին իշխանությունները, որպես զինվորական պատերազմական տուրք, գյուղացիներից բռնագրավում են 20.000 կոտ ցորեն, 600 ոչխար, 100 լիտր յուղ, 40 տավար մսացուի համար, 50 սայլ և 100 եգ, 500 զույգ գուլպա, 370 զույգ ձեռնոց, 100 սայլ խոտ, 100 սայլ հարդ, 120 սայլ ցան (որպես վառելիք օգտագործվող չոր աղբ, աթար)²⁸:

Տղամարդկանց զինվորագրման գործընթացին զուգահեռ՝ 1915 թ. գարնանը գյուղախմբի մյուտիքը (կառավարիչ) ռստիկանների ուղեկցությամբ մտնում է Փրխուս և, սպառնալիքների ու մատնության գործադրմամբ, հավաքում գյուղացիների մոտ պահվող զենքը՝ հրացաններ և ատրճանակներ: Ըստ շրջանառվող լուրերի, հավաքված զենքը փոխանցվում է քրդերին²⁹: Տղամարդկանց զինվորագրման և զենքերի բռնագրավման գործողություններով Փրխուսի հայերը զրկվում են ինքնապաշտպանություն կազմակերպելու գործնական հնարավորությունից:

1915 թ. ապրիլի 24-ին (նոր տոմարով՝ մայիսի 7) ռուսական բանակի Կովկասյան չորրորդ բանակային կորպուսը հարձակողական գործողություն է նախաձեռնում Մանազկերտի ուղղությամբ, որը ապրիլի 27-ին (մայիսի 10) անցնում է ռուսական բանակի վերահսկողության տակ³⁰: Ռուսական զորքերի հարվածների տակ օսմանյան զորքերի հետ դեպի հարավ են նահանջում նաև Ալաշկերտի շրջանի քրդական աշիրեթները: Օսմանյան իշխանությունները նրանց փաստացի արտոնում են, ըստ

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում, 58:

27 Նույն տեղում, 55:

28 Նույն տեղում:

29 Ձեռքերի հավաքման մասին տես տարբեր վկայություններ նույն տեղում, 47, 48, 53, 56:

30 Ашот Арутюнян, *Кавказский фронт 1914-1917 гг.* (Ереван: изд. «Айастан», 1971), 175.

որոշ տվյալների, առաջնորդվելով «վառված հողի» մարտավարությամբ՝ ուղղակի կարգադրում բնաջնջել ռուսների առաջխաղացման շրջանների բոլոր հայկական բնակավայրերը³¹:

Փրխուսի և Խլաթի այլ հայաբնակ բնակավայրերի եղեռնն իրականացվում է Հասնացի կոչվող քրդական աշիրեթի³² և նրան միացած որոշ տեղացի քրդերի խմբերի միջոցով³³: Քրդերը մոտենում են Փրխուս գյուղին 1915 թ. մայիսի 1-ին (մայիսի 14)՝ Համբարձման տոնի հաջորդ օրը³⁴: Մայիսի 2-ին (մայիսի 15) կողոպտվում են գյուղից դուրս՝ դաշտերում գտնվող գյուղացիների անասունները³⁵: Գյուղը շրջապատվում է, սակայն քանի որ օրն արդեն մթնում էր, քրդերը առժամանակ չեն համարձակվում մտնել գյուղ՝ վախենալով հնարավոր դիմադրությունից³⁶: Մի քանի ուղղություններով քրդերի ներխուժումը Փրխուս տեղի է ունենում հաջորդ օրը՝ 1915 թ. մայիսի 3-ի (մայիսի 16) առավոտյան: Սկսվում է գյուղի բնակչության կոտորածն ու թալանը³⁷:

Ջարդի առաջնային թիրախը բոլոր տղամարդիկ էին՝ առանց տարիքային սահմանափակման: Չէին խնայվում ո՛չ անչափահասները և ո՛չ էլ ծերերը: Ըստ վերապրած փրխուսցի Սոկրատ Մկրտչյանի վկայության՝ գործում էր «տղա է՝ բավական է, պետք է ոչնչացնել» սկզբունքը³⁸: Քրդերը մեկ առ մեկ մտնում էին յուրաքանչյուր տուն: Սպանվում էր յուրաքանչյուր ոք, ով համարձակվում էր ցույց տալ թեկուզ աննշան դիմադրություն, չհայտնել հարազատների և մտերիմների տեղը, ունեցվածքի, դրամի թաքստոցները³⁹: Վերապրած Սոկրատ Մկրտչյանի պատկերավոր արտահայտությամբ՝ «րոպե առ րոպե փողոցներում և տներում բարձրանում էին դիակների կույտերը»⁴⁰:

Ջարդն ու թալանն ուղեկցվում էին կանանց բռնաբարություններով և գերմամբ:

31 Տ. Շահբազ, «Բիթլիսի տարեդարձին թրքական գազանութիւններից», *Համբարաբեր հասարակական-գրական շաբաթաթերթ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան* (Թիֆլիս), 26 հունիսի 1916, թիվ 26, 826: Տե՛ս նաև Վաղարշակ Օյսիկեան, «Բաղէշի ընդհանուր կոտորածը», *Հորիզոն հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ* (Թիֆլիս), 20 սեպտեմբերի 1915, թիվ 212: Բիթլիսում ամերիկացի միսիոներ Գրեյս Կնապը, ականատես լինելով, թե ինչպես են Խլաթի գավառակի գյուղերի կոտորածից մազապործ եղած և Բիթլիսի Դատվան բնակավայրում ապաստանած փախստական հայերը բողոքներ հղում տեղական իշխանություններին, արձանագրում էր, որ հայերը և ոչ մի գաղափար չունեին, որ նրանց դեմ ուղղված այս գործողությունները հենց իշխանությունների կողմից ին հրահանգված: Տե՛ս Grace H. Knapp, *The Tragedy of Bitlis* (New York-Chicago-London and Edinburgh: Fleming H. Revell Company, 1919), 41:

32 Որպես աշիրեթապետ նշվում է ոմն Աբդուլ Մեջիդի անունը:

33 Տե՛ս մասնավորապես վերապրած Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունը, 44:

34 Տե՛ս *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 58:

35 Նույն տեղում, 56, 58:

36 Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունը, 44: նաև՝ վերապրած Միսակ Սեդրակյանի վկայությունը, *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 48:

37 Նույն տեղում, 59:

38 Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունը, 46:

39 Միսակ Սեդրակյանի վկայությունը, *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 49:

40 Նույն տեղում, 47:

Բազմաթիվ գեղեցիկ ու երիտասարդ աղջիկներ մրոտում ու ցեխոտում էին իրենց դեմքերը, որպեսզի խուսափեն գերությունից ու հետագա հնարավոր բռնի ամուսնությունից, սակայն դա ոչ միշտ էր օգնում և շատերին մազերից քարշ տալով բաժանում էին իրենց հարազատներից ու տանում⁴¹:

Փրխուսի կոտորածին և թալանին որոշակի մասնակցություն են ունենում նաև քուրդ կանայք. այդ մասնակցությունը արտահայտվում էր հատկապես տղամարդկանց քաջալերելով (այսպես, համաձայն մի վկայության՝ քրդուհիները, տեսնելով որևէ գեղեցիկ հայ աղջիկ, կանչում էին իրենց տղամարդկանց, բղավելով՝ «Եկեք, այստեղ ալ գեղեցիկ կին մը կայ»)՝⁴²:

Գյուղի հայ բնակչության կոտորածի ու թալանի գործողությունը տևում է մինչև մայիսի 3-ի ուշ երեկո: Մույն ընկնելու պես քրդերը հետ են քաշվում բնակավայրից: Կոտորածը վերապրած Փրխուսի հայության խլյակները, ուժ չգտնելով մնալ ավերված և թալանված բնակավայրում, սահատակված հարազատների և հարևանների դիակների կողքին, ինչպես նաև երկյուղ կրելով քրդերի նոր հարձակումներից, հաջորդ օրը՝ մայիսի 4-ին, խումբ առ խումբ տարբեր ուղղություններով թողնում են բնակավայրը⁴³: Փրխուսի հայ բնակչության կոտորածին զուգահեռ՝ նույն օրերին սրի են քաշվում գավառակի բոլոր հայկական գյուղերը:

Սկսվում է փրխուսցիների՝ վերապրելու համար պայքարի փորձությունը, որը ոչ բոլորին է հաջողվում հաղթահարել: Փախուստի հիմնական ուղղությունը Փրխուսից հյուսիս գտնվող Նազիկ լճի շրջակա քրդաբնակ և չերքեզաբնակ բնակավայրերն էին (Նազիկ, Ջեզիրե, Խիարդանք, Խուլիկ): Փախուստի ճանապարհին փրխուսցիների խմբերը հաճախ շրջապատվում էին քրդերի կողմից. թաքնված դրամ գտնելու նպատակով կանայք խուզարկվում էին, դեռահաս տարիքի տղաները՝ սպանվում⁴⁴: Քրդերը հաճախ ափսոսում էին գնդակ ծախսել և շատերին դաշույնով, կացինով, անգամ փայտե մահակներով էին սպանում կամ ողջ-ողջ գցում հորերը, գետերը և Նազիկ լիճը⁴⁵: Մի վկայության համաձայն՝ Ջեզիրե (Ջիզրեն) բնակավայրում ապաստանված փրխուսցիներից շուրջ 100 հոգի ողջակիզման է ենթարկվում⁴⁶:

Ոմանք, ճանապարհները շրջանցելով, լեռներով ու ձորերով կարողանում են հասնել հիմնականում չերքեզաբնակ Խուլիկ գյուղը (Փրխուսից հյուսիս-արևելք), որը գտնվում էր ռազմաճակատի գծին մոտ, անցնել ռուսների կողմից վերահսկվող տարածք և փրկվել⁴⁷: Նշենք, որ Խուլիկի չերքեզական բնակչությունը թեև չէր մասնակցել Խլաթի գավառակի հայ բնակչության կոտորածին, սակայն անսալով կառա-

41 Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունը, 47:

42 Աղավնի Հրաթյանի վկայությունը, *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 51:

43 Տե՛ս Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունը, 51:

44 Նույն տեղում, 53:

45 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 59:

46 Նույն տեղում:

47 Դա ոչ բոլորին է հաջողվել: Այսպես, վերապրած Աղավնի Հրաթյանի հայրը սպանվել է Խուլիկի ճանապարհին: Տե՛ս նույն տեղում, 52: Դեպի Խուլիկ գնացող որոշ կանանց կանգնեցնում են քրդերը և ստիպում վերադառնալ Փրխուս: Տե՛ս վերապրած Բելո Մխիթարյանի վկայությունը, նույն տեղում, 53:

վարության հրամանին, չվաննելով կապել և թուրքական բանակին է հանձնել իրենց գյուղում թաքնվող շուրջ 200 հայ տղամարդու⁴⁸:

Կոտորածից խուսափած փրխուսցի հայ տղամարդկանցից մի քանիսը ապաստանվում են սարերում փորած թաքստոցներում՝ սնվելով գիշերները հավաքած բանջարով: 1915 թ. հունիսի սկզբներին նրանցից ոմանց հաջողվում է անցնել Մանազկերտի գավառակի Լաթար գյուղը, որն արդեն գտնվում էր ռուսական զորքերի վերահսկողության տակ⁴⁹:

Որոշ փրխուսցիներ, Խլաթի հայկական բնակավայրերի կոտորածից մազապուրծ եղած այլ հայերի հետ միասին, թաքնվում են Բուլանուխի սահմանակից Խլաթի լեռներում (Եղոնակա սար): Այնտեղ նրանք ստիպված են լինում սնվել բանջարով ու կանկառով՝ ամեն օր ենթարկվելով քրդերի և ոստիկանների հարձակումների: Կանաչ բոնաբարվում էին, գեղեցիկ աղջիկները՝ գերվում և ենթարկվում բռնի ամուսնության և իսլամացման: Նման պայմաններում օրական տասնյակ մարդ էր մահանում, ողջ մնացածները ուժ չէին ունենում նրանց հողին հանձնելու: Ի վերջո, Բուլանուխի տեղական իշխանությունների հրամանով նրանք տեղափոխվում են գավառակի Փիոնք գյուղը, որտեղ հայերի նկատմամբ բարյացակամ տրամադրված մի քրդական առաջնորդի հովանու ներքո նրանք կարողանում են պահպանել իրենց կյանքը մինչև ռուսական բանակի գալը⁵⁰:

Մոտ 150 փրխուսցի փախստականներ՝ հիմնականում կին և երեխա, առժամանակ ապաստանում են Նազիկ լճից արևելք գտնվող Խիարդանք գյուղում: Վերապրած Սոկրատ Մկրտչյանը այնտեղ փախստական փրխուսցիների վիճակի մասին վկայում է հետևյալը. «Մենք բոլորս արդեն մուրացկաններ էինք: Սարսափով, գաղտագողի քրդական փոքրիկ գյուղում տնից-տուն թափառելով՝ հաց էինք մուրում ու այտոների մեջ անցկացնում անորոշ ու տագնապալի օրեր՝ մտածելով, թե վաղը, արդյոք, կտեսնե՞նք լուսաբացը»⁵¹:

Հունիսի սկզբներին իշխանությունները հրահանգում են Խիարդանքում ապաստանած փախստական փրխուսցիներին վերադառնալ հայրենի գյուղ՝ հայտարարելով, որ, իբր, սուլթանի նոր հրամանով հայերի կոտորածն արգելված է: Ոստիկանների ճնշման տակ ավերված Փրխուս է տեղափոխվում թվով մոտ հարյուր մարդ⁵²: Ըստ երևույթին, օսմանյան իշխանությունների նշված կարգադրությունը պայմանավորված էր ռուսական զորքերի հետագա առաջխաղացման հետ, որոնք արդեն մոտեցել էին Խլաթի գավառակի սահմաններին:

1915 թ. հունիսի 10-ին (հունիսի 23) ռուսական զորքերը (Կովկասյան Չորրորդ բանակային կորպուս) և նրանց ուղեկցող հայկական կամավորական ջոկատները ջարդում են թուրքական դիմադրությունը և գրավում Բուլանուխի Կոպ բնա-

48 Միսակ Սեդրակյանի վկայությունը, նույն տեղում, 50:

49 Նույն տեղում, 59:

50 Նույն տեղում, 47, 56:

51 Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունը, 55:

52 Նույն տեղում:

կավայրը⁵³, իսկ հունիսի 17-ին (հունիսի 30) նույն կորպուսի հարավային ստորաբաժանումները գրավում են Խլաթը⁵⁴: Ռ-ազմաճակատը առժամանակ կայունանում է մոտավորապես Խլաթ գետակի երկայնքով⁵⁵: Փրխուսը հայտնվում է ռազմաճակատի գծի վրա:

Նշված ժամանակաշրջանում իրենց հայրենի գյուղ բռնի վերադարձված փրխուսցիների (ինչպես արդեն նշեցինք, դրանք մոտ 100 հոգի էին՝ հիմնականում կին ու երեխա) վիճակի մասին մանրամասն տեղեկություններ են առկա Սուկրատ Մկրտչյանի հուշագրությունում: Ըստ ականատեսի, հասնելով բնակավայր, հայերը լցվում են գյուղի վերին մասում գտնվող մի մեծ տան մեջ: Հաջորդ օրն այդ տուն են մտնում մի քանի զինված թուրքեր (ըստ երևույթին՝ թուրքական բանակի զինվորներ) և իրենց հետ տանում բոլոր տղամարդկանց (նրանք շատ չէին՝ 3-4 հոգի): Մահվան սպառնալիքի տակ, քաղցած ու ծարավ՝ տարվածներին երեք-չորս օր ստիպում են փողոցներում ընկած դիակները ծածկելու համար փոսեր փորել՝ խոստանալով, որ աշխատանքը կատարելուց հետո նրանք ազատ կթողնեն: Վերջին փոսը փորելուց և դիակները թաղելուց հետո, փրխուսցի տղամարդիկ կանգնեցվում են այդ փոսի եզրին ու գնդակահարվում⁵⁶:

Մինչդեռ գյուղ վերադարձված կանայք ու երեխաները, ըստ ականատեսի վկայության, կորցրել էին մարդկային կերպարանքը, դարձել էին շրջապատի ու մահվան հանդեպ անտարբեր՝ խելագարությանը մոտ վիճակում: Մաստիկ քաղցը ստիպում էր նրանց հողի մեջ փնտրել ցորենի, գարու, տարեկանի և անգամ կորեկի հատիկներ, որ գյուղը կողոպտելու ժամանակ թալանչիները թափել էին տների մեջ, փողոցներում, հացահատիկի հորերի շրջակայքում: Նրանք հավաքում էին այդ հողը և մեկառմեկ ընտրում հատիկները, աղանձ անում և մի փոքր սպանում քաղցը⁵⁷:

Վերադարձածների շրջանում շուտով սկսում են տարածվել հիվանդությունները՝ տիֆն ու փորահարությունը: Տունը, որտեղ կենտրոնացվել էին վերադարձած փրխուսցիները, ականատեսի պատկերավոր բնութագրությամբ վերածվել էր «տուն-դժոխքի», որտեղ տիրում էին «համատարած տնքոցը, ջերմարյուն գառանցանքը, և ...ննջեցյալների մարդ ահավոր լռությունը»⁵⁸:

Դրան ավելանում է այն, որ թալանի նպատակով պարբերաբար գյուղ մտնող քրդերը ներս էին մտնում այդ տուն, բոլորի աչքի առաջ բռնաբարում ջերմության մեջ այրվող երիտասարդ կանանց ու աղջիկներին ու հեռանում⁵⁹: Նշված գործողություն-

53 Евгений Масловский, *Мировая война на Кавказском фронте 1914-1917 г. Стратегический очерк* (Париж: Возрождение, 1933), 166.

54 Նույն տեղում, 171: Նաև՝ *Մշակ* (Թիֆլիս), 21 հունիսի 1915, թիվ 133:

55 Арутюнян, *Кавказский фронт*, 178:

56 Սուկրատ Մկրտչյանի հուշագրությունը, 57:

57 Նույն տեղում, 57-58:

58 Նույն տեղում:

59 Նույն տեղում:

ներից մեկի ընթացքում քրդերը հայտնաբերում ու սպանում են կանացի հագուստ հագած մի տղայի⁶⁰:

Ման պայմաններում ոմանք նախընտրում են նորից փախչել բնակավայրից՝ փորձելով անցնել դեպի ռուսական բանակի կողմից վերահսկվող տարածք կամ գնալ քրդաբնակ գյուղեր՝ ապավինելով ծանոթ քրդերի պաշտպանությունը⁶¹:

Ռուսական բանակը, համալրելով ուժերը, 1915 թ. հունիսի վերջերին նոր լայնածավալ հարձակողական գործողություն է նախաձեռնում⁶²: Հաղթահարելով թուրքական բանակի դիմադրությունը՝ 1915 թ. հուլիսի 3-ին (հուլիսի 16) ռուսները մտնում են Փրխուս⁶³, որը նրանց վերահսկողության տակ է մտնում մոտ 10 օր: Ռուսական հարձակողական գործողության առավելագույն ծավալման՝ հուլիսի 8-ի (հուլիսի 21) դրությամբ ռուսական բանակին հաջողվում է զբաղեցնել Խլաթի գավառակի գրեթե ամբողջ տարածքը, իսկ առանձին հետախուզական ջոկատներ հասնում են անգամ մինչև Մուշի գավառակի արևելյան մատույցները (Ադրենիս բնակավայր)⁶⁴:

Ռուսական բանակի այս առաջխաղացումը կարճատև բնույթ է կրում: Ադրեն հուլիսի 10-ին (հուլիսի 23) սկսում է օսմանյան բանակի հակահարձակողական գործողությունը. թուրքական գերագանցող ուժերի ճնշման տակ ռուսական ստորաբաժանումները ստիպված են լինում հետզհետե նահանջել⁶⁵: Մահանջող բանակին են հետևում Փրխուսի և Խլաթի գավառակի այլ հայկական գյուղերի, ինչպես նաև Բիթլիսի ու Մուշի բնակչության վերապրած մնացորդները:

Գաղթի ճանապարհի պատկերավոր նկարագրությունը դարձյալ գտնում ենք Սոկրատ Մկրտչյանի հուշերում. «Մենք չէինք քայլում, այլ վազում էինք, որ հասնենք նահանջող բանակին, որին այնքան տառապանքներով, հույսով ու այրվող սրտով սպասել էինք: Բայց նա երազի նման եկավ ու երազի նման էլ փախչում էր մեր խորտակված հայրենիքի հող ու ջրից: Շատերը՝ ծերեր, երեխաներ ու կանայք, չէին կարողանում քայլել: Կրած զրկանքները՝ սովը, աին ու սարսափը, հյուծել էին նրանց ուժերը: Շատերը ընկնում էին ճանապարհին ու աղիողորմ հայացքով նայում փախչողներին՝ օգնություն աղերսելով նրանցից»⁶⁶:

Ըստ մի վկայության՝ գաղթի ճանապարհին կյանքից զրկվել են մոտ 20 փրխուսցիներ⁶⁷:

60 Նույն տեղում:

61 Վերջին միջոցին է դիմում նաև Սոկրատ Մկրտչյանի մայրը, որը վերցնելով իր երեխաներին գնում է Զիզրեն գյուղ և հանձնում Սոկրատին քրդական ընտանիքի՝ որպես ծառա:

62 Масловский, *Мировая война*, 171: Տե՛ս նաև Арутюнян, *Кавказский фронт*, 178-179:

63 *Մշակ*, 5 հուլիսի 1915, թիվ 144:

64 Арутюнян, *Кавказский фронт*, 179: Տե՛ս նաև *Մշակ*, 11 հուլիսի 1915, թիվ 149:

65 Арутюнян, *Кавказский фронт*, 181-182:

66 Սոկրատ Մկրտչյանի հուշագրություն, 92-93:

67 Ղուարաղ Ավետիսյանի վկայությունը, *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 57:

Փրխուս գյուղի եղեռնի հետևանքները

Արևելյան Հայաստանի տարածք հասած փրխուսցիները տեղակայվում են Երևանի նահանգի տարբեր գավառների հայաբնակ գյուղերում (Աղավնատուն, Փաշաքենդ, Քյոսա Մամեդ, Ղզլթամիր, Եղվարդ և այլն)⁶⁸, ծնողագուրկ մնացած երեխաները՝ սկզբում Էջմիածնի, այնուհետև՝ Մոսկվայի հայկական կոմիտեի կողմից կազմակերպված Աշտարակի որբանոցում: Ըստ 1916 թ. մայիսի 14-ին կազմված Աշտարակի որբանոցի ասների անվանացանկի՝ հաստատությունում պահվում էր 28 փրխուսցի որբ⁶⁹, Փրխուսից երկուական երեխայի անուն առկա է նաև Բաշ-գյուղից Ալեքսանդրապոլ տեղափոխված որբերի և Սանահինի որբանոցի ցուցակներում⁷⁰, ընդամենը՝ 32 փրխուսցի որբ:

Համաձայն վերապրած Բաղդասար Մելքոնյանից 1916 թ. օգոստոսին ստացված տվյալի՝ բնաջնջումից մազապուրծ է եղել մոտ 800 փրխուսցի՝ հավասար թիվով կին և տղամարդ⁷¹: Մեկ այլ՝ ավելի մանրամասն և, թերևս, ավելի ճշգրիտ տվյալի համաձայն՝ վերապրածների թիվը 675 էր, որից մոտ 400-ը՝ կին ու աղջիկ, 200-ը՝ մինչև 20 տարեկան երեխաներ և պատանիներ, 75-ը՝ 20 տարեկանից բարձր տղամարդիկ (այդ թվից 60-ը՝ նախքան ցեղասպանությունը Կովկաս գնացած պանդուխտներ և թուրքական բանակից դասալիքներ)⁷²: Վերջին տվյալից կարելի է եզրահանգել, որ եղեռնին զոհ է գնացել փրխուսցիների երկու երրորդից ավելին: Խլաթի գավառակի այլ՝ հատկապես գավառակի արևմտյան կողմն ընկած հայաբնակ գյուղերի վերապրածների թիվը ավելի ցածր է՝ տատանվելով նախաեղեռնյան հայ բնակչության մեկ հինգերորդի սահմաններում (2.500-3.000)՝ ներառյալ նախքան ցեղասպանությունը Ռուսական կայսրության տարածք պանդխտաձևերը⁷³:

1916 թ. փետրվարի 3-ին ռուսական բանակը գրավում է Մուշը, իսկ փետրվարի 17-ին՝ Բիթլիսը. սրանով Խլաթի գավառակի տարածքը նորից անցնում է ռուսների վերահսկողության տակ⁷⁴: Օգտվելով ընձեռված հնարավորությունից՝ վերապրած փրխուսցի տղամարդկանցից մի քանիսը 1916 թ. մարտին մեկնում են հայրենի բնակավայր՝ այնտեղ տիրող վիճակին ծանոթանալու, վերահաստատվելու հնարավորությունն ուսումնասիրելու նպատակով⁷⁵: Վերադարձաձևերը գտնում են գյուղը բոլորովին ամայի, իսկ շինությունները, բացի եկեղեցու և բողոքական դպրոցի շենքերից, ամբող-

68 Վերապրած փրխուսցիների հարցման թերթերի համապատասխան նշումները, *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 47, 48, 50, 51, 53, 54, 57, 60:

69 *Համբաւարեր*, 4 դեկտեմբերի 1916, թիվ 49, Յանվուած, 3:

70 *Համբաւարեր*, 30 հոկտեմբերի 1916, թիվ 44, Յանվուած, 4: *Համբաւարեր*, 7 փետրվարի 1916, թիվ 7, Յանվուած, 2:

71 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 54:

72 Նույն տեղում, 58:

73 Եզրահանգումն ըստ Խլաթի գավառակից վերապրածների համապատասխան վկայությունների, *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 35-61:

74 Арутюнян, *Кавказский фронт*, 237-238; Масловский, *Мировая война*, 309-311.

75 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 47, 57:

ջովին այրված և ավերված⁷⁶: Ռ-ազմաճակատի գծին մոտ գտնվելու պատճառով ռուսական հրամանատարությունն արգելում է փրխուսցիներին տևական ժամանակով մնալ և վերահաստատվել իրենց հայրենի բնակավայրում: Դեպքերի հետագա ընթացքը՝ 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումը, դրան հետևած Կովկասյան ռազմաճակատի կազմալուծումը, 1918 թ. փետրվարին թուրքական հարձակումն ու Արևմտյան Հայաստանի գրավումը, ավարտին է հասցնում վերապրած փրխուսցիների և Խլաթի գավառակի այլ հայկական գյուղերի հայ բնակչության հայրենազրկումը:

Ամփոփելով՝ փորձենք ընդհանուր գծերով ներկայացնել Փրխուսում և Խլաթի գավառակի այլ հայաբնակ բնակավայրերում Հայոց ցեղասպանության իրականացման ընթացքը և մեխանիզմները.

1. Ինչպես և Օսմանյան կայսրության գրեթե բոլոր հայաբնակ շրջաններում, Փրխուսում և Խլաթի գավառակի այլ հայաբնակ բնակավայրերում ևս՝ Հայոց ցեղասպանության մեկնարկը տրվել է պատերազմի կարիքների համար հայերի ունեցվածքի բռնագրավումներով, հայերի մոտ պահվող զենք-զինամթերք գտնելու ակնկալիքով խուզարկություններով և դրանք ուղեկցող ճնշումներով, հայ տղամարդկանց զինվորագրմամբ և դրան հաջորդած ոչնչացմամբ:
2. Փրխուսի և Խլաթի գավառակի այլ հայաբնակ բնակավայրերի հայերի բնաջնջումն իրականացվել է տեղում կազմակերպված կոտորածների միջոցով, որի անմիջական իրագործողները հյուսիսից գաղթած քրդերն էին: Ջարդն ուղեկցվել է հայերի ունեցվածքի թալանով: Հայերի մնացորդների բնաջնջման և թալանի գործողությանը միացել է նաև տեղի մուսուլման բնակչությունը: Խլաթի գավառակի հայ արական բնակչության խլյակների ոչնչացման գործողությանն իր մասնակցությունն է բերել թուրքական բանակը:
3. Ըստ բազմաթիվ վկայությունների՝ Խլաթի գավառակի հայերի կոտորածը հրահանգվել էր իշխանությունների կողմից: Սա ևս մեկ անգամ փաստում է, որ օսմանյան կենտրոնական և տեղական իշխանություններն անգամ նախքան 1915 թ. մայիսի վերջերին տեղահանության մասին օրենքի ընդունումն արդեն իսկ ծրագրավորված իրականացնում էին հատկապես Արևմտյան Հայաստանի տարածքում հայկական ներկայության լիակատար վերացմանն ուղղված գործողություններ:
4. Խլաթի գավառակի հայերի բնաջնջումն իրականացվել է շարունակական և հետևողական կերպով 1915 թ. մայիս-հունիս ամիսների ընթացքում: Հայերը մահացել են նաև սովից, հիվանդություններից և այլ զրկանքներից, որոնք ևս պետք է դիտարկել որպես ցեղասպանության իրականացման բաղկացուցիչ մաս:
5. Խլաթի գավառակի հայ բնակչության հազիվ մեկ հինգերորդին է հաջողվել վերապրել կոտորածները (2.500-3.000), այն էլ շնորհիվ ռուսական զորքերի առաջխաղացման: Խլաթի գավառակի վերապրած հայությունը կորուստներ է ունեցել նաև գաղթի ճանապարհին, ինչպես նաև Արևելյան Հայաստանի ու Կովկասի տարածքում՝ թերսնվածությունից և հիվանդություններից:

76 Նույն տեղում, 54, 57:

**GENOCIDE ON THE EXAMPLE OF ONE SETTLEMENT:
THE DESTRUCTION OF THE VILLAGE PRKHUS IN 1915**

SUMMARY

Key words: Armenian Genocide, Prkhus, Khlat, Bitlis, refugees, orphans.

The article presents one of the episodes of the Armenian Genocide: the extermination of Prkhus village of Khlat (Akhlat) sub-district of Bitlis (Baghesh) district of Bitlis province, Western Armenia on May-June, 1915.

The study of process and results of extermination of Prkhus village is especially important with the following specific considerations: 1) it was the largest Armenian-populated settlement of Khlat province, 2) the destruction of that settlement was carried out in the same pattern as the actions against other Armenian villages of Khlat province, i.e., on the example of Prkhus we can get an idea about the whole process of elimination of the Armenian population of Khlat sub-district.

The testimonies of Armenian Genocide survivors from Prkhus village, and, particularly, Socrat Mkrtchyan's memoir kept in the archives of the Armenian Genocide Museum-Institute were used as a primary source for this study.

Роберт А. Татоян
кандидат исторических наук

**ГЕНОЦИД НА ПРИМЕРЕ ОДНОГО ПОСЕЛЕНИЯ:
УНИЧТОЖЕНИЕ ДЕРЕВНИ ПРХУС В 1915 ГОДУ**

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид армян, Прхус, Хлат, Битлис, беженцы, сироты.

В статье представлен один из эпизодов Геноцида армян – уничтожение селения Прхус казы Хлат (Ахлат), санджака Битлис, вилайета Битлис на территории Западной Армении в мае-июне 1915 года.

Изучение процесса и результатов уничтожения Прхуса представляет интерес с учетом следующих конкретных соображений: 1) Прхус являлся самым крупным армянским поселением казы Хлат; 2) уничтожение армянского населения данного поселения было осуществлено по той же схеме, которая применялась в отношении других армянских сел данной административной единицы, следовательно, на примере Прхуса мы можем получить представление о процессе осуществления геноцида во всей области.

Первоисточниками для изучения истории уничтожения Прхуса послужили свидетельства выживших прхусских армян, и, в частности, мемуары Сократа Мкртчяна, хранящиеся в научных фондах Музея-института Геноцида армян.

REFERENCES

- Արձագանք [Ardzaganq]. Tiflis, 1882, no. 18;
- Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու, Հատոր II, Բիթլիսի նահանգ, հեղինակ և կազմողներ՝ Ա. Վիրաբյան, Գ. Ավագյան, գլխավոր խմբագիր՝ Ա. Վիրաբյան [Armenian Genocide in Ottoman Turkey. Collection of Documents, V. 2. Bitlis vilayet]. Yerevan: National Archives of Armenia, 2012;
- Arutyunyan, Ashot. *Кавказский фронт 1914-1917 гг.* [Caucasian Front in 1914-1917]. Yerevan: “Hayastan,” 1971;
- Badalyan, Gegham. «Վարազդատ Տերոյանի վիճակագրական նյութերն Արևմտյան Հայաստանի բնակավայրերի վերաբերյալ» [The Statistical Materials of Varazdat Teroyan on the Western Armenian Settlements]. *Bulletin of Armenian Archives* 1, no. 105 (2005);
- Եր'rikyan, Suqias. *Պարկերազարդ բնաշխարհիկ բառարան, Հայրոր սոսաջին, Ա-Ը* [Illustrated Dictionary of Localities, V. 1]. Venice: St. Lazarus Printing, 1902;
- Եր'rikyan, Suqias. *Պարկերազարդ բնաշխարհիկ բառարան, Հայրոր երկրորդ, Թ-Կ* [Illustrated Dictionary of Localities, V. 2]. Venice: St. Lazarus Printing, 1907;
- Hakobyan T. Kh., Melik-Bakhshyan S. T., Barseghyan H. Kh. *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հայրոր 5, Տ-Ֆ* [Dictionary of Localities in Armenia and Neighboring Regions. Vol. 5. T-F]. Yerevan: Yerevan University Press, 2001;
- Համբավեր [Hambavaber]. Tiflis, February 7, 1916, no. 7; October 30, 1916, no. 44; December 4, 1916, no. 49;
- Maslovskiy, Evgeniï. *Мировая война на Кавказском фронте 1914-1917 гг. Стратегический очерк* [World War on Caucasus Front 1914-1917. Strategic Study]. Paris: Vozrozhdenie, 1933;
- Mayevsky, Vladimir. *Военно-Статистическое описание Вансаго и Битлискаго вилайетовъ* [Military and Statistical Description of Van and Bitlis Vilayets]. Tiflis: Tipografia shtaba Kavkazskogo voennogo okruga, 1904;
- Մշակ [Mshak]. Tiflis, June 21, 1915, no. 133; July 11, 1915, no. 149;
- Okhikean, Vagharshak. «Բաղէշի ընդհանուր կոտորածը» [The General Massacre of Baghesh]. *Horizon* (Tiflis), September 20, 1915, no. 212;
- Shahbaz, T. «Բիթլիսի տարեդարձին թրքական գազանություններից» [On the Anniversary of Turkish Atrocities in Bitlis]. *Hambavaber* (Tiflis), June 26, 1916, no. 26;
- T'eodik. *Գողգոթա հայ հոգևորականության և իր հօտին աղէտալի 1915 զարին* [Golgotha of the Armenian Clergy and its Flock in Catastrophic 1915]. New York, 1985;
- Վան-Տոսպ [Van-Tosp]. Tiflis, 1916, no. 15.

**ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ.
ՀԱՅԵՐԻ ԲՆԱՋՆՋՈՒՄԸ ԻՐԱՆԻ ԽՈՅ ՈՒ ՍԱԼՄԱՍՏ
ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ 1914-1915 ԹԹ.¹**

*Բանալի բառեր*² Առաջին աշխարհամարտ, Խոյ, Սալմաստ, հայերի կոտորածներ, Հայոց ցեղասպանություն:

Հոդվածի շրջանակում կատարված հետազոտության նպատակն Իրանի Խոյ ու Սալմաստ բնակավայրերում հայերի բնաջնջման քաղաքականության նորովի գնահատման ու հակասական իրավիճակների բացահայտման փորձն է:

Հայ ականատես-վերապրածների, ինչպես նաև օտար ականատեսների վկայությունների վերլուծության հիման վրա փորձ է արված վերականգնել Խոյի ու Սալմաստի հայերի բնաջնջման ընդհանուր գործընթացը. այն կարելի է բնութագրել իբրև կանխամտածված գործողություն օսմանյան պետության սահմաններից դուրս:

Խոյի ու Սալմաստի հայերի բնաջնջման պատասխանատվությունը կրում է Օսմանյան կայսրությունը, որն իր բանակի, նաև քրդական զինուժի միջոցով, ինչպես և իրանական պետության թողտվության պայմաններում ծրագրեց ու ավարտին հասցրեց ցեղասպանական գործողությունը:

Թեմայի ուսումնասիրությունն ու եզրահանգումները փորձ են նաև հերքելու թուրքական ժխտողական պատմագրության շահարկող վարկածներից մեկը, թե իբր հայերի տեղահանությունը պայմանավորված էր առաջին հերթին պատերազմական իրադրությամբ և նպատակ էր հետապնդում պաշտպանելու ռազմական գոտիների բնակչության անվտանգությունը:

Պատմական ակնարկ

Պարսկահայ հնագույն ու մեծ գաղթավայրը ձևավորվել է դեռևս 3-4-րդ դարերում: Ներկայիս Իրանի հյուսիս-արևմտյան շրջաններում³ Թավրիզ, Մարանդ, Ուրմիա (Կապուտան), Խոյ (Հեր), Սալմաստ (Ջարևանդ), Մակու (Արտազ), որոնք հայկական սկզբնաղբյուրներում հիշատակվում են Ատրպատական կամ Պարսկահայք և Փայտակարան (Ղարադաղ) ընդհանրական անվանումներով, հայերը դարեր ի վեր ապրել են որպես տեղաբնիկներ²: Պրոֆեսոր Վահան Բայբուրդյանը նշում է, որ հայկական պետականության անկման հետևանքով Մակուի, Սալմաստի, Խոյի, Ուրմիայի, Ղարադաղի և այլ նահանգների հայկական շրջանները մտնում են Պարսկաստանի կազմի մեջ՝ այդ երկրում ծնունդ տալով նոր, ստվարաթիվ հայ գաղթավայրերի³:

1 Հոդվածը ստացվել է 29.08.2019 և ընդունվել տպագրության՝ 23.10.2019:

2 *Հայ գաղթաշխարհի պատմություն*, հատոր երրորդ (խմբ. Վ.Միքայելյան) (Երևան, Գիտություն, 2003), 223:

3 Վահան Բայբուրդյան, *Իրանի հայ համայնքը. Արդի հիմնասխնդիրներ* (Երևան, Լուսակն, 2013), 16:

Խոյն ու Սալմաստը հայկական արհեստագործության կարևոր կենտրոններ էին: 1906 թ. Սալմաստի գավառն ուներ 75 հայկական գյուղ, որոնցից էին, օրինակ, Հավթվանը, Մահլամը, Ղալասարը, Փայաջուկը, Սավրան և այլն: Եթե 19-րդ դարասկզբին Սալմաստն ուներ մոտ 1.200 տուն հայ, քուրդ և ասորի բնակչություն, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին միայն հայկական տների թիվը հասնում էր 700-ի⁴, ապա աստիճանաբար արձանագրվում է հայ տարրի նվազում, որի պատճառների թվում էին նաև հյուսիսկովկասյան լեռնականների երկարատև ավերիչ ասպատակությունները, տեղահանություններն ու բռնագաղթերը: Հայ բնակչության թվաքանակի նվազմանը նպաստում էին ոչ միայն հարատև պատերազմները⁵, այլև սոցիալական, ազգային և կրոնական ճնշումները⁶, ինչպես նաև արտագաղթը, որի միջոցով լուծվում էր հայերի ֆիզիկական գոյության պահպանման հարցը. որպես կանոն՝ հայերը չէին վերադառնում պապենական հին բնակավայրերը⁷:

Օսմանյան բանակի ներխուժումը Պարսկաստանի հյուսիս-արևմտյան շրջաններ

Առաջին աշխարհամարտի նախօրյակին ռազմական առումով Պարսկաստանն աչքի չէր ընկնում ո՛չ իր հզորությամբ և ո՛չ էլ զինված ուժերի մարտունակությամբ: Օսմանյան կառավարությունը «Միություն և առաջադիմություն» կուսակցության՝ Ատրպատականի և Արևելյան Կովկասի գործերի գլխավոր հրահանգիչ Օմեր Նաջի բեյին, ով հետախուզական աշխատանքի մեծ փորձ ուներ, ուղարկում է Պարսկաստան⁸: Օսմանյան պետության գաղտնի ծառայությունները, որոնք գլխավորապես հենվում էին հոգևորականության, վաճառականների, մտավորականության, թուրքասեր շահական աստիճանավորների և, ընդհանրապես, բոլոր նրանց վրա, ովքեր ունեին շեշտված

4 Բակուր, *Պարսկաստանյան հանդիպումներ. հարյուր տարվա երկխոսություն* (Երևան, Նարեկացի, 1996), 34:

5 *Հայոց պարմություն*, խմբ. Վլադիմիր Բարխուդարյան, Աշոտ Մելքոնյան և ուրիշներ, հատոր երրորդ, գիրք առաջին (Երևան, Զանգակ, 2015), 219:

6 Այն փաստը, որ 1890-ական թթ. Սալմաստի հայությունը քրդական վայրագությունների զոհն էր դարձել, վկայում են նաև Սալմաստում ձևավորված հայկական զինված խմբերը, որոնք իրենց առջև խնդիր էին դրել հայ բնակչությանը պաշտպանելու քրդական ցեղերի հարձակումներից: Նրանք Պարսկաստանի մահմեդական շրջաններում մեծ սարսափ էին տարածել, որից օգտվելով, սակայն, օսմանյան իշխանությունները դարձյալ շահարկում էին «հայ հեղափոխականների» հայտնի խաղաքարը: Օսմանյան պետության սահմանի մոտ տարագիր հայերի խմբավորումներն անհանգստություն էին պատճառում այդ երկրի կառավարությանը, որը, օգտվելով պարսկական իշխանությունների թուլությունից և թողտվությունից, ջանում էր հայկական տարրը թուլացնել և ոչնչացնել սահմանագոտում ապրող մահմեդական բնակչության միջոցով: Տե՛ս Աշոտ Հայրունի, «Գերմանական արևելյան առաքելության հայանվեր գործունեությունը Պարսկաստանում», *Էջմիածին ԺԱ* (2017), 80:

7 *Հայոց պարմություն*, 219-220:

8 Վահան Բայրուրդյան, *Իրանի պարմություն* (Երևան, Զանգակ-97, 2005), 535: Гайк Демоян, *Внешняя Политика Туриции и карабахский конфликт. Историко-сравнительный анализ* (Երևան: Музей-институт Геноцида армян, 2013), 47.

հակառուսական և հակաանգլիական տրամադրություններ⁹, սերտորեն համագործակցում էին գերմանական հետախուզության հետ¹⁰:

Քաղաքական նմանօրինակ իրադրության պայմաններում Պարսկաստանի վարչապետ (1910-1927) Միրզա Հասան Աշթիանին, ով հայտնի էր Մոսթոֆի-օլ-Մամալեք անվամբ, բողոքի նոտա է հղում Ռուսաստանի դեսպանությանը՝ հայտնելով, թե կառավարությունը մտադիր է պահպանել իր չեզոք դիրքը և հետևաբար խնդրում է, որ թուրքական զորքը դուրս բերվի Պարսկաստանի տարածքից¹¹: Մոսթոֆի-օլ-Մամալեքը շեշտադրում է նաև այն հանգամանքը, որ Ռուսաստանի դրական պատասխանը կարող է նպաստել, որ օսմանյան կառավարությունը հաշվի նստի երկրի չեզոքության հետ¹²:

1914 թ. նոյեմբերի 2-ին Ռուսական կայսրությունը պատերազմ է հայտարարում Օսմանյան պետությանը: Նոյեմբերի 21-ին Շյուքրի փաշայի և գեներալ Լիման ֆոն Սանդերսի հրամանատարությամբ օսմանյան բանակը Մոսուլի, Մուջբալադի և Խոյի ուղղություններով ներխուժում է Պարսկաստանի տարածք¹³, բազմահազար քրդերի աջակցությամբ մոտենում Սալմաստի հայկական գյուղերին¹⁴: Հայ կամավորական գնդերը, Սալմաստ-Վանի ուղղությամբ գործող զորավար Անդրանիկի ջոկատը գրեթե միաժամանակ հասնում են Սալմաստ¹⁵:

1915 թ. հունվարի 2-ին ռուսական բանակը, հյուպատոսության ողջ անձնակազմը հեռանում են Ուրմիայից և ընդհանրապես Պարսկաստանի հյուսիսային շրջաններից¹⁶: Երկար տարիներ ռուսական ներկայությունն ապահովության և անվտանգու-

9 Բայբուրդյան, *Իրանի պայքարություն*, 535:

10 Նույն տեղում, 534: 1914 թ. օգոստոսի 2-ին և 6-ին Կ.Պոլսում կնքվում են գերմանա-թուրքական և թուրք-ավստրիական գաղտնի պայմանագրեր: Տե՛ս Հայոց պայքարություն, հատոր երրորդ, գիրք երկրորդ, 460:

11 19-րդ դարավերջին Ռուսաստանի միջինարևելյան արտաքին քաղաքական օրակարգում կարևորվում էր Պարսկաստանում աճող Մեծ Բրիտանիայի ազդեցությանը դիմակայելու խնդիրը: Հետևաբար, Ռուսաստանն ընդլայնում է իր քաղաքական և տնտեսական ներգրավվածությունը Պարսկաստանում: Բրիտանական և ռուսական զորքերը մինչև Առաջին աշխարհամարտ և պատերազմի ընթացքում դուրս չեն բերվում Պարսկաստանի տարածքից: Դեռևս 1907 թ. կնքվել էր Միջին Արևելքն, այդ թվում՝ Պարսկաստանն ազդեցության գոտիների բաժանելու անգլո-ռուսական համաձայնագիրը: 1915 թ. մարտին Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը վերանայեցին և 1907 թ. ձեռք բերված համաձայնությամբ չեզոք գոտին՝ բացառությամբ Սպահան և Յազդ քաղաքների, ընդգրկեցին բրիտանական ազդեցության գոտում: Պատերազմի բարեհաջող ավարտից հետո Ռուսաստանին իրավունք էր տրվելու իր վերահսկողությունը սահմանել սևծովյան նեղուցների վրա: Տե՛ս Նազելի Նավասարդյան, «Ռուսաստանի քաղաքականությունն Իրանում (XIX դարի վերջ - XX դարի սկիզբ)» (սեղմ. ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2017), 3:

12 Դերենիկ Մելիքյան, «Հյուսիսային Իրանում քրիստոնյա բնակչության (հայերի և ասորիների) կոտորածները 1914-1916 թթ.»., *Ցեղասպանագիտական հանդես* 5, թիվ 1 (2017), 80:

13 Բայբուրդյան, *Իրանի պայքարություն*, 538:

14 Մամվել Կարապետյան, *Հայաստանի պայքարություն*, հատոր Բ, Սալմաստ (Երևան, ՀՃՈՒ հիմնադրամ, 2017), 33:

15 Նույն տեղում:

16 *The Treatment of Armenians in the Ottoman Empire*, Documents Presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs, with a Preface by Viscount Bryce, Laid Before the

թյան զգացում էր հաղորդել տեղի բնակչությանը՝ հավասարապես քրիստոնյաներին ու մահմեդականներին¹⁷: «Ապահովության ու անվտանգության» բացակայության պայմաններում բնակչության մի ստվար զանգված նախընտրում է տարագրությունը. հաշվի չառնելով ճանապարհային դժվարությունները՝ ձմռան ամիսներին շուրջ 45.000 քրիստոնյա Ռուսաստանի սահմանին ամենամոտ երկաթուղային կայարան հասնելու համար հաղթահարում է իննից-տասը օրվա ճանապարհ¹⁸: Բավական է հիշատակել Սալմաստից Խոյ գնացող՝ մինչև ծնկները ճահճի մեջ խրված մարդկանց անօգնական վիճակը՝ պատկերացնելու հարկադիր տարագրության ուղին բռնած հայ բնակչության անցած ճանապարհը¹⁹: Այս առնչությամբ հետաքրքիր լրացում է հետևյալ վկայությունը. «1914 թ. դեկտեմբեր ամիսն է, Ուրմիայից բռնած մինչև Սալմաստ, Խոյ, Թավրիզից մինչև Արաքսի ափը ճանապարհները բռնած էին մարդու և անասունի կարավանները. առանց հանգիստ առնելու և ճամփու երկյուղից գնում էին շարունակ, և անիծում էին իրենց բախտը: Այս գաղթը ո՛չ նման էր Մովսեսի՝ իսրայելցիների՝ Եգիպտոսից հանելու, և ո՛չ Շահ Ապպասի՝ Արարատի դաշտի ժողովրդին դեպի Պարսկաստան խուճապի ենթարկելու, օսմանցիների ձեռքից ազատելու, այլ մի տեսակ երկյուղի տագնապ էր, որ մայրը իր զավակին թողած միայն իր համար էր մտածում...»²⁰:

Ականատես-վերապրած Սեդրակ Ավագյանի հետևյալ վկայությունը հեռանալու անկարողության և ափսոսանքի արտահայտություն է. «Մեզանից շատերը չկարողացան փախչել, նախ՝ որովհետև միջոցներ չունեինք, երկրորդ՝ շատ տներում կային գառամյալ ծերունիք ու պառավներ, որոնք չէին կարող ոտքով անցնել Սալմաստից Խոյ, ուր մնաց հուսային հասնել Ջուլֆա...»²¹:

Խոյի Թաղեր գյուղից 22-ամյա Շուշանիկ Բեյթյանցը պատմում է. «1914-ի դիկտիմբերիան նահանջին իրը ռուսները Բաշկալէէն (Աղբակ) և Ատրպատականէն կը քաշուին, ռուսները տիղական հայիրը իրինց հետ կը տիղափոխին Կովկաս և Սալմաստի, Ուրմի շրջաններու նման Խոյն ալ գաղթի կը դիմէ... 200 տունէ բաղկացած հայ թաղամասը բռնից գաղթի ճամբան: Գիւղի մէջ մնացին միայն մի քանի ծիրիր, որոնցմէ 3-ը սպաննուած ին, միւսները կան: Միր ունիցած չունիցածը թալանի ին տուած միր դրացի թիրքիրը, տունիրը անվնաս ին, բայց քանդած ին, միայն փայտերը վառած...»²²:

Houses of Parliament as an Official Paper and Now Published by Permission (London and at New York and Toronto: Hodder and Stoughton, St. Paul's house, MCMXVI), 164.

17 *The Treatment of Armenians*, 164.

18 Նույն տեղում, 165:

19 Նույն տեղում:

20 *Հայոց ջեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ*: Փատաթղթերի ժողովածու, հ. III, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, գլխ. խմբ. Ամատունի Վիրաբյան (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012), 245:

21 Նույն տեղում, 3:

22 ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 424, թ. 21 և շրջ., բնագիր, ձեռագիր:

Օսմանյան բանակի ներխուժումը Պարսկաստան²³ իրական խառնաշփոթ էր առաջացրել հայերի շրջանում, որն սկզբից նեթ տեսանելի էր նրանց վարքագծում և գործողություններում: Շատ ընտանիքներ, գիտակցելով իրական վտանգը և չթերագնահատելով հնարավոր անցանկալի հետևանքները՝ դիմում են հարկադիր տարագրության, որը պայմանավորված էր նաև ռուսական գործոնով:

Բնաջնջման սպառնալիքի ժխտման հետևանքները²⁴

Վերը խոսվեց այն մասին, որ ռուսական բանակի հետանալուց հետո շատերին չհաջողվեց ժամանակ և միջոց գտնել դուրս գալու իրենց բնակավայրերից՝ փրկվելու հույսով: Թեև գորավար Անդրանիկը նախազգուշացրել էր՝ հորդորելով, որ հետևեն իրեն, քանի որ իր ուժերի՝ այդ շրջանից հեռանալուն պես օսմանյան բանակը կսկսի հարձակումը և կկոտորի բոլորին, այնուամենայնիվ Սալմաստի, Խոյի հայ և ասորի բնակիչները համոզված չէին դրանում²⁵. ոմանք հետևում են Անդրանիկին, ոմանք՝ ոչ, քանի որ չէին պատկերացնում, թե ինչու օսմանցիները պետք է կոտորեն իրենց²⁶:

Այսպես, օրինակ Սալմաստի քրիստոնյա բնակչության շրջանում նվազագույն կասկածն անգամ փարատելու և թուրքերի նկատմամբ մեծ վստահություն ներշնչելու նպատակով Դիլմանում շինությունների պատերին փակցվում են գրավոր հայտարարություններ, որոնք ազդարարում են. «... բոլոր ազգություններն օսմանյան օրենքի առաջ հավասար են, իսկ քրիստոնյաները կարող են ոչ միայն ազատ շրջել, այլև պարապել այն արհեստով, որում նոքա ընդունակ են: Թող այսուհետև յուրաքանչյուր ոք վայել-

23 Առաջին աշխարհամարտի նախօրեին քրդերին պատերազմի մեջ ներքաշելու նպատակով երիտթուրքական կառավարությունը շոյալ խոստումներ էր տալիս՝ բավարարել նրանց ազգային ձգտումները, իսկ պատերազմի ավարտից հետո ինքնավարություն տալ, ինչպես նաև ներշնչում, որ քրդերի հայրենասիրական պարտքն է հանդես գալ երկրի ներքին ու արտաքին թշնամիների դեմ: Բազում են այն օրինակները, երբ Հայոց ցեղասպանության պատմության ընթացքում կոտորածները ներկայացվում են որպես հայ-քրդական ազգային հակամարտության հետևանք, մանրամասն տե՛ս Վահան Բայրուրյան, *Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին* (Երևան, Հայաստան, 1989), 319: Տե՛ս նաև՝ Սուրեն Մանուկյան, «Հանցակցությունը որպես համախմբող գործոն Օսմանյան կայսրությունում 1894-96 թթ. Հայերի կոտորածներին քրդերի ներգրավման պատճառների հարցի շուրջ», *Տեղասպանագիտական հանդես* 6, թիվ 2 (2018), 47-48: Զբացատրելով քրդերի դերակատարությունը Խոյի ու Սալմաստի հայերի սպանությունների գործընթացին՝ նշենք, որ այս բավականին տարածում գտած և ավանդույթ դարձած միջոցի ընտրությունը մի քանի նպատակ էր հետապնդում, որը բխում էր Օսմանյան պետության շահերից՝ ա. հայ-քրդական հարաբերությունների մշտական լարվածություն, բ. հայ և քուրդ ժողովուրդների միջև թշնամանքի արմատավորում, գ. քրդերի միջոցով հայերից ազատվելու, պատերազմի մեջ ներգրավումով՝ քուրդ ժողովրդի թվաքանակի նվազում, դ. կատարված հանցագործության համար պատասխանատվությունից խուսափում և այլն:

24 Բնաջնջման սպառնալիքի ժխտման վերաբերյալ տե՛ս Թեհմինե Մարտոյան, «Զմյուռնիայի հայ և հույն բնակչության բնաջնջման սպառնալիքի ժխտման հետևանքները (1922 թ. սեպտեմբեր)», *Հայագիտության հարցեր* 1 (2014), 61-75; Tehmine Martoyan, “Denying the Possibility of Annihilation during Genocide: A Case Study of the Armenians and Greeks, 1915–1922,” *New Perspectives on the Genocide of the Greeks in the Ottoman Empire, 1913–1923*, ed. George N. Shirinian (Chicago, IL: Asia Minor and Pontos Hellenic Research Center, 2019), 253-268.

25 Ռոզմարի Հարությունյան Բոհեն, *Վերապրած խոյեցի Արուսյակը* (Երևան, Լիմուշ, 2011), 60:

26 Նույն տեղում, 61:

լէ օսմանեան պետության ու գործի վեհ հովանավորությունը... Տաճիկներն ամեն ճիգ ու ջանք գործ էին դնում քրիստոնյաներին ցույց տալու իրենց մարդասիրությունը, հավաստիացումներ էին անում, որ քրիստոնյան համահավասարորեն լինելու է օսմանցու հզոր պաշտպանության ներքո, որ այլևս չկա ոչ մի զանազանություն քրդի, տաճիկի, հայի և ասորու մեջ... ով կենթադրեր, որ մի երկու օրից պիտի անխնա կոտորեն մեր բոլոր եղբայրներին... Շատ տեղերից մեզ համոզում էին, որ օսմանյան պետությունը մի կրթված սահմանադրական երկիր է, մանավանդ նրա քաղաքական և պատերազմական պաշտոնյաները, որ իբր թե բոլորն էլ ուսման տեր անձնավորություններ են և երբեք մարդասիրությունը ոտքի տակ չեն տա... Սակայն տեղի ունեցած եղեռագործությունները, որ մտածված են եղել նախապես, հիասթափեցրին ընդմիշտ դեպի նրանց հավատ ունենալը»²⁷:

Հորավար Անդրանիկը, ըմբռնելով ստեղծված իրավիճակը և տեղաբնիկ հայ ժողովրդի «հիմնավորված» վստահությունն օսմանյան կառավարության նկատմամբ, որոշում է. «Ուրեմն, պետք էր նահանջի ընդհանուր ճանապարհից շեղվել, գնալ դեպի Սալմաստ, ձուլվել գաղթող հայերի հետ, ճանապարհը շարունակել դեպի դարձյալ հայաբնակ Խոյ քաղաքը, ուր միատեղ՝ թե՛ Սալմաստում, թե՛ Խոյում ու մերձակայքի գյուղերում, տասնյակ հազարավոր հայություն կար: Դրա համար պետք էր կա՛մ ընդհանուր հրամանատարության պաշտոնական թույլտվությունն ու հրամանն ունենալ, կա՛մ նահանջի սահմանված ընդհանուր ճանապարհից շեղվելու հնարավորությունը: Համընդհանուր նահանջի համար սահմանված ճանապարհից շեղվելն արգելվեց, այդ հրամանը ամբողջ ջոկատով չկատարելը հնարավոր չեղավ... »²⁸:

Անդրանիկն իր ընկեր Ավոյին հորդորում է այսպես. «... Տե՛ր կանգնիր Սալմաստի հայությանը, բե՛ր նրանց հասցրու մեզ... »²⁹:

Խոյին մոտենալիս, սակայն, Անդրանիկը լսում է Վար գյուղի վրա օսմանցիների հանկարծակի հարձակման մասին. օսմանցիներին պարտության մատնելուց հետո դեպի Խոյ ճանապարհվելիս տեղեկանում է, որ Խոյի հայ բնակչությունը կոտորվել է³⁰:

Խոյի ու Սալմաստի հայ բնակչության տեղահանությունն ու զանգվածային սպանությունները՝ համաձայն ականատես-վերապրածների վկայությունների

Տեղահանության նպատակները տարբեր են՝ ոչ ցանկալի ազգային տարրով բնակեցված վայրերը դատարկելը, տեղահանված բնակչությանը երկրի խորքերը քշելը կամ վտարելը, փոխարենը ցանկալի, այն է՝ սեփական ազգային տարրով այդ տարածքները բնակեցնելը և, վերջապես, *բնաջնջում* (ընդգծումը մերն է՝ Թ.Մ.)³¹:

27 Նույն տեղում, 64-65:

28 Համբարձում Կարապետյան, Անդրանիկ, 1 (Երևան, Հայաստան, 1992), 241:

29 Նույն տեղում, 242:

30 Հարությունյան, *Վերապրած խոյեցի Արուսյակը*, 65-66:

31 «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, ռազմական նախարար Էսվեր փաշայի (1881-1922) «Չկա օրենք, ստեղծի՛ր այն» մոտեցմամբ պատերազմի ժամանակ հրապարակվեցին բազմաթիվ օրենքներ, այդ թվում՝ «Տեղահանության» և «Լքյալ գույքի»: Հայերի առաջին տեղահա-

Խոյում և Մալմաստում տղամարդկանց կանանցից տարանջատելու, ապա՝ տեղահանելու համատեքստում առանձնացրել ենք հետևյալ հիշատակությունը. «Վերջապես մոտենում էր փետրվարի 23-ը: Մի քանի օր առաջ տաճկական կառավարության կողմից հրաման արձակվեց, որպեսզի բոլոր քրիստոնյա տղամարդիկ հավաքվեն Հավթուան գյուղ գորապետի կողմից «իդարա» ստանալու... Ինչ էր նշանակում այդ իդարան, ինչո՞ւ պետք էր գնալ Հ. գյուղ, ինչո՞ւ միմիայն տղամարդիկ, բայց ոչ կանայք և երեխայք ևս, այդ հարցին մենք անկարող էինք ինքներս պատասխանել: Մյուս կողմից հրաման արձակվեց Դիլմանաբնակ պարսիկներին, որ նրանցից ոչ մեկն իրավունք չունենա պահելու իր բնակարանի մեջ տղամարդ քրիստոնյաների... Եվ ահա տասնյակ հայ ու ասորի տղամարդիկ պատրաստվում էին գնալ հիշյալ գյուղ: Այդ բոլորը կատարվում էր առանց որևէ աղմուկի... Առավոտ էր: Մենք ոչ մի լուր չունեինք մեր գնացած եղբայրների մասին, նոցա թիվը հարյուրից ավելի էր: Կեղծ լուրեր էին տարածվում, թե իբր ամբողջ Դիլմանը պիտի դատարկվի: Մի քանի օրից հետո պարզվեց, որ դատարկում էին միայն քրիստոնյաներին: Իսկ ինչ կարող էր անել անուժ, անզեն, անպաշտպան քրիստոնյան, որը գտնվում էր տասնյակ հազարավոր մահմեդականների մեջ...»³²:

Թուրք-քրդական ջոկատների, թուրքական չեթեների և համիդիե գնդերի մասնակցությամբ օսմանյան կառավարությունը կոտորեց բացառապես քրիստոնյա խաղաղ բնակչությանը, մասնավորապես՝ հայերին ու ասորիներին³³: Այդ մասին պահպանվել են տեղեկություններ, ականատեսների վկայություններ³⁴ և փաստեր:

ությունն սկսվել էր 1915 թ. մարտի 2-ին՝ Դյորթոյի հայերի տարագրմամբ: Տեղասպանությանն «օրինականություն» հաղորդելու նպատակով ներքին գործերի նախարար Մեհմեդ Թալեաթը 1915 թ. մայիսի 14/27-ին կառավարությանը ներկայացնում է «Տեղահանության մասին» օրենքի նախագիծը, որը վարչապետ Մալիդ Հալիմ փաշան ստորագրել էր նախքան խորհրդարանի հավանությանն արժանանալը: Տե՛ս Մեհմեդ Անուրան, «Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի» (Երևան, «Էդիթ Պրինտ», 2011), 28: Տեղահանությունների մասին մանրամասն տե՛ս՝ Ամջա Հասան, *Տեղահանություն և ոչնչացում (տեղահանության իրական պարկերը)* (Երևան, ՀՀ ԳԱԱ, ՀՅԹԻ, 2007), 6: Թաներ Աբջամ, *Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ, Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զրոմները Օսմանյան կայսրությունում* (Երևան, Տիգրան Մեծ, 2015), 157:

32 Սեդրակ Ավագեան, *Կորդրածը Սալմաստում (ականատեսի պատմություն)* (Թիֆլիս, Հերմես, 1915), 18-19:

33 Հողվածում բնության են առնված Խոյի ու Մալմաստի *հայ բնակչության* (ընդգծումը մերն է՝ Թ.Մ.) տեղահանության և բնաջնջման մանրամասները: Պարսկաստանի հյուսիսային շրջաններում իրագործված ասորիների ջարդերի մասին մանրամասն տե՛ս Անահիտ Խոսրոնա, *Ասորիների ցեղասպանությունն օսմանյան Թուրքիայում և հարակից թյուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ – XX դարի առաջին քառորդ)* (Երևան, հեղինակային հրատարակություն, 2004); Անահիտ Խոսրոնա, «Ասորիների ջարդերը թուրքաբնակ վայրերում Ա. Աշխարհամարտի տարիներին», *Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր* 9, (2004): 88-99; Anahit Khosroeva, "The Ottoman Genocide of the Assyrians in Persia," *The Assyrian Genocide, Cultural and Political Legacies*, ed. Hannibal Travis (New York: Routledge, 2018), 137-157:

34 ՀՀ Ազգային արխիվի ֆոնդերում պահվող ականատես-վերապրածների վկայությունները հողվածում մեջբերված են բնագիր-ձեռագրերին հարազատ բարբառով, այնպես ինչպես գրի է առնված: ՀՀ Ազգային արխիվը հրապարակել է Հայոց Մեծ եղեռնի ականատեսների պատմածները (1915-1916 թթ.)՝ ընտրելով այն վկայությունները, որոնք ամբողջական տեղեկություն են հաղորդում թուրքական իշխանությունների իրագործած հայ բնակչության կոտորածների մասին: Տե՛ս *Վշտապատում*, պատ.

Խոյի ու Սալմաստի հայ ակնաստեւ-վերապրածների ներքոշարադրյալ վկայությունները բացահայտում են կատարված ոճրագործության մեթոդն ու բնույթը:

Այսպես՝ Սալմաստի գավառի Հավթվան և մյուս գյուղերում տեղի ունեցած կոտորածների մասին պատմում է վերապրած Գևորգ Մկրտչյանը. «1914 թ. դիկտ. 21 ռուսական նահանջի ատին 500 տուն է բաղկացիալ զուտ հայաբնակ Հավթվան գիւղին 40-ի չափ ընտանիք տիրը մնացին ծիրիրու և իրախանիրու հիտ միասին: Այդտիղ էին հաւաքուած և շրջակայ գիւղիլէն մնացած ընտանիքնիրը կամ առանձին անհատնիրը: Թիրքը հրամանատարը հրաիրից բոլոր պարսիկնիրու մօտ ապաստանած հայիրը, որ գան նպաստ ստանան, որովհետև կառավարութիւնը կարգադրած մնացողնիրուն, իբրև ոպյա-հպատակի, ապրուստի միջոցնիր հայթայթիլ: Հաւաքիլէն յիտոյ կը հրամայէ, որ հայիրը խումբ-խումբ տանին՝ կոտորին: Կանոնատր գօրքիրը և քիրտ խածամուծը ժողովուրդը խումբիրու կը բաժնին և կը կոտորին՝ որը գէնքով, որը կացինով, որը անդամահատութիւննիրու ենթարկիլով...»³⁵:

Ա. Ստեփանոյանցը վկայում է. «... Այսօր վերադարձայ Սալմաստից: 3.000-4.000 գաղթականներ Խօյի կամուրջի մօտ 5 օր կարանտին նստելուց յետոյ բացօդայ կիզիլ արելի տակ՝ թափվեցին Սալմաստ, մեծ մասը՝ Հավթվան, մնացածները տեղատրվեցին Ն. եպ. Մելիք-Թանգեանցի կարգադրութեամբ միւս գիւղերում... Կանայք, աղջիկներն ստիպված էին տոպրակն ուսին, միւս փոքրիկ մանուկ տոպրակի մէջ դրած, միւսին՝ գրկին բռնած, երրորդ 8-10 տարեկանն էլ դողդողալով, ուռած ուռքերով հետեւում էր միւսներին... Այդ կմախքների շարանները գալիս էին Վանից ու շրջականերից... Այդ չարաբախտ հոսանքն անցել էր Մակուի վրայով: Քիրդերը, տեսնելով մերոնց նահանջը, վրա էին տուել ու մինչև 600-700 տղամարդկանց գնդակահարել, սրախող-խող արել, թալանել: Մնացած շատ գիւղեր կոտորածի էին ենթարկվել, իսկ դրանցում սպանվածների դիակները, ողջ մնացածների ներկայութեամբ, քիրդերը թափել էին իրանց գամբոների առաջ եւ ուտեցրել, երիտասարդ ու գեղեցիկ կին ու աղջիկ ջոկել-տարել, գիւղ ու շէն կրակի տուել...»³⁶:

Սալմաստի Ղալասար գյուղի բնակչուի Թագուի Հովհաննիսյանը հաղորդում է. «1915 թ. յունվարի 5-ին ռուսնիրը՝ Բաշկալէի կողմիրին նահանջիլու ատին, կամավոր-

խմբ. Ամատուի Վիրաբյան (Երևան, Չանգակ-97, 2005); *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու*, հ. III:

«Օսմանյան զինված ուժերի վերաբերմունքը հայերի և ասորիների նկատմամբ Սալմաստի տարածքում 1915 թ.» գեկուցման մեջ պատմաբան Միքայել Միշանյանը (Ազգային գրադարան, Փարիզ) նկատում է, որ Իրանի հյուսիսային շրջանի հայերի բնաջնջման օսմանյան կառավարող իշխանությունների մտադրության և անմիջական իրագործման իրական պատկերը երևում է հայկական աղբյուրների մեջ, մինչդեռ օտար աղբյուրներում շեշտը քրդական դերակատարության վրա է. Salmast Heritage Association Holds International Conference in Yerevan, “Asbarez,” November 18, 2019, <http://asbarez.com/188450/salmast-heritage-association-holds-international-conference-in-yerevan/>

35 ՀԱԱ, ֆ. 227, ց.1, գ. 424, թ. 13-ի շրջ., բնագիր, ձեռագիր:

36 *Հայոց ցեղասպանության արվագությունը 1915 թ. մամուլի էջերում (հայալեզու և օտարալեզու թերթերի նյութերի ժողովածու)*, խմբ. Ա. Մարության, հատոր երկրորդ (Երևան, «Գարույք» երիտասարդական հասարակական կազմակերպություն, 2018), 34:

նիրու հետ միասին միզ տիդահան ըրին, որպէսզի իտենն իկող թիրքիրը կոտորած չսարքէին: Մինք մինչև անգամ ճանապարհի հաց վիրցնիլ չկարողացանք, ամէն ինչ գիւղը մնաց, որը, միր գաղթիլէն յետոյ թալանեցին: Գիւղը մնացին ամէն տունէն մի, իրկու կամ ավիլի անձինք էին մնացած, 18 հատ գիւղիցիկ կին ու աղջիկ առեանգած ին, անպատուած, 9-է աւիլի կին, իրախայ եւ մարդ անհիտ կորած ին: Անցիալ 1915-ի գարնան, երբ միր մարդիկ Ղալասար գնացին, այնտիղ տիսած ին ջրհորի իզիրքին ձգուած արինտոտ սղոց մը. ջրհորը նայած գտած ին 7 դիակ, որոնցմէ 4 տղամարդու, 3-ը՝ կնոջ: Սղոցով կտրուած գլուխնիրէն 6-ը դիակնիրու մօտ ձգուած էին, միայն մէկի գլուխը չին գտած: Դաշտը, ճանապարհի իրկարութիւմին ծածկուած է մարդկային դիակներով և ոսկորնիրով, որոնք միր և միր շրջակայ գիստիրու կոտորուած ժողովրդի մնացորդնիրն ին: Գաղթի անդին հարիրավորնիր ցրտահարումից, անօթութիւնից կոտորութիւցան, մինք իս աչքովը տիսած տասնիակ կանայք, որոնք իրինց մանուկնիրը գրկած, անոնց հիտ միասին ցրտահար ինկած էին ճանապարհնիրու վրայ...»³⁷:

Կովկասյան առաջին բանակի փոխհրամանատար Կ. Մատիկյանի՝ բանակի հրամանատարի տեղակալին 1915 թ. փետրվարի 24-ին հղած նամակում կարդում ենք. «Երեկ՝ ժամը 2-ին մոտ ես ձիավորներով եկա Դիլման և իսկույններ սկսեցի հետաքննությունը: Հարցուփորձերից իմացա, որ սպանություններ են կատարվել Հարիվում, Խոսրովում և Մեհլեմում: Անհապաղ շտապեցի այնտեղ, որտեղ գտա հարյուրավոր դիակներ: Այս ամսվա 14-ի լույս 15-ի գիշերը սպանվել է ուղիղ 707 հոգի: Մինչև այս ամսվա 14-ը հայերը համարյա անվսաս էին մնում՝ շնորհիվ տեղի պարսիկ բնակչության, իսկ նույն օրերին թուրքական կառավարությունը մոնետիկների միջոցով սպառնում էր պատժել այն պարսիկներին, ովքեր թաքցնում են քրիստոնյաներին՝ հայերին ու ասորիներին: Դիլմանի պարսիկները նույնիսկ այդ սպառնալիքի տակ չկատարեցին թուրքական կառավարության պահանջները, իսկ թուրքական կառավարության գազազած ներկայացուցիչ կայմակամ Ռուստեմ բեգը հրամայեց քրդերին ու զինվորներին մտնել պարսիկների տները և դուրս բերել քրիստոնյաներին ու սպանել քրիստոնյաներին թաքցնող պարսիկներին: Այս հրամանն իսկույններ կատարվել է, դուրս են հանել 7 հոգու: Մնացած 700 հոգուն էլ նույն եղանակով բռնել ու տարել են Հաֆիվան ու Խոսրով, որտեղ թուրքերի 2-րդ շտաբն էր: Այնտեղ շտաբի ներկայացուցիչների հրամանով նրանց մեռցրին այնպիսի տանջանքներով, որոնք նկարագրել հնարավոր չէ և որոնք անբացատրելի ու աններելի են քսաներորդ դարի համար: Ես ինքս անձամբ իմ աչքով տեսել եմ հարյուրավոր խողխողված, փոսերը նետված դիակներ, որոնց հոտը վարակում էր այդ քաղաքների օդը, տեսել եմ գլխատված դիակներ, քարերի վրա կացիններով փրթված ձեռքեր, սրունքներ, կտրված մատներ, մաշկազերծ արված գանգեր, դիակներ՝ փլվածների տակ, տասնյակ զոհվածներ՝ ցանկապատերի տակ, որոնց մեջ էր նաև Մեհլեմի քահանա տեր Վարդանը: Սպանություններ են կատարվել մյուս հայկական գյուղերում ևս»³⁸:

37 ՀԱԱ, ֆ. 227, ց.1, գ. 424, թ. 7-ի շրջ., բնագիր, ձեռագիր:

38 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (խմբ. Մ. Ներսիսյան) (Երևան, «Հայաստան», 1991), 335-336:

Սալմաստի գավառի Հավթվան և մյուս գյուղերում տեղի ունեցած կոտորածների մասին է պատմում վերապրած Հակոբ Խորոզյանը. «...700 հոգի, գլխատրաբար տղամարդիկ ջարդուիցան չարաչար տանջանքնիրով, ոմանց վիզը դրան շեմքի վրա դրած նաջախով կտրած ին, ոմանց գնդակահարած, ոմանց անդամահատած և տանջանքնիրով սպաննած, ուրիշներու՝ ողջ ողջ այգինիրու պատիրու տակ ին թաղած: Ջարդը տիղի ունիցած է թիւրք հրամանատար Խալիլ բէյի հրամանով, զորքիրուն մասնակցած ին Սոմայի Թամուր աղայի և Ջհանգիր աղայի քիւրտերը և հայիրի ունիցած ամբողջ ստացուածքը թալանած...»³⁹:

Սալմաստի Մահլամ գյուղի բնակիչ Հովհաննես Կարապետյանը վկայում է. «... Սալմաստի միս գիւղիրը – Սառնա, Մահլու, Հավթվան, Փայաջուկ, Գալբասար մնացածնիրը՝ թվով 800 հոգի, որոնք Դիլման էին ապաստանած մի Սէիտի քով, բոլորը կոտորած էին: Իրինց ունիցած չունիցածը թալանի տուած: Նահանջողնիրս Խոյի վրայով անցանք Ջուլֆա: Շատ ծննդկաննիր ճամփու իրկարութիամբ ինկան միռան, հարիրատոր իրախանիր ցրտահարիցան...»⁴⁰:

Խոյի ու Սալմաստի հայ բնակչության նկատմամբ իրագործվող օսմանյան բանակի համակարգված ու շարունակական բռնություններին արձագանքում է Պարսկաստանի կառավարությունը՝ անընդունելի համարելով իր երկրում տեղի ունեցող անցանակալի իրողությունները: Այսպես՝ 1915 թ. մարտի 5-ին Պարսկաստանի Արտաքին գործերի նախարար Մոավեն օդ-Դովլեն պաշտոնական բողոքագիր է հղում Թեիրանում Օսմանյան պետության դեսպանին՝ «օսմանյան զորքերի իրականացրած դաժանությունների» առնչությամբ⁴¹:

Բողոքագրում մասնավորապես նշված էր. «... Բռնությունները կատարել են Ձեր զինվորները, ովքեր բազմաթիվ գյուղեր են կողոպտել կամ հրդեհել, բոլոր բնակիչները դժբախտության են մատնվել: Բռնություններն ու անպատվությունները տեղի են ունեցել այն շրջաններում, որտեղ գյուղերի բնակչությունը մեծամասնաբար կազմված են քրիստոնյաներից, ովքեր բռնության են ենթարկվել և դաժանաբար կոտորվել ...»⁴²:

Օսմանյան բանակի՝ Սալմաստի հայ բնակչության նկատմամբ իրագործված տեսարանների ականատեսն է դառնում նաև Ուրմիայում Ռուսաստանի փոխհյուպատոս Պավել Վվեդենսկին, ով արժեքավոր տեղեկություններ է հաղորդում կատարվածի վերաբերյալ⁴³:

Պատմաբան Դեյվիդ Գոնթը, ուսումնասիրելով Առաջին աշխարհամարտի տարիների «քողարկված» ցեղասպանությունների և կոտորածների պատմությունները, հանգում է այն եզրակացությանը, որ Պարսկաստանի հյուսիս-արևմուտքում տեղի

39 ՀԱԱ, ֆ. 227, ց.1, գ. 424, թ. 17-ի շրջ. և 18, բնագիր, ձեռագիր:

40 ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 424, թ. 11, բնագիր, ձեռագիր:

41 David Gaunt, *Massacres, Resistance, Protectors: Muslim-Christian Relations in Eastern Anatolia During World War I* (New Jersey: Gorgias Press, 2006), 82.

42 Նույն տեղում:

43 Նույն տեղում, 81:

ունեցածը օսմանյան բանակի իրագործած *քաղաքացիների առաջին գիտակցված, ծրագրված զանգվածային սպանությունն էր* (ընդգծումը մերն է՝ Թ.Մ.)⁴⁴:

Պարսկաստանում 1912-1917 թթ. անգլիկան եկեղեցու եպիսկոպոս Հայր Չարլզ Հ. Սթայլմանը կարևոր մանրամասներ է հաղորդում «բնաջնջման արշավի մասին». «Ռուսական մի զորանոց կար պարսկական Ուրմի քաղաքում: Գերմանացի և թուրք գործակալները չէին բավարարվել այդ զորանոցը վտարելուն միտված դավեր սարքելով, այլև կարգադրել էին քրիստոնյաների թաղամասի ողջ բնակչությանը կոտորել: 6.000 քրդերից կազմված մի խումբ, թուրք սպաների հրամանատարության ներքո, սկսել էր թալանել ու այրել շրջանի քրիստոնեական գյուղերը՝ գործելով անասելի զազանություններ: Տները թալանվեցին, տղամարդիկ կոտորվեցին, ջրհորները լցվեցին դիակներով և ամենից սարսափելին՝ կանանց ու երեխաներին տարան և իսլամացրեցին: Մեկ գյուղ նախ՝ մեծ տուգանք վճարեց իր ապահովության համար, ապա՝ տղամարդկանց (85 հոգի) կապկպելով տարան գերեզմանատուն, որտեղ անասունների նման մորթվեցին իրենց հարազատների ներկայությամբ: Կանայք ու աղջիկները մնացին իրենց դահիճների ողորմածությանը, և նրանց ճակատագիրն այնքան սուսկալի էր, որ հնարավոր չէ բառերով արտահայտել: Սրբազան պատերազմի հայտարարությունը կացությունը վատթարացրեց: Եկեղեցիները քանդվեցին ու Աստվածաշունչներն ամենադատապարտելի ձևերով սրբապղծվեցին: Ռուս փոխյուպատոսը զեկուցեց, որ մի սիրիացի (ասորի – Թ.Մ.) եպիսկոպոս կախաղան է հանվել, մի քահանայ (ամենայն հավանականությամբ՝ պրեսպիտերական) խաչվել է, իսկ մի ուրիշին ողջ-ողջ այրել էին: Քրիստոնեություն ընդունած մի իսլամի ևս, Միքայել անունով, կախաղան էին հանել: Մավմաստի մեջ որոշ թվով քրիստոնյաներ ապաստանեցին իսլամների տներում: Նրանց անունները ցուցակագրելու նպատակով մի վկայագիր շրջանառության մեջ դրվեց, որի տակ քրիստոնյաները պարտավոր էին ստորագրել՝ հաստատելու համար, որ իրենք իսլամներին պաշտպանել էին: Հավաստիացրել էին, որ բոլոր ստորագրողները ապահով պիտի մնան, սակայն ավելի ուշ տղամարդիկ ձերբակալվել էին ու տարվել 2 մղոն հեռու գտնվող դաշտ, որտեղ նախապատրաստել էին նրանց ջարդը: Երկու դաշտ ծածկված էր տղամարդկանց դիակներով, որոնց ձեռքերը կապվել էին գնդակահարվելուց առաջ: Այլ վայրերում տղամարդկանց այնպես կապեցին սանդուղքներին, որ գլուխները սանդուղքների բացվածքներից դուրս մնացին: Ապա նրանց գլուխները կացիններով կտրվեցին, իսկ դիակները ջրհորների ու կոյուղաջրի փոսերի մեջ նետվեցին: Ավելի քան 700 տղամարդ այսպես սպանվեց Մավմաստի մեջ և ավելի քան 800-ը՝ շրջակա գյուղերի մեջ: Հաստատված է, որ 49 քրիստոնեական գյուղեր ամբողջությամբ քանդվել են: Կասկած չկա, որ սատանայական այս արարքը գործադրվեց հիմնականում քրդերի կողմից, թուրք զինվորների օժանդակությամբ»⁴⁵:

1915 թ. հուլիսի 28-ի Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատում Խորհրդի նախագահ կոմս Քրոլին քրիստոնյաների կոտորածների մասին կոմս Բրայսի հարցմանն ի պատասխան, հայտնում է, որ ռճիրներն աճել են թե՛ թվի, թե՛ վայրագության աստի-

44 Նույն տեղում:

45 Հայոց ցեղասպանության արդյունքումը 1915 թ. մամուլի էջերում, 388-389:

ճանով և այդ առնչությամբ հետաքրքիր տեղեկություն է հաղորդում «The Age»-ը (Մելբուրն, Վիկտորիա, Ավստրալիա). «... Այնքան վարժ ենք հայերի մասին մտածել որպես Թուրքիայի բնակիչների, որ հաճախ անգիտանում ենք այն իրողությունը, որ հայերն ապրում են նաև Ռուսաստանում եւ Պարսկաստանում: Պարսկաստանից մեզ հասած լուրերը նույնքան նողկալի են, որքան Փոքր Ասիայից ստացվածները... Խեղճ գաղթականները թակարդը ընկած մկների նման կոտորվել էին: Օրեր շարունակ Սալմաստի ու Ուրմիայի շուրջ դաշտերը ծածկված էին դիակներով, որովհետև ոչ հարազատ էր մնացել, ոչ էլ՝ բարեկամ նրանց թաղելու համար: Ելուզակները թողեցին, որ նրանք փտեն բաց դաշտերում...»⁴⁶:

Այսպիսով՝ վերոբերյալ հայ ականատես-վերապրածների, ինչպես նաև օտար ակա-նատես-վկաների վկայությունների վերլուծությունը հնարավորություն է ընձեռնում վերականգնել Խոյի ու Սալմաստի հայերի բնաջնջման ընդհանուր գործընթացը, որի բաղկացուցիչ մասերն էին.

ա. Տարանջատում. տղամարդկանց կանանցից առանձնացումը հիմնականում իրա-գործվել է խաբեությամբ, կեղծ ու շինծու խոստումներով:

բ. Սպանություն. դաժան մեթոդների ընտրություն, խումբ-խումբ կոտորում, սպանու-թյան գործիքների հատուկ ընտրություն և կիրառում, գնդակահարություն, անդամա-հատություն (զենք, կացին, սղոց):

գ. Դիակների նետում ջրհորները, կոյուղաջրերը, փոսերը:

դ. Թալան:

Սեռական բռնություններ և ծիսականացված սպանություններ

Զանգվածային բռնություններն ու ցեղասպանությունը հետընթաց են դեպի վայրե-նություն⁴⁷: Հայտնվելով բարոյական փակուղու առջև՝ ցեղասպանելու ունակությամբ էթնիկ հանրությունը դուրս է գալիս ագրեսիայի բնութագրերից, կողմնորոշվում մի ողջ խմբի դեմ, իր նմանի դեմ՝ միտում ունենալով բնաջնջել ու վերացնել այդ իսկ տեսա-կը⁴⁸: Այս համատեքստում սեռական բռնություններն ընդունված է համարել ցեղա-սպանական ծրագրի բաղկացուցիչ: Այն որակվում է որպես մարդու դեմ ուղղված հան-ցագործություն, որը մեկուսացնում է մարդուն իր սոցիալ-մշակութային միջավայրից: Բռնաբարությունները կիրառվել են ոչ միայն որպես ոչնչացման միջոց, այլև անհատա-կանության կործանման ձև, քանի որ ոչ միայն մարմնական, այլև բարոյահոգեբանա-կան ծանր վնաս են պատճառում⁴⁹:

Մշակութաբան-ցեղասպանագետ Համմիկ Գրիգորյանը, անդրադառնալով ցեղա-սպանության ժամանակ իրագործվող բռնաբարություններին և սեռական այլ բռնու-թյուններին՝ որպես «ցեղասպանական գործողություն», նկատում է, որ դրանք

46 Նույն տեղում, 246:

47 Արթուր Կոբելյան, *Էթնիկական նույնականություն և հանդուրժողականություն* (Երևան, Տիր, 2016), 179:

48 Նույն տեղում:

49 Jennifer Balint, “Rape as a Tool of Genocide,” in *Encyclopedia of Genocide*, ed. Israel W. Charny, v.II (I-Y) (Oxford, England: ABC-CLIO, 1999), 491-492.

միտված են խումբը ոչնչացնելու ոչ միայն ֆիզիկապես, այլև թիրախային ողջ հանրության էթնիկ ինքնությունը⁵⁰: Գրիգորյանի հավաստմամբ՝ «թիրախային» խմբի կանայք, ինչպես նաև երեխաները, տղամարդիկ և նույնիսկ դիակները սեռական բռնությունների են ենթարկվում՝ որևէ էթնիկական կամ կրոնական խմբի պատկանելու պատճառով⁵¹: Հետաքրքիր է հատկապես հեղինակի այն դիտարկումը, որ սեռական բռնություններն սահմանվում են որպես «հաղթողի» վարք, քանի որ «պարտված» կողմի կանայք ընկալվում են որպես «պարզևատրում» կատարած «քաջագործությունների» համար⁵²: Աստվածաբան-ցեղասպանագետ Շուշան Խաչատրյանն այն միտքն է հայտնում, որ հայերին կոտորելը շատ հաճախ «կրոնական սխրանք» էր համարվում, և որքան ավելի դաժան կատարվեր այն, ավելի մեծ կլիներ մոլեռանդ ոճրագործի «քաջագործությունը»⁵³:

Օսմանյան բանակը հաշվեհարդար էր տեսնում անզեն և անպաշտպան կանանց, երեխաների ու ծերերի հետ: Ականատեսները պատմում են, որ Խոյի շուկայի առևտրական-խանութպաններից ոմանք հայ կանանց ապաստան էին տալիս «բազարում»: Որոշ մուսուլմաններ գեղեցիկ հայուհիներին փրկում էին՝ իրենց տները տանելով, իսկ շատերին «հափշտակում» ու բռնաբարելուց հետո սպանում էին: Չէին խնայում նույնիսկ հղի կանանց⁵⁴: Այդօրինակ իրողության ապացույց է մի հղի կնոջ սպանության հետևյալ նկարագրությունը. «...Մի օր, երբ սենյակում էի, դրսից աղաղակի ձայներ լսեցի: Վարագույրի արանքից թաքուն դիտեցի ու չկարողացա տեսածիս հավատալ: Երկար ու գեղեցիկ սև մագերով մի երիտասարդ ու հղի կին կիսամերկ վիճակում ընկել էր փողոցի մեջտեղում ու իրեն շրջապատած ասկյարներին աղաչում էր, որ երեխային չվնասեն: Ասկյարները նրա շուրջը պարում ու հռհռոցով ծիծաղում էին ու ամեն մի շրջան պտտվելով մի կտոր պոկում նրա զգեստից: Երիտասարդ կինը հղիության վերջին ամիսն էր անցկացնում ու հավանաբար թաքստոցից դուրս էր եկել Հեթիմ Էֆթեխարից օգնություն խնդրելու ծննդաբերության համար, բայց նախքան Հեթիմի տունը հասնելը ասկյարները ճանկել էին նրան... Ասկյարները նրան քացով հարվածում էին: Նրանցից մեկն սկսեց նրա ոտած փորի վրա վեր ու վար թռչկոտել: Լսեցի երիտասարդ կնոջ վերջին խոսքերը, որ մղկտում էր՝ երեխային չվնասեն: Այդ պահին մի ասկյար սուրը հասնեց ու հղի կնոջ փորը վերևից մինչև ներքև պատռեց: Կինը կարճ մի ճիչ արձակեց ու լռեց: Մի խումբ մարդիկ այդ դեպքի ականատեսն էին, բայց անկարող էին բան ասել: Բոլորը ընկղմվել էին շվարման մեջ: Երիտասարդ կինը ննջել էր արյան մահիճում: Մի ուրիշ ասկյար ձեռքը մտցրեց կնոջ

50 Հասմիկ Գրիգորյան, *Ջանգվածները և զանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը* (Երևան, Գիտություն, 2017), 139:

51 Նույն տեղում:

52 Նույն տեղում:

53 Շուշան Խաչատրյան, «Բռնությունների և սպանությունների ծիսականացումը Մեծ Եղեռնի ընթացքում», *Ցեղասպանագիտական հանդես* 4, թիվ 2 (2016), 108:

54 Հարությունյան, *Վերապրած խոյեցի Արուսյակը*, 64-65:

պատռված արգանդը և դուրս բերեց լրիվ աճած մանկան մարմինն ու սուրով երկու կտոր արեց այն, ապա քնծիծաղով շարտեց մոր կողմը: Այդ ամենից հետո բոլորը շրջվեցին ու գնացին փողոցի անկյունով հոսող ամվակի մոտ, ձեռները լվացին ու գրուցելով-ծիծաղելով՝ հեռացան...»⁵⁵:

Վերապրած Արմենակ Անանյանը Սալմաստի հայության «անարգված դիակների» մասին հաղորդում է հետևյալը. «... Տեսե՛լ էք արդեօք մարդու երեսը մաշկած, աչքերը հետը հանած, և կպցրած գլխի ետևի կողմում ու ցից կանգնեցրած՝ որպես թե՛ հակառակ դեմք ունի: Տեսե՛լ էք նստած մարդուն իր գլուխը ձեռքերի մեջ առած, կարծես թե՛ գլուխը ծաղրում է իր այլանդակ և տարօրինակ մարմինը, որ այնպես անխղճորեն յոշոտվել է ու այլակերպվել: Վերջապես՝ տեսե՛լ էք մարդկային դիակ, որի աղիքները մի կողմը լինեին թափված, իսկ երեսի կէտը և մի աչքը կատուները ուտելիս: Եւ այդպես անվերջ՝ հարիւրաւոր դիակներ, որոնք այժմ գրեթե Սալմաստի ամեն մի փողոցում ընկած են: Եւ այդ բոլոր դիակներն էլ հայերի դիակներ են... Կապել թև-թևի և տարել մի տան պատի տակ շարքով նստեցրել, և միանգամից բոլորի վզները կտրել, ապա ամբողջ պատը քանդել դրանց վրա որպես գերեզման: Տներից դուրս են քաշել մարդկանց, մորթոտել և լցրել ջրհորները, որտեղից այժմ զարշահոտութիւն է փչում...»⁵⁶:

Ականատես-վերապրածների վկայություններում տեղ են գտել նաև հոգևորականության նկատմամբ մուսուլմանների ծաղրի օրինակներ: Գրիգորյանն այս երևույթը բացատրում է քրիստոնեության նվաստացմամբ՝ այդպիսով իբր հաստատելով Մուհամմեդի գերակայությունը Քրիստոսի նկատմամբ և ինքնահաստատվելով որպես մահմեդականներ, իսկ կազմակերպիչները դրանով մասամբ լուծում էին նաև իսլամական համախմբման խնդիրը⁵⁷: Այսպես՝ Սալմաստի գավառի Մահլամ գյուղի վերապրած Խաչատուր Գրիգորյանը վկայում է. «... Ջելվղէթի մասնաւոր հրահանգով չարաչար կը սպաննին միւր գիւղի քահանան՝ Տ. Վարդան Մաթէոսիանը, յիտոյքից փայտ կը մտցնին, ճակատի դէմքի կաշին կը քիթթին, մօրուքէն կը կախին, ականջնիրը մորթած թևիրէն կը կախին, միմիայն քահանայի իրանի վրայ 12 խէնչալի հարուած կը հասցնին... Հասարակական ականաւոր գործիչնիրէն Ենովք Իսրայէլիանի ականջնիրը, դիւռ ինքը ողջ կտրած էին, նոյնպէս և շրթունքնիրն ու քիթը, աչքիրը հանած էին: Նոյն տանջանքներով էին սպաննուած Յովհաննէս Քիշմիշիանը, Սաֆար Առաքելիանը և ուրիշներ»⁵⁸:

Տեր Հարություն քահանայի նահատակության մասին վկայում է Զարուհի Մանուկյանը. «... Թուրքիրը ողջ-ողջ կը քիթթեն, մարմնի անդամնիրը մէկիկ-մէկիկ կը կտրին, մինչև որ քահանան հոգին կը փչէ: Նոյն բախտին ինթարկուիցան գիւղի նշանաւոր մարդոցմէ՛ Վարդանը և Ենովքը»⁵⁹:

55 Նույն տեղում, 66-67:

56 *Մշակ* (Թիֆլիս), 11 մարտի 1915, 52:

57 Գրիգորյան, *Զանգվածները և զանգվածային բռնությունները*, 77:

58 ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 424, թ. 12 և շրջ., բնագիր, ձեռագիր:

59 ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 424, թ. 5 շրջ-6, բնագիր, ձեռագիր:

Սարգիս Սայադյանն Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդ Գրիգոր Չիֆթճեանին տված հարցազրույցում պատմում է. «Վերոյիշեալ գաղթականութեան օրերին, 170 սալմաստեցի հայեր չեն ուզում հեռանալ եւ վստահ լինելով, թէ իրենց պարսկական հպատակութեան համար ոչ մի վնաս չեն կրելու, մնում են Սալմաստում, սակայն արտօնութիւն ստանալուց յետոյ, թուրք զօրավարն ահռելի տանջանքներով Հաֆթանում սպանում է Մահլամի քահանայ Տ. Վարդանին, կոտորում 170 հայերին եւ դիակները լցնում հորի մէջ»⁶⁰:

Քրեական իրավունքի մասնագետ Կարինե Աբրահամյանը, քննելով հոգևորականության նկատմամբ սպանությունները, նշում է. «Առաջին հայացքից այսօրինակ սպանությունները կարելի է որակել որպէս մի խումբ անձանց կողմից առանձնակի դաժանությամբ ազգային, կրոնական ատելության շարժառիթով կատարված սպանություն: Սակայն անհրաժեշտ է շեշտադրում կատարել սուրբելկոյի դիտավորության ուղղվածության վրա: Այս տեսանկյունից գործ ունենք ցեղասպանության հանցակազմի հետ, քանի որ քահանայի սպանությունը ոչ թե կոնկրետ անձին կյանքից զրկելու նպատակ է հետապնդում, այլ ազգային, կրոնական կոնկրետ խմբի (կրոնական խումբ ասելով նկատի ունենք տվյալ պետության բնակչության մեծամասնության դավանած կրոնից տարբերվող կրոն դավանող մարդկանց խմբի) ֆիզիկական ոչնչացմանն ուղղված գործողություն է, որը պետք է դիտարկել համալիր գործողությունների համատեքստում: Եթե անգամ փորձենք այն որպէս առանձին հանցակազմ դիտարկել՝ ցեղասպանության համատեքստից դուրս, հնարավոր չէ, քանի որ այս երկու հանցանքները համակցության ձևով հանդես գալ չեն կարող: Այս պարագայում քրեական իրավունքի տեսանկյունից արարքը պետք է որակվի որպէս ցեղասպանություն»⁶¹:

Ամփոփում

Օսմանյան կառավարության ցեղասպան քաղաքականության դրսևորումներից էր Պարսկաստանի Խոյ, Սալմաստ և շրջակա Մահլամ, Հաֆթվան, Հին քաղաք, Փայաջուկ, Մառնա, Ղալասար, Ախտախանա, Ղզլջա, Ուլա հայաբնակ գյուղերի հայ բնակչության տեղահանությունն ու բնաջնջումը: Այն կանխամտածված գործողություն էր, որն իրագործվեց Օսմանյան պետության սահմաններից դուրս:

Խոյի ու Սալմաստի հայերի բնաջնջման պատասխանատվությունը կրում է Օսմանյան պետությունը, որն իր բանակի, քրդերի, ինչպէս նաև Պարսկաստանի թողտվության պայմաններում ծրագրեց և ավարտին հասցրեց ցեղասպանական գործողությունը: Օսմանյան դիվանագիտությունը, շրջանառության մեջ դնելով «հայ հեղափոխականների» մասին լուրերը՝ արդարանալու և հնարավոր մեղադրանքներն իր ուսերից թոթափելու նպատակ էր հետապնդում, իսկ քրդերի ներգրավումը ոճրագործի դերակատարության հանձնում էր, հետևաբար խուսափում պատասխանատվությունից:

60 «Կենդանի պատմագիրքը»՝ իր ու Սալմաստի մասին, <https://alikonline.ir/news/community/azerbaijan-provinces/item/8256>, դիտվել է 22.10.2019:

61 Կարինե Աբրահամյան, էլեկտրոնային նամակ հեղինակին, 15 օգոստոս 2019 թ.:

Խոյի ու Սալմաստի հայերի բնաջնջումը համապատասխանում է «Ցեղասպանության կոնվենցիայի» 2-րդ հոդվածի սահմանմանը, համաձայն որի՝ ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղային կամ կրոնական որևէ խմբի՝ որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ:

Հետևաբար, պետք է փաստել, որ տեղի է ունեցել խմբի անդամների սպանություն, խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս են պատճառել, կյանքի այնպիսի պայմաններ են միտումնավոր ստեղծվել, որոնք իրապես ուղղված են եղել Խոյի ու Սալմաստի հայ բնակչության ֆիզիկական ոչնչացմանը, ինչպես նաև իրականացվել են մանկածնությունը կանխելուն միտված գործողություններ:

Մեր օրերում վաղեմության ոչ մի ժամկետ, անկախ կատարման ժամանակից, չի կիրառվում (և չպետք է կիրառվի) մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ, անկախ նրանից՝ կատարվել են պատերազմի, թե խաղաղ ժամանակ, ինչպես սահմանում է 1968 թ. նոյեմբերի 26-ի Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին ՄԱԿ-ի կոնվենցիան⁶²:

62 Դրանք սահմանվել են Նյուրնբերգի Միջազգային ռազմական դատարանի՝ 1945 թ. օգոստոսի 8-ի կանոնադրությամբ և հաստատվել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1946 թ. փետրվարի 13-ի 3(1) և 1946 թ. դեկտեմբերի 11-ի 95(1) բանաձևերով, զինված հարձակման կամ օկուպացիայի միջոցով արտաքսման և ապարտհեյդի քաղաքականության հետևանքով անմարդկային գործողությունների ու ցեղասպանության հանցագործության, ինչպես սահմանված է Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին 1948 թ. կոնվենցիայում, եթե անգամ այդ գործողությունները չեն համարվում այն երկրի ներպետական իրավունքի խախտում, որտեղ դրանք կատարվել են, Տե՛ս *Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր*, Փաստաթղթերի ժողովածու, գիրք Բ (Երևան, 2001), 16-17:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԽՈՅԵՑԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆՆԵՐԻ (ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆՆԵՐ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ⁶³



Լուս. 1. Չախից՝ բարեկամ և քավոր Ալեքսանի, աչից՝ Թաղևույանների (Տեր-Ստեփանյանների) ընտանիքները Սալմաստ գավառի Փայաջուկ գյուղում՝ վիպասան Բաֆֆու տան բակում, 1916/7թ. (Գուրգեն Թաղևույանի ընտանեկան արխիվ):



Լուս. 2. Չախից՝ Սարգիս Տեր-Ստեփանյանը (Թաղևույան) իր ընտանիքի հետ, Համադան, մոտ 1930 թ. (Գուրգեն Թաղևույանի ընտանեկան արխիվ):

63 Գուրգեն Թաղևույան, էլեկտրոնային նամակ հոդվածի հեղինակին, 6 սեպտեմբերի 2019 թ.: Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում Գուրգեն Թաղևույանին՝ իր ընտանիքի պատմության հանդեպ հոգատարության և այն հոդվածին կից հավելվածում ներկայացնելու պատրաստակամության համար: Այս կերպ խոյեցի Թաղևույանների պատմությունը դրվում է գիտական շրջանառության մեջ: Կից ներկայացնում ենք Գուրգեն Թաղևույանի ուղիղ մեջբերված խոսքը:



Լուս. 3. Սամսոն և Շուշանիկ Թադևոսյանները (Տեր-Ստեփանյան), 1910-ական թթ., Խոյ կամ Փայաջուկ (Գուրգեն Թադևոսյանի ընտանեկան արխիվ):



Լուս. 4. Շահգալղի Թադևոսյանը (Լևոն Տեր-Ստեփանյան) իր տիկնոջ՝ Մանյայի հետ, 1910-ական թթ. Խոյ կամ Փայաջուկ (Գուրգեն Թադևոսյանի ընտանեկան արխիվ):

ունեցել է երեք որդի՝ Տեր-Սարգիս քահանա Տեր-Ստեփանյանը, ով շարունակել է իր հոր ուղին և հոգևոր ծառայություն է մատուցել Խոյում, Մարտիրոսը և Թադևոսը՝ իմ պապիկի պապիկը: Թադևոսը 1878 թ. ամուսնացել է Փերիի հետ և ունեցել չորս զավակ՝ Սարգիսը (1878-1965), պապիկիս հայրը՝ Սամսոնը (1888(9)-1941), Լևոնը (Շահգալդի, ֆիդայի) և մեկ դուստր:

1900-ականներից Խոյ քաղաքի իրենց տանը բնակվելուն զուգահեռ պապիկիս հայրը՝ Սամսոնը, իր ընտանիքով և իր ավագ եղբոր՝ Սարգսի հետ բնակվել են Սալմաստ գավառի Փայաջուկ գյուղում՝ վիպասան Բաֆֆու տանը: Նրանք մասնագիտությամբ հյուսն էին և Սալմաստ (Դիլման) քաղաքում ունեին իրենց խանութ-արհեստանոցը, որտեղ պատրաստում ու վաճառում էին փայտե սեղաններ և տարբեր իրեր: Իսկ մյուս եղբայրն ընտանիքի հետ բնակվում էր Խոյում և վարում տնտեսությունը: 1914 թ. դեկտեմբերի վերջին պապիկիս ընտանիքը Խոյի, Սալմաստի, Ուրմիայի և այլ հայաբնակ վայրերի հայերի, ինչպես նաև ասորիների հետ հարկադրաբար տեղափոխվում են ցարական Ռուսաստան, որտեղ մնում են մինչ 1915 թ.ամառը, այնուհետև պապիկիս ընտանիքը վերադառնում է Խոյ և Փայաջուկ: Սկսում են վերականգնել օսմանյան բանակի պատճառած նյութական վնասները:

1918 թ. նախքան Կովկասյան ռազմաճակատի անկումը և Վասպուրականի բնակչության վերջին նահանջը, ինչ-որ պատճառով պապիկիս հայրը՝ Սամսոնը, իր կնոջ և երեխաների հետ Փայաջուկից վերադառնում է Խոյ, իսկ իր ավագ եղբայրը՝ Սարգիսը, ընտանիքով ճանապարհվում է Փայաջուկ՝ կրտսեր եղբոր՝ Լևոնի հետ արհեստանոցում աշխատելու: 1918 թ. ապրիլի սկզբին Վասպուրականի հայ ազգաբնակչությունը, չկարողանալով շարունակել Վանի պաշտպանությունը, փորձում է նահանջել՝ սկզբում Խոյ, որտեղից դեպի Ռուսահայաստան գնալու նպատակով ճանապարհին՝ Կոտուրի մոտ, քրդերի հարձակմանն է ենթարկվում և ստիպված է լինում Սալմաստ ուղևորվել: Սալմաստի, ինչպես նաև Ուրմիայի հայ և ասորի բնակչության, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի Հաքյարիի շրջանից գաղթած լեռնցի Ջիլո ասորիների հետ Վանի նախկին կառավարությունը քննարկում է դեպի Կովկաս գնալու հարցը, որտեղ տեղի հայ բնակչության ապահովված խավի որոշ ներկայացուցիչներն ու հատկապես ասորական ռազմական և հոգևոր առաջնորդները սկզբում դեմ են լինում, սակայն որոշ ժամանակ անց համաձայնում են: Դժբախտաբար, մինչ հայերն ու ասորիները քննարկում էին Կովկաս անցնելու հարցը, օսմանյան զորքը, Ալի Բհսան փաշայի գլխավորությամբ՝ ապրիլի վերջին կրկին խախտելով Պարսկաստանի չեզոքությունը՝ գրավում են Խոյը, որով փակվում է Կովկաս խաղաղ անցնելու ճանապարհը:

Խոյում օսմանյան զորքը, 2.000 հայ և 3.000 ասորի տեղացի և գաղթական բնակչությունից առանձնացնում է տղամարդկանց և կենտրոնացնում Խոյի բազարում՝ դաշտում աշխատելու պատրվակով: Պապիկիս հայրը՝ Սամսոնը, և իր աներորդի Կարապետ Բագրատի Ղազարյանը (1879-1970), իրենց ընտանիքների անդամները, չվստահելով թուրքերին, պատսպարվում են հարևան տեղացի թյուրքի (ատրպատականցու) տանը և հետևաբար փրկվում, իսկ նրանք, ովքեր հավատացել ու գնացել էին, դաժանաբար սպանվում են:

Առաջին աշխարհամարտի ավարտից և օսմանյան գորքի՝ Իրանի հյուսիսային շրջաններից դուրս բերելուց հետո Սամսոնն իր ընտանիքով և կոտորածից փրկված շուրջ 400 հայեր մտում են Խոյում: Մինչև 1921 թ. ամառը, երբ Հայ առաքելական եկեղեցու Ատրպատականի թեմակալ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի օգնությամբ Խոյի կոտորածից փրկված հայերի մեծ մասը տեղափոխվում է Թավրիզ: Սամսոնն իր մայրիկի՝ Փերիի, տիկնոջ՝ Շուշանիկի, դստեր՝ Այծեմնիկի, որդու՝ Մուշեղի, իր մահացած քրոջ երեխաների՝ Ազնիվի և Արտաշեսի հետ սայլով ճանապարհվում է Թավրիզ: Իրենց հետ մի հայ տիկնոջ գաղտնի տանում են Թավրիզ, քանի որ հարեմից էր, սակայն ճանապարհի կեսին թուրքերը հայ կնոջը վերադարձնում են հարեմ:

Պապիկիս ընտանիքը Թավրիզում բնակվում է մեկ տարի: Քանի որ այդ ժամանակ Խորհրդային Հայաստանում սով էր, Սամսոնը որոշում է իր քրոջ երեխաներին թողնել Թավրիզի ամերիկյան որբանոցում, մտածելով, որ եթե իր երեխաներին կերակրել չկարողանա, իր գործն է, սակայն հանգուցյալ քրոջ երեխաների հետ հնարավոր քացասական ելքի պատճառը չի ցանկանում ինքը լինել:

1922 թ. ապրիլի 10-ին խոյեցի հայերի 40 ընտանիք Ատրպատականում Խորհրդային Հայաստանի հյուպատոսից անցագիր են ստանում, որոնց մեջ էր նաև Սամսոն Թադևոսյանը՝ իր ընտանիքով: Ապրիլի 13-ին ՀԿ(Բ)Կ կենտկոմի նախագահությունը, լսելով Պարսկաստանից Խորհրդային Հայաստան տեղափոխվել ցանկացողների հարցը, վերաբնակիչներին ընդունելու որոշում է կայացնում: Անցնելով սահմանը (Ջուղայի մոտ)՝ և շուրջ տասը օր սպասելով գնացքի ժամանմանը՝ տեղափոխվում են Ղամաղուի (Արտաշատ) կայարան: Սամսոն Թադևոսյանն իր ընտանիքով բնակություն է հաստատում Իմանշալու (Մխչյան) գյուղում, իսկ 1923 թ. տեղափոխվում Ադիամզալու (Մարմարաշեն) գյուղ: Մյուս խոյեցիները բնակություն են հաստատում Ղարադաղլու (Ծաղկաշեն) գյուղում:

Սամսոնի եղբայրները, գտնվելով Փայաջուկում, Վասպուրականի, Մալմաստի և Ուրմիայի հայերի ու ասորիների հետ ինքնապաշտպանական մարտեր են մղում ընդդեմ օսմանյան բանակի՝ փորձելով ճեղքել Մալմաստից Խոյ-Ջուղա ճանապարհը, սակայն անհաջողության մատնվելով՝ նահանջում են դեպի Ուրմիա, ապա՝ Համադան:

Գաղթի ճանապարհին Սարգսի մանկահասակ որդին՝ Գուրգենը, մոր գրկում մահանում է. մայրը՝ Մարգարիտը, ամուսնուն չի հայտնում այդ մասին, որպեսզի երեխային չթողնեն ճանապարհին: Հաջորդ օրը Սարգիսը նկատում է, որ երեխան չի լալիս և, իմանալով մահվան մասին, թաղում են մի եկեղեցու մոտ: Ճանապարհին գաղթականների թափորի մեջ կորչում է Սարգսի ավագ որդին՝ Երեմը, և ամբողջ ճանապարհին Երեմ, Երեմ բղավելով գնում են մինչև Համադան, որտեղ, բարեբախտաբար, գտնում են վերջինիս: Երեմը, տիֆով վարակված, մեծ դժվարությամբ բուժվում է: Համադանում անգլիական գործերի որոշմամբ գաղթականները բաժանվում են երկու մասի. փոքր մասը՝ գլխավորապես պարսկահպատակ հայությունը, մտում է Համադանում, իսկ մնացած մասը գնում է Բաքուրբա (ներկայիս Իրաքի տարածք):

Գաղթի ճանապարհին իրենց պատկանող սայլը չեն կարողանում անցկացնել կամրջով, ստիպված են լինում որոշ իրեր բարձել ձիու վրա, մյուս մասը չկարողանալով տանել՝ թողնում են սայլում, ճանապարհին սակայն ձին սատկում է և իրերի մյուս մասն էլ են կորցնում: Տարեթիվը ստույգ հայտնի չէ. կա՛մ դեպի Ռուսահայաստան 1914 թ. դեկտեմբերյան գաղթի մասին է, կա՛մ դեպի Համադան 1918 թ.: 1924 թ. պարսից շահը հրաման է արձակում, որ բոլոր պարսկահպատակները պետք է ունենան անձնագրեր: Այդ ժամանակ Սարգիսը և Լևոնը որոշում են փոխել իրենց ազգանունը՝ Թաղևոսյաններից դառնալով Տեր-Ստեփանյաններ, ինչպես որ ավելի վաղ է եղել: Խորհրդային Հայաստանում ապրող Թաղևոսյանները շարունակում են կրել իրենց ազգանունը: Հետագայում՝ 1940-ական թթ., Տեր-Ստեփանյանները Համադանից տեղափոխվում են Թեհրան, իսկ 1970-1980-ական թթ. մեծ մասը՝ ԱՄՆ, Կանադա և Նիդերլանդներ»:

*Գուրգեն Թաղևոսյան
6 սեպտեմբերի, 2019 թ.*

*Tehmine R. Martoyan
PhD in History*

**BEYOND THE BORDERS OF THE OTTOMAN EMPIRE:
ANNIHILATION OF THE ARMENIAN POPULATION IN THE IRANIAN CITIES
KHOY AND SALMAST (1914-1915)**

SUMMARY

Key words: World War I, Armenian massacres, Khoy, Salmast, Armenian Genocide.

The article discusses the policy of annihilation of the Armenian population of Khoy and Salmast in Iran perpetrated by the Ottoman Empire during the First World War.

Based on numerous testimonies of the Armenian Genocide survivors as well as the accounts of foreigners the article aimed at presenting the extermination policy of Armenians beyond the borders of the Ottoman Empire. The responsibility of the annihilation of the Armenian population of Khoy and Salmast rested with the Ottoman Empire, which had organized and implemented the genocidal act through its army and Kurdish irregulars with the connivance of Iran.

The research and presentation of this subject may foster the Turkish denialist historiography to reject the usage of an unnecessarily speculative hypothesis, according to which the deportation of the Armenian population was largely conditioned by the situation of war and aimed at ensuring the security of the population in the military zones.

ЗА ПРЕДЕЛАМИ ОСМАНСКОГО ГОСУДАРСТВА. ИСТРЕБЛЕНИЕ АРМЯН
В ИРАНСКИХ ГОРОДАХ ХОЙ И САЛМАСТ В 1914-1915 ГГ.

РЕЗЮМЕ

Ключевые слова: Первая мировая война, резня армян, Хой, Салмаст, Геноцид армян.

В статье сделана попытка переосмысления политики османских властей по уничтожению армян в иранских городах Хой и Салмаст.

Основываясь на анализе свидетельств очевидцев-армян, а также описаниях иностранцев, в статье восстановлена общая картина уничтожения армян Хоя и Салмаста. Обосновывается, что данный акт был преднамеренным преступлением, осуществленным за пределами Османской империи. Ответственность за уничтожение армян Хоя и Салмаста несет османское государство, которое используя свои вооруженные силы, а также курдские вооруженные формирования, в условиях бездействия властей Ирана спланировало и осуществило данное геноцидальное действие.

Выводы исследования опровергают домыслы отрицающей геноцид армян турецкой историографии о том, что депортация армян являлась следствием войны и преследовала цель обеспечить безопасность населения в зоне военных действий.

REFERENCES

Акçam, Taner. *Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ: Հայոց ճեղքատյանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում* [The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire]. Yerevan: Tigran Mets, 2015;

Anumyan, Meline. *Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատաքննությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի* [The Young Turks' 1919-1921 Documents of Trials according to Ottoman Press]. Yerevan: Edit Print, 2011;

Avagean, Sedrak. *Մարմատումը Սալմաստում (ակնմատուհի պատմածք)* [The Massacre in Salmast (Testimony of Eyewitness)]. Tiflis: Hermes, 1915;

Bakur. *Պարսկաստանյան հանդիպումներ. հարյուր տարվա երկխոսություն* [Persian Meetings: 100 Years' Dialogue]. Yerevan: Narekats'i, 1996;

Barkhudaryan, Vladimir; Melqonyan Ashot (ed.), *Հայոց պատմություն, հարյուր 3-րդ, գիրք 1-ին և 2-րդ* [History of Armenia, V. III, Book I, II.]. Yerevan: Zangak, 2015;

Barseghov, Yuri. *Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарии. Том 2, часть 2* [The Genocide of Armenians: Responsibility of Turkey and Obligations of the World Community. Documents and Commentaries. Volume 2, Part 2]. Yerevan: Edit Print, 2011;

The Responsibility of Turkey and the Obligations of the World Community, Volume 2, Part 2]. Moscow: Gardariki, 2005;

Bayburdyan, Vahan. *Իրանի հայ համայնքը. Արդի հիմնախնդիրներ* [Armenian Community of Iran: Current Issues]. Yerevan: Lusakn, 2013;

Bayburdyan, Vahan. *Իրանի պատմություն* [History of Iran]. Yerevan: Zangak, 2005;

Bayburdyan, Vahan. *Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին* [Armenian-Kurdish Relations in the Ottoman Empire in the XIX-XX Centuries]. Yerevan: Hayastan, 1989;

Demoyan, Hayk. *Внешняя политика Турции и карабахский конфликт. Историко-сравнительный анализ* [The Foreign Policy of Turkey and the Karabakh Conflict: A Historical Comparative Analysis]. Yerevan: AGMI, 2013;

Grigoryan, Hasmik. *Զանգվածները և զանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը* [The Masses and Mass Violence: Participation of Muslim Population of the Ottoman Empire in the Armenian Genocide]. Yerevan: Gitutyun, 2017;

Harutyunyan Cohen, Rosemary. *Վերապրած խոյեցի Արուսյակը* [The Survivor from Khoysyak], Yerevan: Limush, 2011;

Hasan, Amja. *Տեղահանություն և ոչնչացում (տեղահանության իրական պատկերը)* [Deportation and Extermination (Real Description of Deportation)]. Yerevan: AGMI, 2007;

Hayruni, Ashot. «Գերմանական արևելյան առաքելության հայանվեր գործունեությունը Պարսկաստանում» [Activity of the German Eastern Mission in Persia for the Benefit of Armenians]. *Ejmiats'in* 11 (2017): 78-102;

Hovhannisyan, Mari. *Ուրացման քաղաքականության արմատները, նորոշյա դրսևորումները և դրանց հետևանքները* [The Roots of the Denial Policy, Current Manifestations and their Consequences]. Yerevan: Edit Print, 2017;

Karapetyan, Hambardzum. *Անդրանիկ, 1* [Andranik, 1]. Yerevan: Hayastan, 1992;

Karapetyan, Samvel. *Հայաստանի պատմություն*, Սալմաստ, հատոր Բ [History of Armenia, Salmast volume B]. Yerevan: AAR, 2017;

Khachatryan, Shushan. «Բռնությունների և սպանությունների ծիսականացումը Մեծ Եղեռնի ընթացքում» [Ritualization of Violence and Murders during the Armenian Geocide]. *Ts'eghaspanagitakan handes* 4 no. 2 (2016): 100-118;

Khosroeva, Anahit. «Ասորիների ջարդերը թուրքաբնակ վայրերում Ա. Աշխարհամարտի տարիներին» [The Assyrian Massacres in the Turkish Territories of Iran in WWI]. *Hayots' ts'eghaspanutyayn patmutyan ev patmagrutyan harts'er* 9 (2004): 88-99;

Khosroeva, Anahit. *Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից թյուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ-XX դարի առաջին քառորդ)* [The Assyrian Genocide in the Ottoman Turkey and the Adjacent Turkish Territories (the End of the 19th and the First Quarter of the 20th Centuries)]. Yerevan: Author's Press, 2004;

Kobelyan, Arthur. *Էթնիկական նույնականություն և հանդուրժողականություն* [Ethnic Identity and Tolerance]. Yerevan: Tir, 2016;

Manukyan, Suren. «Հանցակցությունը որպես համախմբող գործոն. Օսմանյան կայսրությունում 1894-96 թթ. հայերի կոտորածներին քրդերի ներգրավման պատճառների հարցի շուրջ» [Complicity as Factor for Coherence: On the Issue of Motives of the Kurdish Involvement in the 1894-96 Massacres of Armenians]. *Ts'eghaspanagitakan handes* 6 no. 2 (2018): 24-52;

Martoyan, Tehmine. «Զնյուննիայի հայ և հույն բնակչության բնաջնջման պատասխալիքի ժխտման հետևանքները (1922 թ. սեպտեմբեր)» [The Consequences of the Denial of the Threat of Extermination in Case of the Greek and the Armenian Population of Smyrna (September 1922)], *Hayagitutyan harts'er* 1 (2014): 61-75;

Maruqyan, Armen (ed.). *Հայոց ցեղասպանության արդարացումը 1915 թ. մամուլի էջերում (հայալեզու և օտարալեզու թերթերի նյութերի ժողովածու)* [Reflection of the Armenian Genocide in the Press of 1915 (Collection of Newspapers in Armenian and Foreign Languages)]. Yerevan: Daroinq, 2018;

Meliqyan, Derenik. «Հյուսիսային Իրանում քրիստոնյա բնակչության (հայերի և ասորիների) կոտորածները 1914-1916 թթ.» [The Massacres of the Christian Population (Armenians and Assyrians) in Northern Iran]. *Ts'eghaspanagitakan handes* 5 no. 1 (2017): 78-91;

Miqayelyan, Vardges (ed.). *Հայ գաղթաշխարհի պատմություն* [History of the Armenain Diaspora, Vol. III]. Yerevan: Gitutyun, 2003;

Nersisyan, Mkrtich' (ed.). *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում* [The Armenian Genocide in the Ottoman Empire]. Yerevan: Hayastan, 1991;

Safaryan, Alexander. *Գյոկալքը և «թյուրքականության հիմունքները»* [Gyokalp and "Foundations of Turkishness"]. Yerevan: YSU, 2012;

Shishlov, Aleqsey. *Персидский фронт (1909-1918). Незаслуженно забытые победы. Серия: Военные тайны XX века* [Persian Front (1909-1918). Victories that should not have been forgotten. Series: Military Secrets of the XX century]. Moscow: Veche, 2010;

Simonyan, Hrach'. *Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը* [Ideology and Policy of the Turkish National Bourgeois]. Yerevan: Hayastan, 1986;

Virabyan Amatuni (ed.). *Վշտապատում: Հայոց Մեծ եղեռնը սկանսարեանների աչքերով* [Vshatapatum. The Armenian Medz Yeghern through the Eyes of Eyewitnesses]. Yerevan: Zangak-97, 2005;

Virabyan, Amatuni (ed.). *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու* [The Armenian Genocide in the Ottoman Turkey. Testimonies of the Survivors. Collection of Documents, Vol. III]. Yerevan: National Archives of Armenia, 2012;

Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր: Փաստաթղթերի ժողովածու: Գիրք Բ [International Agreements with the Republic of Armenia on Human Rights, Collection of Documents, Book II]. Yerevan: 2001.

**«ԹԵՇՔԻԼԱԹԸ-ՄԱՀՍՈՒՍԱ», «ԷՍԷՍ», «ՊԱՆԶԱՍԻԼԱՅԻ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ¹**

*Բանալի բառեր*² Հայոց ցեղասպանություն, Հրեից հոլոքոստ, ինդոնեզական կոմունիստների զանգվածային սպանություն, «Թեշքիլաթը մահուսա», գերմանական «ԷսԷս», «Պանչասիլայի երիտասարդություն», կուսակցական համակարգ, գաղափարախոսություն, մինչցեղասպանական գործունեություն, բանակ:

Հոդվածում փորձ է արվում վերլուծել «Թեշքիլաթը մահուսա», «ԷսԷս» և «Պանչասիլայի երիտասարդություն» կազմակերպությունների գործելակերպը համապատասխանաբար Հայոց ցեղասպանության, Հրեից Հոլոքոսթի և Ինդոնեզիայում 1965-66 թթ. տեղի ունեցած դեպքերի ժամանակ³: Ներկայացվում է կազմակերպություններից յուրաքանչյուրի ստեղծման պատմությունը, կառուցվածքը, անդրադարձ է կատարվում դրանց ձևավորման հանգամանքներին և նպատակներին, կառույցների որդեգրած գաղափարախոսությանը, մինչև ցեղասպանություններն ու զանգվածային սպանությունները իրականացրած գործունեությանը: Այս վերլուծվում են բուն գործողությունները և համեմատության մեջ են դրվում նշված կազմակերպությունների գործադրած մեթոդները:

Հետազոտությունը մատնանշում է նշված կառույցների դերակատարությունը կոտորածների իրականացման գործընթացում: Գաղտնի կառույցների առկայությունն արդեն իսկ փաստում է կանխամտածվածության մասին, բայց նախապես դրանց համեմատությունը հնարավորություն է տալիս ընդգծել կազմակերպություններից յուրաքանչյուրի ստեղծման հիմնական նպատակը:

Պատմության ընթացքում մարդկությունը մշտապես ականատես է եղել պատերազմների, կոտորածների, ցեղասպանությունների, մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունների: Ցեղասպանություններ և զանգվածային սպանություններ ուսումնասիրելիս հնարավոր չէ չանդրադառնալ դրանց իրագործող ուժերին: Մեր նախկին մի հետազոտությունում³ ներկայացվել են ցեղասպանությունների հիմնական իրագործող-

1 Հոդվածը ստացվել է 26.08.2019 և ընդունվել տպագրության՝ 27.11.2019.

2 Ինդոնեզիայում 1965-66 թթ. տեղի ունեցած իրադարձությունների իրավական գնահատականի վերաբերյալ հստակ մոտեցում չկա, թե արդյոք դրանք կարելի է որակել որպես ցեղասպանություն, թե՛ ոչ: Կարծիքները բազմազան են՝ զանգվածային սպանություններից մինչև ցեղասպանություն: Հոդվածում ուսումնասիրությունը կատարվել է ա՛յլ համատեքստում: Մանրամասն տե՛ս *The Specter of Genocide: Mass Murder in Historical Perspective*, eds. Robert Gellately, Ben Kiernan, (Cambridge: Cambridge University Press, 2003); Katharine McGregor, Jess Melvin, Annie Pohlman, *The Indonesian Genocide of 1965: Causes, Dynamics and Legacies*, Palgrave Studies in the History of Genocide (Palgrave, 2018); Saskia Wieringa, Nursyahbani Katjasungkana, *Propaganda and the Genocide in Indonesia: Imagined Evil* (UK: Routledge, 2018); *Dictionary of Genocide: A-L*, Samuel Totten, Paul Robert Bartrop, Steven L. Jacobs (ABC-CLIO, 2008).

3 Ինեսա Սյրեփանյան, «Հայոց ցեղասպանության և Հրեից հոլոքոստի հիմնական իրագործողների հարցի շուրջ», *Ցեղասպանագիտական հանդես* 6, թիվ 2 (2018), 69-87:

ները, այդ թվում անդրադարձ է կատարվել երկու գաղտնի կազմակերպություններին՝ «Թեշքիլաթը մահսուսա»-ին և «ԷսԷս»-ին:

Մեր օրերում ևս կան նմանատիպ կազմակերպություններ՝ տարբեր ձևաչափերով, որոնք ստեղծվում են այս կամ այն հզոր պետության կամ ուժի կողմից և իրականացնում են ցեղասպանական գործողություններ: Սույն հոդվածում հանգամանորեն վերլուծվում է «Պանչասիլայի երիտասարդություն»⁴ կազմակերպության գործունեությունը: Այս կառույցի ընտրությունը բնավ կամայական չէ, քանզի, ի տարբերություն «Թեշքիլաթը մահսուսա»-ի և գերմանական «ԷսԷս»-ի, այն գործում է մինչ օրս և որևէ կերպ չի քողարկում իր գոյությունը: Ուստի, հաշվի առնելով այն կարևոր հանգամանքը, որ մերօրյա իրականությունում դեռևս առկա է նմանատիպ կառույցներից բխող վտանգը, կարծում ենք հետազոտությունը հնարավորություն կտա նախկինում գործունեություն ծավալած երկու կազմակերպությունների և դեռևս իր գործունեությունը շարունակող կառույցի ուսումնասիրության օրինակով հասկանալ ներկայում գործող խմբավորումներին առնչվող որոշ խնդիրներ:

Հետազոտությունը, մասնավորապես, անդրադառնում է այն հարցին, թե խնդրո առարկա կառույցներն ի՞նչ էին իրենցից ներկայացնում, ինչպիսի՞ գործունեություն են իրականացրել, և ինչպիսի՞ ընդհանրություններով ու առանձնահատկություններով էր բնութագրվում այդ գործունեությունը:

Կազմակերպությունների ձևավորումը և կառուցվածքը

«Թեշքիլաթը մահսուսա». Անհրաժեշտ է նշել, որ Հատուկ կազմակերպության գործունեությանն առնչվող նյութերն ամբողջովին պահպանված չեն⁵, քանի որ դրանց գերակշռող մասը ոչնչացվել է գաղտնի կազմակերպության ղեկավարների կողմից՝ մասնավորապես դոկտոր Նազըմի Զանքերով⁶ կամ քրեական հետախուզության նախկին պետ Ազիզ բեյի կողմից, ով պաշտոնաթող լինելուց հետո Հատուկ կազմակերպության գործունեությանը վերաբերող փաստաթղթերը չվերադարձրեց⁷:

Գաղտնիք չէ, որ թուրքական ցեղասպան քաղաքականությունն ուղեկցվում էր ժխտողականությամբ և ցեղասպանության ապացույց հանդիսացող փաստաթղթային հիմքի ոչնչացմամբ, ինչի մասին պաշտոնապես արձանագրվել է 1919 թ. Ստամբուլում տեղի ունեցած դատավարության ժամանակ՝ երիտթուրք ղեկավարների դեմ

4 Pemuda Pancasila (ինդոնեզերեն Pemuda՝ երիտասարդություն, Pancasila՝ հինգ սկզբունք): Ինդոնեզիայի աջակողմյան կիսառազմական կազմակերպություն, որը ձևավորվել է 1959 թ. գեներալ Աբդուլ Հարիս Նասութիոնի կողմից:

5 Հարցի շուրջ մի շարք հրապարակումներ ունի Մաշտոցի անվ. Մատենադարանի աշխատակից Վերա Սահակյանը, որոնցից մենք օգտվել ենք հոդվածի այս հատվածը շարադրելու ընթացքում:

6 Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, կազմ.՝ Ավետիս Փափազյան, խմբ.՝ Ռուբեն Սահակյան (Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1988), 18: Մելինե Անույան, Ճանաչում և դատապարտում. Երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.) (Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 23:

7 Ջոն Կիրակոսյան, Երիտթուրքերը պայմանության դատապարանի առաջ, գիրք երկրորդ (Երևան, «Հայաստան» հրատ., 1983), 175:

մեղադրանքում: Մասնավորապես, պատերազմի նախարարությանը պատկանող փաստաթղթերի ոչնչացման մասին 1919 թ. հունիսի 3-ի նիստի ժամանակ փաստեց Օսմանյան կայսրության հեռագրային կապի նախկին նախարար Հուսեյն Հասիմը⁸: Այս առիթով նույն թվականի օգոստոսի 4-ին դատարանում տված իր վկայության մեջ նշել է նաև փոստային և հեռագրային ընկերության ղեկավար Օսման Նուրի Էֆենդին. «Ես այրել եմ որոշ թղթեր ինձ տրված հրամանի համաձայն...»⁹: Այսպիսով, թուրքական իշխանությունների ջանքերով Թեշքիլաթը-ի մասին տեղեկատվությունը խիստ սահմանափակ է:

Կառույցի ստեղծման տարերվի, դրա ղեկավարների, գործունեության ուղղությունների և նպատակների շուրջ տարածված տեսակետները տարբեր աղբյուրներում տարակարծիք են¹⁰: Հիմք ընդունելով հիմնականում թուրքական աղբյուրները՝ Թեշքիլաթը-ի տարբեր ստորաբաժանումների ղեկավարների վկայությունները՝ պատմաբանների մի մասը կարծում է, որ «Թեշքիլաթը մահուսա»-ն ստեղծվել է Բալկանյան պատերազմի ընթացքում կամ դրանից հետո՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին¹¹: Այդ մասին փաստում է կառույցի ղեկավարներից Հյուսամեթթին Էրթյուրքը. «Թեշքիլաթը մահուսան ստեղծվել է Առաջին համաշխարհային պատերազմից առաջ՝ հեղափոխության հերոս, ռազմական նախարար, իսկ հետագայում գլխավոր հրամանատար՝ Էնվեր Փաշայի կողմից»¹²:

Հետազոտողներից ոմանք կարծում են, որ հատուկ կազմակերպությունն առաջացել է ավելի վաղ: Օրինակ Ֆիլիպ Սթոդդարդը, ով, կարելի է ասել, Հատուկ կազմակերպության մասին ամենաձավալուն ուսումնասիրության հեղինակն է, կարծում է, որ կառույցը ձևավորվել է 1903-1907 թթ. ընթացքում, իսկ 1913 թ. այն անվանվել է Հատուկ կազմակերպություն¹³: Հավանաբար, Սթոդդարդն այս տարեթիվը կապում է «Ֆիդայիների կազմակերպության» ձևավորման հետ: Նույն կարծիքն է կիսում նաև պատմաբան Սուաթ Փարլարը, ով, սակայն, նշում է, որ «Ֆիդայիների կազմակերպությունը» ստեղծվել է 1906 թ. Իթթիհատի սալոնիկյան կենտրոնի հետ միաժամանակ, այնուհետև 1911-1912 թթ. Բալկանյան պատերազմների ժամանակ փոխակերպվել է «Թեշքիլաթը մահուսա»-ի¹⁴:

Հայր Գրիգոր Գերգերյանն իր անձնական արխիվային նյութերում «Թեշքիլաթը մահուսա»-ի ստեղծման տարեթիվը նշում է 1913 թ. (հունվարի 24), երբ Էնվեր

8 Taner Akçam, *The Young Turks' Crime Against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire* (Princeton and Oxford: Princeton University Press, 2012), 16.

9 Նույն տեղում, 17:

10 Տե՛ս Արսեն Ավաքյան, *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений* (Ереван: НАН РА Музей-институт Геноцида армян, 2013); Lewy Guenter, *The Armenian Massacres in Ottoman Turkey: a Disputed Genocide* (Salt Lake City: The University of Utah Press, 2005); Krikor Guerguerian, *10 Teşkilat-ı Muhsusa-Armenian I, Special Organization, Private Materials* (Archive 2) (U.S.A., Clark Digital Commons, 2018) at https://commons.clarku.edu/cgi/viewcontent.cgi?article=1023&context=special_org.

11 Ավաքյան, *Геноцид армян*, 94-95.

12 Նույն տեղում, 95:

13 Guenter, *The Armenian Massacres in Ottoman Turkey*, 73.

14 Նույն տեղում:

փաշան Էշրեֆ Քուշուրաշին կարգադրում է գնալ Զմյոտնիա և այնտեղ նոր հրոսակախմբեր կազմել՝ պատճառաբանելով. «Զմիտնիոյ շրջանի Յոյն եւ Հայ եկեղեցիներուն մէջ պահուած են զէնքեր եւ ռազմամթերք: Եկեղեցիները վերածուած են զինարանի եւ բոլոր քահանաները հրոսապետներ են (Էշգըլա-չէթէ) եւ հետեւաբար անոնց դէմ սկսելու է մաքրագործումի (թէմիզլէմէ) գործողութիւններ»¹⁵:

Այսպիսով, հաշվի առնելով, որ կառույցի մասին հիմնական տեղեկատվությունը ստացվել է թուրքական աղբյուրներից, այն էլ մասնակի, ապա կարող ենք ասել, որ նույնիսկ բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքում՝ Հատուկ կազմակերպության ձևավորման ժամանակաշրջանը, թերևս այդպես էլ չհստակեցվի:

Հատուկ կազմակերպությունը պաշտոնականացվել է 1914 թ. օգոստոսի 3-ին Կ.Պոլսի Նուրի Օսմանիե պողոտայում տեղակայված «Թ-ամվիր-ի Էֆքյար» թերթի տպագրատան դիմաց վարձակալած թիվ 32 տանը, որը դարձավ «Թ-եշքիլաթը մահ-սուսա»-ի պաշտոնական գրասենյակը¹⁶:

Տեղեկություններ կան, որ 1915 թ. ապրիլի 5-ին կազմակերպությունն անվանափոխվել է՝ վերանվանվելով «Ումուր-ը շարքիյէ դաիրեսի» (Արևելյան գործերի գրասենյակ)¹⁷: Ինչպես մեկնաբանում է Վերա Սահակյանը, կառույցի անվանափոխությունը պայմանավորված էր հայերի բնաջնջման ծրագրի երկրորդ՝ բուն ցեղասպանության փուլի մեկնարկով¹⁸: Պետք է նշել, որ անվանափոխությունից ընդամենը մի քանի օր անց արդեն ձեռնարկվեցին առաջին գործնական քայլերը՝ Կ.Պոլսի հայ մտավորականության ձերբակալություններն ու սպանությունները¹⁹:

Կազմակերպության հիմնադրի և ղեկավար անձանց վերաբերյալ կարծիքները ևս տարբեր են: Ըստ թուրքական ռազմական արխիվում (ATASE – գլխավոր շտաբի ռազմական պատմության և ստրատեգիական հետազոտությունների վարչության տնօրինության արխիվ) առկա փաստաթղթերի, որոնցում կառույցի նախագահների տվյալները նշված են ըստ ժամանակագրության, Հատուկ կազմակերպության առաջին ղեկավարն է եղել Սուլեյման Ասքերի բեյը (1913 թ. նոյեմբերի 30 – 1914 թ. նոյեմբերի 6 կամ 13)²⁰: Պատմաբան Ջենմալ Քութայը Թ-եշքիլաթը-ի առաջին նախագահ է համարում Էշրեֆ Քուշուրաշին, սակայն ի հակադրություն Քութայի կարծիքի, Ֆիլիպ Սթոդդարդը նշում է, որ Էշրեֆ բեյը պատասխանատու է եղել միայն Արաբիայի, Սինայի

15 Guerguerian, *10 Teşkilat-ı Mhşusa-Armenian I, Special Organization*, 1.

16 Maria Jacobsen, “Diaries of a Danish Missionary, Harpoot, 1907–1919,” in *Armenian Genocide Documentation Series 5* (Princeton and London: Gomidas Institute, 2001) 75.

17 Վերա Սահակյան, ««Թ-եշքիլաթը մախսուսա» գաղտնի կազմակերպությունը՝ Հայոց ցեղասպանության ճգնաժամ», *Վանաձորի պեղական համալսարանի գիտական տեղեկագիր* Ա (2017), 191:

18 Նույն տեղում, 194:

19 Մաշտոցի Մատենադարան, Տիրայր Հովհաննես վրդ. արխիվ (1891-1939 թթ.), ցուցակ 47, թղթ. 131, վավ. 21:

20 Aysel Hür, “Was wissen wir wirklich über die Teşkilat-I Mahşusa?” *ADK Armenisch-Deutsche Korrespondenz* 162, Heft 1 (2014): 40-41.

թերակղզու և Հյուսիսային Աֆրիկայի մասնաճյուղերի համար²¹: Կառույցի անվանափոխությունից հետո երկրորդ նախագահ է նշանակվել նախկին «Արևելյան պետություն» (Şura-yi Devlet) կազմակերպության անդամներից Ալի Բաշհամրան²²: Իսկ վերջին նախագահը եղել է Հյուսամտեթին Էրթյուրքը, որի կառավարման ժամանակ էլ՝ 1918 թ. դեկտեմբերի 5-ին կազմակերպությունը ինքնալուծարվել է²³:

Հատուկ կազմակերպության նպատակների և գործառույթների վերաբերյալ կարծիքները ևս տարբեր ու հակասական են: Վահագն Դադրյանը Հատուկ կազմակերպությունը բնութագրում է հետևյալ կերպ. «Կիսանկախ պետություն պետության ներսում»²⁴: Սկզբնական շրջանում, ինչպես ներկայացվում էր հենց կառույցի կողմից, Հատուկ կազմակերպության ձևավորումը միտված էր «ազգային իդեալներին և նպատակներին, որոնց իրականացման երաշխիքը պետք է լինի համերաշխությունը և համախմբումը, իսկ դրանց հասնելու համար անհրաժեշտ է Հատուկ կազմակերպություն»²⁵: Հատուկ կազմակերպության հիմնական պարտականությունները ներառում էին հետախուզություն, հակահետախուզություն և դավադրությունների կանխարգելում²⁶: Մինչդեռ, ըստ Դադրյանի, կառույցի անդամների հիմնական առաջադրանքն էր՝ տեղակայվել Թուրքիայի տարածքի առանձին հատվածներում, հարձակվել տեղահանված հայերի խմբերի վրա և ոչնչացնել նրանց²⁷:

Ֆիլիպ Սթոդդարդը, որի հետազոտության համար առաջնային սկզբնաղբյուր է հանդիսացել Էշրեֆ Քուչուրբաշի հուշերը, առավել հակված է այն տեսակետին, որ Հատուկ կազմակերպության գորամիավորումները կենտրոնացված են եղել արտաքին ուժերի դեմ: Օրինակ, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում այն օգտագործվել է Կովկասում, Եգիպտոսում և Միջագետքում հատուկ ռազմական գործողություններ իրականացնելու համար: Ըստ հետազոտողի՝ կազմակերպությունն օգտագործվել է նաև արտաքին թշնամու «դիվերսիոն գործողությունները» և «հնարավոր համագործակցությունը» կանխելու դեմ, հատկապես Սիրիայում և Լիբանանում տեղական ազգայնական շարժման դեմ: Սթոդդարդն այն անվանում է՝ «արաբական անջատողականության և արևմտյան իմպերիալիզմի հետ գործակցության կանխարգելման նշանակալի միասնական մեքենա»: Նրա պնդմամբ, հայերի տեղահանություններին Հատուկ կազմակերպությունը մասնակցություն չի ունեցել²⁸:

Մի շարք ժամանակակից հեղինակներ քննարկում և ուսումնասիրում են գաղտնի կազմակերպության գործունեությանը վերաբերող տարբեր տեսակետներ, սակայն

21 Նույն տեղում:

22 Սահակյան, «Թեշքիլաթ-ը մախսուս», 191:

23 Նույն տեղում: St' u նաև Hür, “Was wissen wir wirklich über die Teskilat-I Mahsusa?” 40-41:

24 Ваакн Дадрян, *История армянского геноцида: этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа* (Ереван, «Ноян-Тапан», 2007), 304.

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում, 305:

27 Նույն տեղում, 304:

28 Guenter, *The Armenian Massacres*, 73:

փաստաթղթերի սակավության պատճառով հետազոտություններն այնուամենայնիվ լիարժեք չեն: Փաստը մնում է այն, որ «Թեշքիլաթը մահուսա»-ն դարձավ հայերի բնաջնջման իրականացման գործիչ: Ինչպես արդեն նշել ենք, դեռևս համիդյան ջարդերի ժամանակ գործի էին դրվել նմանատիպ ուժեր՝ «համիդիե»²⁹ խմբերը, իսկ ավելի ուշ՝ Ադանայի կոտորածների ընթացքում «ֆիդայիների կազմակերպությունը»³⁰: Թերևս այդպիսի խմբերի արդյունավետությունը պատճառ հանդիսացավ հետագայում՝ հայ ժողովրդի ավելի ծավալուն կոտորած իրականացնելու նպատակով Հատուկ կազմակերպության ստեղծման համար: Իր առջև ունենալով հայերի հարցը վերջնականապես լուծելու կարևոր խնդիր՝ կազմակերպությունը կարողացավ կարճ ժամանակում համարվել, ամրանալ և ցանկացած միջոցներով ի կատար ածել իթթիհատականների բաղձալի երազանքը: «Թեշքիլաթը մահուսա»-ն արդարացրեց կառույցից ակնկալվող հույսերը՝ իրականացրեց հայերի բնաջնջման ծրագիրը:

Գերմանական «ԷսԷս». Ինչպես Հայոց ցեղասպանության, այնպես էլ Հրեից հոլոքոստի պարագայում ցեղասպանության ծրագրի գործադրումը՝ հրեաների հայտնաբերումը, տեղափոխումը և սպանությունը վստահված էր գաղտնի կազմակերպությանը: Այս դեպքում դա «ԷսԷս»-ի տարբեր ստորաբաժանումներն էին:

«ԷսԷս»-ի պահնորդական ջոկատները ձևավորվեցին 1923 թ.: Սրանք սկզբում փոքրաքանակ խմբեր էին, որոնք ներառված էին գրոհային ջոկատների (ՍԱ) կազմում և պատասխանատու էին ֆյուրերի անձնական անվտանգության համար³¹: «ԷսԷս»-ի կազմավորման առիթով Հիտլերն ասել է. «Ինձ անհրաժեշտ է այնպիսի անձնական անվտանգություն, որ թեկուզև փոքրաքանակ լինի, սակայն անմնացորդ նվիրված լինի ինձ: Որպեսզի անվտանգության աշխատակիցները անհրաժեշտության դեպքում նույնիսկ իրենց եղբայրներին դեն գնան»³²:

Ինչ վերաբերում է ՍԱ-ին, այն ստեղծվել էր 1922 թ. ֆաշիստական կուսակցության անդամներից և Առաջին համաշխարհային պատերազմի մասնակիցների շարքերից: Դրանց նպատակը կուսակցական միջոցառումների, հավաքների, ելույթների ժամանակ կարգուկանոնի պահպանումն էր, ինչպես նաև քաղաքական թշնամիների դեմ պայքարը: Մինչև 1934 թ. ՍԱ-ն առաջատար դիրքերում էր և նրա ղեկավար Էռնստ Բյոմը հավակնում էր գրոհային ջոկատները ներգրավել ներքին գործերում և դրանով իսկ ամրացնել իր դիրքերը՝ դառնալով կուսակցության ղեկավար³³:

29 Hamidiye Asiret Suvari Alaylari (համիդյան ցեղային հեծելազորի զորագնդեր)՝ Արդուլ Համիդի անունով, որոնք հիմնականում քրդերով համարված ռազմական ստորաբաժանումներ էին: Գաղափարի հեղինակը Շաքիր փաշան էր: Մանրամասն տե՛ս՝ Մուրեն Մանուկյան, «Հանցակցությունը որպես համախմբող գործոն. Օսմանյան կայսրությունում 1894-96 թթ. հայերի կոտորածների քրդերի ներգրավման պատճառների հարցի շուրջ», *Ցեղասպանագիտական հանդես* 6, թիվ 2 (2018), 29:

30 Որոշ տվյալներով ստեղծվել է 1906 թ. Իթթիհատի սպինիկյան կենտրոնի հետ միաժամանակ:

31 *Войска СС фашистской Германии (Для служебного пользования)*, Материал подобран, обработан и подготовлен к печати майором Ежовым П. В. (Москва: Главное Разведывательное Управление Красной Армии, 1944), 5:

32 Хене Хайнц, *Черный орден СС. История охранных отрядов* (Москва: «Олма-Пресс», 2003), 22.

33 Նույն տեղում:

Այլ տվյալներով «ԷսԷս»-ը ստեղծվել է 1925 թ., երբ Հիտլերի հրամանով Յուլիուս Շրեքը, ով ֆյուրերի անձնական վարորդն էր և միևնույն ժամանակ ապահովում էր նրա անվտանգությունը՝ ՍԱ-ի անդամներից ստեղծեց մի ջոկատ, որը ստացավ «Պահնորդական ջոկատ» անվանումը³⁴:

Էսէսականները տարբերվում էին ուժային կառույցների այլ ներկայացուցիչներից թե՛ իրենց արտաքինով, թե՛ իրենց հանդեպ հատուկ վերաբերմունքով: Նրանք կրում էին սև համագգեստ, գլխարկներին պատկերված էին գանգեր՝ «մեռած գլուխներ», նրանց խորհրդանիշը երկակի նացիստական ողջույնն էր («ՅԻԳ» – «հաղթանակ»)՝³⁵: Էսէսականները շրջում էին կանաչ գույնի մոտոցիկլետներով, ինչի համար նրանց երբեմն անվանում էին «կանաչներ», ինչպես օրինակ իր օրագրում նշում է Աննա Ֆրանկը. «Ամեն երեկո փողոցներով կանաչ ու գորշ զինվորական մեքենաներ են գնում-գալիս: «Կանաչները», այսինքն՝ էսէսականները և «սևերը» – հոլանդական ֆաշիստական ոստիկանները, ամենուրեք հրեաներ են փնտրում...»³⁶:

Մինչև 1940 թ. «ԷսԷս»-ը համալրվում էր բացառապես կամավորական հիմունքներով, իսկ այդուհետ՝ «ԷսԷս»-ի գործերի ձևավորումից հետո, սկսեց ավելանալ հավաքագրված անդամների թիվը՝ հասնելով «ԷսԷս»-ի ընդհանուր կազմի մեկ երրորդին³⁷:

«ԷսԷս»-ի մարտիկներն ընտրյալներ էին և ծառայում էին արտոնյալ պայմաններում: Էսէսականներ պատրաստելու համար գործում էին հատուկ ուսումնական հաստատություններ (օրինակ՝ Դախաուի, Վեյլիսբուրգի և այլն), որոնք ոչ միայն ֆիզիկական պատրաստության էին բերում էսէսականներին, այլ նրանց դաստիարակում էին ֆաշիստական գաղափարախոսությամբ, որի հիմքում Հիտլերի «Իմ պայքարը» գիրքն էր, ֆաշիստական կուսակցության ծրագրերը և ֆաշիստների ռասայական տեսության ուսումնասիրությունները³⁸:

Պահնորդական ջոկատները մեծ ճանաչում են ձեռք բերում 1929 թ., երբ Հիտլերն «ԷսԷս»-ի ղեկավար (ռայխսֆյուրեր) է նշանակում Հայնրիխ Հիմլերին: Այդ ժամանակ «ԷսԷս»-ի անդամների թիվը կազմում էր ընդամենը 280, իսկ 1933 թ. արդեն 52.000 հոգի³⁹: Ընդհանուր առմամբ, այս երկու նացիստական կազմակերպությունները հատկապես բարգավաճեցին 1930-ականների սկզբներին: Նրանց շարքերը համալրեցին առաջին հերթին պատերազմի վետերանները և նախկինում այլ իրավապաշտպան կազմակերպությունների անդամները⁴⁰:

34 Նույն տեղում:

35 Նույն տեղում, 1:

36 *Աննա Ֆրանկի օրագիրը*, ռուսերենից թարգմանեց Հ. Դանիելյանը (Երևան, «Հայպետհրատ», 1962), 70:

37 *СС в действии*, 15.

38 Նույն տեղում, 14:

39 Նույն տեղում:

40 Herbert Pieper, “The SS Cavalry Brigade and its operations in the Soviet Union, 1941-1942” (Submitted for the Degree of Doctor of Philosophy, Department of History, University of Sheffield, October 2012), <https://bit.ly/2Vi4RCn>, դիտվել է 10.09.2018:

«ԷսԷս»-ը հայտնի էր նաև «Ընդհանուր ԷսԷս» (*Allgemeine SS*) անվանմամբ: Այն քաղկասցած էր մի քանի գլխավոր վարչական գրասենյակներից: Ընդարձակվելով ամբողջ երկրով՝ «ԷսԷս»-ը բաժանվել էր հիմնական մասնաճյուղերի՝ առաջացնելով, այսպես կոչված *վերին բաժանմունքներ* (*Oberabschnitte*) կամ ռազմական շրջաններ: Դրանց հաջորդում էին *բաժանմունքները* (*Abschnitte*) կամ շրջանները: Յուրաքանչյուր *վերին բաժանմունք* (*Oberabschnitte*) ներառում էր մոտ երեք *սյուրաբաժանում* (*Abschnitte*)⁴¹:

«ԷսԷս»-ն իր առաջին կարևոր դերակատարությունն ունեցավ 1934 թ.՝ ՍԱ-ի ղեկավար Էռնստ Բյոմի դեմ ուղղված «Երկար դանակների գիշեր» կամ «Բյոմի մաքրում»⁴² գործողության ժամանակ, ինչի համար պարզևատրվեց Հիտլերի կողմից և նացիստական կուսակցության համակարգում բարձրացվեց անկախ կազմակերպության աստիճանի: Սա նպաստեց պահնորդական ջոկատների ինտեգրմանը ֆաշիստական Գերմանիայի պետական համակարգ և հատկապես ռազմական ուժերի շարքեր:

1934 թ. գաղտնի քաղաքական ոստիկանության (Գեստապո) ղեկավար Հերման Գյոբլինգը Հայնրիխ Հիմլերին է փոխանցում գեստապոյի ղեկավարությունը: 1936 թ. հուլիսի 17-ին «ԷսԷս»-ի ղեկավար Հիմլերը նշանակվում է գերմանական ոստիկանության պետ⁴³: Դրանով Հիմլերի ենթակայությանն էին անցնում կանոնավոր ոստիկանության և անվտանգության ոստիկանության գորքերը: Նշանակումից ընդամենը մի քանի օր անց՝ հուլիսի 26-ին Հիմլերն ընդունում է մի որոշում, որով քրեական ոստիկանությունը «Կրիպո» (*Kriminalpolizei*) և գաղտնի քաղաքական ոստիկանությունը «Գեստապոն» (*Geheime Staatspolizei*) ներառվում են անվտանգության ոստիկանության կազմում: Այնուհետև անվտանգության ոստիկանությունը միավորվում է անվտանգության ծառայության «ՄԴ» (*Sicherheitsdienst*) հետ⁴⁴: Ուժերի այս միավորումը հաստատվեց 1939 թ. սեպտեմբերի 27-ին մեկ ընդհանուր «Անվտանգության գլխավոր կայսերական վարչություն» (*RSHA*) համակարգում⁴⁵: Կառույցի ղեկավարը Ռայնհարդ Հայդրիխն էր, որին, երբ նա սպանվեց, փոխարինեց Կալտենբրունները⁴⁶:

Դեռևս 1938 թ. «ԷսԷս»-ին հաջողվել էր իր ազդեցության տակ առնել ողջ ոստիկանական համակարգը: Իսկ վերջնաբարձրը եղավ այն, որ մի շարք օրենքների հիման վրա (Գերմանական ոստիկանության միավորման մասին, Պահնորդական ջոկատների և ոստիկանության պետական ղեկավարությունը «ԷսԷս»-ի ձեռքում կենտրոնացնելու մասին և այլն) կայսերական ոստիկանությունը վերածվեց ԷսԷս-ի մասնաճյուղի⁴⁷:

41 Նույն տեղում:

42 Հայտնի է «Երկար դանակների գիշեր» կամ Բյոմի պուտչ (հեղափոխություն) անվանմամբ: Գործողությունը ծածկագրված էր «Կոլիբրի»: Տեղի է ունեցել 1934 թ. հունիսի 30-ին: Կազմակերպվել է Հիտլերի և նրա կողմնակիցների կողմից՝ ՍԱ-ի ղեկավար Էռնստ Բյոմի և ՍԱ-ի գրոհայինների դեմ:

43 CC в действии, 9:

44 Նույն տեղում:

45 Նույն տեղում:

46 Տիգրան Մաթոսյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ. համեմատման փորձ* (Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005), 102:

47 Войска CC, 6:

1939 թ. պահնորդական ջոկատների կազմում կար 200.000⁴⁸ ծառայող, որոնք ընդգրկված էին 19 հիմնական բաժանմունքներում և բաժանված էին 114 վաշտերի, այդ թվում 19 հեծելազորային: Պահնորդական ջոկատների կազմում գտնվում էին նաև 14 հաղորդակցման (կապի) միավորումներ, 34 սանիտարական, 36 ավտոտրանսպորտային միջոցներ և 9 տեխնիկական ստորաբաժանումներ⁴⁹: Այս 114 վաշտերից ամենակարևորը 8-ն էին, որոնք ընդգրկված էին հատուկ նշանակության պահնորդական ջոկատների կազմում⁵⁰:

Հրեաների ոչնչացման գործում մեծ էր նաև 1938 թ. ստեղծված «ԷսԷս»-ի ռազմականացված ջոկատների» կամ «Վաֆֆեն-ԷսԷս-ի» դերը, որում ներգրավվում էին պարտադիր զինվորական ծառայության փոխարեն չորս տարվա կամավորական ծառայության անցած անձիք: Ինչպես «ԷսԷս»-ի զորքերի մասին արտահայտվել է նացիստ առաջնորդներից մեկը՝ Ռուդոլֆ Հեսլը. «ԷսԷս»-ի զորքերն... ավելի, քան մյուս զինված ստորաբաժանումները հարմար են օկուպացված արևելյան տարածքներում մեր առջև ծառայած այդ հատուկ առաջադրանքների կատարման համար՝ շնորհիվ, ռասայի և ազգության հարցերում նրանց՝ նացիոնալ-սոցիալիստական ոգով պատրաստվածությամբ»⁵¹:

Այս զորքերը բաժանված էին ստորաբաժանումների, որոնք ռազմական իրավիճակում պետք է գործեին բանակի հետ միասին: Այս ջոկատները հետագայում հիմք հանդիսացան 1939-1940 թթ. զորակոչի ժամանակ առաջին մոտորիզացված դիվիզիայի ստեղծման համար: Այլ խոսքերով, սրանք «ԷսԷս»-ի զորքերն էին, որոնք ձևավորվեցին ֆաշիստական կուսակցության երկու հիմնական ռազմական կազմակերպությունների՝ գրոհային ջոկատների (ՍԱ) և պահնորդական ջոկատների (ԷսԷս) հիման վրա: Նրանց կազմում կար 100.000 հոգի, այդ թվում 56.000-ը «ԷսԷս»-ի ռազմական ջոկատներից, իսկ մյուսները՝ «Ընդհանուր ԷսԷս»-ից և «Մեռած գլուխ» զորամասերից⁵²: Պատերազմի ավարտին «ԷսԷս»-ի զորքերում գործում էին 40 գումարտակներ՝ 580.000 անդամներով⁵³:

Հաջորդ ստորաբաժանումը՝ համակենտրոնացման ճամբարները վերահսկող «Մեռած գլուխ» («Տոտենկոպֆ», “Totenkopf”)⁵⁴ կոչվող ուժերն էին, որոնք 1934 թ. անցան «ԷսԷս»-ի պատասխանատվությանը⁵⁵:

Բացի վերոնշյալ բաժանմունքներից 1941 թ. մայիսին ստեղծվեցին անվտանգության ծառայության ՄԴ հատուկ նշանակության խմբեր, այսպես կոչված «այնպես չստանալ»

48 Նույն տեղում:

49 Նույն տեղում:

50 Նույն տեղում:

51 *СС в действии*, 18.

52 *Войска СС*, 7: Տե՛ս նաև *СС в действии*, 14.

53 *СС в действии*, 15:

54 Այդ ուժերի հիմնական գործառնությունը՝ համակենտրոնացման ճամբարներում հրեաների ոչնչացումն էր:

55 *СС в действии*, 14.

(Einsatzgruppen)⁵⁶: Քանի որ միայն անվտանգության ոստիկանությունը և անվտանգության ծառայությունը չէին կարող ապահովել այնպես խմբերի անդամների քանակը, ուստի նրանց շարքերը համալրվեցին ոստիկանության բոլոր բաժանմունքների անդամներով, ինչպես նաև «Վաֆֆեն-ԷսԷս»-ի ներկայացուցիչներով: Ընդհանուր առմամբ խմբերի անձնակազմը հաշվվում էր 3.000 հոգի⁵⁷:

Առհասարակ, դժվար է առանձնացնել «ԷսԷս»-ի մի ստորաբաժանում, որ չի մասնակցել հակահրեական գործողությունների: Այդ բոլոր ստորաբաժանումների գործողությունները վերահսկում էր «ԷսԷս»-ի կենտրոնական մարմինը: Կառույցի բոլոր ստորաբաժանումների առջև դրված էր մեկ նպատակ՝ ազգության և ռասայի մաքրության, Եվրոպան Գերմանիայի վերածելու խնդիրը⁵⁸: Եվ հենց դրանով էր պայմանավորված ԷսԷս-ի ընտրությունը՝ «հրեական հարցի լուծման համար», քանզի, ինչպես նշում է Հեսսը. «ԷսԷս»-ի գործերը մեծածավալ պատրաստվածություն ունեին ռասայի և ազգության հարցերում»⁵⁹:

Նյուրնբերգյան դատավարությունների ժամանակ հանցավոր կազմակերպությունների վերաբերյալ լսվել են 22 ներկայացուցիչների վկայություններ⁶⁰: Հարցաքննությունների արդյունքում ԷսԷս-ին առաջադրվեցին այնպիսի մեղադրանքներ, ինչպիսիք են՝ հրեաների հետապնդում և ոչնչացում, համակենտրոնացման ճամբարներում դաժանությունների և սպանությունների իրականացում, գրավված տարածքներում անմարդկային դրսևորումներ՝ ռազմագերիների հալածանքներ և սպանություն⁶¹: «ԷսԷս»-ի հարցի քննարկման ժամանակ տրիբունալը ներառում է բոլոր նրանց, ովքեր պաշտոնապես անդամակցել են «ԷսԷս»-ին, այդ թվում՝ «Ընդհանուր ԷսԷս-ի», ԷսԷս-ի գործերի, «Մեռած գլուխ» կոչվող գորամիավորումների, ինչպես նաև ոստիկանական բոլոր ուժերի անդամներին, որոնք եղել են «ԷսԷս»-ի կազմում: Բացառություն էին կազմում միայն «ԷսԷս»-ի հեծելազորային միավորումները, քանի որ «ԷսԷս»-ի ոսպնսֆյուրերի հարցը քննվում էր գեստապոյի և ՍԴ-ի շրջանակներում⁶²:

«ԷսԷս»-ի ստեղծման պատմության, նրա գործունեության հիմնական ուղղությունների, իրականացրած ծրագրերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կառույցն ի սկզբանե ստեղծվել է ապահովելու Հիտլերի անվտանգությունը և պաշտպանելու նացիստական կուսակցության շահերը: Սակայն, եթե նույնիսկ հրեականության ոչնչացումը չի եղել կազմակերպության ստեղծման պատճառ կամ առաջնային նպատակ, ապա դարձել է դրա հետագա գործունեության հիմնական ուղղությունը: Հակահրեական գործողություններին մասնակից են դարձել «ԷսԷս»-ի գրեթե բոլոր ստորաբա-

56 Сергей Чуев, *Спецслужбы третьего рейха*, книга II (Санкт-Петербург: «Нева», 2003), 23.

57 Raul Hilberg, *The Destruction of the the European Jews* (Chicago: Quadrangle Paperbacks, 1961), 189.

58 *CC в действии*, 18:

59 Նույն տեղում:

60 *Нюрнбергский процесс. Сборник материалов*. Том 2, второе издание, Константин Горшенин (гл. ред.) (Москва: Государственное издательство Юридической литературы, 1954), 946.

61 *CC в действии*, 19.

62 Նույն տեղում:

ժանումները, որոնց առջև դրված խնդիրները ծառայել են մեկ ընդհանուր նպատակի: Հաշվի առնելով «ԷսԷս»-ի պատասխանատվության և գործունեության ծավալները, կարող ենք ասել, որ նացիստական իշխանությունների՝ հրեաներին ոչնչացնելու ծրագիրը չէր ունենա այն արդյունքը, որն ապահովեց «ԷսԷս»-ի հսկայական համակարգը:

«Պանչասիլայի երիտասարդություն». Այս կազմակերպությունն «Ինդոնեզիայի կոմունիստական կուսակցության» (այսուհետ՝ ԻԿԿ) դեմ հանդես եկած ուժերից մեկն էր, սակայն, ի տարբերություն այլ ուժերի⁶³ «Պանչասիլայի երիտասարդություն»-ը չունեւր կրոնադավանական հիմք և ավելի ազգայնական բնույթ էր կրում:

Կոմունիստական կուսակցությունն Ինդոնեզիայում գործում էր դեռևս 1920-ական թվականներից: Սկզբնական շրջանում կուսակցությունն անցել է մեծ դժվարությունների միջով, սակայն, արդեն 1926-27-ականներին՝ կանգնելով Ինդոնեզիայի ազգային-ազատագրական պայքարի ակունքներում, կարողացել է ամրապնդել իր դիրքերը⁶⁴:

Ինդոնեզիայի կոմունիստները, ի տարբերություն հարևան կոմունիստական ուժերի չէին հակամարտում գործող իշխանությունների հետ, այլ հակառակը, սերտ համագործակցում էին ի նպաստ պետության շահերի: Ինդոնեզիայի անկախացման ժամանակ (1945 թ. օգոստոս)⁶⁵ և հետագայում նախագահ Ահմեդ Սուքարնոյի⁶⁶ վարած ժողովրդական բարեփոխումների քաղաքականությանը զուգահեռ ընդլայնվում էր նաև ԻԿԿ-ի ազդեցությունը: Դրան զուգահեռ, աճում էր նաև կուսակցության անդամների քանակը՝ 1950-1965 թթ. ընթացքում կոմունիստների թիվը 35.000-ից հասավ մոտ 3 միլիոնի⁶⁷: Այս հանգամանքը մտահոգիչ էր աջակողմյան ուժերի համար և նույնիսկ անհանգստության ալիք բարձրացրեց ազգային բանակի շարքերում: Կոմունիստական կուսակցության դեմ բանակի լարվածությունն ավելի մեծացավ, երբ նախագահ Սուքարնոն սկսեց ակտիվորեն խոչնդոտել անգլիացիների նախագծած Մալայզիայի անկախացման ծրագրին, քանզի ձգտում էր իշխանություն սահմանել նաև Մալայան արշիպելագի այդ հատվածի վրա: Իրադարձությունները զարգացան այնպես, որ շուտով՝ Մալայզիայի՝ Միացյալ Ազգերի Կազմակերպության Անվտանգության խորհրդում ընտրվելուց հետո, Ինդոնեզիան հայտարարեց ՄԱԿ-ից դուրս գալու մասին⁶⁸: Այսպիսով, կանխատեսելով ինդոնեզա-մալայզիական հարաբերությունների զարգացումների ռազմական ընթացքը, ԻԿԿ-ն առաջ է բերում «զինված ազգի» հայեցակարգը: Եվ չնայած բանակի ղեկավարության բողոքի ցույցերին, 1965 թ. հուլիսին,

63 Այդպիսի ուժերից էին «Նահաատուլ Ուլամա», «Մաշումի», «Մուհամադիա» կազմակերպությունները:

64 Б. И. Ильичев, «Коммунистическая партия Индонезии», *Большая Советская Энциклопедия*, <https://oval.ru/enc/35567.html>, դիտվել է 05.06.2019.

65 Նույն տեղում:

66 Ինդոնեզիայի առաջին նախագահը (1945-1967 թթ.): Ինդոնեզիայի ազգային կուսակցության հիմնադիրներից մեկը:

67 Илья Полонский, «Резня миллиона: боевой путь и страшная смерть компартии Индонезии», <https://bit.ly/2yfHr2c>, դիտվել է 08.06.2019.

68 Полонский, «Резня миллиона».

կոմունիստները սկսեցին վերապատրաստել առաջին երկու հազար զինյալներին⁶⁹: Այս ամենը խորացրեց բանակի հակակրանքը ինդոնեզական կոմունիստների սկատմամբ: Առաջացած լարվածությանը հաջորդեցին սեպտեմբերի 30-ի իրադարձությունները, ինչն էլ սկիզբ հանդիսացավ ինդոնեզական կոմունիստների զանգվածային սպանությունների համար⁷⁰:

1965 թ. սեպտեմբերի 30-ի գիշերը՝ լույս հոկտեմբերի 1-ը երիտասարդ կոմունիստական կազմակերպությունները փորձ կատարեցին ռազմական հեղաշրջում իրականացնել⁷¹: Նախագահական անվտանգության «Չակրաբիրավա» վաշտի զինծառայողները ներխուժեցին Հալիմ օդային բազա և սպանեցին վեց հրամանատարների, այդ թվում և Ինդոնեզիայի պաշտպանության նախարար Ահմադ Յանիին⁷²: Հոկտեմբերի 1-ի առավոտյան հեղափոխականներն անցան Ջակարտա, ինչից հետո փոխզնդապետ Ունտունգ Շամուրին հայտարարեց, որ նախագահ Սուքարնոյի օգտին իրականացված հեղաշրջումը հաջողված է⁷³: «Սեպտեմբերի 30-ի շարժման» հաջորդ քայլը գործող հրամանատարական անձնակազմի պաշտոնանկումներն էր, սակայն դա քիչ իրատեսական էր, քանզի գեներալ-մայոր Սուհարտոյին հաջողվեց վերահսկել իր ազդեցության տակ գտնվող բանակային զորամիավորումները և դադարեցնել հեղաշրջման հետագա ընթացքը: Ստեղծված իրավիճակում խիստ սահմանափակվեցին նախագահ Սուքարնոյի հնարավորությունները և նա ստիպված եղավ ինդոնեզական բանակի գլխավոր հրամանատարությունը հանձնել Սուհարտոյին⁷⁴: Սրանից հետո ողջ Ինդոնեզիայի տարածքում սկսեցին Կոմունիստական կուսակցության անդամների, նրանց համակիրների և նույնիսկ ենթադրյալ կոմունիստների բռնաճնշումներ և զանգվածային սպանություններ: Հակակոմունիստական շարժմանն ակտիվ մասնակցում էին ինչպես ռազմական ուժերը, այնպես էլ աջակողմյանները և մի շարք իսլամիստական խմբավորումներ: Սակայն, հարկ է նշել, որ Կոմունիստական կուսակցության ամենամեծ հակառակորդը գլխավոր շտաբի ղեկավար Աբդուլ Հարիս Նասուֆին⁷⁵ էր, ում նախաձեռնությամբ 1954 թ. ձևավորվեց «Ինդոնեզիայի անկախության աջակիցների լիգան» (IPKI)⁷⁶: Իսկ ավելի ուշ, 1959 թ. Մակասարում⁷⁷ տեղի ունեցած ժողովի ժամանակ որոշում ընդունվեց լիգայի ներսում ստեղծել մի քանի մասնաճյուղեր և նույն թվականի հոկտեմբերի 28-ին կազմավորվեց «Ինդոնեզիայի անկախության աջակիցների լիգա»-ի (այսուհետ՝ ԻԱԱԼ)

69 Նույն տեղում:

70 Ջոհերի թիվը տատանվում է 500.000-ից մինչև 3 միլիոնի:

71 Նույն տեղում:

72 Նույն տեղում: Տե՛ս նաև «1965 год. Бойня в Индонезии», <https://bit.ly/30Vo4rK>, դիտվել է 07.06.2019:

73 Полонский, «Резня миллиона».

74 Նույն տեղում: Տե՛ս նաև «1965 год»:

75 Ինդոնեզիայի ազգային հերոս, ռազմական գործիչ, գեներալ: Եղել է Ինդոնեզիայի ազգային բանակի գլխավոր հրամանատար (1955-1959, 1962-1965 թթ.):

76 Uok Mayestic, “Pemuda Pancasila,” <https://bit.ly/2Y5M1lo>, դիտվել է 06.06.2019:

77 Ինդոնեզիայի Հարավային Սուլաւես նահանգի մայրաքաղաքը:

երիտասարդական թևը⁷⁸: Այս որոշումը 1959 թ. հուլիսի 5-ին նախագահ Սուքարնոյի հռչակած հրամանագրի տրամաբանական շարունակությունն էր⁷⁹: Երիտասարդական օղակը ստացավ «Հայրենասեր երիտասարդություն» (Pemuda Patriotik)⁸⁰ անվանումը: Սակայն կառույցն այս անունով երկար չգործեց: 1960 թ. ԻԱԱԼ-ի հերթական ժողովներից մեկի ժամանակ ինդոնեզական բանակի հատուկչոկատայինների (RPKAD, Kopassus) ներխուժումից հետո կառույցը վերանվանվեց «Պանչասիլայի երիտասարդություն» (Pancasila Youth)⁸¹:

Կազմակերպության անունն առաջացել է Ինդոնեզիայի պետական պաշտոնական գաղափարախոսություն հռչակված «Հինգ սկզբունքներ» կոչված Pancasila բառից: Կառույցը հանդես է եկել որպես կիսապաշտոնական քաղաքական ավագակային խումբ և մեծ աջակցություն է ցուցաբերել Սուհարտոյին⁸² 1965 թ. ռազմական հեղաշրջման, «Նոր կարգերի» հաստատման ժամանակ⁸³:

«Պանչասիլայի երիտասարդություն» կազմակերպության անդամները «Հինգ սկզբունքներ»-ի հետևորդները և ջատագովներն էին, որոնք կառույցի կազմում ներգրավվելու համար երդմնակալություն էին իրականացնում. «Մեկ հող՝ Ինդոնեզիա: Մեկ ազգ՝ ինդոնեզական: Մեկ լեզու՝ ինդոնեզերեն: Մեկ գաղափարախոսություն՝ Պանչասիլա»⁸⁴:

Հաշվի առնելով, որ անկախ Ինդոնեզիայի նոր գաղափարախոսության, «Նոր կարգերի» հաստատման համար Կոմունիստական կուսակցությունը խոչնդոտ էր հանդիսանում, ուստի կազմակերպությունն իր շուրջն էր համախմբել հակակոմունիստների: Կառույցի կորիզը կազմում էին սոցիալական ցածր խավի երիտասարդությունը՝ փողոցային հանցագործներ, որոնք պատրաստ էին ֆիզիկական բռնություն իրականացնել: Կազմակերպության սոցիալական հիմքին ավելի մանրամասն անդրադարձ կլինի երեք կառույցների գործունեության համեմատությունը ներկայացնելիս: Հարկ է միայն նշել, որ թեկուզև «Պանչասիլայի երիտասարդության» անդամներն այդպես էլ մնացին «թաղային հեղինակության» մակարդակում և երբեք չներգրավվեցին պետական վերնախավի շարքերում, այնուամենայնիվ նրանց դերը մինչ օրս կարևոր և նշանակալից է Ինդոնեզիայի ներքին քաղաքականության մեջ: Դրա մասին են փաստում իշխանությունների ներկայացուցիչների հայտարարությունները⁸⁵:

78 Полонский, «Резня миллиона».

79 Loren Ryter, “Pemuda Pancasila: The Last Loyalist Free Men of Suharto’s Order?” *Indonesia*, no. 66 (1998): 44-73.

80 Полонский, «Резня миллиона».

81 Նույն տեղում:

82 Հաջի Մուհամմադ Սուհարտո, Ինդոնեզիայի ռազմական և պետական գործիչ: Եղել է Ինդոնեզիայի երկրորդ նախագահը (1968-1998 թթ.):

83 Mayestic, “Pemuda Pancasila.”

84 “Sejarah Pemuda Pancasila Sumut,” <https://bit.ly/2SEhTFw>, դիտվել է 07.06.2019.

85 Роман Шанга, «Сухарто – нашей юности полет», 23 октября 2017, <https://bit.ly/2JRLUPh>, դիտվել է 27.207.2019.

Ընդհանրացնելով «Թեշքիլաթը մահսուսա», «ԷսԷս» և «Պանչասիլայի երիտասարդություն» կազմակերպությունների կառուցվածքի, գործունեության հիմնական ուղղությունների մասին պատկերը, փորձ է արվելու համեմատականներ անցկացնել երեք կազմակերպությունների միջև՝ ընդգծելով դրանց ընդհանրությունները և առանձնահատկությունները: Հետազոտության առաջին հատվածում խնդիր էր դրվել վերհանել վերոնշյալ հատուկ կառույցների առաջացման կարևորությունը գործող իշխանությունների համար: Կառույցների գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչ նշանակություն և ինչ մասնակցություն են դրանք ունեցել ցեղասպանական և զանգավածային սպանությունների ծրագրերի իրականացման գործընթացում:

«Թեշքիլաթը մահսուսա»-ի, գերմանական «ԷսԷս»-ի և «Պանչասիլայի երիտասարդություն» կառույցների միջև համեմատականները բազմազան են, ուստի նպատակահարմար է առանձին-առանձին անդրադառնալ երեք կազմակերպությունների միջև առկա ընդհանրություններին և առանձնահատկություններին:

Կազմակերպությունների գործունեության ընդհանրությունները և առանձնահատկությունները

Պատկանելություն կուսակցական համակարգերին. կառույցների ձևավորման նպատակները. Հետազոտության առարկա կառույցները, չնայած իրենց կիսառազմական բնույթին, առաջացել են կուսակցական ապարատների ներսում՝ ղեկավարների նախաձեռնությամբ: «Թեշքիլաթը մահսուսա»-ն ստեղծվեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի որոշմամբ⁸⁶, երբ ժողովներից մեկի ժամանակ կուսակցության քարտուղար Բեհաեդդին Շաքիրը շեշտում է հատուկ կառույց ստեղծելու կարևորության մասին. «Ընկերներ, խիստ կարևոր է ծանր պարտականություն մը ստանձնեցինք... Հիմա ամէն բանէ առաջ մեր տրամադրութեան անկախ զինեալ ուժի մը պէտք ունինք...»⁸⁷: Սա փաստում է այն մասին, որ Հատուկ կազմակերպություն ստեղծելու հարցը քննարկվում էր հայերի բնաջնջման ծրագրի մշակման հետ զուգահեռ, ուստի Թեշքիլաթը-ի քաղաքացիական թևի գործունեության հիմնական նպատակը հենց Հայոց ցեղասպանության իրագործումն էր: Իր առջև ունենալով հայերի հարցը վերջնականապես լուծելու կարևորագույն խնդիրը՝ կազմակերպությունը կարողացավ կարճ ժամանակում համալրվել, ամրանալ և ցանկացած միջոցներով ի կատար ածել իթթիհատականների բաղձալի երազանքը:

Ինչ վերաբերում է գերմանական «ԷսԷս»-ին, ինչպես արդեն նշել ենք, այն ձևավորվեց Նացիոնալ-սոցիալիստական գերմանական բանվորական կուսակցության ղեկավար Ադոլֆ Հիտլերի (ղեկավարել է 1921-1945 թթ.) որոշմամբ⁸⁸: Այլ կերպ ասած «ԷսԷս»-ը վերակազմավորված ՄԱ-ն (գրոհային ջոկատներ) էր, որը պարզապես նոր անուն ստացավ՝ «պահնորդական ջոկատներ»:

86 Авакян, *Геноцид армян*, 96-97.

87 Րիֆաթ Մէվլան Չատէ, *Օսմանեան յեղափոխութեան մտք ծալքերը եւ իթթիհատի հայաջինջ ծրագիրները* (Երևան, ԿՓՀ Ֆաքսիմիլ հրատ., 1990), 113:

88 Хайнци, *Черный орден СС*, 22.

Վերոնշյալ երկու կառույցների նման, «Պանչասիլայի երիտասարդություն»-ը ևս ձևավորվել է կուսակցության շրջանակներում: Չնայած, պետք է շեշտենք, որ «Ինդոնեզիայի անկախության աջակիցների լիգա»-ն իրեն համարում և ներկայացնում էր ոչ թե որպես կուսակցություն, այլ ինքնաբերիկ շարժում, որը հետագայում վերաճեց հզոր հեղափոխության⁸⁹:

Այսպիսով, ամփոփելով կառույցների ձևավորման պատճառները և հանգամանքները, ընդգծենք դրանց հիմնական ընդհանրությունները և առանձնահատկությունները: «Թեշքիլաթը մահուտա»-ն և «Պանչասիլայի երիտասարդություն»-ը սկզբից մինչև վերջ տարան, համապատասխանաբար, Հայոց ցեղասպանության և Ինդոնեզիայի կոմունիստական կուսակցության անդամների կոտորածի ողջ ընթացքը և արդարացրեցին իրենցից ակնկալվող հույսերը: Իսկ «ԷսԷս»-ն ի սկզբանե նպատակ ուներ ապահովել ֆյուրերի և նացիստական կուսակցության անդամների անվտանգությունը և միայն հրեաների ոչնչացման ծրագրի հաստատումից հետո «ԷսԷս»-ի ստորաբաժանումները լծվեցին այդ «սրբազան հարցի» լուծմանը և մինչև վերջ տարան ընթացքը: Հակահրեական գործողություններին մասնակից են դարձել «ԷսԷս»-ի գրեթե բոլոր ստորաբաժանումները, որոնց առջև դրված խնդիրները ծառայել են մեկ ընդհանուր նպատակի:

Գաղափարախոսություն. Հաջորդ ընդհանրությունը, որ անմիջապես կապված է կուսակցական ապարատների և դրանց առաջնորդների հետ՝ կուսակցությունների որդեգրած գաղափարախոսությունն է, որին անվերապահորեն հավատարիմ էին ստեղծված կազմակերպությունները: Խոսքը պանթուրքիստական, նացիոնալ-սոցիալիստական և «Հինգ սկզբունքեր» գաղափարախոսությունների մասին է, որոնք սկիզբ առան Օսմանյան Թուրքիայի, Վայմարյան հանրապետության, Ինդոնեզիայի համար ծանր սոցիալ-տնտեսական, ինչպես նաև քաղաքական իրավիճակի պայմաններում: Իսկ արդեն իթթիհատականների, նացիստների և հակակոմունիստների իշխանության գալուց հետո այս գաղափարախոսություններն ավելի ամրապնդեցին իրենց դիրքերը և պաշտոնականացվեցին:

Գաղափարախոսություններն էլ իրենց հերթին ունեն ընդհանրություններ՝ երեք թևի գաղափարներն էլ հանգում էին ցեղասպանական գործողությունների կամ զանգվածային սպանությունների: Սա կարելի բացատրել պանթուրքիզմի և նացիոնալ-սոցիալիզմի հիմքում ընկած «միատարր էթնիկ կայսրություն» ստեղծելու նպատակով և պանչասիլայի գաղափարներից բխող փիլիսոփայական հիմքով: Իթթիհատականների պարագայում գլխավոր նպատակը «թուրք տարրի հզորացումն» էր, որին, ինչպես նշում է դոկտոր Նազըմը, կարելի է հասնել ցանկացած միջոցով. «Եթե անհրաժեշտ է, ձուլումը պետք է իրականացվի բռնի միջոցներով, և չպետք է խուսափել հասարակական կարծիքից...»⁹⁰: 1911 թ. Սալոնիկում տեղի ունեցած երիտթուրքերի չորրորդ համա-

89 Ryter, “Pemuda Pancasila.”

90 Արսեն Ավագյան, «Պանթուրքիզմի գաղափարախոսության ընդունումը «Միություն և առաջադիմություն» կուսակցության երրորդ և չորրորդ համագումարներում», *Հայոց ցեղասպանություն: Պատճառներ և դատարար*, մաս 3 (Երևան, Ազգային հարցի և գենցիդի ուսումնասիրման կենտրոն, 1995), 17:

գումարում ազգային քաղաքականության մասին որոշում ընդունվեց, որը հաստատում էր, որ՝ «Վաղ թե ուշ պետք է տեղի ունենա կայսրության բոլոր ժողովուրդների օսմանացումը և եթե այն հնարավոր չէ իրականացնել խաղաղ միջոցներով, չպետք է խուսափել բռնի, ընդհուպ մինչև ռազմական միջոցների կիրառումից...»⁹¹:

Ինչ վերաբերում է նացիոնալ-սոցիալիզմին, ապա այս պարագայում ևս գերնպատակը բնակչության լիարժեք գերմանականացումն էր: Այս դեպքում սահմաններն ավելի ընդարձակ էին՝ ծրագիրը բացի բուն Գերմանիայից ներառում էր նաև գրավված տարածքների մասեր:

Ինդոնեզական «Հինգ սկզբունքների» պարագայում մի փոքր այլ էր, քանի որ դրանք միավորված էին ոչ թե միատարր ինդոնեզական ազգի ստեղծմանը, այլ «արդար և բարգավաճ» հասարակության ձևավորմանը⁹²: «Հինգ սկզբունքները» հռչակվեցին դեռևս 1945 թ. հունիսի 1-ին, երբ Անկախության նախապատրաստման կոմիտեում (Independence Preparatory Committee) նախագահ Սուքարնոն հանդես եկավ «Պանչասիլայի ծնունդը» հայտնի ճառով⁹³: Նախագահը «Պանչասիլան» ներկայացրեց որպես «Հիմնական պետություն» (“Dasar Negara,” Ինդոնեզական պետության քաղաքական փիլիսոփայություն), որի հիմքում հետևյալ հինգ սկզբունքներն էին.

Առաջին սկզբունքը՝ «Հավատը միակ բարձրագույն Աստծուն» (Sila Ketuhanan yang Maha Esa): Այս սկզբունքը ամրագրվել է 1945 թ. Սահմանադրության մեջ և կոչ է, որ «պետությունը պետք է հիմնված լինի միայն Աստծու հավատքի վրա»⁹⁴: Ըստ արևմտյան տեսակետի՝ Ինդոնեզիան աշխարհիկ չէ, բայց այնուամենայնիվ, բարձրյալի հանդեպ հավատքը մնացել է որպես ընդհանուր համոզմունք տարբեր կրոնների՝ իսլամի, քրիստոնեության, հինդուիզմի և բուդդիզմի համար: Այս հզոր կրոնները պաշտոնապես ճանաչված են պետությունում և կրոնական վարչության կողմից⁹⁵:

Երկրորդը «Արդար և քաղաքակիրթ մարդկության» (Sila Kemanusiaan yang Adil dan Beradab) սկզբունքն է, որը մարդկանց հանդեպ պահանջում է հարգալից վերաբերմունք, քանի որ մարդուն Աստված է արարել: Այն ընդգծում է, որ ինդոնեզացի ժողովուրդը չի հանդուրժում իր ժողովրդի կամ այլ ազգի կողմից մարդկանց ֆիզիկական կամ հոգևոր ճնշումը⁹⁶:

Սկզբունքներից երրորդը՝ «Ինդոնեզիայի միասնություն» (Sila Persatuan Indonesia), ենթադրում է հավատարմություն Ինդոնեզիայի միասնության սրբազան գործին: Այս սկզբունքն արտահայտում է ազգայնականությունը՝ սեփական ազգի և հայրենիքի նկատմամբ սերը⁹⁷: Քանի որ Ինդոնեզիան միավորում է 13.000 կղզիներ և 350 էթնիկ

91 Մոյն տեղում, 18:

92 Michael Morfit, “Pancasila: The Indonesian State Ideology According to the New Order Government,” Asian Survey 21, no. 8 (1981): 838-851, 840-844.

93 “Pancasila,” Indonesia Christian Leadership Blog, <https://bit.ly/2Y37OrD>, դիտվել է 20.04.2019.

94 Մոյն տեղում:

95 Morfit, 840:

96 Pancasila, Indonesia Christian Leadership Blog.

97 Մոյն տեղում:

խմբեր⁹⁸, ուստի պետության միասնության կարևորությունը միանգամայն բնական և տրամաբանական է: Այդ միասնությունն արտահայտված է Ինդոնեզիայի զինանշանի վրա՝ «միասնություն բազմազանության մեջ», որին դեռևս 1928 թ.-ից ձգտում էր հասնել Ինդոնեզիայի երիտասարդությունը⁹⁹:

Հաջորդ սկզբունքը, թեև ոչ բառացի թարգմանությամբ, կոչ է անում ժողովրդավարության, որի հիմքում ընկած է միասնությունը: Իսկ դրան հնարավոր է հասնել քննարկումների, համաձայնության, երկխոսության շնորհիվ՝ «Երկխոսության ժողովրդավարություն» (Kerakyatan yang Dipimpin oleh Hikmat Kebijaksanaan dalam Permusyawaratan/Perwakilan)¹⁰⁰:

Վերջին սկզբունքը պահանջում է «Սոցիալական արդարություն Ինդոնեզիայի ողջ ժողովրդի համար» (Keadilan Sosial bagi Seluruh Rakyat Indonesia): Սա ենթադրում է, որ պետության բոլոր միջոցները և ազգային պոտենցիալը պետք է առավելագույնս ծառայեցվի ժողովրդի բարեկեցության և բարգավաճման համար:

Այսպիսով, Թուրքիան թրքացնելու, Գերմանիան՝ իր հարակից գրավված տարածքներով գերմանականացնելու և Ինդոնեզիան որպես անկախ, արդար, զարգացած պետություն ստեղծելու գաղափարները կլանել էին ողջ համակարգը: Իսկ հատուկ կազմակերպությունները՝ «Թեշքիլաթը մահսուսա»-ն, «ԷսԷս»-ը և «Պանչասիլայի երիտասարդություն»-ն այդ համակարգի նվիրյալներն էին և որդեգրած գաղափարախոսությունների հետևորդները:

Կազմակերպությունների գործունեությունը մինչ ցեղասպանությունը և մինչ զանգվածային սպանությունները. Կազմակերպությունների միջև համեմատության առարկա է նաև նրանց՝ մինչև հայերի և հրեաների բնաջնջումը, ինչպես նաև կոմունիստների սպանություններն իրականացրած գործունեությունը: Այս առումով, զուգահեռ կարող ենք անցկացնել «Թեշքիլաթը մահսուսա»-ի և «ԷսԷս»-ի միջև: Գաղտնիք չէ, որ դեռևս «ֆիդայիների կազմակերպության» անդամներն իրականացնում էին ահաբեկչական գործողություններ քաղաքական ընդդիմադիր գործիչների դեմ: «Ֆիդայիների» ձեռնարկների շարքում էին 1909 թ. ապրիլից մինչև 1911 թ. հուլիսը կենտրոնական կոմիտեի որոշմամբ իրականացված ընդդիմադիր խմբագիրներ Հասան Ֆեհմի, Ահմեդ Սամիմի և Ջեքքիի սպանությունները¹⁰¹: Որոշ փաստաթղթերով նրանց է վերագրվում նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, Ադանայի՝ 1909 թ. ապրիլի իրադարձությունների հետաքննիչ հանձնաժողովի ներկայացուցիչ Հակոբ Պապիկյանի վաղաժամ մահը¹⁰²:

Նույնպիսի գործունեություն իրականացրել են նաև «ԷսԷս»-ի մարտիկները: Դրանցից ամենահայտնին Էռնստ Բյոմի դեմ իրականացված «Երկար դանակների գիշեր» կամ «Բյոմի մաքրում» գործողությունն էր: Սակայն «ԷսԷս»-ի ահաբեկչական

98 Morfit, “Pancasila,” 840:

99 “Pancasila.”

100 Նույն տեղում:

101 Авакян, *Геноцид армян*, 97.

102 Նույն տեղում, 97-98:

գործողությունները չսահմանափակվեցին միայն ներքին «թշնամիների» շրջանում:

Ինչ վերաբերում է «Պանչասիլայի երիտասարդությանը», ապա այն ձևավորվեց որպես Ինդոնեզիայի անկախության համար ճանապարհի հարթող գործիք, որը լիարժեք կենտրոնացավ, այսպես կոչված Ինդոնեզիայի անկախությանը սպառնացող համակարգի և դրան աջակցող կոմունիստական կուսակցության դեմ: Այս կազմակերպությունն իր շուրջն էր համախմբել հակակոմունիստների, ուստի դրա նպատակը հենց սկզբից էլ մեկն էր՝ Ինդոնեզիայի կոմունիստական կուսակցության տապալումը: Կարող ենք ասել, որ ի տարբերություն դիտարկվող մյուս երկու կառույցների, «Պանչասիլայի երիտասարդությունը» չի իրականացրել մինչցեղասպանական գործողություններ և ձևավորման սկզբից էլ նվիրվել է կոմունիստների բնաջնջման նպատակին:

Հանցագործ խավի ներգրավում. Կազմակերպությունների գործունեությունն ակտիվացնելու և նրանց առջև դրված խնդիրներն արդյունավետ լուծելու համար, բնականաբար ի հայտ եկավ նրանց անդամների քանակն ավելացնելու հարցը: Հատկանշական է, որ «Թեշքիլաթը մահսուսա»-ն և «ԷսԷս»-ը դիմեցին նույն միջոցին՝ բանտերից ազատ արձակված հանցագործներին: «... իթթիհատական պարագլուխները փութով պատրաստեցին ջարդի եւ կողոպուտի մասնավոր մեքենականությունը: Անոնք բանտերէն եւ գնտաններէն ազատ արձակեցին բոլոր մարդասպանները, հանցագործները, գողերն ու ավազակները, եւ հայ ժողովուրդէն իսկ գանձուած դրամով զինելէ ետք, մարզեցին եւ պատրաստեցին զանոնք՝ «մասնավոր առաքելության» մը համար...»¹⁰³: Ըստ «Նյու-Յորք թայմս»-ի 1915 թ. սեպտեմբերի 29-ի համարում գետեղված տվյալների՝ բանտերից ազատվել էին 3.000 հանցագործ մահմեդականներ, որոնցից կազմվել էին ավազակախմբեր. «Նրանց պարտականություններից էր գյուղերի թալանը, գողությունն ու մարդասպանությունը»¹⁰⁴:

Նացիստներն իրենց ծրագրերն իրականացնելիս ևս օգտագործել են բանտերից ազատ արձակված հանցագործների: Բայցևայնպես, պետք է հաշվի առնել մի կարևոր առանձնահատկություն «ԷսԷս»-ի պարագայում: «ԷսԷս»-ին անդամագրվելու համար նախատեսված էին բավական բարձր պահանջներ՝ արիական ծագում, տարիքային, արտաքին, ֆիզիկական տվյալներ, ինչպես նաև «գերմարդու»՝ նացիստական պատկերացումներին համապատասխան թեկնածուներ և մասնագիտական երաշխավորագրեր¹⁰⁵: «ԷսԷս»-ի կազմում կարող էին լինել բացառապես նրանք, ովքեր ունեին հետևյալ հատկանիշները՝ 1. էսԷս-ի գորակոչիկների ֆիզիկական պատրաստվածության մակարդակը պետք է հավասար լիներ բանակային ստորաբաժանումների համար պահանջվող մակարդակին: 2. «արիական ծագում» և ֆաշիստական համոզմունքներ; գերմանացի նախնիների տոհմաժառը պետք է հայտնի լիներ 1750 թվականից; «ռասայի մաքրությունը» սահմանվում էր ռասայական հանձնաժո-

103 Գերսամ Ահարոնեան, *Մեծ երազի ճամբուն վրայ* (Ակնարկ Հայկական հարցի պատմության վրայ), Բ. Տպագրություն (Պէյրոս, տպ. Ատլաս, 1964), 4:

104 Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան, *Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, Հայկական հարցը 1908-14 թվերին*, հատոր II, գիրք I (Երևան, Հայաստան, 2001), 454:

105 Хайнц, *Черный орден СС*, 23; Нюрнбергский процесс, том 2, 846:

դովի և եվգենիկական փորձարկումների միջոցով: 3. ոչ պակաս, քան 1 մետր 70 սանտիմետր հասակ: 4. նախապատվությունը տրվում էր «Հիտլերական երիտասարդություն» միության և ֆաշիստական կուսակցության անդամներին, որոնք կազմում էին «ԷսԷս»-ի զորքերի հիմնական մասը: 5. մինչև վեց ամիս փորձաշջան, ինչը հնարավորություն էր տալիս շտկել թերությունները¹⁰⁶:

Ինչ վերաբերում է «Պանչասիլայի երիտասարդությանը», ապա դրա հիմքում ամբողջապես հանցագործ խավն էր: Սակայն այս դեպքում նրանք ոչ թե բանտերից ազատ արձակված հանցագործներ էին, այլ սոցիալական ցածր շերտի, փողոցային հանցագործ խմբեր, որոնք մեծ աջակցություն ունեին իշխանությունների կողմից. «Նրանք ավագակներ են, բայց ավագակներ՝ ոչ թե որպես վատ մարդիկ, այլ որպես ազատ մարդիկ», - այսպես է արտահայտվել կառույցի անդամների մասին Ինդունե-գիայի վարչապետ Յուսուֆ Կալլան¹⁰⁷: Իսկ մեկ այլ առիթով Հյուսիսային Սումատրայի նախկին նահանգապետ Սյամսուլ Արիֆինն ասել է. «Ավագակները կարող են քառս տարածել և կարող են խաղաղություն ստեղծել: Հանցագործների օգնությունն անհրաժեշտ էր երկրին»¹⁰⁸:

«Պանչասիլայի երիտասարդության» ամենահայտնի և կարկառուն ներկայացուցիչը, ով, կարելի է ասել, կառույցի հանցավոր դիմագծի հավաքական կերպարն է՝ Անվար Կոնգոն էր: Կոնգոն երիտասարդ ավագակախմբի առաջնորդներից էր, հայտի էր «Դաշույն» մականվամբ¹⁰⁹: Նա ղեկավարում էր Մեդանի կինոթատրոնի վերահսկողությունն իրականացնող նույնանուն «Դաշույն» խմբավորումը: Անվարը շատ էր սիրում կինոն, հատկապես հոլիվուդյան ֆիլմերը: 1960-ականների սկզբներին կոմունիստները խստացրեցին գրաքննությունը, այդ թվում և կինոասպարեզում, ինչի արդյունքում Կոնգոյի սիրելի ամերիկյան ֆիլմերի ցուցադրությունն արգելվեց: Սա, գուցե և ոչ էական, սակայն Անվարի կողմից կոմունիստների նկատմամբ ունեցած անձնական լարվածության պատճառներից մեկն էր: Առհասարակ, հանցավոր խմբերը, որոնք ձևավորեցին «Պանչասիլայի երիտասարդություն» կազմակերպությունն՝ ընդգծված հակակրանք էին տածում կոմունիստների նկատմամբ, որոնք սահմանափակում էին ավագակախմբերի վերահսկողության բոլոր ոլորտները՝ նավահանգիստների մաքսանենգությունը, բիզնեսների հսկողությունը, դրամաշորթությունը, անօրինական բարերի և խաղատների գործունեությունը: Բայցևայնպես, պետք է նշել, որ հակակոմունիստական ալիքն ուներ ավելի խորը արմատներ և ուղղորդվում էր հակաիշխանական, մասնավորապես բանակային ուժերի կողմից, իսկ «Պանչասիլայի երիտասարդություն»-ն այդ քաղաքականության իրականացման գլխավոր գործիքն էր:

Եթե փորձենք ամփոփ բացատրել հանցագործ տարրի ներգրավվումը նմանատիպ կազմակերպությունների շարքերում, ապա դա միանշանակ կմեկնաբանվի որպես թույլ օղակ, որն առավել հեշտությամբ և փորձառությամբ է իրականացնում սպանություն,

106 Войска СС, 13:

107 Шанга, «Сухарто – нашей юности полет».

108 Նույն տեղում:

109 Նույն տեղում:

առավել ևս իր շահի՝ այս դեպքում բանտից ազատ արձակվելու կամ անարգել գործելու հնարավորության դիմաց:

Բանակի աջակցությունը հատուկ կազմակերպություններին. Հաջորդ ընդհանրությունն այն է, որ նշված կազմակերպություններին մեծ աջակցություն են ցուցաբերել բանակային ուժերը: Բանակն ակտիվ համագործակցում էր «Թեշքիլաթը մահասա»-ի հետ: Թաներ Աքչամն իր ուսումնասիրություններից մեկում նշում է, որ «Թեշքիլաթը»-ի կազմում ընդգրկված էին բանտերից ազատ արձակված ռճրագործներ, Բականներից և Կովկասից եկած փախստականներ¹¹⁰: Ըստ նրա՝ «Հատուկ կազմակերպության (Թեշքիլաթի) ամենակարևոր պարտականությունը «Տեղահանության մասին օրենքի» կիրառումն էր, ավելի ճիշտ՝ ակտիվ մասնակցությունը հայերի բնաջնջմանը»¹¹¹: Աքչամը նշում է, որ այս նպատակին հասնելու համար նրանք նախապատրաստվում էին ռազմական նախարարության հսկողությամբ¹¹²: Բացի այդ, հայտնի է, որ «Թեշքիլաթը»-ի հրոսակախմբերին ուղեկցում էին բանակի սպաները, ինչի մասին փաստում է Բեհաեդդին Շաքիրի կնոջն ուղարկված նամակը, որտեղ ասվում է, որ Հատուկ կազմակերպության անդամների մի մասը տեղական զինված ուժերից են, որոնք փաստացի ներկայացվում են որպես «ներքին պահակախումբ», սակայն իրականում Հատուկ կազմակերպության ավագակախմբերից են¹¹³:

«ԷսԷս»-ի պարագայում ևս մեծ է եղել բանակի հետ համագործակցությունը: Շատ դեպքերում նույնիսկ բանակի գեներալները ստանձնել են «ԷսԷս»-ի հատուկ ուժերի հրամանատարությունը: Այսպես, 1941 թ. հոկտեմբերից «ԷսԷս»-ի հեծելազորային ջոկատը եղել է բանակի հրամանատարության ներքո և մասնակցել է Մոսկվայից 200 կմ հեռավորության վրա գտնվող Ռ-ժև և Վելիկիե Լյուկի բնակավայրերի միջև «խաղաղություն հաստատելու» գործողություններին¹¹⁴:

Մի փոքր այլ պատկեր է «Պանչասիլայի երիտասարդության» պարագայում, քանի որ այս դեպքում բանակը ոչ թե աջակցում էր այս կազմակերպությանը, այլ, ինչպես արդեն նշել ենք, կառույցը ստեղծվել էր հենց բանակի հրամանատարության կողմից: Առհասարակ, Ինդոնեզիայի կոմունիստական կուսակցության ցեղասպանությունը ծրագրվեց և իրականացվեց ինդոնեզական զինված ուժերի կողմից, որի նպատակը պետական իշխանության զավթումն էր¹¹⁵: Բնական է, որ այսպիսի լայնամասշտաբ գործողությունը հնարավոր չէր իրականացնել առանց պլանավորման

110 Թաներ Աքչամ, «Թուրքական ազգային ինքնությունը և հայկական հարցը», *Բուրդան* (Երևան) թիվ 1 (բացառիկ), 1995, 99:

111 Նույն տեղում:

112 Նույն տեղում:

113 Vahakn Dadrian, *The Role of the Special Organization in the Armenian Genocide during the First World War* (Oxford and Providence: Berg Publishers, 1993), 15.

114 Մաթոսյան, *Հայոց ցեղասպանություն և Հրեական հոլոքոստ*, 109:

115 Jess Melvin, “The Road to Genocide: Indonesian Military Planning to Seize State Power Prior to 1 October 1965,” in *The Indonesian Genocide of 1965: Causes, Dynamics and Legacies* (ed. Katharine McGregor, Jess Melvin, Annie Pohlman), Series: Palgrave Studies in the History of Genocide (Palgrave Macmillan, 2018), 51-52.

և համակարգման, ինչպես նաև, ավելի կենտրոնացված ուժի կիրառման, որն այս դեպքում «Պանչասիլայի երիտասարդություն»-ն էր: Հարկ է նշել, որ այս կառույցի անդամները վերապատրաստվում էին բանակային ուժերի կողմից, ինչպես դա արվում էր «Թեշքիլաթը մահսուսա»-ի պարագայում:

Ստացվում է, որ բոլոր դեպքերում էլ գործում էր մեկ ամբողջական համակարգ, որն իր ուժերը մոբիլիզացնելու և իր առջև դրված նպատակին հասնելու համար կլանում էր հնարավոր օղակները:

Ամփոփելով կարելի է նշել, որ հետազոտության առարկա կազմակերպությունները ստեղծվել են համապատասխանաբար Օսմանյան կայսրության և նացիստական Գերմանիայի գործող իշխանությունների, իսկ մյուս դեպքում՝ հակաիշխանական ուժի կողմից և անմիջականորեն պատկանել են կուսակցական համակարգերին: Սրանք այն կազմակերպություններն էին, որոնց ներուժն առավելագույնս օգտագործվեց հայերի, հրեաների, ինդոնեզական կոմունիստների բնաջնջման ծրագրի իրականացման համար: Ուսումնասիրության առարկա կառույցներն իրենց շարքերը համալրել են հանցագործ տարրի օգնությամբ: Սակայն, պետք է նշել մի տարբերություն, որ ԷսԷս-ին անդամագրվելու համար ամրագրված էին հստակ և բավական բարձր չափորոշիչներ, որոնք հանցագործների պարագայում, վստահաբար չէին գործում: Կառույցների գործունեությունը թերի կլիներ՝ առանց բանակային ուժերի աջակցության:

Ի վերջո պետք է նշել, որ հենց «Թեշքիլաթը մահսուսա»-ի, «ԷսԷս»-ի և «Պանչասիլայի երիտասարդության» միջոցով է հնարավոր դարձել հայերի և հրեա ժողովուրդների ցեղասպանությունը, ինչպես նաև ինդոնեզական կոմունիստների զանգվածային սպանությունների իրագործումը:

Inessa G. Stepanyan

COMPARATIVE ANALYSIS ATTEMPT OF ACTIONS OF ORGANIZATIONS “TEŞKILATI MAHSUSA,” “SS” AND “PANCASILA YOUTH”

SUMMARY

Key words: Armenian Genocide, Jewish Holocaust, mass killings of Indonesian Communists “Teşkilati Mahsusa,” German “SS,” the party system, ideology, pre-genocidal activity, army.

This article is an attempt to comparatively analyse the actions of “Teşkilat-i Mahsusa,” the German “SS” and the Indonesian organization “Pancasila Youth,” which became the tool of implementation of the Armenian Genocide, the Jewish Holocaust and the mass killings of members of the Communist Party of Indonesia.

The article presents the history of formation and the structure of these organizations and also discusses the circumstances and goals of their formation, their ideology and activities before the genocide of Armenians, Jews and mass killings of the Indonesian communists.

The article also refers to the study of the acts by comparing the applied mechanisms of these structures.

The study attests the role of these structures in the process of the Armenian Genocide, the Jewish Holocaust and the mass killings of the members of the Indonesian Communist Party.

Инесса Г. Степанян

ПОПЫТКА СРАВНИТЕЛЬНОГО АНАЛИЗА ДЕЯТЕЛЬНОСТИ ОРГАНИЗАЦИЙ «ТЕШКИЛАТ-И МАХСУСА», «СС» И «МОЛОДЕЖЬ ПАНЧАСИЛА»

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид армян, Холокост евреев, массовая резня индонезийских Коммунистов, «Тешкилат-и-Махсуса», немецкий «СС», «Молодежь Панчасила», партийная структура, идеология, предгеноцидальная деятельность, армия.

В статье представлен сравнительный анализ деятельности младотурецкой партии «Тешкилат-и-Махсуса», немецкого военизированного формирования «СС» и индонезийской организации «Молодежь Панчасила», которые стали орудием осуществления соответственно Геноцида армян, Холокоста евреев и массовой резни членов Коммунистической партии Индонезии.

В статье представлены история создания и структура каждой из организаций, рассматриваются обстоятельства и цели их формирования, их идеология, деятельность, предшествующая геноциду армян, евреев и массовой резни индонезийских коммунистов. Далее в статье исследованы действия данных структур, сравниваются применяемые ими механизмы и методы.

REFERENCES

«1965 год. Бойня в Индонезии...» [1965. Slaughter in Indonesia...]. <https://sandinist.livejournal.com/205738.html>;

Akçam, T'aner. «Թուրքական ազգային ինքնությունը և հայկական հարցը» [The Turkish National Identity and the Armenian Question]. *Bnórran*, no. 1, 1995;

Aharonyan, Gersam. Մեծ երազի ճամբուն վրայ [On the Way to a Big Dream]. Beirut: Atlas, 1964;

Avagyan, Arsen. «Պանթուրքիզմի գաղափարախոսության ընդունումը «Միություն և առաջադիմություն» կուսակցության երրորդ և չորրորդ համագումարներում», *Հայրց գեղաստեղծություններ և դասեր*, մաս 3 [“Adoption of the Ideology of Pan-Turkism in the Third and Fourth Congresses of the Union and Progress Party,” in *Armenian Genocide: Causes and Lessons*, Part 3], Yerevan: AGMI, 1995, 5-20;

Avagyan, Arsen. *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений* [The Armenian Genocide: the Mechanisms of Decision-making and Implementation]. Yerevan: AGMI, 2013;

Chuev, Sergeï. *Спецслужбы третьего рейха: Книга вторая* [Secret Services of the Third Reich. Second Book]. *Saint Petersburg: Neva*, 2003;

Dadrian, Vaakn. *История армянского геноцида: этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа* [The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia and the Caucasus]. Yerevan: Noyan-Tapan, 2007;

Ezhov, P. V., ed., *Войска СС фашистской Германии* [SS Troops of the Fascist Germany]. Moscow, 1944;

Frank, Anne. *Աննա Ֆրանկի օրագիրը* [The Diary of Anne Frank]. Yerevan: Haypethrat, 1962;

Gorshenin, Konstantin, Rudenko, Roman, i Nikitchenko, Iona (eds.). *Нюрнбергский процесс. Сборник материалов. Том 2* [The Nuremberg Process. Collection of Materials, Vol II]. Moscow: Gosudarstvennoye izdatel'stvo iuridicheskoi literatury, 1954;

Il'ichev. B. I. «Коммунистическая партия Индонезии», *Большая Советская Энциклопедия*, [Communist party of Indonesia. A reprint from *The Great Soviet Encyclopedia*]. <https://oval.ru/enc/35567.html>;

Khaints, Khene. *Черный орден СС. История охранных отрядов* [Black Order of the SS: the History of Security Detachments]. Moscow: Olma-Press, 2003;

Kirakosyan, John. *Երիտթուրքերը պարմության դատարանի առջև* [The Young Turks before the Judgment of History]. Yerevan: Hayastan, 1983;

Mat'osyan Tigran, *Հայոց ճեղիսիականությունը և Հրեական հոլոքուստը. համեմատական փորձ* [The Armenian Genocide and the Jewish Holocaust: an Attempt of Comparison]. Yerevan: AGMI, 2005;

Melvin Jess, “The Road to Genocide: Indonesian Military Planning to Seize State Power Prior to 1 October 1965,” in *The Indonesian Genocide of 1965: Causes, Dynamics and Legacies* (ed. Katharine McGregor, Jess Melvin, Annie Pohlman), Series: Palgrave Studies in the History of Genocide (Palgrave Macmillan, 2018), 51-69;

P'ap'azyan, Avetis, ed., *Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի* [The Armenian Genocide according to the Documents of the Young Turk Trials]. Yerevan: HSSH GA, 1988.

Poghosyan, Step'an, Poghosyan, Karo. *Հայկական հարցի և Հայոց ճեղիսիականության պարմությունը. Հայկական հարցը 1908-14 թվերին* [History of the Armenian Question and the Armenian Genocide: the Armenian Question in 1908-14. Vol. II, Book I]. Yerevan: Hayastan, 2011;

Polonskiï, Il'ia. «Резня миллиона: боевой путь и страшная смерть компартии Индонезии» [Massacre of a Million: the Battle Way and the Terrible Death of the Communist Party of Indonesia]. <https://bit.ly/2yffHr2c>;

Rifat', Mévlan Zaté. *Օսմանեան յեղիսիական մութ ծալքերը և իրթիհարի հայաջինը*

Ծրագիրները [The Dark Folds of the Ottoman Revolution and Ittihad's Program of Annihilation of Armenians]. Yerevan: KP'H Faqsimal, 1990;

Sahakyan, Vera. «Թեշքիլատը մախսուսա» գաղտնի կազմակերպությունը՝ Հայոց ցեղասպանության ռմբազործ» [The Secret Organization “Teşhkilat-i Mahsusa” – The perpetrator of the Armenian Genocide]. *Vanadzori petakan hamalsarani gitakan teghekagir* 1 (2017);

Shanga, Roman. «Сухарто-нашей юности полет» [Suharto – Our Youth Flight]. <http://vkrizis.ru/analiz/suharto-nashey-yunosti-polyot/>;

Step'anyan, Inessa. «Հայոց ցեղասպանության և Հրեից հոլոքոստի հիմնական իրագործողների հարցի շուրջ» [On the Issue of the Main Perpetrators of the Armenian Genocide and the Jewish Holocaust]. *Ts'eghaspanagitakan handes* 6 no. 2 (2018): 69-87;

СС в действии. Документы о преступлениях СС [SS in Action: Documents on SS Crimes]. Moscow: Svetoton, 2000.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ.

«Դորա Սաքայան, Նրանց քում են անապատները. Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթիները Հայոց ցեղասպանության ականատեսներ (1915-1918)», Երևան, 2017, 424 էջ¹

2017 թ. Երևանի պետական համալսարանը հրատարակել է հայտնի լեզվաբան, հայագետ, Մոնրեալի (Կանադա) ՄՔԳԻԼ համալսարանի գերմանագիտական ամբիոնի ցլյանս պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտոր Դորա Սաքայանի «Նրանց քում էին անապատները. Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթիները Հայոց ցեղասպանության ականատեսներ (1915-1918)» ծավալուն գիրքը (424 էջ)²: Այն 2016 թ. Յուրիխի «Լիմաթ» հրատարակչության գերմաներեն հրատարակած գրքի հայերեն թարգմանությունն է, որը Դորա Սաքայանն իրականացրել է Էվելինա Մակարյանի մասնակցությամբ: Այս հատորը երկար ճանապարհի և մեծածավալ աշխատանքի արդյունք է: Առաջին անգամ Կլարա Զիգրիստ-Հիլթիի անվան հետ Դորա Սաքայանն առնչվել է 2002 թ., երբ շվեյցարական թերթերից մեկում նրա մասին հոդված է կարդացել: Դրանից տարիներ անց՝ 2012 թ., հայտնի դարձավ, որ շվեյցարացի զույգի որդիներից մեկը՝ Ռուդոլֆ Զիգրիստ-Կլայունան, իր ծնողների անձնական արխիվի մեծ մասը փոխանցել է Յուրիխի ճարտարագիտական համադաշնային համալսարանի ժամանակակից պատմության արխիվին: Արդեն հաջորդ տարի Դորա Սաքայանի տրամադրության ներքո է գտնվում Զիգրիստ-Հիլթի զույգի գրական ժառանգության զգալի մասը, այդ թվում՝ նրանց ընտանեկան պատմության վերաբերյալ հարուստ նյութ:

Ինչպես նշում է գրքի հեղինակը, աշխատանքի ամենադժվարին հատվածներից մեկը Կլարա Հիլթիի ձեռագրի վերծանումն էր, որն ուներ երկաստիճան բարդություն՝ ձեռագրային և լեզվական: Այն գրված էր «քուրենթ» կամ «գոթական» ձեռագրով՝ շարադրված շվեյցարական վերին գերմաներենով և «համեմված» բարբառային միահյուսվածքներով. ձեռագրի վերծանումն ու հրատարակության պատրաստելը բավական ժամանակատար և աշխատատար գործընթաց էր:

Գրքի առաջաբանի հեղինակն է գերմանացի հայտնի լրագրող և պատմաբան, Հայոց ցեղասպանության վերաբերյալ գերմանական արխիվային փաստաթղթերի գիտակ և հանրայնացնող Վոլֆգանգ Գուստը: Առաջաբանը վերնագրված է հետևյալ խորագրով՝ «Բեռլին-Բադդադ՝ հայերի համար օրհասական երկաթուղին»: Գուստը հակիրճ ներկայացնում է երկաթուղու կառուցման պատմությունը և դերակատարումը Հայոց ցեղասպանության տարիներին բազմաթիվ հայերի, որպես բարձրակարգ աշխատուժի, ժամանակավոր ապաստան տալու գործում, ինչպես նաև երկաթուղու վրա աշխատող հայերի ճնշող մեծամասնությանը սպառնացող ողբերգական վախճանը: Այս ուղղությամբ հիշատակվում է գերմանացիների երկակի դերակատարությունը. մի կողմից երկաթուղու վրա աշխատող գերմանացի (նրանց հետ նաև շվեյցարացի և, մասամբ, ավստրիացի) մասնագետները և պատասխանատուները փորձում էին հնարավորության սահմաններում

1 Հոդվածը ստացվել է 30.08.2019 և ընդունվել տպագրության՝ 26.11.2019:

2 Դորա Սաքայան, *Նրանց քում են անապատները. Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթիները Հայոց ցեղասպանության ականատեսներ (1915-1918)* (Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ., 2017):

պատասպարել հայերին³, իսկ մյուս կողմից գերմանական ռազմական առաքելության անդամ, թուրքական ռազմական երկաթուղու տնօրեն փոխգնդապետ Սիլվեստեր Բյոթրիխը մակագրել է Բաղդադի երկաթուղու վրա աշխատող հայ մասնագետների տեղահանությունների մի քանի հրաման: Ըստ Գուստի ասվում է. «Հայկական տեղահանվածներով լեփ-լեցուն Բաղդադի երկաթուղու «ոչխարի վագոններ» խորհրդանիշ դարձան գերմանացիների մեղսակցության և կամ ավելի ճիշտ՝ գերմանացիների անկարողության՝ կանխելու հայերի ոչնչացումը»⁴:

Ինչպես նշում է Գուստը, Բաղդադի երկաթուղու վրա աշխատող հայերի պատմությունները դեռևս ուսումնասիրության անհրաժեշտություն ունեն: Խնդիրն ավելի է բարդանում, քանի որ Գերմանական բանկն իր արխիվներն ուսումնասիրողներին խիստ ընտրողաբար է տրամադրում (օրինակ՝ Գուստին մերժել են): Եվ այդ տեսանկյունից նման հուշագրությունների նշանակությունն էլ ավելի է կարևորվում:

Ինչպես ամփոփում է առաջաբանի հեղինակը, այս գիրքը կարևոր ներդրում է Հայոց ցեղասպանության և դրա գլխավոր մեղադրյալների ու մեղսակիցների «ամբողջական պատկերը գիտականորեն մշակելու աշխատանքներում»:

Գուստի առաջաբանին հաջորդում է պրոֆեսոր Սաքայանի ներածությունը, որտեղ նկարագրվում է հեղինակի ծանոթությունը թեմային, գրքի հիմքում ընկած նյութերի ձեռքբերման պատմությունը և, ընդհանրապես, աշխատանքի ընթացքը: Հատկանշական է, որ Շվեյցարիայից ստացված նյութերից էր նաև 1970 թ. Բեյրութում հայերեն հրատարակված Հայկ Արամյանի գիրքը⁵, որի առաջին էջին հեղինակի ձեռքով գրված է՝ «Հավել՜րժ հիշատակ 1916-ի իմ անմոռանալի փրկչին»՝ հասցեագրված Ֆրից Զիգրիստ-Հիլթին, ում շնորհիվ Արամյանը փրկվել էր⁶:

Ըստ Սաքայանի՝ ապագա գրքի կառուցվածքն ինքնաբերական է ձևավորվել. առաջին երկու գլուխները նվիրված են շվեյցարացի ամուսիններին, իսկ երրորդ գլուխը՝ Հայկ Արամյանին⁷:

Մերածության վերջում Գորա Սաքայանը նշում է, որ գրքի հայերեն հրատարակությունն, ի թիվս այլոց, ունի յուրահատուկ պատգամ. «Աշխարհում սփռված բոլոր հայերի սրտերը մի անգամ ևս երախտագիտությամբ է լցնելու Շվեյցարիայի նկատմամբ, որը ճակատագրական պահերին միշտ մոտ է կանգնել հայերին և զորավիզ է եղել նրանց»⁸:

3 Ինչպես, օրինակ՝ ի բողոք երկաթուղու վրա աշխատող հայերի ոչնչացման երիտթուրքական գործողությունների՝ գերմանացի գլխավոր ճարտարագետ Յոհան Լորենց Վինքլերը 1916 թ. հունիսին երկու շաբաթով դադարեցրել էր Բաղդադի երկաթուղու ամանտայան շրջանի աշխատանքները: Նույն տեղում, 121:

4 Նույն տեղում, 16-17:

5 Հայկ Ա. Արամեան, *Մեծ Եղեռնի Պայագամ. Հայոց Տանթեակն, Քաւարան եւ Հրաշալի Յարութիւն* (Պէյրութ, Տօսիկեան, 1970):

6 Արամեանի կյանքի պատմությունը սերտորեն կապված է շվեյցարացիների հետ: Նախ 1894-1896 թթ. Համլոյան կոտորածների հետևանքով որբացած Հայկին որդեգրում է Բեռն քաղաքի բնակիչ Սեաիլ Բերնարը, իսկ արդեն Հայոց ցեղասպանության տարիներին նրա փրկության գործին, ինչպես վերը նշվեց, անմիջական և գործուն մասնակցություն է ունեցել Ֆրից Զիգրիստ-Հիլթին:

7 Գրախոսության շրջանակում կանդիդատանք միայն գրքի առաջին երկու գլխին, քանի որ Արամյանի գրքի հրատարակությունից անցել է շուրջ 50 տարի, և այն հիմնականում քաջածանոթ է Հայոց ցեղասպանության պատմությունն ուսումնասիրող հայագգի հետազոտողներին: Սակայն հարկ է անհրաժեշտաբար ընդգծել, որ Արամյանի գրքի հատվածական թարգմանությունը, որը ներկայացվել է «Նրանց թշուղ են անապատները...» գրքի գերմաներեն հրատարակության մեջ, հնարավորություն է ընձեռնել գերմանախոս ընթերցողին ծանոթանալու այդ կարևոր աղբյուրին:

8 Սաքայան, *Նրանց թշուղ են անապատները*, 27:

Ապա հեղինակը հակիրճ ներկայացնում է Համիդյան կոտորածների հետևանքով Շվեյցարիայում սկիզբ առած և Հայոց ցեղասպանության տարիներին նոր ծավալ ստացած հայանպաստ շարժման պատմությունը:⁹

Մաս առաջին՝ Կարա Ջիգրիստ-Հիլթի. Օրագիր և զեկույց

Նախքան բուն օրագրի բովանդակությանն անդրադառնալը Սաքայանը ներկայացնում է Կարայի կենսագրությունը, ապա օրագրի առանձնահատկությունները¹⁰: Կարա Հիլթին ծնվել է 1884 թ. հուլիսի 5-ին Սանկտ Գալեն կանտոնի Բուքս քաղաքում՝ գինեգործ և գարեջրագործ Յոհան Փարավիցինի Հիլթիի բարեկեցիկ ընտանիքում¹¹: Կարան ծագումով Վերդերերգի բուրժուական հնագույն մի տոհմից էր: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ուսանել և ավարտել է Շվեյցարիայի հիվանդապահուհիների ուսումնարանը, այնուհետև 1914 թ. ամռանն աշխատանքի անցել Սանկտ Գալեն կանտոնի Գրաբս ինքնավար համայնքի հիվանդանոցում՝ որպես բուժքույր: Նույն ժամանակահատվածում ծանոթացել է Ֆրից Ջիգրիստի հետ, ով 1910-1914 թթ. Թուրքիայում Բաղդադի երկաթուղու շինարարության վրա երկարատև աշխատելուց հետո հայրենիք էր վերադարձել: 1915 թ. ապրիլին Կարան և Ֆրիցը պասկադրվում են՝ կազմելով Ջիգրիստ-Հիլթի ամուսնական զույգը, ապա անմիջապես մեկնում են Թուրքիա, որտեղ Ֆրիցը պետք է շարունակեր իր գործունեությունը Բաղդադի երկաթուղու շինարարության վրա: Առաջին հինգ ամիսները նրանք բնակվում են Թուրքիայի հարավարևելքում գտնվող Էնթեի գյուղում, ապա՝ 1915 թ. հոկտեմբերից մինչև 1918 թ. ապրիլ-Քելեր (ներկայում՝ Ֆեզիվաշա) բնակավայրում:

Թուրքիայում շվեյցարացի զույգն առերեսվում է ոչ միայն Առաջին համաշխարհային պատերազմին, այլև ականատեսը դառնում Հայոց ցեղասպանությանը: Կարան իր օրագրում, ինչպես նաև «Ամառ 1915» ակնառեսի իր վկայության մեջ նկարագրում է դեպի սիրիական անապատները տեղահանվող հայերի մահերթերը, Քելերի, Կատմայի և Հալեպի ճամբարների ողբերգական վիճակը, ինչպես նաև Բաղդադի երկաթուղու շինարարության մեջ ներգրավված հազարավոր հայերի շահագործումն ու աստիճանական ոչնչացումը:

Ներկայացնելով օրագրի կառուցվածքը՝ պրոֆեսոր Սաքայանը նշում է, որ այն հինգ տարվա համար նախատեսված օրացուցային կառուցվածքով գիրք էր, որի 365 էջը սկսվում էր հունվարի 1-ով և ավարտվում դեկտեմբերի 31-ով: Այդպիսով՝ յուրաքանչյուր էջի վրա հնարավոր էր գրել նույն ամսաթվին տեղի ունեցած իրադարձությունները՝ հինգ տարվա կտրվածքով: Օրագրի նման կառուցվածքը ենթադրում էր, որ Կա-

9 Նշենք, որ, ցավոք, հայերի մասին շատերը Եվրոպայում, այդ թվում՝ Շվեյցարիայում, տեղեկացան Համիդյան կոտորածների, ապա Հայոց ցեղասպանության իրադարձություններից:

10 Ընդհանրապես հարկ է առանձնահատուկ ընդգծել, որ հեղինակն «ուղեկցում» է ընթերցողին՝ տալով գրքի յուրաքանչյուր մասի ներածականն ու պատմությունը և ներկայացնելով անձնանունների և տեղանունների մեծաթիվ ծանոթագրություններ: Արդյունքում ընթերցողն իրեն «միայնակ և լքված» չի զգում այս ծավալուն գիրքն ընթերցելիս: Կից լուսանկարներից շատերն առաջին անգամ են հրապարակային շրջանառության մեջ դրվում:

11 Մահացել է 1988 թ.:

րան իր մտքերը շարադրի հնարավորինս հակիրճ և սեղմ, ինչը երբեմն թյուր տպավորություն է թողնում, թե հեղինակը հայերի ճակատագրին նվիրված հատվածներում որոշակի անտարբերություն է ցուցաբերել: Մակայն դա այդպես չէ. նախ ծավալի սահմանափակ լինելը հնարավորություն չէր տալիս ընդարձակ և «հուզումնալի» շարադրանքի համար, ապա Թուրքիայում Հայոց ցեղասպանության թեմայի վերաբերյալ խիստ գրաքննությունը ստիպել էր Կլարային զգուշորեն մոտենալ այդ թեմային՝ վտանգի տակ չդնելու իրեն և իր ընտանիքին: Այդ առումով հատկանշական է, որ Թուրքիայից մեկնելիս նա օրագիրը ի պահ էր թողել Կոստանդնուպոլսում գտնվող Ֆրից Զիգրիստ-Հիլթիի հարուստ և հանրաճանաչ ազգական Էդի Հենիի մոտ: Օրագրում այդ դրվագը Կլարան նկարագրում է հետևյալ կերպ. «Օրագիրը մնում է Ստամբուլում Էդ. Հենիի մոտ, մինչև...»¹²:

Նաև հարկ է նշել, որ հայերի ճակատագրին առնչվող իրադարձությունները նկարագրելիս Կլարան հաճախ չի նշում տեղեկատվության աղբյուրը՝ որևէ մեկին վտանգի տակ չդնելու նպատակով: Օրագիրը, այնուամենայնիվ, այն ծանր օրերին «հոգին թեթևացնելու» մի միջոց էր, քանի որ տուն ուղարկվող նամակներում Կլարան գրկված էր իրեն շրջապատող դաժան իրականության մասին որևէ ակնարկ անելու հնարավորությունից: Փոխարենը «Ամառ 1915» ականատեսի վկայության մեջ Կլարան ամեն բան իրենց անուններով է անվանում:

Անդրադառնալով օրագրի պատմական նշանակությանը՝ պրոֆեսոր Սաքայանը ութ կետ է նշում, որոնց մեջ աչքի են ընկնում հատկապես հետևյալները.

1. Կլարա Զիգրիստ-Հիլթին հանդես է գալիս որպես իր շուրջը կատարվող իրադարձությունների անաչառ փաստագրող: Մինչև Թուրքիա այցելելը նա հպանցիկ պատկերացում ուներ այդ երկրի, նրա ներքին առանձնահատկությունների վերաբերյալ: Ի տարբերություն շատ այլ օտարերկրյա ականատեսների՝ Կլարան Թուրքիայում էր հայտնվել ոչ թե մասնագիտական պարտականությունների կամ հոգու կանչի բերումով (որպես զինվորական, ուսուցիչ, բժիշկ, միսիոներ և այլն), այլ պարզապես ուղեկցել էր իր ամուսնուն: Հետևապես կարելի է նկատել, որ օրագրում և ապա «Ամառ 1915» գեկույցում արտացոլված տեղեկությունները հնարավորինս անկողմնակալ են:

2. Օրագրում Հայոց ցեղասպանության վերաբերյալ դրվագների նկարագրությունը որպես տեղեկությունների առանձին մաս չէ ներկայացված, այլ ամենօրյա իրադարձությունների նկարագրությունների բաղադրիչ է: Այսպիսով՝ Կլարայի օրագրում Առաջին աշխարհամարտի, Հայոց ցեղասպանության և շվեյցարացի ամուսինների ամենօրյա կյանքի դրվագների նկարագրությունները փոխկապակցված են: Հաճախ օրագրային համառոտ գրառումներում տարագիր հայերի ճակատագրի մասին տվյալները հաջորդում են կենցաղի նկարագրություններին: Հատկապես աչքի է ընկնում Կլարա Զիգրիստ-Հիլթիի հոգեվիճակը և ներքին պայքարը. մի կողմից նրա ընտանեկան երջանկությունն է, որի պահպանումն ուժգնանում է առաջնեկի ծնունդով, իսկ մյուս կողմից՝ տարագիր հայերի դաժան ճակատագիրը: Իր գրառումներից մեկում նա նշում է. «Պատուհանիս տակ լսում եմ նոր շինությունների պարիսպ-

12 Սաքայան, *Նրանց բշում են անապարները*, 231:

ների տակ գիշերող հայ երեխաների լացուկոցը: Այստեղ մարդ ժամանակի ընթացքում սրտային հիվանդ կդառնա, և կամ ինքն էլ՝ շատ դաժան»¹³:

Ընդհանրապես իրենց տան պատերից թե՛ դուրս ու ներս գտնվող աշխարհների տրամագծորեն տարբեր լինելն ուրվագծվում է օրագրի էջերում: Այս ամենով հանդերձ՝ Կլարան և Ֆրիցը փորձում էին յուրաքանչյուր մանրուք օգտագործել՝ տանը հանդարտության և երջանկության օազիս ստեղծելու և պահպանելու, որպեսզի կարողանան դիմակայել շրջապատող արհավիրքներին:

3. Պատմական տեսանկյունից առանցքային են օրագրի ժամանակագրական սահմանները՝ 1915 թ. մայիսից մինչև 1918 թ. ապրիլը: Կլարան օրացուցային ճշգրտությամբ նկարագրում է Հայոց ցեղասպանության այն իրադարձությունները, որոնց ականատեսն է եղել անձամբ կամ որոնց մասին հավաստի տեղեկություններ է ստացել եվրոպացի ականատեսներից:

4. Օրագրում բազմաթիվ են եվրոպացի միսիոներների, ուսուցիչների, բժիշկների, զինվորականների, ճարտարագետների և այլոց անունները, ովքեր Հայոց ցեղասպանության տարիներին եղել են տարածաշրջանում: Նրանցից մի քանիսը հայտնի են Հայոց ցեղասպանության վերաբերյալ իրենց վկայություններով, ինչպես, օրինակ՝ գերմանացի միսիոներուհի Պաուլա Շեֆերը, շվեյցարացի միսիոներուհի Բեաթրիս Ռոհները, գերմանացի և շվեյցարացի ուսուցիչներ Նիպագեն ու Գրեթեր դոկտորները: Սակայն կան դեռևս հրապարակ չեկած հուշերի և գրառումների հեղինակների հիշատակված անուններ, ինչն ուղեցույց կարող է դառնալ հետագա հետազոտությունների համար¹⁴:

5. Օրագրում նկարագրված է Բաղդադի երկաթուղու Ամանուսի հատվածի շինարարությունում ներգրավված հայերի շահագործման և ոչնչացման պատմությունը:

Անդրադառնալով օրագրի բովանդակությանը՝ այն կարելի է բաժանել երկու մասի՝

Ա. նշանախոսություն, հարսանիք և հարսանեկան ճանապարհորդություն,

Բ. կյանքը Թուրքիայում¹⁵:

Օրագրի առաջին հատվածում ուշագրավ է 1915 թ. ապրիլի 24-ին արված Կլարայի հետևյալ գրառումը. «Երկինքը միշտ իր ամենատխուր դեմքով է հանդես գալիս»¹⁶:

Թեև այս խոսքերը ամենին կապ չունեն Հայոց ցեղասպանության հետ, սակայն խորհրդանշականն այն է, որ նշյալ օրվա գրառումը սկսվում է այդ մտքով:

Օրագրում հայերին առնչվող առաջին գրառումն արվել է 1915 թ. հուլիսի 13-ին¹⁷:

13 Սաքայան, *Նրանց քշում են անսպասելիորեն*, 133-134:

14 Այստեղ ևս մեկ անգամ պետք է գնահատել պրոֆեսոր Սաքայանի բարեխիղճ և մանրամասն աշխատանքը՝ ուղղված օրագրում հանդիպող անձանց մասին տեղեկություններ ներկայացնելուն:

15 Ամուսնական գույգի տունդարձի ճանապարհը նկարագրված է Ֆրից Զիգրիստ-Հիլթիի ճամփորդական նոթերում, որոնք ներառված են գրքի երկրորդ մասում:

16 Սաքայան, *Նրանց քշում են անսպասելիորեն*, 133-134:

17 Հարկ է նշել, որ պրոֆեսոր Սաքայանը հայերին և Հայոց ցեղասպանությանը վերաբերող օրագրային գրառումների մոտ անմոռուկ է պատկերել, թեև երկու-երեք դեպքերում այն բացակայում է (տե՛ս 1916 թ. փետրվարի 23-ի, 1917 թ. մարտի 3-ի և 1917 թ. մարտի 19-ի գրառումները:) Իսկ եզակի դեպքերում էլ այդ նշումով գրառումները կապ չունեն հայերի կամ Հայոց ցեղասպանության հետ:

Ընդհանրապես, հայերին և Հայոց ցեղասպանությանն այս կամ այն կերպ առնչվող 50-ից ավել գրառում կա օրագրում:

Հայերի նկատմամբ իրականացվող թուրքական իշխանությունների քաղաքականության իրական նպատակն ու ծավալները Կլարային հայտնի են դառնում 1915 թ. աշնանը Հալեպ կատարած ուղևորությունից հետո¹⁸: Նախ կարդում ենք 1915 թ. սեպտեմբերի 15-ի գրառումը. «Հայերն անցնում են հազարներով»¹⁹: Ապա սեպտեմբերի 19-ի գրառումը. «Հայերի երթերը չեն վերջանում: Այս անգամ կղերականներ են, ու մայրապետներ էլ կան նրանց մեջ: Իսկ երեկոյան բանվորներից մեկը պատմում է մեզ այն բոլոր գազանությունների մասին, որոնց նրանք ենթարկվել են»²⁰:

Սեպտեմբերի 25-ի գրառման մեջ ներկայացված է Կատմայի ճամբարը. «20.000 հայեր ճամբար են խփել: Ամեն տեսակի վրաններ, մի մասը՝ բարեկարգ, մյուսը՝ այնքան պարզունակ, որ մարդկանց հազիվ է ծածկում»: Արդեն Հալեպում գտնվելու ժամանակ՝ սեպտեմբերի 27-ին²¹, Կլարան գրում է. «Քաղաքում հանդիպում ենք հայերի դագաղների՝ թույլ նստած կափարիչներով, քանի որ ամեն անգամ ավելի քան մեկ դիակ է գերեզման տարվում»²²: Եվ վերջապես հոկտեմբերի 8-ի գրառումն առանցքային է տեղահանվող հայերի ճակատագրի ընկալման հարցում. «Քանի Հալեպից վերադարձել ենք և լավ հասկացել, թե նրանց [հայերին] ինչ սոսկալի բախտ է վիճակված, չենք կարողանում այլևս նայել այստեղից անցնող արտաքսվածների կողմը»²³:

Ինչպես արդեն նշվել է, օրագրում պարբերաբար անդրադարձ է կատարվել Բաղդադի երկաթուղու վրա աշխատող հայերի ճակատագրին: 1916 թ. փետրվարի 13-ի գրառման մեջ Կլարան հայտնում է, որ երկաթուղու վրա աշխատող հայերի թիվը նվազել է մինչև 1.000, և նրանք ծայրահեղ հյուծված են: Ավելին՝ խոսակցություն կար, որ տեղահանությունների նոր ալիք էր սպասվում²⁴: Եվ արդեն փետրվարի 16-ի գրառման մեջ կարդում ենք՝ բոլոր հայերին տեղահանելու հրաման կա²⁵: Իսկ փետրվարի 19-ին Կլարան գրում է, որ փոխգնդապետ Բյոտրիխսն անձամբ էր եկել Իսլահիեն՝ երկաթուղու վրա աշխատող հայերի ցուցակները կազմելու և նրանց վտարման հարցն արագացնելու համար²⁶: Մեկ ամիս հետո արված գրառումից պարզ է դառնում, որ հատուկ մի հանձնաժողով է օրերով աշխատում՝ երկաթուղու վրա աշխատող

18 Ծառայողական պարտականությունների բերումով Ֆրից Զիգրիստ-Հիլթին հաճախ էր այցելում Հալեպ, և երբեմն Կլարան ուղեկցում էր նրան:

19 Սաքայան, *Նրանց բշում են անապատները*, 129:

20 Նույն տեղում, 130:

21 Տեքստում տեխնիկական վրիպակ կա. նշված է սեպտեմբերի 7-ը:

22 Սաքայան, *Նրանց բշում են անապատները*, 133:

23 Նույն տեղում, 135:

24 Նույն տեղում, 159:

25 Նույն տեղում, 160:

26 Նույն տեղում:

հայերի ցուցակները կազմելու համար²⁷: Հունիսի 13-ի և 14-ի գրառումներից պարզ է դառնում, որ երկաթուղու վրա աշխատող հայերի տեղահանման գործը եզրափակիչ փուլում է²⁸: Իր ամուսնուց և բազմաթիվ եվրոպացիներից այդ գործընթացի մանրամասներին քաջածանոթ լինելով՝ Կլարան հունիսի 16-ին գրում է. «Վիշտը ճնշում է մարդուն և միայն մեկ միտք է գերիշխում՝ հեռանալ այս գարշելի երկրից»²⁹: Վերջապես, այս շարքի ամենաորոշիչ գրառումներից մեկը վերաբերում է երկաթուղու վրա աշխատող հայերի տեղահանությանն ու ոչնչացմանը մասնակից գերմանացի զինվորականներին: 1916 թ. հունիսի 17-ի գրառման մեջ կարդում ենք. «Գերմանացի զինվորները, որոնք իրագործված արհավիրքների ականատեսը կամ մասնակիցն են եղել, չեն կարողանում զսպել իրենց զայրույթը: «Շան վրա անգամ չէր կարելի այդպես կրակել», - ասում են նույնիսկ հրամանը կատարող զինվորները և ավելացնում. «Եթե գերմանացի զինվորները այս բոլորի մասին դեռ հայրենիքում եղած ժամանակ իմանային, ոչ մեկն իրենցից չէր գա այստեղ՝ այս ջարդերի մասնակիցը դառնալու»³⁰:

Այսպիսով՝ Բաղդադի երկաթուղու վրա աշխատող հայերի ոչնչացման գործում ոչ միայն փոխգնդապետ Բյոտրիխն է իր անմիջական դերակատարումն ունեցել՝ ստորագրելով հայերի տեղահանության մի քանի հրաման, այլև գերմանացի որոշ զինվորականներ՝ իրագործելով տեղահանված հայերի ոչնչացումը: Սա եզակի տեղեկություններից է Հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի մեղսակցության հարցում:

Օրագրում առկա են նաև Կլարայի և Ֆրիցի կողմից հայերին օգնելու վերաբերյալ տեղեկություններ: Հատկապես Ֆրիցը, որը շատ մեծ կապեր և հեղինակություն ուներ, փորձում էր անել ամեն հնարավոր բան հայերին փրկելու, պատասպարելու, նրանց հոգսը թեկուզ աննշան թեթևացնելու ուղղությամբ: Սակայն նրա հնարավորություններն անսահման չէին:

Ինչպես արդեն նշվել է, օրագրից բացի Կլարա Զիգրիստ-Հիլթին թողել է նաև ականատեսի վկայություն՝ «Ամառ 1915»³¹ խորագրի ներքո: Սաքայանը հակիրճ ներածական և բացատրական հատված է կցել նաև այս գեկույցին, որի շնորհիվ բազմաթիվ հարցեր են լուսաբանվում՝ դյուրացնելով ընթերցողի գործը:

Եթե օրագրում Հայոց ցեղասպանությանն առնչվող հատվածներում հանդիպում ենք նաև այլ թեմաների հետ, ապա այս վկայությունն ամբողջապես է նվիրված Հայոց ցեղասպանությանը: Այս գեկույցի վերաբերյալ գլխավոր հարցը այն գրելու ժամանակն է: Ինչպես նշում է պրոֆեսոր Սաքայանը, տրամաբանական կլիներ

27 Նույն տեղում, 177:

28 Նույն տեղում, 182:

29 Նույն տեղում, 184:

30 Նույն տեղում: Ծանոթագրության մեջ պրոֆ. Սաքայանը նշում է, որ Բաղդադի երկաթուղու վրա աշխատող հայերին տեղամասից մի փոքր հեռացնելուց հետո ոչնչացնում էին թուրք կամ գերմանացի զինվորական հատուկ պահակախմբերը:

31 Չնայած որ գեկույցի մեջ նկարագրված իրադարձությունները վերաբերում են առավելապես 1915 թ. աշնան ամիսներին՝ պրոֆեսոր Սաքայանը, սակայն, այն անփոփոխ է թողել, քանի որ դրա հեղինակն է Կլարայի և Ֆրիցի որդիներից Ռուդի Զիգրիստ-Կլայունան, ում շնորհիվ իր ծնողների գրավոր ժառանգությունը պահպանվել էր. վերջինս այն ի պահ էր տվել արխիվին:

ենթադրել, որ զեկույցը գրվել է արդեն Շվեյցարիա վերադառնալուց հետո՝ հանգիստ պայմաններում և հենվելով օրագրում առկա տվյալների վրա: Մանավանդ, հաշվի առնելով նաև այն փաստը, որ նման բովանդակությամբ փաստաթուղթ երեք տարի շարունակ պահելը իսկապես վտանգավոր էր: Սակայն այդ տեսակետը փաստող ոչ մի ապացույց չկա՝ բացի տրամաբանական ենթադրությունից: Ի հակադրումն դրա՝ օրագրում կա մի գրառում՝ արված 1915 թ. սեպտեմբերի 22-ին. «Իսկ հիմա ես գրանցում եմ իրադարձություններ, որոնց մասին ներկայումս չի կարելի պատմել նամակներում»³²: Ինչպես նշում է պրոֆեսոր Սաքայանը, այս հարցի վերջնական պատասխանը հավանաբար երբեք հնարավոր չի լինի գտնել:

«Ամառ 1915» վկայությունը գրելու որոշումը Կլարայի մոտ հասունացել է Կատմայի համակենտրոնացման ճամբար այցելությունից հետո: Այդ քայլը տառապյալ հայերին օգնել չկարողանալու և տեսածի ծանր բեռը թոթափելու փորձն էր: Զեկույցի մեջ նկարագրվում են տասնյակ հազարներով դեպի անապատները քշվող հայերի թշվառ վիճակը և ահավոր ապրումները, Կատմայի ճամբարում հավաքված ավելի քան 20.000 հայի տառապանքները, Հալեպում տեսած ահասարսուռ պատկերները՝ տառապանք, սով, հիվանդություններ, բռնություն...: Ստեղծված էին հայերի ոչնչացման համար բոլոր պայմանները: Ինչպես նշում է Կլարա Զիգրիստ-Հիլթին, «Երանի՛ բոլոր նրանց, ովքեր չդիմացան, քանզի ողջ մնացածներին սպասվում է ամենասարսափելին: <...> Նրանց քշում են անապատները, և որպեսզի նրանց ուժասպառ անեն, օրերով քայլեցնում են, տեղում մի պտույտ անել տալիս, և ապա նրանց բերում են նույն կայանատեղիի մոտ»³³:

Կարևոր է ընդգծել նաև, որ Կլարայի գրություններից հստակ ուրվագծվում է, որ հայերի ոչնչացումն կանխամտածված էր. «Վաղուց ի վեր այս ցեղը (հայերը – Ա. Մ.) հակակրելի էր իսլամին: Իսկ այժմ սրանք նպաստավոր ժամանակներն են, քանի որ եվրոպական պետություններն զբաղված են իրենց սեփական խնդիրներով և կամ տվյալ պահին չեն ցանկանում Թուրքիայի հետ իրենց հարաբերությունները փչացնել»³⁴:

Իր զեկույցի վերջում Կլարան նշում է, որ տեղահանվածներին օգնելու անկարողությունը, նրանց անսպառ քարավանները և թշվառ ճակատագիրն իրենց դարձրել էին որոշ առումով անտարբեր. «Այնտեղ [Հալեպում] մեր գտնվելուց ի վեր անցել է երեք ամիս, սակայն տեղահանվածները շարունակում են գալ, մասամբ բուլղարական սահմանի կողմից: Հնարավոր չէ այլևս նրանց կողմը նայել: <...> Ամեն ինչ խորապես ուսումնասիրելուց և հասկանալուց հետո, թե ամեն մի քայլը նրանց դեպի ուր է առաջնորդում, մանավանդ, որ մենք ոչնչով չենք կարող նրանց օգնել, մեր միակ ելքը այդ ամբողջ թշվառությունն անտեսելն է»³⁵:

32 Սաքայան, *Նրանց քշում են անապատները*, 130:

33 Նույն տեղում, 260:

34 Նույն տեղում, 250:

35 Նույն տեղում, 261:

Մաս երկրորդ՝ Ֆրիդոլին (Ֆրից) Զիգրիստ-Հիլթի

Երկրորդ մասը նվիրված է Ֆրից Զիգրիստ-Հիլթիին, նրա կենսագրությանը և երեք գրությանը՝ 1918 թ. Թուրքիայից Շվեյցարիա տունդարձի, Տրապիստների վանքի պատմությունները և հատկապես հայ բարեկամներին ուղղված նամակը, ինչն արժեքավոր է հայ ընթերցողի համար: Յուրաքանչյուր գրությունից առաջ տրված է սեղմ ներածական հատված՝ գրված պրոֆեսոր Սաքայանի կողմից:

Ֆրից Զիգրիստ-Հիլթիի կենսագրական տվյալներից հայտնի է դառնում, որ նա ծնվել է 1881 թ. հունվարի 29-ին Բեյրութում՝ վաճառական Կասպար Ռուդոլֆ Զիգրիստի ընտանիքում: Մինչև տասներեք տարեկանը բնակվել է Լիբանանում, ապա՝ մեկնել Շվեյցարիա՝ դպրոցում ուսանելու, իսկ այնուհետև մասնագիտական կրթություն ստանալու: Ավարտելով Ցյուրիխի ճարտարագիտական համալսարանը՝ 1903 թ. գարնանն սկսել է իր մասնագիտական գործունեությունը հայրենիքում: Սակայն Լիբանանում անցկացրած տարիները Ֆրիցի սրտում սեր էին սերմանել դեպի Արևելք, ուստի նա ուրախությամբ օգտվում է այնտեղ վերադառնալու հնարավորությունից և 1910-1918 թթ. որոշ ընդմիջումներով մասնակցում է Բաղդադի երկաթուղու շինարարությանը: Այնուհետև 1928-1936 թթ. նա դարձյալ աշխատում է Թուրքիայում:

Մահացել է 1963 թ.:

Ֆրից Զիգրիստ-Հիլթիին մշտապես ժամանակ էր գտնում թղթին հանձնելու իր մտքերը՝ հուշագրությունների, նամակների, հոդվածների տեսքով: Մասնավորապես, Թուրքիայում անցկացրած տարիների մասին նա գրել է «1910-1918 թթ. իմ հիշողությունները», որոնք բաղկացած են երկու մասից՝ «1910-1914 թթ. – խաղաղ ժամանակաշրջան» և «1915-1918 թթ. – պատերազմական շրջան»: Ֆրիցը գրեթե ամբողջովին խուսափել է որևէ քաղաքական իրադարձությանն անդրադառնալ՝ կենտրոնանալով միայն Բաղդադի երկաթուղու շինարարության տեխնիկական կողմերի վրա:

Այս գրքում պրոֆեսոր Սաքայանը ներառել է Ֆրից Զիգրիստ-Հիլթիի երեք գրություն՝

1. Տունդարձ դեպի Շվեյցարիա, 1918 թ. ապրիլի 7-ից մինչև օգոստոսի 1-ը (1920 թ.),

2. Տրապիստների վանքի պատմությունը՝ «Եղբայր Բերգմանսը՝ մորթիների վաճառական» (1938 թ.),

3. Նամակ հայ բարեկամներին (1953 թ.):

Այս երեք գրությունից առաջինը համալրում է իր կնոջ՝ Կլարայի օրագիրը, որտեղ բացակայում է տունդարձի նկարագրությունը: Սա գեղեցիկ և պատկերավոր մի շարադրանք է՝ այն ժամանակվա Թուրքիայում տիրող իրավիճակի, բարքերի և միջանձնային հարաբերությունների մասին:

Երկրորդը վերաբերում է մշակութային ցեղասպանության մի դրվագի, երբ, օգտվելով պատերազմական իրավիճակից, թուրքական իշխանությունները փակել էին Թուրքիա առաջին այցելությունից Ֆրիցին հայտնի տրապիստների և լազարականների երկու վանքերը՝ արտաքսելով վանականներին:

Հայ ընթերցողի համար առավել հետաքրքրական է երրորդ գրությունը: Այն հետահայաց մի խոսք է՝ ուղղված ոչ միայն Հայոց ցեղասպանությանը զոհ դարձած իր հայ բարեկամներին, այլև ողջ հայությանը: Այս նամակը կարելի է համարել Հայոց ցեղասպանության ծանր հուշերը թոթափելու մի փորձ, լավատեսության, աշխատանքի և հույսն անմար պահելու մի կոչ՝ ուղղված աշխարհասփյուռ հայերին:

Նամակում Ֆրիցն իր հիացմունքն է հայտնում հայերին՝ իրենց ինչպես խաղաղ, այնպես էլ Հայոց ցեղասպանության մրկահույզ օրերին դրսևորած կենսակերպի համար: Նա իր վիշտն է հայտնում հայերի բնաջնջման կապակցությամբ, քանի որ իր և կնոջ համար էլ այդ օրերը սզավոր էին. «Ամեն անգամ, երբ տեսնում էինք, թե ինչպես էին մեզ արդեն սիրելի դարձած պաշտպանյալները բռնագաղթի վշտալի ճամփի վրա մեզանից հեռանում ու հորիզոնի հետևում անհետանում»³⁶: Ապա շարունակում է՝ նշելով, որ հայերը շարունակեցին ապրել օտար երկրներում՝ թեև «աշխարհի մեծավորներն» իրենց խոստացել էին պապենական հողի վրա համախմբում, որը, ցավոք, տեղի չունեցավ, ավելին՝ հայերի շահերն անտեսվեցին:

Նա կոչ է անում հայերին նոր հայրենիքում պահպանել իրենց ինքնատիպությունը, ջանասիրությունն ու դիմացկունությունը, որոնք երաշխիք պետք է դառնան հայերի հաջորդ սերունդների ապահով ապագայի համար:

Իր նամակը Ֆրից Զիգրիստ-Հիլթին ավարտում է ապագային միտված լավատեսական և հզոր կոչով. «Ձեր հիշողության մեջ վառ պահեք ձեր ազգը, որը տեսել է հզոր թագավորությունների ու ծաղկուն գավառների ժամանակներ և բարձր է կանգնած եղել արվեստի ու գրականության ասպարեզում: Եվ որպես անգնահատելի գանձ՝ պահպանեք ձեր մեջ հպարտությունը, ձեր սուգը և կարոտը: Եվ ո՛վ գիտի, թերևս մի օր անսպասելիորեն աշխարհն իր ընթացքը փոխի, և մոխիրի միջից ժայթքող բոցի պես արև ծագի և ձեզ, այնուամենայնիվ, առաջնորդի դեպի ձեր Հայաստան-հայրենիքը»³⁷: Խոսքեր, որոնք իրենց արդիականությունը չեն կորցրել նաև 21-րդ դարում:

Ամփոփելով պետք է նշել, որ պրոֆեսոր Դորա Սաքայանի³⁸ ջանքերի շնորհիվ պատմական անելությունից երևան են եկել հայ ազգի բարեկամ և Հայոց ցեղասպանության ականատես ևս երկու շվեյցարացի՝ համալրելով Յակոբ Կյունցլերի, Էլիզաբեթ Բենդերի, Բեստրիս Ռոհների, Էդուարդ Գրեթերի և այլոց շարքերը:

36 Նույն տեղում, 308:

37 Նույն տեղում, 309:

38 Հայոց ցեղասպանության թեմայի իրազեկման ու ճանաչման գործում ունեցած նշանակալի ավանդի համար 2019 թ. հոկտեմբերի 23-ին պրոֆեսոր Դորա Սաքայանը պարգևատրվել է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի «Ավրորա Մարդիգանյան» հուշամեդալով: Պարգևատրման արարողության տեսագրությունը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=L_Faei6tLzo:

REFERENCES

1. Aramean, Hayk. *Մեծ Եղեռնի Պատգամ. Հայոց Տանթէսկան, Քաւարան եւ Հրաշալի Յարութիւն* [The Testament of Medz Yeghern: Armenian Danteakan, Purgatory and Wonderful Revival]. Beirut: Tonikean, 1970.
2. Sakayan, Dora. *Նրանց քշում են անապատները. Կլարա և Ֆրից Ջիգրիստ-Հիլթիները Հայոց ցեղասպանության ականատեսներ (1915-1918)* [“They drive them into the desert”: Clara and Fritz Sigris-Hilty as Eyewitnesses of the Armenian Genocide 1915-1918]. Yerevan: Yerevan State University Publishing House, 2017.

ՎԱՀԱԳՆ ՆՈՐԱՅՐԻ ԴԱԴՐՅԱՆ (ՏԱՏՐԵԱՆ)



2019 թ. օգոստոսի 2-ին 93 տարեկան հասակում կյանքից հեռացավ հայազգի մեծանուն ցեղասպանագետ, պատմաբան, սոցիոլոգ պրոֆեսոր Վահագն Նորայրի Դադրյանը:

Դադրյանների ընտանիքը Սեբաստիայի նահանգի Ամասիայի գավառի Չորում քաղաքից էր, որտեղ հայտնի դատավոր էր Նորայր Դադրյանը: Նրա կապերի շնորհիվ Դադրյանների ընտանիքը կարողանում է հասնել Կոստանդնուպոլիս՝ վերապրելով Հայոց ցեղասպանությունը, որտեղ էլ 1926 թ. մայիսի 26-ին ծնվել է Վահագն Դադրյանը:

Նրա մանկությունն անցել է սկզբում Գատըզյոզ թաղամասում, իսկ ավելի ուշ՝ Սկյութարում: Երկրորդ համաշխարհային պատերազմի շեմին նա տեղափոխվել է Բեռլին՝ ուսանելու:

Վահագն Դադրյանն իր կատարած գիտահետազոտական ուսումնասիրությունների շնորհիվ նոր էջ է բացել Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության մեջ, մեծապես նպաստել ցեղասպանության պատմական իրողության գիտական համապարփակ ներկայացմանը, ինչն իր անգնահատելի ու կարևոր նշանակությունն է ունեցել Հայոց ցեղասպանության փաստի միջազգային ճանաչման և դատապարտման գործում: Վահագն Դադրյանը համարվում է ցեղասպանագիտության, մասնավորապես համեմատական ցեղասպանագիտության, հիմնադիրներից մեկը: Նրա հիմնական աշխատությունները վերաբերում են Հայոց ցեղասպանության պատմությանը, համեմատական ցեղասպանագիտության հարցերին, ցեղասպանության իրավական և հոգեբանական տեսանկյունների վերլուծությանը:

Գիտական երկար և արգասաբեր ուղին Վահագն Դադրյանն սկսել է Բեռլինի համալսարանում՝ ուսանելով մաթեմատիկա: Կտրուկ շրջադարձ կատարելով դեպի հումանիտար և հասարակական գիտություններ՝ Վիեննայի համալսարանում սովորել է փիլիսոփայություն, իսկ Ցյուրիխի համալսարանում՝ միջազգային իրավունք: Չիկագոյի համալսարանում ստացել է սոցիոլոգիայի դոկտորի աստիճան: Նման բազմապրոֆիլ կրթությունը Դադրյանին հնարավորություն է տվել իր հետագա ուսումնասիրություններում հենվել ֆորմալ, հումանիտար և հասարակական գիտությունների մեթոդաբանության և զինանոցի վրա, ինչի շնորհիվ նա կարողանում էր ցանկացած խնդրի վերաբերյալ ունենալ ուրույն և հնարավորինս լայն մոտեցում:

1 Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ինստիտուտի «Համեմատական ցեղասպանագիտության» բաժինը անվանակոչվել Վահագն Դադրյանի անունով:

Իր կյանքի ընթացքում պրոֆեսոր Դադրյանը փայլուն կերպով համատեղել է հետազոտական և դասախոսական գործունեությունները: 1970-1991 թթ. Նյու Յորքի համալսարանում դասավանդել է սոցիոլոգիա: Բացի այդ նա անգլերենով, գերմաներենով և ֆրանսերենով ակտիվորեն դասախոսել է Բեռլինի Ազատ համալսարանում, Մյունխենի, Մայնի Ֆրանկֆուրտի, Մյունսթերի, Քյոլնի, Բոխումի, Պարմայի, Թուրինի, Ցյուրիխի, Ժնևի, Ամստերդամի, Ուտրեխտի, Ուպսալայի և Բրյուսելի համալսարաններում, ինչպես նաև՝ ՅՈՒՆԵՍԿՈ-ի փարիզյան կենտրոնում:

Վահագն Դադրյանը Հարվարդի համալսարանի Միջին Արևելքի ուսումնասիրությունների և Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի միջազգային ուսումնասիրությունների կենտրոնների ավագ գիտաշխատող էր, ինչպես նաև Դյուկի համալսարանի հրավիրյալ պրոֆեսոր: 1990-ական թթ. մի քանի տարի շարունակ ղեկավարել է Գուգենհայմի հիմնադրամի կողմից հովանավորվող ցեղասպանագիտական մեծ նախագիծը: 1991 թ-ից Չորյան ինստիտուտի (Տորոնտո և Քեմբրիջ) ցեղասպանության հետազոտությունների ծրագրի գիտական տնօրենն էր:

Լեզուների իմացության շնորհիվ (հայերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, թուրքերեն, օսմաներեն) Դադրյանը համապարփակ քննության է ենթարկել հարուստ փաստագրական նյութ՝ մասնավորապես ուսումնասիրելով թուրքական, գերմանական, ավստրո-հունգարական, ամերիկյան արխիվային փաստաթղթերը և համադրել դրանք հայկական սկզբնաղբյուրների հետ:

Հայոց ցեղասպանության պատմության տարբեր դրվագների ուսումնասիրմանն են նվիրված նրա երկու տասնյակից ավելի մենագրությունները և հարյուրից ավելի հոդվածները, որոնք հրատարակվել են տասնյակ լեզուներով: Դրանց շարքում իր ուրույն տեղն ունի 1995 թ. հրատարակված *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* [Հայոց ցեղասպանության պատմությունը. էթնիկական կոնֆլիկտը Բալկաններից մինչև Ասատուրիա և Կովկաս] մեծածավալ հետազոտությունը: Այս աշխատության մեջ հեղինակը խնդրի քննությունն սկսում է Հայկական հարցի ծագման պատմությունից՝ ցույց տալով դրա տեղ-տեղ համընկնումը կամ բախումը Արևելյան հարցի հետ, եվրոպական դիվանագիտության և Օսմանյան կայսրության զարգացումների համատեքստում, ներկայացնում է նախացեղասպանությունը և բուն ցեղասպանությունը՝ տրամաբանական և ժամանակագրական հաջորդականությամբ:

Մեկ տարի անց հետազոտողների սեղանին է դրվում մեկ այլ կարևոր մենագրություն՝ *German Responsibility in the Armenian Genocide: A Review of the Historical Evidence of German Complicity* [Գերմանիայի պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության մեջ. գերմանական մեղսակցության պատմական վկայությունների քննություն], որում հեղինակը հարուստ փաստական նյութի հիման վրա բացահայտում է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրության դաշնակից Կայզերական Գերմանիայի դերակատարությունը և պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության իրականացման գործում՝ հստակություն և փաստարկվածություն բերելով այս շատ քննարկվող թեմայի մեջ:

1999 թ. լույս են տեսել պրոֆեսոր Դադրյանի միանգամից երկու արժեքավոր մենագրությունները՝ Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict [Ցեղասպանության թույլտվություն. հայ-թուրքական կոնֆլիկտի առանցքային բաղադրիչները] և The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification [Հայոց ցեղասպանության թուրքական ժխտման առանցքային բաղադրիչները. խեղաթյուրման և կեղծման դեպքի ուսումնասիրություն]: Վերջին մենագրությունը հուժկու հարված էր Հայոց ցեղասպանության ժխտման գործընթացին:

Ժամանակագրական առումով պրոֆեսոր Դադրյանի վերջին մեծածավալ ուսումնասիրությունը Judgment at Istanbul. The Armenian Genocide Trials [Ստամբուլյան դատավճիռ. Հայոց ցեղասպանության դատավարությունները] աշխատությունն է (պրոֆեսոր Թաներ Աքչամի համահեղինակությամբ), որտեղ հեղինակները ներկայացնում են Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո երիտթուրքական պարագլուխների դեմ Ստամբուլում տեղի ունեցած դատավարությունների ընթացքն ու փաստաթղթերը:

Պրոֆեսոր Դադրյանի հեղինակած հոդվածները հրապարակվել են արևմտյան առաջատար գիտական ամսագրերում:

1976 թ. մայիսին Դադրյանը մի շարք ականավոր հետազոտողների հետ, որոնց շարքում էին Ռիչարդ Հովհաննիսյանը, Դենիս Փափագյանը, Ավետիս Սանջյանը և այլք, ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների հանձնաժողովում ներկայացրել է Հայոց ցեղասպանության իրողությունը: Բացի այդ նա եղել է առաջին հայազգի հետազոտողը, ով 1995 թ. հանդես է եկել բրիտանական խորհրդարանի Համայնքների պալատում Հայոց ցեղասպանության 80-րդ տարեկիցի կապակցությամբ:

Վահագն Դադրյանը 1998 թ-ից ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ է: Նա մշտապես սերտ կապեր է ունեցել Հայաստանի գիտակրթական հաստատությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հետ: 2009 թ. պրոֆ. Դադրյանը մասնակցել է թանգարան-ինստիտուտի կազմակերպած միջազգային գիտաժողովին՝ նվիրված Ադանայի ջարդերի 100-ամյա տարեկիցին: Նույն օրերին նա թանգարան-ինստիտուտում ներկայացրել է հրապարակային դասախոսությունների շարք՝ նվիրված Հայոց ցեղասպանության տարբեր հիմնախնդիրներին: 2013 թ. մարտին ականավոր գիտնականը մասնակցություն է ունեցել Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կազմակերպած «Հայոց ցեղասպանություն. մարտահրավերներ հարյուրամյակի նախաշեմին» միջազգային գիտաժողովին:

Ականավոր գիտնականն իր կյանքի ընթացքում ստացել է բազում պարգևներ, որոնց թվում են.

1. ՀՀ Մովսես Խորենացու մեդալ (1998 թ.)
2. Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ոսկե մեդալ (1999 թ.)
3. «Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ոլորտում ունեցած ծանրակշիռ գիտական վաստակի համար» ՀՀ նախագահի մրցանակ (2009 թ.)

4. Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ մեղավ (2005 թ.)

5. Կյանքի ընթացքում ունեցած ձեռքբերումների մրցանակ, Ցեղասպանագետների միջազգային միություն (2005 թ.)

Վահագն Դադրյանը կյանքի ընթացքում դարձել է ցեղասպանագիտության դասականներից մեկը: Կարելի է ասել, որ նա ցեղասպանագիտության և Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության նշաձողը բարձրացրել է նոր մակարդակի: Նա եղել է հայ ժողովրդի դեսպանը ցեղասպանագիտական հանրություն:

Վահագն Դադրյանի գործունեությունը մասնագիտական նվիրվածության, աշխատասիրության և հայրենասիրության լավագույն օրինակներից է: Հայազգի ցեղասպանագետների ներկա սերնդի ներկայացուցիչների պարտքն է կիսատ չթողնել նրա հսկայածավալ գործը և պատվով շարունակել այն:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ОБ АВТОРАХ
ABOUT THE AUTHORS

Ռեգինա Ա. Գալուստյան, միջազգայնագետ-պատմաբան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի հայցորդ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Կրթական ծրագրերի բաժնի գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանություն, թուրքական ազգայնականություն, ազգաստեղծման, պետականաստեղծման ծրագրեր ցեղասպանությունների և էթնիկ զտումների միջոցով:

Էլ. փոստի հասցե՝ galustyanra@gmail.com

Regina A. Galustyan, international relations, historian, PhD student and researcher at the Educational Department, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – Armenian Genocide, Turkish nationalism, nation-building and state-building programs through genocides and ethnic cleansings.

E-mail: galustyanra@gmail.com

Регина А. Галустян, историк-международник, соискатель и научный сотрудник отдела Образовательных программ Фонда «Музей-Институт Геноцида армян».

Область исследований – Геноцид армян, турецкий национализм, конструирование наций и государств посредством геноцидов и этнических чисток.

Эл. почта: galustyanra@gmail.com

Էլինա Զ. Միրզոյան, բան. գիտ. թեկն., արևելագետ (թուրքագետ), սփյուռքագետ, բանասեր (հայոց լեզու և գրականություն), ՀՅԺԻ Հուշագրությունների, վավերագրերի և մամուլի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ թուրքահայ, թուրքական մամուլում Հայոց ցեղասպանության թեմայի ուսումնասիրություն, ազգային ինքնություն, հայկական թեմատիկան թուրքական տպագիր մամուլում:

Էլ. փոստի հասցե՝ elina-mirzoyan@mail.ru

Elina Z. Mirzoyan, PhD in Philology, orientalist, philologist, specialist of Armenian diaspora studies, researcher at the Department of the Armenian Genocide Memoirs, Documents and Press, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – the Armenian Genocide in the Turkish and Armenian-Turkish press, national identity.

E-mail: elina-mirzoyan@mail.ru

Элина З. Мирзоян, канд. фил. наук, востоковед, филолог, диаспоравед, научный сотрудник Отдела изучения воспоминаний, свидетельств и прессы Фонда «Музей-Институт Геноцида армян». Старший преподаватель ЕГУ.

Область исследований – вопрос Геноцида армян на страницах турецкой и армяно-турецкой прессы, национальная идентичность, армянская тематика на страницах турецкой прессы.

Эл. почта: elina-mirzoyan@mail.ru

Ռոբերտ Ա. Թատոյան, պատմ. գիտ. թեկն., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հուշագրությունների, վավերագրերի և մամուլի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության վիճակագրություն և ժողովրդագրություն, արևմտահայ հասարակական, կրթական, մշակութային և կրոնական կյանք:

Էլ. փոստի հասցե՝ r.tatoyan@gmail.com

Robert A. Tatoyan, PhD in History, Senior Researcher at the Department of the Armenian Genocide Memoirs, Documents and Press, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – Western Armenian population statistics and demography on the eve of the Armenian genocide, Western Armenian public, educational, cultural and religious life.

E-mail: r.tatoyan@gmail.com

Роберт А. Татоян, канд. ист. наук, старший научный сотрудник Отдела изучения воспоминаний, свидетельств и прессы Фонда «Музей-институт Геноцида армян».

Области исследований – статистика и демография западных армян накануне геноцида, общественная, образовательная, культурная и религиозная жизнь западных армян.

Эл. почта: r.tatoyan@gmail.com

Թեհմինե Ռ. Մարտոյան, պատմ. գիտ. թեկն., միջազգայնագետ-արևելագետ (իրանագետ), «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Թանգարանային ցուցադրությունների կազմակերպման բաժնի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Զմյուռնիայի հայերի և հույների բնաջնջման և քաղաքի հրկիզման պատմություն, զոհի հոգեբանական ժխտում և այլն:

Էլ. փոստի հասցե՝ tehminemartoyan@gmail.com

Tehmine R. Martoyan, PhD in History, Specialist on International Relations/Oriental Studies (Iranology), Senior Researcher at the Department of Organizing Museum Exhibitions, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – the history of the annihilation of the Armenians and Greeks of Smyrna and the fire of the city, psychological denial of victim, etc.

E-mail: tehminemartoyan@gmail.com

Тегмине Р. Мартоян, канд. ист. наук, специалист по международным отношениям/востоковед (иранист), старший научный сотрудник Отдела организаций музейных выставок Фонда «Музей-Институт Геноцида армян».

Область исследований – история истребления армян и греков в Смирне и поджога города, психологическое отрицание жертвы.

Эл. почта: tehminemartoyan@gmail.com

Ինեսա Գ. Ստեփանյան, միջազգայնագետ-ցեղասպանագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Համեմատական ցեղասպանագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ թուրքական Հատուկ կազմակերպության (Թ-եշքիլաթը մահսուսա) գործունեության համեմատական վերլուծություն, համեմատական ցեղասպանագիտություն:

Էլ. փոստի հասցե՝ stinesa@mail.ru

Inessa G. Stepanyan, International Relations Specialist/Genocide Scholar, Junior researcher at the Department of the Comparative Genocide Studies, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – comparative analysis of the activities of the Turkish Special Organization (Teşkilât-ı Mahsusa), comparative genocide studies.

E-mail: stinesa@mail.ru

Инесса Г. Степанян, Специалист по международным отношениям/геноцидовед, соискатель Фонда «Музей-Институт Геноцида армян», младший научный сотрудник Отдела сравнительного геноцидоведения Фонда «Музей-Институт Геноцида армян».

Область исследований – сравнительный анализ деятельности турецкой специальной организации (Тешкилат-и махсуса), сравнительное изучение геноцидов.

Эл. почта: stinesa@mail.ru

Արամ Ռ. Միրզոյան, պատմ. գիտ. թեկն., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Չոհերի և վերապրողների փաստագրման և տվյալների հավաքագրման բաժնի գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի և գերմանացիների դերակատարման արտացոլումը հայ պատմագրության և հուշագրությունների մեջ:

Էլ. փոստի հասցե՝ mirzoyan.aram@gmail.com

Aram R. Mirzoyan, PhD in History, Researcher at the Department of Armenian Genocide Victims' Documentation and Data Collection, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – memoirs of the survivors of the Armenian Genocide, reflection of the role of Germany and Germans in the Armenian Genocide in Armenian Historiography and Memoirs.

E-mail: mirzoyan.aram@gmail.com

Арам Р. Мирзоян, канд. ист. наук, научный сотрудник отдела Документации жертв Геноцида армян и сбора данных Фонда «Музей-Институт Геноцида армян».

Область исследований – мемуары выживших в Геноциде армян, отражение роли Германии и немцев в Геноциде армян в армянской историографии и мемуарах.

Эл. почта: mirzoyan.aram@gmail.com

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հեղինակների համար

- Հոդվածը պետք է ներկայացնել «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն՝ հեղինակի և բոլոր համահեղինակների(եթե գրված է համահեղինակությամբ) մասին տեղեկատվությամբ:
- Հոդվածը պետք է լինի բացառապես հեղինակի/համահեղինակների կողմից կատարված ուսումնասիրություն. խստիվ արգելվում է գրագողությունը:
- Հոդվածը չպետք է նախկինում նույնությամբ տպագրված լինի որևէ լեզվով՝ բացառությամբ առանձին դեպքերի՝ խմբագրի համաձայնությամբ:
- Հոդվածը չպետք է միաժամանակ հանձնված լինի տպագրության կամ դիտարկման մեկ այլ տեղում:
- Հոդվածը պետք է բարեխղճորեն շարադրված լինի՝ պահպանելով «Ցեղասպանագիտական հանդեսի» սահմանած կանոնները:
- Հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրությունը պետք է հիմնված լինի ստույգ տվյալների վրա:
- Հոդվածը պետք է ունենա գիտական նորույթ և արդիականություն:
- Հոդվածում (հղման տեսքով) թույլատրելի է երախտագիտություն հայտնել ուսումնասիրությանը որևէ կերպ աջակցած անձանց:
- Հեղինակը պարտավոր է համագործակցել խմբագրակազմի հետ, կատարել անհրաժեշտ փոփոխությունները, հավելումները կամ կրճատումները, ինչպես նաև շտկել սխալները:
- Հեղինակն իրավունք չունի վիճարկելու խմբագրության՝ հոդվածը չտպագրելու որոշումը կամ գրախոսության բացասական կարծիքը՝ առանց հիմնարար փաստարկների:

Գրախոսների համար

«Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածները գրախոսվում են առվազն մեկ գրախոսի կողմից: Գրախոսությունը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքի հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ:

Գրախոսը պետք է՝

- նյութը գրախոսի՝ անկախ անձնական հետաքրքրություններից ու շահերից՝ դրսևորելով բացառապես գիտական անաչառ մոտեցում,
- լրացնի գրախոսման համար նրան ուղարկված ձևաթուղթը հնարավորինս սեղմ ժամկետներում,
- շահերի բախման առկայության դեպքում այդ մասին տեղեկացնել խմբագրությանը:

Գրախոսված ձևաթուղթը պահվում է «Ցեղասպանագիտական հանդեսի» արխիվում, չի տրամադրվում որևէ մեկին՝ այդ թվում՝ հեղինակին, և այն հրապարակման ենթակա չէ: Գրախոսման արդյունքների, առաջարկների ու դիտարկումների մասին հեղինակին տեղեկացվում է տրամադրված էլ. փոստի միջոցով:

Խմբագրակազմի համար

Խմբագրակազմը պարտավորվում է՝

- կազմակերպել «Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածների պատշաճ գրախոսությունը,
- հոդվածը «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն հանձնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, հեղինակին տեղեկացնել խմբագրական խորհրդի որոշման վերաբերյալ,
- հետևել պարբերականի հրատարակչական էթիկետին և երաշխավորել հրատարակվող աշխատանքների գիտական բարձր մակարդակը,
- չհրապարակել հեղինակի և գրախոսի անձնական տվյալները և չտրամադրել դրանք երկու կողմերին:

Խմբագրությունն իրավունք ունի մերժելու հոդվածի տպագրությունը, եթե այն չի համապատասխանում խմբագրության կողմից սահմանված պահանջներին:

Խմբագրությունը նյութերի տպագրության կամ մերժման որոշումը կայացնում է՝ հիմնվելով գրախոսների կատարած առաջարկների ու դիտարկումների վրա՝ հանդեսի տեխնիկական պահանջներին բավարարելու դեպքում:

Գրախոսման փուլի ավարտից և հեղինակի կողմից կատարված շտկումներից հետո հոդվածները խմբագրվում են «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրական մոտեցումներին համաձայն:

Հեղինակային իրավունք

Հրատարակված նյութերի հեղինակային իրավունքը (©) պատկանում է «Ցեղասպանագիտական հանդեսին»: Տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո հեղինակը պարտավորվում է լրացնել և ստորագրել հեղինակային իրավունքի փոխանցման վերաբերյալ ձևաթուղթը:

Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր

Հեղինակի պատասխանատվությունն է հեղինակային իրավունքով պաշտպանված ցանկացած նյութի (լուսանկար, տեքստ, պատկեր, աղյուսակ, դիագրամ և այլն) տպագրության կամ վերատպության համար գրավոր թույլտվություն ստանալը (ուր պատկանում է հեղինակային իրավունքը): Դրանք պետք է տրամադրվեն «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրությանը (տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո): Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի համար ձևաթուղթը կտրամադրվի խմբագրության կողմից:

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման համար կարող են ներկայացվել գիտական հոդվածներ, գրախոսություններ, ինչպես նաև, առանձին դեպքերում խմբագրության որոշմամբ, մշակված անտիպ հուշագրություններ:

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման ներկայացվող հոդվածները լինելու են հիմնականում հայերենով (արևելահայերեն, արևմտահայերեն), իսկ առանձին դեպքերում՝ խմբագրության համաձայնությամբ՝ նաև օտար լեզուներով:

Ներկայացվող հոդվածները նախ դիտարկվում և հավանության են արժանանում խմբագրակազմի կողմից, ապա՝ թեմատիկ, որակական և տեխնիկական պահանջների բավարարման դեպքում միայն՝ ուղարկվում գրախոսության:

Յեղասպանագիրական հանդեսին ներկայացված հոդվածները գրախոսվում են առնվազն մեկ գրախոսի կողմից, գործընթացը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքների հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ: Խմբագրությունն իրավունք ունի անմիջապես մերժել ներկայացված նյութը՝ *Յեղասպանագիրական հանդեսի* տեխնիկական և գիտական պահանջներին չբավարարելու դեպքում:

Յեղասպանագիրական հանդեսում հոդվածների տպագրությունը կատարվում է անվճար հիմունքով:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Ծավալը՝ մինչև 30 էջ (ավելի մեծ ծավալի դեպքում՝ խմբագրության որոշմամբ):
2. Հայերեն տեքստը կազմել «Sylfaen» տառատեսակով, լատինատառ և սլավոնատառ տեքստերը՝ «Times New Roman» տառատեսակով, 12 տառաչափով, իսկ հղումները՝ 10 տառաչափով:
3. Առաջին էջում գրել հոդվածի հեղինակ(ներ)ի անունը, հայրանվան սկզբնատառը, ազգանունը, գիտական աստիճանը:
4. Հոդվածի վերնագիրը գրել ՄԵԾԱՏԱՌ-ԵՐՈՎ, թավատառ, հավասարեցնել կենտրոնում:
5. Հաջորդ տողում գրել «Բանալի բառեր — » արտահայտությունը և կցել նվազագույնը 5 հանգուցային բառ կամ արտահայտություն՝ 10 տառաչափով:
6. Հոդվածի բնագրի լեզվով գրել կարճ ներածական հատված (Abstract)՝ 150-200 բառ:
7. Անհրաժեշտության պարագայում բուն տեքստից անմիջապես հետո հասցեագրել երախտագիտություն անհատներին և/կամ կազմակերպություններին (acknowledgment):
8. Հոդվածի բուն տեքստից հետո (եթե կա երախտագիտության խոսք, ապա դրանից հետո) գրել նախ անգլերեն, ապա՝ ռուսերեն ամփոփումը: Անգլերեն հոդվածի դեպքում գրել նախ հայերեն, ապա՝ ռուսերեն ամփոփում, իսկ ռուսերեն հոդվածի դեպքում՝ նախ հայերեն, ապա՝ անգլերեն ամփոփում:
Յուրաքանչյուր լեզվով ամփոփման վերնագրից հետո կցել համապատասխան լեզվով բանալի բառեր (բանալի բառերը բոլոր լեզուներով տրվող ամփոփումներում պետք է լինեն նույնը):
9. Ամփոփումներից հետո ներկայացնել ոչ լատինատառ գրականության ցանկն այբբենական կարգով՝ նշելով նյութի վերնագիրը բնագրով, իսկ [] փակագծերում տալ համարժեք անգլերեն թարգմանությունը: Հղման այլ մանրամասները (հեղինակի անուն, ազգանուն, հրատարակչության անունը, վայրը, ամսագրի վերնագիրը և այլն) տալ լատինատառ՝ ներկայացված տառադարձմամբ, օրինակ՝

Marut'yan, Hartut'yun. *Հայ ինքնության պատկերագրությունը: Հայտոր 1. Յեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Vol. 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut'yun, 2009;

Սուրիական տարեցոյց [Syrian Almanach]. Cairo: Zareh Pe'ripe'rean, 1924;

Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ. Հայոց ճեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ [Memorials of Sorrow, Remembrance and Struggle]. Yerevan: Ministry of Diaspora, 2010;

Sahakyan, Vera. «Հատուկ կազմակերպության (Թ-եչքիլաթ-ը Մախսուսե) ձևավորման նախադրյալները», *Հայոց ճեղասպանություն – 100. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու* [“Prerequisites of the Formation of Special Organization (Teşkilât-i Mahsusa)” in Armenian Genocide -100. Collection of Papers of the International Conference]. Yerevan: Gitut'yun, 2016, 198-212.

Marutyan, Harutyun. «Ինքնության «ամրացման» երկու հնարաւորութիւններ Հաստան-Սփիւռք յարաբերութիւնների համատեքստում», *Սփիւռք եւ ինքնութիւն* (խմբ.՝ Շահան Գանտահարեան) [“Two ‘possibilities’ of strengthening Identity in the Context of Armenia-Diaspora Relations,” in *Diaspora and Identity* (ed. Shahan Kandaharian)]. Antelias-Lebanon: Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2018, 219-233.

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)» [Turkification of Armenian Children in the Ottoman Empire’s State Orphanages (1915-1918)]. *Ts’eghaspanagitakan handes* 4 no. 1 (2016): 25-43;

Antonyan, Aram. «Տօքս. Ալթունյան» [Dr. Alt’unyan]. *Veratsnund* (Paris), 27 May, 1919, no. 12.

10. Ներկայացնել նաև հեղինակի մասին տվյալներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ գրել նաև պաշտոնը և աշխատավայրը, ուսումնասիրությունների ոլորտը, էլ. փոստի հասցեն:

ՀՂՈՒՄՆԵՐ

11. Ցեղասպանագիտական հանդեսի հղումները ձևավորել համաձայն *The Chicago Manual of Style Online 17th Edition*-ի:

Հղումները պետք է համարակալվեն սկզբից մինչև վերջ: Անկախ լեզվից յուրաքանչյուր աղբյուր, եթե շարունակաբար հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից պետք է օգտագործվի՝

Նույն տեղում: (եթե էջը նույնն է)

Նույն տեղում,: (եթե էջը փոխվում է)

Ա. Գրքեր (մենագրություններ կամ համահեղինակությամբ աշխատություններ)

1) Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը (ամբողջությամբ), հեղինակի ազգանունը, վերնագիրը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Բոլոր գրքերի վերնագրերը գրել շեղատառ:

Անգլերեն վերնագրերի բոլոր բառերը (բացառությամբ նախդիրների, հոդերի կամ շաղկապների) գրել մեծատառ: Օր.՝

1. Սարգիս Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեսպիւն* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 55:

2. Валерий Тунян, *Россия и Армянский вопрос* (Ереван: Музей-институт Геноцида армян, 1998), 55.

3. Vahagn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence - Oxford: Berghahn Books, 1995), 55.

2) Եթե նույն հոդվածում գիրքը հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից և անկախ լեզվից պետք է նշվի կրճատ տարբերակը՝ հեղինակի ազգանունը, գրքի շեղատառ վերնագիրը (կարճ վերնագրերի դեպքում) կամ վերնագրի առաջին մի քանի բառը (երկար վերնագրի դեպքում): Օր.՝

Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեսպիւն*, 55:

Тунян, *Россия и Армянский вопрос*, 55.
Dadrian, *The History of the Armenian Genocide*, 55.

4) Մեկից ավելի հեղինակների դեպքում, գրել առաջին երկու հեղինակների անունները և ազգանուններն ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», «и др.», “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Բ. Թարգմանված գրքեր

Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը, ազգանունը, գրքի վերնագիրը, թարգմանողի ամբողջական անունը և ազգանունը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Գրքի վերնագիրը պետք է գրել շեղատառ:

1. Jhumpa Lahiri, *In Other Words*, trans. Ann Goldstein (New York: Alfred A. Knopf, 2016), 146.

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում), շեղատառ, էջը: Օր.՝

1. Lahiri, *In Other Words*, 184.

Գ. Թվային գրքերի (ebook)

Թվային գրքերի օգտագործման դեպքում գրել գրքի տվյալները վերոնշյալ սկզբունքներով, ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը: Եթե գրքի էջերը առկա չեն, ապա պետք է նշել բաժնի կամ գլխի համարը և դիտման ժամանակը: Օր.՝

1. Herman Melville, *Moby-Dick; or, The Whale* (New York: Harper & Brothers, 1851), 627, <http://mel.hofstra.edu/moby-dick-the-whale-proofs.html>, դիտվել է 17.07.2019:

2. Philip B. Kurland and Ralph Lerner, eds., *The Founders' Constitution* (Chicago: University of Chicago Press, 1987), chap. 10, doc. 19, <http://press-pubs.uchicago.edu/founders/>, դիտվել է 17.07.2019:

3. Brooke Borel, *The Chicago Guide to Fact-Checking* (Chicago: University of Chicago Press, 2016), 92, ProQuest Ebrary.

4. Jane Austen, *Pride and Prejudice* (New York: Penguin Classics, 2007), chap. 3, Kindle.

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) շեղատառ, էջը կամ բաժնի կամ գլխի համարը: Օր.՝

1. Melville, *Moby-Dick*, 722–723.

2. Kurland and Lerner, *Founders' Constitution*, chap. 4, doc. 29.

3. Borel, *Fact-Checking*, 104–105.

4. Austen, *Pride and Prejudice*, chap. 14.

Դ. Ժողովածուներ

1) Ժողովածուները պետք է հղվեն՝ նշելով հեղինակի անունը, ազգանունը ամբողջական, հոդվածի կամ գլխի վերնագիրը չակերտների մեջ, ամբողջ ժողովածուի վերնագիրը, խմբագիր(ներ)ը կամ կազմող(ներ)ը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Օր.՝

1. Vahakn Dadrian, "Ottoman Archives and Denial of the Armenian Genocide," in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian (New York: St. Martin's Press, 1992), 280.

2. Վերթինե Սվալյան, «Հայոց ցեղասպանությունը ըստ ականատես վերապրողների վկայությունների», *Հայոց Մեծ եղևնի 90*, հոդվածների ժողովածու (Երևան, ԵՊՀ հրատ., 2005), 471:

3. Сурен Манукян, "Наказание за верность". От Эрзурумского конгресса до Сарыкамышского сражения," *Первая мировая война: взгляд спустя столетие: доклады и выступления участников V Международной научно-практической конференции* (М.: Изд-во МНЭПУ, 2016), 648.

2) Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի կամ գլխի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով(երկար վերնագրերի դեպքում) չակերտների մեջ, էջը:
Օր.՝

1. Dadrian, "Ottoman Archives," 471.

2. Սվալյան, «Հայոց ցեղասպանությունը», 471:

3. Манукян, "Наказание за верность," 648.

Ե. Հոդվածներ

1) Հոդվածներ հղելիս նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Առկայության դեպքում ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը, նաև `DOI-ն (Digital Object Identifier): Օր.՝

1. Rouben P. Adalian, "Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: the United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire," *Journal of Genocide Research* 3, no. 1 (2001): 35.

Shao-Hsun Keng, Chun-Hung Lin, and Peter F. Orazem, "Expanding College Access in Taiwan, 1978–2014: Effects on Graduate Quality and Income Inequality," *Journal of Human Capital* 11, no. 1 (2017): 9–10, <https://doi.org/10.1086/690235>

3. Peter LaSalle, "Conundrum: A Story about Reading," *New England Review* 38, no. 1 (2017): 95, Project MUSE.

4.Շուշան Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը. հրովարտակներ, հրահանգներ ու կոչեր», *Ցեղասպանագիտական հանդես* 6, թիվ 2 (2014), 40:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Adalian, "Comparative Policy and Differential Practice," 35.

2. Keng, Lin, and Orazem, "Expanding College Access," 23.

6. Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը», 40:

Զ. Համահեղինակությամբ հոդվածներ

Երեքից ավել համահեղինակ ունեցող հոդվածներում նշել առաջին հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», «и др.», "et. al.", որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Է. Մամուլ

Մամուլի հոդվածներ հղելիս պետք է նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Նշել նաև հանդեսի տպագրության վայրը: Օր.՝

1. Գալստյան Սուսաննա, «Երվանդ Օտյանը և ազգային տոնը», *Ազգ օրաթերթ* (Երևան), 24 ապրիլի 2010, 13:
2. Rebecca Mead, “The Prophet of Dystopia,” *New Yorker*, April 17, 2017, 43.
3. Farhad Manjoo, “Snap Makes a Bet on the Cultural Supremacy of the Camera,” *New York Times*, March 8, 2017, <https://www.nytimes.com/2017/03/08/technology/snap-makes-a-bet-on-the-cultural-supremacy-of-the-camera.html>.
4. Խմբագրական, *Ազատամարտ* օրաթերթ (Կ.Պոլիս), 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր 1914, 1:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Գալստյան, «Երվանդ Օտյանը», 13:
2. Mead, “The Prophet of Dystopia,” 43.
3. Manjoo, “Snap.”
4. Խմբագրական, 1:

Ը. Թեզեր և ատենախոսություններ

Թեզերը և ատենախոսությունները հղելիս պետք է նշել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, թեզի կամ ատենախոսության վերնագիրը չակերտների մեջ, պաշտպանության վայրը, տարեթիվը, էջը: Օր.՝

1. Cynthia Lillian Rutz, “King Lear and Its Folktale Analogues” (PhD diss., University of Chicago, 2013), 99–100.
2. Նարեկ Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆաել Լեմկ ինի կողմից» (ատեն., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017), 77:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, թեզի կամ ատենախոսության վերնագիրը՝ ամբողջությամբ կամ կրճատ, շեղատառ, չակերտների մեջ, պաշտպանության վայրը և տարեթիվը, էջը:

1. Rutz, “King Lear,” 158.
2. Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը», 77:

Թ. Համացանց

Համացանցային նյութերը հղելիս՝ գրել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ (եթե նշված է), նյութի վերնագիրը (եթե նշված է), ապա՝ համացանցային հասցեն և նյութից օգտվելու ամսաթիվը: Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton,” <http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html>, դիտվել է 17.07.2019:
2. Նարինե Մարգարյան, «Օսմանյան Կայսրության Պետական Որբանոցներում Կիրառվող Թրքացման Մեթոդները», <http://www.genocide-museum.am/arm/05.02.2019-MargaryanNarine.php>, դիտվել է 17.07.2019:
3. Katie Bouman, “How to Take a Picture of a Black Hole,” filmed November 2016 at

TEDxBeaconStreet, Brookline, MA, video, 12:51, https://www.ted.com/talks/katie_bouman_what_does_a_black_hole_look_like, դիտվել է 17.07.2019:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք նշել հեղինակի ազգանունը և/կամ նյութի վերնագիրը(երկար վերնագրերի դեպքում՝ կրճատ): Օր.

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton.”
2. Մարգարյան, «Օսմանյան Կայսրության»:
3. Bouman, “Black Hole.”

11. Անձնական հաղորդակցություններ

Անձնական հաղորդակցությունները, ներառյալ էլեկտրոնային և տեքստային նամակները (messages), ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով ուղարկվող հաղորդագրությունները հղելիս, պետք է նշել հետևյալ կերպ.

1. Պետրոս Տեր-Մաթոսյան, Ֆեյսբուքյան նամակ հեղինակին, 1 օգոստոսի 2017 թ.:
2. Պետրոս Տեր-Մաթոսյան, Էլեկտրոնային նամակ հեղինակին, 15 մարտի 2017 թ.:

12. Ամսաթվերի գրելաձև

1. Խոսքին քերականորեն չկապվող ամսաթվերում նախադաս թվանշանը գրել առանց չակերտի և առանց հոդի, իսկ ամսանունը՝ սեռական հոլովաձևով: Պահպանել ամսաթիվ-ամսանուն-տարեթիվ հերթականությունը: Ամսանունը գրել փոքրատառ: Այսպես՝ 15 մայիսի 2018 թ. կամ 15.05.2019:

Թույլատրելի է նաև ամսանվան ուղիղ ձևով գրությունը: Օրինակ՝ 15 մայիս 2018 թ.: Շարադասության փոփոխության դեպքում ամսանունը կարող է գրվել նաև սկզբում: Օրինակ՝ մայիսի 15 2018 թ.:

1. Ամիս-ամսաթիվը և տարեթիվն իրարից ստորակետով չանջատել: Օրինակ՝ 3 հունվարի 2019 թ. կամ 2019 թ. փետրվարի 1:
2. Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերում գործածել միջակետ: Օրինակ՝ 25.01.2019:
3. «Թ-վական» բառի համառոտագրությունը՝ «թ.»-ն, գրել թվանշանից առանձին՝ թողնելով բացատ: Օրինակ՝ 31 հունվարի 2019 թ.: Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերից հետո «թ.»-ն չգրել՝ համարելով ավելորդ:

13. Տառադարձություն

Հայերեն

Ա ա - A a
Բ բ - B b
Գ գ - G g
Դ դ - D d
Ե ե - E e
Զ զ - Z z
Է է - E' e'
Ը ը - Ë ë
Թ թ - T' t'
Ճ ճ - Zh zh
Ի ի - I i
Լ լ - L l
Խ խ - Kh kh
Մ մ - Ts ts
Կ կ - K k
Հ հ - H h
Չ չ - Dz dz
Ղ ղ - Gh gh
Ճ ճ - Ch ch
Մ մ - M m
Յ յ - Y y
Ն ն - N n
Շ շ - Sh sh
Ո ո - Vo vo (բառամիջում գրելի օ ձևով)
Չ չ - Ch' ch'
Պ պ - P p
Ջ ճ - J j
Ռ ռ - R' r'
Ս ս - S s
Վ վ - V v
Տ տ - T t
Ր ր - R r
Յ յ - Ts' ts'
Ու ու - U u
Փ փ - P'p'
Ք ք - Q q
Եվ էվ Ev ev
Օ օ - O' o'
Ֆ ֆ - F f

Ռուսերեն

А а - A a
Б б - B b
В в - V v
Г г - G g
Д д - D d
Е е - E e
Ё ё - Io io
Ж ж - Zh zh
З з - Z z
И и - I i
Й й - İ ï
К к - K k
Л л - L l
М м - M m
Н н - N n
О о - O o
П п - P p
Р р - R r
С с - S s
Т т - T t
У у - U u
Ф ф - F f
Х х - Kh kh
Ц ц - Ts ts
Ч ч - Ch ch
Ш ш - Sh sh
Щ щ - Shch shch
Ъ ъ - “
Ы ы - Y y
Ь ь - ‘
Э э - E' e'
Ю ю - Iu iu
Я я - Ia ia

Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթը՝ օֆսեթ,
տպաքանակը՝ 150:

Տպագրվել է